



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՐԱՊԵՅՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ

Որդիներ կան, որոնք ազգի անունից
են ներկայանում, եւ որդիներ՝ որոնց
անունով ազգն է ներկայանում:

ԸՆՏԱՆԻԸ ԵՎ ՄԻՋԱԿԱՅՐԸ
ՀԱՅՐՈՒԿՆ ՈՒ ՀԱՅՐՈՒԿԱՊԵՏԸ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ ԵՎ ՊԱՏԵՐԱՋՆԵՐԸ
ԶԱՂՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՆ ՈՒ ԶԱՂՔԱԿԱՆ ՀԱՍՈՋՍՈՒԽՔՆԵՐԸ
ԱՌԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՐԿՈՂՆԵՐ
ԱՆՁՆ ՈՒ ՊԱՏԳԱՄԸ



ԵՐԵՎԱՆ «Հայաստան»

1992

Hambartsum Karapetian



(Սկիզբը առաջին պրակում)

ANDRANIK

There are sons, who represent in the name of the nation, and there are sons, in whose names the nation is represented.

FAMILY AND THE ENVIRONMENT

HAIKUK (GUERRILLA) AND HAIKUK'S CHIEF

COMMANDER AND THE WARS

POLITICAL STRUGGLE AND POLITICAL CONVICTIONS

OBJECTIONS AND OBJECTORS

PERSON AND COMMANDMENT



YEREVAN "Haiastan"

1992

Դ Վանը գրավելու և հանձնելու օրերին

Հանձնումը նահանջն է, որը կարծես թե դառնում է ճակատագիր: Այսպես առջեւում նահանջների մի ամբողջ շարք է: Մի՞թե վերին բարձրյալն էր հողեղեն հայի զավակին դեպի հայրենիքի գիրկը առաջընթացի սխրանքները պարգեւում, և գուցե թե նա էլ հենց էս էր քաշում դեպի նահանջը: Առջեւում այդ պատմությունն է:

Դիմանում մի երկու օր հանգստանալուց հետո ուսական գնդի հետ միասին Անդրանիկի ջոկատը Վան տանող ճանապարհի վրա գրավում է Խանասորի լեռնանցքը: Կռիվներն այլևս թուրքական տերության ներսում էին: Մայիսի 2-ին Անդրանիկի ջոկատը կրկին անցնում է Նազարբեկովի ենթակայությանը, և նրա իսկ հանձնարարությամբ հենց մայիսի 2-ին ու հաջորդ օրը Ավոյի հեծյալները հետախուզում էին լեռնանցքի հարավային կողմում³, Աջնակի և

1 Ն. տ., էջ 196-198: 2 «... օրագրությունը», էջ 18-19: 3 «Հայաստան», N38, 1. 06. 1917թ.

Բուրուշ Խորանի բարձունքներում: Նրանք էլ բերում, Անդրանիկին են հանձնում իրենց ընդառաջ եկած հայ մարդու տված նամակը, որը լաթի մի կտորի վրա էր¹: Նամակը Վանից էր: Այնտեղ օրհասական կոիվ էր ու կոտորած: Թուրքերը, իրենց զորքերը մոտեցող ոռուսական բանակի դեմ դուրս բերելու փոխարեն, պաշարել էին քաղաքը, որպեսզի հապճեպորեն, քանի դեռ զորքերը չէին մոտեցել, իսպառ ջնջեին քաղաքի հայ բնակչությանը: Հայերի ուժերը սպառվում էին, սպառվում էր նաեւ համբերությունը: Այլեւս ուժ չէր մնացել: Իսկ այստեղ, ոռավմաճակատում, Անդրանիկը նկատում է այն, ինչը որ չէին կարող չնկատել բոլոր կամավորները, ոռուսական բանակի առջեւից փախչող զորքի հրամանատար Խալիլ փաշան տեղ-տեղ առանձին փոքրաթիվ զորամասեր կովի մեջ դնելով, ոչ այնքան ոռուսական բանակին կորուստ էր պատճառում եւ ուժերն սպառում, որքան նրա երթն էր դեպի Վան դանդաղեցնում ու հետաձգում: Գուցե սա նման է ոռուսական բանակի առաջխաղացումը առհասարակ կանգնեցնելու միջոցին, բայց իրականում, ըստ եւրոպան, այդ չէ: Ապա ինչպե՞ս: Միթե՞ այդ ձեւով, շեղելով ու հրապուրելով, ետեւից քարշ տալով, պետք էր օգնել թուրքական իշխանությունների ու ոռավմական հրամանատարության կողմից Վան բերած Ջեւդեթ փաշայի հրամանատարությամբ գործող զորամասերին, մանավանդ իրեւանուն, բնաջնջելու Վանի բնակչությանը եւ հիմնահատակ ավերելու քաղաքը, քանի դեռ ոռուսական բանակն ու կամավորները տեղ չէին հասել:

Ահա թե ինչ պատերազմի ընթացքում, դրա թիկունքում, ընթանում էր մի ուրիշ պատերազմ, որը մղողի համար փաստորեն առավել կարեւոր էր, քան ոռավմի դաշտում թշնամու զորքերի դեմ նրա կոիվը: Յուրատեսակ, պատերազմների պատմության մեջ աննախադեպ պատերազմ էր դա, որին պատերազմների մինչ այդ հայտնի որակումներից ու չափանիշներից ոչ մեկը հարմար չէ: Այդ պատճառով է, որ անհամբեր էր Անդրանիկը, անհամբեր էին բոլոր կամավորները: Այդ պատճառով էր, որ նրանք պատերազմի դաշտ դուրս գալու սկզբից եւեթ ոչ թե օրերն ու ժամերն էին հաշվում, այլ րոպեները: Նրանք երթի ուրիշ, կարճ ճամփաներ էին որոնում, անջատվում, առանձնանում էին ոռուսական զորամասերից եւ շտապում էին, առանց նույնիսկ հաշվի առնելու, որ կտրվելով բանակային

¹ «... օրագրութիւն», էջ 20: Նաեւ՝ ՌԱԶԱ, ֆ. Զաղարկիվ, 1915թ., գ. 3505, ք. 4: Նամակը արհիվ 15-ի թվակիր էր: Կարված էր հայ մարդու հազուատին որպես աստառ «... Լառանգում սպանված է մոտ 6000 մարդ: Համառոտն դիմադրում ենք: Ականները քիչ են վատում քաղաքից: Վերջին ճիգերն են լարում: Ամեն օր սպասում ենք ոռուսների օգտությանը: Աղայում ենք շտապել: Հետո ուշ կլինի»: Նամակի տեքստը արհիվ վերջին ուղարկվել է նաեւ Փարիզ եւ Լոնդոն, բայց առանց «ոռուսների» բառի, որպես դիմում նաեւ Ֆրանսիային ու Անգլիային:

մյուս զորամասերից, կարող են նաեւ իրենց կոտորածի վտանգի առջեւ կանգնեցնել: Առաջ էին գնում, առաջ դեպի Վան, եւ քայլերն էին հաշվում, ոչ թե անցած ճանապարհի, այլ սպասվելիքի: Այդ միջոցին Անդրանիկի թիկնապահ զինվորը շարունակում է լրացնել ջոկատի մարտական գործողությունների օրագիրը, ապրիլի 25-ին հետախույզ կամավորները վիրավոր թուրք զինվորի մոտ փաստաթղթեր են գտել եւ Անդրանիկի միջոցով ուղարկել Նազարբեկովին: Մայիսի 1-ին Վարդան գյուղից առաջացել են դեպի Զոյնիա Շահար, հասել են Ալի Բուլաղ բլուրները, որտեղ եւ հանգիստ են առել: Մայիսի 2-ին ճանապարհ են ընկել, դեռ լույսը լրիվ չբացված, դեպի Խանասոր, ժամը 7 անց կեսին մարտի մեջ են մտել իրենց երթը խանգարելու ուղարկված թուրքական մի զորամասի հետ, որը ոչ թե բանակային է եղել, այլ ոստիկանական: Հաղթահարել են եւ ճանապարհը շարունակել ժամը 10-ին: Մայիսի 4-ին հասել են Խանասոր գյուղը, հաջորդ օրը հեծյալների խումբը երկրորդ եւ չորրորդ վաշտերի հետ դիրքեր է գրավել Բաշկալեի բարձունքներում եւ կազակային զորամասի հետ միասին մտել Բաշկալե գյուղաքաղաքը¹:

Նույն այս ժամանակ, երբ Անդրանիկի ջոկատը առաջանում էր Վանա լճի հարավային կողմով դեպի Վան, լճի հյուսիսային կողմով դարձյալ դեպի հայոց բնաշխարհն էին խորանում 1-ին ջոկատները, որոնք ոռավմի դաշտ մեկնած 2-րդ, 3-րդ եւ 4-րդ ջոկատները, որոնք երեքով միավորվել էին մեկ միասնական հրամանատարության տակ եւ միատեղ հանդես էին գալիս որպես Արարատյան ջոկատ:

2-րդ ջոկատը, որ մեկնել էր հոկտեմբերի 25-ին Իգդիրից, իր 400 զինվորով, հոկտեմբերի 30-ին երկօրյա լուրջ կովի մեջ էր մտել Կավոն Շամե քրդական գյուղի տակ: Այդ ընթացքում ոռուսական զորամասերը հրաման են ստացել ընթացքից փոխել իրենց ճանապարհը: Մինչդեռ ջոկատի կոիվը Կավոն Շամեում սկսվել էր եւ այլեւս ընդհատել չէր լինի: Ջոկատը կովելով մտնում է գյուղը, որից կարճ ժամանակ անց, նույն օրը, նրա վրա հարձակվում են ետ են շարվում թշնամու լրացուցիչ ուժերը: Չհանգստանալով, ջոկատի վրա նույնօրվա 1-ին հարձակվում են միատեղ մոտ հինգ անգամ թվով առավել զինված քրդեր ու կանոնավոր զորամասեր: Ջոկատն իր հրամանատարի ղեկավարությամբ ընդունում է անհավասար մարտը եւ, դիմադրելով, հակահարձակման է անցնում ու ետ մղում թշնամուն: Այստեղ զինվորների հետ զենքը ձեռքին քաջաբար մարտնչող ջոկատի հրամանատար Դրաստամատ Կանայանը վիրավորվում է եւ նրան հրամանատարի պոստում միառժամանակ, մինչեւ ապաքինվելն ու վերադարձը, փոխարինում է Արմեն Գարոն, նույն-

¹ «... օրագրութիւն», էջ 20-21:



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐ

Նստած են, ձախից՝ Դրո, Սիլիկյան, աջից՝ Նազարբեկյան

պես քաջ ու համարձակ հրամանատարը, որը տեղակալ խեչոյի հետ շարունակում է գլխավորել ջոկատի կռիվները:

Մարտերի օրերին «Լուրեր հայ կամավոր խմբերի մասին» խորագրով ձեռագիր թերթիկներ էին տարածվում հայության մեջ, որոնք նկարագրում էին կամավորական ջոկատների կռիվները: Դրանցից մեկը նվիրված է Նոյեմբերի 23-ի կռիվին: Պատկերավոր է. «Թշնամու ուժեղ մի խումբ... ցերեկվա ժամը 11-ին լեռների վրայից կրակ է բացել կամավորների վրա»: Իսկույն կամավորները հեծյալ կազակների խմբերի հետ դիրք են գրավել լեռան լանջին ընկած գյուղում: Նրանց հաջողվում է սպառնալից գրոհի անցնել թշնամու դեմ եւ արդեն ժամը 2-ին նրան փախուստի մատնել: Բայց երկու ժամ հետո թշնամին հակագրոհի է դիմել, այս անգամ կամավորների թվի համեմատ երիցիս առավել ուժերով: Հիմա էլ մարտը մեկ ժամ է տևել, եւ թուրքերը վերստին փախուստի են դիմել: Մարտի ելքից հանգստացած կազակները բաժանվում են կամավորներից: Եվ ահա երեկոյան ժամը 7-ին թուրքերը նորից են հարձակվում լեռան աջ ու ձախ կողմերում ընկած գյուղերից: Այս անգամ, դիմադրական մարտեր մղելով, կամավորները մթության միջով խույս են տալիս կռիվից եւ ուշ երեկոյան հասնում իրենց բանակատեղը: Թերթիկը բոլորին ի գիտություն հայտնում էր, որ քաջությամբ առանձնապես աչքի են ընկել հրամանատարի օգնական խեչոն, ջոկատի հեծյալների հրամանատար Արտեմ Շահումյանը, որին գիտեին որպես Ջեմպակ, Նաե Յապոն անունով հայտնի ռազմիկ Հովհաննես Պարոնյանը եւ ուրիշներ, որոնք ջոկատի 400 հոգիանոց կազմին ուժ ու եռանդ էին ներշնչում եւ իրենց քաջությամբ կրկնապատկում նրա դիմադրական զորությունը:

Թերթիկն ի լուր ամենքին, Նոյեմբերի 28-ին ջոկատի մղած կռիվի մասին պատմում է կամավորներից մեկի անունից: Հետեւյալն է: Դիրքեր գրավելով կամավորների զբաղեցրած տեղանքի շուրջը զոտ-նըվող բարձունքներում, թշնամին պատրաստվում է հարձակման: Եվ անսպասելիորեն Յապոնի տասնհինգ զինվորների խումբն է «արշավում դեպի թշնամին»: Նույն միջոցին Ջեմպակն է իր հեծելախմբով առաջ մղվում եւ հաջողակ դիրք գրավում: Մնացած հետիոտն կամավորներին մնում էր ոտքի ելնել եւ սրարշավ հարձակվել թշնամու վրա: Թշնամին ստիպված է լինում զիջել իր բարձր դիրքերը: Նրա նահանջին կամավորների հետեւելու եւ հալածելու պահին գալիս, հասնում են «ոռու զինվորները, որ հեռվից դիտել էին կռիվը, եւ հիացած զովասանքներ են թափում»: Թերթիկը հայությանը տեղյակ էր պահում այդ մարտում զոհվածների անունները, Ալեքսանդր Հարությունյան՝ խնուցի, Հմայակ Ալեքսանյան՝ դավալեցի, Հովհաննես Սկրտչյան՝ ջալալօղլեցի...¹:

Կռիվներից հետո զորախմբի հրամանատար գեներալ Սավիցկին երկրորդ ջոկատի մասին զովասանական զեկուցագիր է ներկայացրել բարձր հրամանատարությանը: Իսկ այն գնդի հրամանատարը, որի կազմում զետեղված է եղել ջոկատը, պարտք է համարել իր ողջույնի խոսքը հղել ջոկատի զինվորներին, որի առաջին բառերը թերթիկում թարգմանված են այսպես.

«Տղերք քան, երեկվա Նոյեմբերի 28-ը թվականը կրնանք հպարտությամբ հանձնել հայ նորագույն պատմությանը...»:

Հաջորդ կռիվը ջոկատը մղել է դեկտեմբերի 7-ին: Երբեում է մաս-մաս է ջոկատը առաջ գնացել: Այդ ձեւով ջոկատի հեծելազորը կազակների երկու հարյուրյակի հետ է ընթացել: Ցերեկվա ժամը 3-ին սկսվել է նրանց ընդհարումը թշնամու հետ: Կազակները դիրք են գրավում, դարձյալ ըստ տարածված թերթիկի, մի բարձունքում, իսկ հայ հեծյալները դիրքավորվում են մոտակայքի երկու բարձրադիր քրդական գյուղերում: Թշնամին մոտ հազար հոգի է եղել: Կռիվը տևել է զրեթե ութ ժամ: Թշնամին անհամեմատ շատ կորուստներ է ունենում:

Երկրորդ ջոկատը հաջող կռիվներ է ունեցել Նաե դեկտեմբերի 11-ին, 12-ին եւ 13-ին: Սրանից հետո, ահա, ջոկատը բռնում է դեպի Իզդիր նահանջելու ուղին: Այդ միջոցին ջոկատի գլխավոր խնդիրն ու հոգսը դառնում է գաղթող հայությանն օժանդակելը. «Մեր խումբը անգնահատելի ծառայություն մատուցեց տնավեր եղած հայ գյուղացիությանը՝ պաշտպանելով եւ օգնելով նրան գաղթի ժամանակ»²:

¹ Թերթիկի օրիակը տե՛ս ԿՊԳԱ, ք. 2100, ց. 1, գ. 558, քք. 37-38: ² Լ. Ս., քք. 39-40:



ՀԱՍԱԶԱՍԴ

Համազասպի գլխավորած երրորդ ջոկատը նոյեմբերի 1-ին 430 հոգով ռազմաճակատ դուրս գալով Կաղզվանից Ալաշկերտ ուղղությամբ, շուտով, ինչպես ասվել է, հաշտվում է այն փաստի հետ, որ Ալաշկերտի դաշտ մտած 180 ալաշկերտցի կամավորները գնան իրենց գյուղերն ու տները եւ իրենց հետ տարած «Բերդանկա» հրացաններով հենց տեղերում օգտակար լինեն հայրենակիցների ինքնապաշտպանությանը: Ջոկատը մնացյալ կազմով առաջ է շարժվում

եւ նոյեմբերի 26-ին 150 կազակների հետ իր 14 զինվորներին ուղարկում է Զյափանակ գյուղի շուրջը հետախուզության: Հենց այդտեղ էլ կոհվ է բռնկվում: Երկու կողմերն էլ զոհեր են տալիս: որի մասին թերթիկում ասվում է՝ «մերոնք տալիս են 8 վիրավոր, թշնամու կորուստները շատ մեծ են լինում»: Զյափանակում նստած էին թուրքերը: Ռուս հրամանատարությունը որոշում է անպայման գրավել գյուղը: Դեկտեմբերի 2-ին ռուսները, իրենց հետ տանելով նաեւ հայկական ջոկատը, անցնում են ռազմական գործողությունների: Բայց միանգամայն անպատրաստ վիճակում: Թերթիկում ասվում է, որ ջոկատի զինվորները «կովից առաջ [արդեն] երկու օր հաջ չէին կերել»: Այդ դեռ բավական չէր, ռուսների թնդանոթներն էլ վատ կրակելու հետեւանքով ոչ մի դեր չեն խաղում: Ռուսների եւ հայերի միատեղ գրոհը ջանիցս ետ է մղվում: Այնուամենայնիվ, թուրքերի կորուստներն ավելի շատ են լինում: Ամեն ինչ վճռում է զինվորների հոգեկան ամրությունը¹: Հաջորդ օրերին կազակային զորամասի հետ միասին երթուղու գյուղերում կոհվներ մղելով, կամավորները կանգ են առնում Ալազոզ գյուղում եւ այդտեղ էլ, դեկտեմբերի 8-ի գիշերը, ենթարկվում թուրքերի հանկարծակի հարձակմանը: Խավար էր, ձյուն ու ցուրտ: Իսկ կամավորների ու նրանց հետ կազակների մի մասը չի հասցնում մինչեւ իսկ հագնվել եւ գեւք վերցնել ձեռքը: Պահակները նկատում են թշնամուն, պատմում է Լիկոլ Աղբալյանը իր հիշյալ զեկուցման մեջ, բայց արդեն ուշ է լինում, հանկարծակիի

¹ Լ. Ա., ԲԲ. 40-41:

եկած՝ նրանք փողոց են նետվում, եւ «փողոցներում, տներում, սկսվում է մի սոսկալի կոհվ՝ հրացանով, դաշույնով, թրով ու ձեռքով»: Եվ ջոկատը ունենում է երեսուն սպանված ու քառասուն վիրավոր: Նահանջելով, ջոկատը ռուսական զորամասի հետ միասին հետագայում վերստին հարձակվում, գրավում է գյուղը եւ մի քանի հաջող մարտեր մղելուց հետո նույնպես կանգնում նահանջի ճանապարհի վրա, որը տանում էր դեպի Կաղզվան: Ինչպես որ երկրորդ ջոկատը, երրորդն էլ գնում է ռուսական զորամասերի արիերգարդում, որով հետեւ երկուսն էլ ուղեկցում էին գաղթող հայերի քարավաններին, ճանապարհին լրացնելով նրանց շարքերը եւ խնամք տանելով ծեր ու մանուկ գաղթականների նկատմամբ:

Կովկասյան բանակի առաջին կորպուսի հրամանատարը բարձր է գնահատել դժվարին պայմաններում երրորդ ջոկատի հրամանատարի ու կամավոր զինվորների ցուցաբերած արիությունը: Դեկտեմբերի 27-ին կորպուսի բոլոր ստորաբաժանումներին նրա ուղարկած հրամանում կարդում ենք.

«Հայկական երրորդ ջոկատը, Համազասպ Սրվանձտյանի հրամանատարության ներքո, պատերազմի հենց սկզբից գտնվելով կորպուսի ձախ թելում, անվեհեր կերպով կատարել է հետախուզումներ դժվարամատչ լեռներում, մարտնչել է քրդական հրոսակների դեմ, մեր զորքերի հետ ուս-ուսի տված մասնակցելով կոհվներին եւ կռելով ծանր զոհեր:

Ազնիվ ու ջաջ կոհվների համար շնորհակալություն եմ հայտնում ջոկատի հրամանատար Համազասպ Սրվանձտյանին եւ խիզախ կամավորներին»: Հրամանը ստորագրել է կորպուսի հրամանատարին փոխարինող գեներալ Պրժեւալսկին (29. 12. 1914)¹:

Կամավորների չորրորդ ջոկատը չորս հարյուր յոթանասուն հոգուց բաղկացած իր կազմով, Զեռու գլխավորությամբ, դուրս գալով Սարիղամիշից նոյեմբերի 6-ին, գտնվել է բուրից ծանր վիճակի մեջ: Ռազմական հրամանատարության փաստաթղթում ասվում է, որ ամսի 16-ին այն տասժամյա լարված մարտ է մղել թշնամու դեմ, ետ է մղել նրան եւ գրավել է Դզըլքիլիսա եւ Լավդեզոր գյուղերը, իսկ

¹ Լ. Ա., ԲԲ. 40-42 եւ Ե. Աղբալյանի վերոհիշյալ զեկուցումը, ՀՀ ՊԿՄԸ ք. 402, ց. 1, գ. 13, ԲԲ. 1-31:



ԶԵՐԻ

այնուհետեւ մի շարք հաջող հետախուզական գործողություններ է կատարել: Անհաջողություններից հետո, ասես որպէս պատվի ու հերոսության ջննություն, առաջադրանք է ստացել՝ գրավել ռուսական բանակի համար կարելոր դիրք հանդիսացող Ղզըլաղաճի բարձունքները: Ջոկատը կատարում է առաջադրանքը եւ գրաված դիրքը պահում իր ձեռքում մինչեւ նահանջի հրամանը: Դրան հետեւում է ոչ պակաս դժվարին մի խնդիր, մարտերով կտրել-անցնել թուրքական երեք գյուղերի միջով, գրավել Վերին ու Ներքին Չախմախ գյուղերը, դուրս գալ Զյոփրի Զյոյ գյուղում կանգնած զորքերի թիկունքը, այդ կողմից իր վրա հրավիրել նրա ուշադրությունը եւ հանգիստ չտալ նրան մյուս ճակատից ռուսական զորքերի հարձակման ժամանակ:

Դժվարին էր խնդիրը, առաջին հայացքից մինչեւ իսկ անիրագործելի: Բայց պատվի հարց էր, ուստի այլընտրանքի մասին խոսք չէր կարող լինել: Հայ կամավորները շարք են կանգնում եւ նրանց առաջնորդում է ոգեշնչող Զեռին: Առաջիկա բոլոր մարտերում ջոկատը միշտ իր թվաքանակով զիջել է հակառակորդին, եւ միշտ տեղանքն էլ նրա օգտին չի եղել: Մանավանդ որ այդ կողմում գյուղերը միայն թուրքական էին եւ թիկունքում գրեթե իսպառ բացակայում էին հայերը: Մեկ է, պետք էր կռվել, եւ կռվել են ու առաջ գնացել: Ընթացքում նրանց օգնության են եկել ռուս զորամասեր: Հետագայում ջոկատը մասնակցել է Օլթիի ուղղությամբ մի շարք կռիվների: Ռուսական զորամասերի հետ ռուս անդադար հարձակումներ է գործել եւ կոնկրետ հատվածներում ձախողել թուրքերի առաջխաղացման պլանները: Ջոկատին վիճակված բոլոր առաջադրանքներն ու կռիվներն էլ բացառիկ դժվար են եղել եւ ուժերի անհավասարության պայմաններում, երբեմն էլ անհաջող նախազրկմամբ: Այդպիսին է եղել, օրինակ, Իդ բնակավայրում ռուսական զորամասի հետ միանալու եւ միասին արիերգարդից թուրքական բանակի առաջխաղացումը խափանելու առաջադրանքը: Նախապես չի իմացվել, թե թուրքերը որքան զորք ունեն եւ ինչ սպառազինությամբ: Ավելին, քսանժամյա անդադար ու տառապալից երթից հետո նոր միայն, սպասածին հակառակ, պարզվել է, որ ռուսները Իդից հեռացել են, եւ ռազմաճակատի այդ հատվածը գտնվում է թուրքերի ձեռքում: Ջոկատը ռուսական զորամասի հետ միասին թեքում է իր ճանապարհը, բայց, մեկ է, դուրս է գալիս թշնամու համազարկերին դեմ հանդիման: Ուրիշ ելք չունենալով, ջոկատը դիրքեր է գրավում եւ մտնում անհավասար կռիվ մեջ: Դրա նպաստն այն է լինում, որ ճանապարհը փակվում է թուրքերի առջեւ եւ կամավորների մի մասը նահանջող ռուսական վաշտերի հետ միասին կարողանում է անցնել

Օլթիի կիրճով: Հարկադրաբար ջոկատը մի մասով նահանջում է Սարիղամիշի, մյուսով՝ Մերդինեկի կողմը: Այստեղից էլ, հանգամանքների բերումով, ջոկատի դեպի Մերդինեկ նահանջող մասը գնում է Կարս, որտեղ նրան միանում է Սարիղամիշի կողմը նահանջած մասը: Այսպիսով, թեւ նահանջ, բայց եւ օժանդակություն ռուսական զորամասերի գործողություններին: Ծառայությունը գնահատվում է բազմաթիվ շքանշաններով, ըստ որում Զեռուն՝ 2-րդ աստիճանի Գեորգիեյան շքանշան, նրա տեղակալ Արզումանյանին՝ 3-րդ աստիճանի: Իսկ մինչ շքանշաններով վարձատրման այս արարողությունը անցած տանջալից ճանապարհը ջոկատից խլել էր մոտ 70 կամավորների կյանք¹:

Այսքանը մինչեւ 1914-ի դեկտեմբերյան նահանջը: Դրանից հետո բանակային հրամանատարությունը այն կարծիքին է եղել, որ կամավորական ջոկատների մարտիկների թիվը պետք է ավելացնել: Նկատի էին առնվում է՛լ կորուստներն ու այդ պատճառով համալրման անհրաժեշտությունը, է՛լ առաջիկա խնդիրները: Դա համընկել է հայերի սկզբից էլ ունեցած ձգտումներին: Այժմ արդեն նաեւ առկա էր ջոկատների խաղացած դրական դերը, որը բանակի շտաբային զեկուցագրում այսպես էր բնութագրվում. «Արդեն առաջին երկու ամիսներին ջոկատները *հսկայական* օգնություն են ցույց տվել թուրքիայի հայ բնակչությանը, փրկելով նրան Ռուսաստանի կողմ լինելու համար կիրառվող անմարդկային դատաստանից»: Հատկապես նշվում էր, որ առաջին ջոկատը հայերին դուրս է բերել Դիլմանի ուղղության վրա գտնվող բնակավայրերից, իսկ երկրորդ ջոկատը պատվար է կանգնել ալաշկերտցիների գաղթին: Չնայած դրան, վերն ընդգծված «հսկայական» բառը նշված փաստաթղթի հարակից բաժնում, մեր կարծիքով իրավացիորեն, կասկածի տակ է առնվում, որից ավելի պարզ է դառնում, որ փաստաթղթում այդ միտքը շեշտելու պատճառը միտումնավոր է, որը պարզ կդառնա ստորեւ:

Համալրումը, որի մասին ասվեց, եղել է: Չորս ջոկատների կազմն էլ եկել են նոր երիտասարդ ուժեր: Հասարակական կարծիքի ճնշման տակ չորսն էլ կանգնեցվել են հարավային գծի վրա, դեպի Վան տանող ճանապարհին: Այդ դեպքում Համազասպի եւ Զեռու ջոկատների տեղում, նույն ուղղության վրա, կանգնում է վեցերորդ ջոկատը, որի հրամանատարը ինչպես նշել ենք վերելում, սկզբում Ջանփուղայանն էր, ապա՝ նույնպես բանակային սպա Ավշարովը, որը վաղաժամ զոհվեց մարտում: Բանակային շտաբի նույն փաստաթղթում ասվում է, որ մյուս ջոկատների հետ մեկտեղ այդ ջոկատը եւս

¹ ՀՀ ԳՊՄ. Ֆ. 402, ց. 1, գ. 13, թ. 14-31: Նաե՛լ ԿՊՊՄ. Ֆ. 2100, ց. 1, գ. 646, թթ. 63-65:

սխրագործ է եղել կոիվների ընթացքում¹: Բայց դա այլևս չի պատկանում ջոկատների գործունեության առաջին փուլի պատմությանը, որին վերաբերում էր վերը շարադրվածը:

Չտապենք ավարտել ջոկատների պատմությունը: Երկու խոսք էլ այն մասին, թե ինչու եւ ինչպես երեք ջոկատները միավորվեցին որպես Արարատյան ջոկատ եւ ինչպիսին է եղել դրանում Անդրանիկի դիրքը:

Արդեն 1914թ. վերջին — 1915-ի սկզբին, այսինքն առաջին նահանջից հետո, Ազգային բյուրոն անհրաժեշտ է գտել եղած կամավորական խմբերը միավորել մեկ հրամանատարության ներքո՝ որպես մի ամբողջություն: Այդ ժամանակ էլ Արարատյան անունն է առաջ քաշվել: Յանկություն կար, որ այդ ջոկատը գործեր հարավային այն ուղղությամբ, որով ընթանում էր Անդրանիկի ջոկատը, դեպի Վան, ապա ավելի առաջ դեպի Երկրի խորքը: Այդ ձեռով հայ ռազմական ուժը կկենտրոնացվեր հայերով ամենախիտ բնակեցված վայրերը տանող ճանապարհի վրա՝ դեպի պատմական Վասպուրական ու Տարոն²: Այդ գաղափարի իրականացման միջոցներից մեկը այն է լինում, որ կամավորական ջոկատների կազմավորմամբ, ներանց գործերով զբաղվող կարգադրիչ մարմինը տեղափոխվում է Թիֆլիսից Երեւան: Հիմնականում Երեւանի եւ Զանաքեռի գորանոցներում էլ տեղավորվում են կամավորները հավաքագրման սկզբնափուլում, այնտեղ էլ անցկացնելով ռազմական ուսուցման իրենց առաջին պարապմունքները:

Խմբերի միավորման գործը իր որոշակի ընթացքի մեջ է դրվում 1915թ. փետրվարին Թիֆլիսում կայացած ազգային համագումարից հետո, որտեղ ընտրվում է կամավորների խմբերի գործունեությամբ զբաղվող Կենտրոնական ազգային բյուրոյի նոր կազմ: Սիւս հենց այս վերջինս էլ զբաղվում է խմբերի վերակազմավորման, նրանց, որպես մեկ միասնական, Արարատյան խումբ ձեւավորման գործով: Այդ բոլորը ավարտվում է 1915-ի ապրիլի 15-ին, երբ որ ձեւավորված Արարատյան ջոկատի մեջ մտնող խմբերը ճանապարհ են ընկել դեպի ռազմի դաշտ, ուղղություն ունենալով Վանը³:

Նախապես աշխատանք էր տարվում, որ միավորվեմ, ի մի բերվեն որպես ամբողջական մի զորագունդ այդ ժամանակ ռազմաճակատի հարավային գծի վրա գործող առաջին չորս ջոկատները: Հրամանատարի համար առաջ էր քաշվում Անդրանիկի թեկնածությունը, բայց այդ հարցում նաեւ լինում են տարակարծություններ եւ, այսպես

1 ԿՊՊԱ. ֆ. 2100. ց. 1. գ. 646. ք. 63-65: 2 Ս. Կրացեան, Կեանքի ուղիներով, Գ հատոր, Բ., 1963թ. էջ 68-71: Ս. Կրացեանը եղել է կամավորական խմբերի կարգադրիչ մարմնի քարտուղար-գործավարը: 3 «Համառոտ տեղեկագիր Հ. Կ. ազգային բյուրոյի գործունեության (1915-1917թթ.)». Թիֆլիս:

ասած, որոշ խանգարիչ հանգամանքներ: Սիւսն Կրացեանը հիշում է այն, որ ընդհանուր հրամանատարի թեկնածության հարցի առաջ քաշման, ըննարկման այդ օրերին Անդրանիկը դարձել էր շատ դյուրագրգիռ եւ անհավասարակշիռ: Նա նկատի ունի այն զայրույթը, որով ոչ միայն ներքնապես ապրում, այլեւ որը ամեն քայլափոխում դրսեւորում էր Անդրանիկը այդքան կարճ ժամանակամիջոցում այդպես հաջող եւ խոր առաջընթացից հետո նահանջի հրամանի կատարմամբ: Անդրանիկը, իրոք, խիստ զայրալից էր դարձել այդ օրերին բոլոր նրանց համար, ովքեր փորձում էին նահանջը պատճառաբանելու, հիմնավորելու եւ արդարացնելու մեղմացուցիչ հանգամանքներ մատնացույց անել: Եվ նրանց մեջ, որոնց Անդրանիկը բաժին էր հանում իր այդ զայրույթից, նախ եւ առաջ հայ առաջատար ազգային այն գործիչներն էին ու Կովկասյան բանակի հրամանատարությունը, որոնք զբաղվում էին նահանջից հետո ջոկատների վերակազմավորման ու միասնական ջոկատի համար հրամանատարի առաջադրման հարցերով: Անդրանիկի թեկնածությունը կասկածի տակ է առնվում: Ընդհանուր հրամանատարի համար հարմար գըտնըվածների մեջ եղել է նաեւ Երեւանում ստեղծված ջոկատի հրամանատար Վարդանը¹:

Անդրանիկը մերժել է մտնել Արարատյան ջոկատը, միայն թե Կրացեանը չի ասում, թե երբ է մերժել՝ հենց սկզբից՝ եւեթ, թե՛ երբ պարզ է եղել, որ իր շուրջը առարկություններ կան, թեւեւ հնարավոր է, որ իր նկատառումներն ունենար եւ սկզբից էլ մերժեր թե՛ ջոկատների միավորման, թե՛ իր թեկնածության հարցը: Ուրիշ առարկողներ էլ են եղել: Դրոն, օրինակ, առարկելով Վարդանի թեկնածությանը, մինչեւ իսկ զայրացել է, այդ պոստի համար միանգամայն հարմար գտնելով իրեն: Տարբեր ցանկություններն ու կարծիքները բնական են: Միայն թե մարդկանց իրար հետ համեմատելու այս քաջքույր հանգեցնում է իրար հակադրման, որը գնալով շիկացնում է մթնոլորտը: Եվ հենց նման իրավիճակում էլ որոշվում է, որ ընդհանուր հրամանատար պետք է լինի, այնուամենայնիվ, Անդրանիկը: Առաջնությունը տրվում է նրա տվյալներին եւ հարցը լուծողները այդ են գտնում որպես վերջնական վճիռ: Եվ սա՛ ջոկատի հրամանատարներին իրար հետ համեմատելու եւ հակադրելու քաջքույրից հետո, որը շոշափում է նրանց բոլորի արժանապատվությունը: Անդրանիկին բոլոր կամավորական ջոկատների հրամանատար նշանակելը նրա դեմ է հանում, այս անգամ, մյուս ջոկատների հրամանատարներին: Այդ մասին պարզ ու որոշակի ասվում է 1915 թվականի դեկտեմբերի 11-ին Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարություն ներ-

1 Ս. Կրացեան, նշվ. էջ 68-71:

կայացված փաստաթղթում, որը կազմելուն մասնակցել են նաև հայ քաղաքական պարագույնները: Իմանալով Անդրանիկին նշանակելու մասին, ասվում է այնտեղ, «Դրոն, Համազասպը եւ Ջեռին իրենց խմբերի հրամանատարությունը հանձնելով ուրիշներին [Երեվանից] եկել են Թիֆլիս, որպեսզի իրենց զայրույթը հայտնեն Ազգային բյուրոյին»: Անդրանիկն անտարբեր չի մնացել: «Արձագանքելով դրան,—կարդում ենք փաստաթուղթում,—նա էլ խնդրել է, որ իրեն բոլորովին ազատեն ջոկատի հրաժանարարությունից»¹:

Արդյունքն այն է եղել, որ որպէս Արարատյան ջոկատ ձեւավորվել են 2—րդ, 3—րդ, 4—րդ ջոկատները եւ նոր կազմված 5—րդ ջոկատը: Վերջինիս հրամանատար Վարդանն էլ դարձել է միացյալ Արարատյան ջոկատի հրամանատար: Դա եղել է բանակային հրամանատարության համաձայնությամբ: Ջոկատների վերակազմավորման հենց այդ ընթացքում բանակային 4—րդ կորպուսի հրամանատար Օգանովսկին փոխարքային հայտնել է. «Կարծում եմ, որ Անդրանիկի ջոկատը պետք է առանձին գումարտակի ձեւով թողնել զեներալ Նազարբեկովի տրամադրության տակ»²: Ըստ այդմ էլ Անդրանիկի ջոկատը մնացել է առաջվա պես առանձին միավորում: Արարատյան ջոկատը բանավոր, թե գրավոր անվանվել է եւ ջոկատ, եւ գունդ՝ Արարատյան գունդ, թեւ յուրաքանչյուր առանձին դեպքում ջոկատները հրամաններ ստանձնելիս կոչվել են իրենց առանձին անուններով: Կազմում եղել է 3300 հոգի: Նախապես մտել է Կովկասյան բանակի Չեռնոզուբովի ղեկավարած զորախմբի այն ենթակազմում, որի հրամանատարը գնեւերալ Նիկոլաեւն էր: Երեւանից դուրս է եկել 1915—ի ապրիլի 15—ին եւ ուղարկվել դեպի Վան տանող ճանապարհը: Միավորվող եւ միավորված այդ ջոկատները իրենց համատեղ զինավարժական պարապմունքներն անց են կացրել Երեւանում եւ Զանաքեռում գտնվող զորանոցներում: Վարդանը, երբ վում է, այդ գործը շատ լավ է վարել, որի մասին բանակային հրամանատարությունը բարձր կարծիք է ունեցել: Այդ է վկայում Երեւանի եւ նրա մոտակայքի, Զանաքեռի եւ Ուլուխանլուի զորամասերի պարետ գնեւերալ—լեյտենանտ Կրիժեւիչի շնորհակալական հրամանը, որը նա արձակել է կայազորի իր ենթակայության բոլոր ստորաբաժանումներում ընթերցելու համար՝ 1915—ի ապրիլի 14—ին ջոկատը ռազմաճակատ ճանապարհելու առիթով.

«Հրաժեշտ տալով հայկական ջոկատին... ես հաճույքով նշում եմ, որ ինձ ենթակա շրջանում գտնվելու ժամանակամիջոցում բոլոր խմբերը եռանդով զբաղվել են շարային պատրաստությամբ եւ իրենց պահել են գերազանց, տեղիք չտալով որեւէ հանդիմանության:

1 ԿՊՊԱ, ֆ. 2100, ց. 1, գ. 646, ք. 63: 2 ԿՊՊԱ, ֆ. 2300, ց. 1, գ. 745:

Ջոկատի պետ պարոն Վարդանի եւ խմբերի հրամանատարներ պարոնայք Դրոյի, Համազասպի, Խեչոյի եւ Ջեռու հմուտ եւ վճռական ղեկավարումը հանգեցրել է շատ լավ արդյունքների: Այդ ամենը ինձ հարկադրում է անկեղծ շնորհակալություն հայտնել խմբերի ուսուցման եւ դաստիարակության գործի բոլոր ղեկավարներին եւ մարտական հաջողություններ ու երջանկություն ցանկանալ նրանց:

Շնորհակալություն խմբերի բոլոր քաջ մարտիկներին եւ աստծու բարի կամքը նրանց ճանապարհին»¹:

Անդրանիկի ջոկատը այդ ժամանակ, ինչպես ասվեց վերելում, արդեն գտնվում էր ռազմաճակատում: Արարատյան ջոկատը ռազմաճակատ մեկնելով գնացել է Շատախի, Մոքսի եւ Մամրտանքի շրջանները, ապա, 1915—ի հունիսի սկզբներին, կոիվներով դուրս է եկել Վանա լճի արեւմտյան ափ: Կոիվների այս վերջին փուլում Արարատյան զնդին միացել է նաև Անդրանիկի խումբը: Առաջ գնալով ասենք, որ 1915—ի օգոստոսին Արարատյան գունդը որպես այդպիսին վերացվել է, եւ նրանում միավորված ջոկատներն սկսել են գործել առանձին—առանձին, ինչպես որ մինչ այդ էր²: Այդ այն ժամանակ էր, երբ նոր (1915—ի ամռանը) կազմավորվել էր 1300 հոգուց բաղկացած կամավորների 7—րդ ջոկատը՝ Իշխանի հրամանատարությամբ: Աշխարհ այդ ջոկատը անցնելով Դարսկաստանի վերջը նշված ճամփաներով, հասնում է մինչեւ Ռեւանդուզի շրջանը, համագործակցելով այնտեղ գտնվող Ջեռու ղեկավարած ջոկատի հետ³:

Շարունակելու:

Մտնելով Բաշկալե, Անդրանիկի ջոկատը գրավում է մի դիրք, որը փակում էր այնտեղից Վան տանող ճանապարհը եւ կարող էր արգելք ծառայել, հարկ եղած դեպքում, իրենց դեմ ռազմի դաշտում մարտեր մղող Խալիլ բեյի զորամասերի եւ Վանը պաշարած Ջեւդեթ փաշայի զորամասերի միմյանց օգնությանը: Թուրքերը թեթեւակի մարտեր մղելով, նահանջում էին դեպի Վան՝ Բաշկալեից Ջուլամերիկ: Այստեղ Ջեւդեթ փաշան իր ուժերից մի աննշան բաժին է հանում եւ ուղարկում Խալիլ փաշային, որը, նույն բանն է, ոչ այնքան նպաստում է նրա հարձակողական գործողություններ մղելուն, որքան նահանջի երթը շարունակելուն:

Սա եւս, ինչպես նկատել ենք, իրոք հազվադեպ բան է պատերազմների պատմության մեջ, Խալիլ փաշան, ուսաց զորքի հարվածներից կորուստներ տալով, արագորեն փախչում, նահանջում է, իսկ Վանի տակ գտնվող արյունակից զորքը, որ Ջեւդեթ փաշայի գլխա-

1 ԿՊՊԱ, ֆ. 551, ց. 1, գ. 5, ք. 174: 2 «Համառոտ տեղեկագիր Հայոց կենտրոնական ազգային բյուրոյի գործունեության (1915—1917թթ.)», Թ. Թ. 3—6: Նաև՝ Ա. Վրացյանի նշված գիրքը, էջ 67—71: 3 «Համառոտ տեղեկագիր...»:

վորությամբ էր. քայլ անգամ ընդառաջ չէր գալիս: Պարզ ու որոշ է. նա Վանի հայ բնակչությանը կոտորելն ավելի կարելոր է իմամարում, քան իր արյունակից զինվորներին օգնության հասնելը: Չմոռանանք, որ սա 1915-ի ապրիլին է, հայության երիտթուրքական ցեղասպանության եռուն օրերին: Թող թշնամու հարձակվող զորքը առաջ գար, դա ոչինչ, միայն հայի հոտը վերանար իր բնարմատ հայոց երկրից, որն, ահա, քանի դար թուրքիա էր կոչվում:

Իսկ այն, որ խալիլն ու Ջեզեթը ձգտում էին իրար միանալ, դա նույնպես անառարկելի է: Միայն թե դա պետք է տեղի ունենար իրենց կամեցածի համաձայն:

Կատարելով իր, այսպես ասած, կոկարար առաքելությունը, Ջեզեթը արշավող ոռուսական զորքերին առանց լուրջ ու տեսական դիմադրություն ցույց տալու, խալիլ փաշայի հետ ընկերացած թողնում է Վանը եւ նահանջում դեպի Բիթլիս: Կամավորական զինվոր կանգ է առնում Վանի մոտակայքի Վարագա վանքում: Հոգևած զինվորներին վերջապես հանգիստ է տրվում: Նրանք փոխում են հագուստները թիկունքից նոր ստացվածով, կարգի են բերում զենքերը: Այդ ընթացքում Անդրանիկը սենդի պաշարներն սպառած Վանի բնակչությանն է ուղարկում մոտակայքի գյուղերից վերցրած 50 հազար ոչխարն ու խոշոր եղջերավոր անասունների երկու նախիր: Եվ այն օրը, երբ կամավորների ջոկատը նորովի զգեստավորված ճանապարհ է ընկնում դեպի Վան, քաղաքի մատույցներում նրան դիմավորելու է դուրս գալիս խանդավադված հայ բնակչությունը¹:

Ոչ միայն նահանջի ժամանակ, այլև հարձակման ընթացքում Անդրանիկն օգտագործում էր ամեն հնարավորություն, որպեսզի կոհվներին ու դադարին զուգընթաց նույնպես, օգտակար լինել իրենց ճանապարհի վրա գտնվող գյուղերի ու քաղաքների հայ բնակչությանը թուրքի կոտորող սրից փրկելուն: Այդ բնակչությունը հետեւում էր Անդրանիկի ջոկատի ընթացքին, պահանջում էր հրավիրում էր նրան շուտափույթ օգնության հասնել: 1915-ի մարտին, երբ ջոկատը Խոյից Պարսկաստանով առաջ տանող ճանապարհին գտնվող Սեյդեվար գյուղում էր, Ուրմիայի շրջանի հայ եւ ասորի բնակչությունը բնագմաթիվ ստորագրություններով նամակ է հղել Անդրանիկին: Այդ մասին նա գրավոր տեղյակ է պահել Չեռնոգուբույին, պատմելով հետեւյալը:

Մարտի 6-ին Ուրմիայից ոռուսական զորքի դուրս գալուց հետո քսան հազար հայ ու ասորի օթեւանել են տեղի ամերիկական եւ կաթոլիկական մյուս միսիաներում, իսկ մյուսներին, երեք-չորս հազար հոգու, որոնք չեն հասցրել այդ միսիաները մտնել, քրդերը

1 << ՊԿՄ. ք. 370, ք. 2, գ. 16, թ. 6-8:



ԴԵՊԻ ՎԱՆ

գլխովին կոտորել են: Չբավարարվելով դրանով, ապա եւ նրանով, որ ամբողջ Ուրմիայի շրջանը մաքրել են քրիստոնյաներից, նրանք հարձակվել են վերը նշված ապաստանների վրա, ջարդել դռներն ու պատուհանները եւ ներխուժելով բռնաբարել 5-ից մինչեւ 60 տարեկան բոլոր կանանց, որոնց մի մասը մահացել է, ապա անասունների պես մորթոսել, կոտորել են նաեւ տղամարդկանց: Այն, ինչ տեղի է ունենում այդ շրջանում, ասվում է Անդրանիկի գրության մեջ, ոչ գրչով կարելի է նկարագրել, ոչ լեզվով: Կոտորողները եղել են 60-70 ասկյարներ եւ մոտ երկու-երեք հարյուր քրդեր, որոնք դեռ շարունակում էին իրենց բարբարոսությունները: Անդրանիկն ու իր հետ նամակը ստորագրած ջոկատի շտաբի պետ Ա. Ջամալյանը նախ խնդրում են, որ ջոկատին թույլ տրվի գնալ, օգնության հասնել բնակչությանը եւ ապա, այդ կապակցությամբ, տրամադրել որոշ լրացուցիչ զենք ու զինամթերք¹: Թե սրա արդյունքն ինչ է եղել, դժվարանում ենք ասել փաստաթղթեր չլիներու պատճառով:

Շարունակելով մեր միտքը, ասենք, որ ժամանակը մեզ նաեւ այնպիսի փաստաթղթեր է թողել, որոնք պատմում են Անդրանիկի գլխավորած ջոկատի մի ուրիշ կարելոր պարտականության մասին: Հեռագրաթղթեր են: Չոկատը Դիլմանից Վան ճանապարհը անընդհատ պահել է իր հետախուզության տակ եւ հաղորդումներ է արել բանակային հրամանատարությանը: Դրանք բոլորը Անդրանիկի անհունից են կամ հենց նրա ստորագրությամբ: Ընթերցենք:

Ապրիլի 22-ին է, հասցեագրված Սալմաստի զորախմբի պետ գեներալ Նազարբեկովին, ապրիլի 19-ին մուղանցուղի երկու հայից ոռու սպաները խլել են տասը կրականոց երկու թուրքական մաուզեր, իսկ ամսի 21-ին՝ բրաունինգ տիպի մի ատրճանակ: Անդրանիկը

1 << ՊԿՄ-ի կառարկիվ, ք. 4047, ք. 1, գ. 87, թ. 6:

բացատրում է, որ ինքն է այդ զենքերը նրանց տված եղել, ուստի խնդրում է, որ խլվածը վերադարձվի: Հայտնում է նաեւ, որ ոռուսաց կառավարությունը իր միջոցով Սալմաստի հայությանը ինքնապաշտպանության նպատակով զենք է բաժանել, իսկ 4-5 օր առաջ Չեռնոզուրովը իրեն հանձնարարել է գրադվել հայկական գյուղերի ինքնապաշտպանության գործով: Ուստի դարձյալ խնդրում է, որ Նազարբեկովը կարգադրի վերցված զենքերը ետ տալ¹:

Ապրիլի 18-ի երեկոյան մթին թուրքերը նահանջել են: Երկու օր հետո բռնելով դեպի Վան տանող ճանապարհը, կանգառներ տալով Բերզուշլու, Շեյթան Ավա, Սուղանջուղ, Սանամերիկ եւ Վարդան գյուղերում, Անդրանիկի ջոկատը այդ կողմերում կատարում է հետախուզական հանձնարարություն: Ամսի 22-ին, երբ Նազարբեկովը գտնվում էր Սուղանջուղում, Անդրանիկը երեկոյան ժամը 9-ը անց 20-ին հեռագրել է մեր գործողությունների մասին թշնամուն իմա-նալու հնարավորություն չտալու համար անհրաժեշտ եմ գտնում Չեզ տեղյակ պահել, որ հարկավոր է Շեյթան, Ենգիջան եւ Գյուլան գյուղերի բնակիչներին, որոնք սյունի ջոկեր են, ժամանակավորապես արտաքսել: Ինչդեռ, հարց է ծագում: Որովհետեւ նշված ջոկերը օգնում էին թուրք իշխանություններին եւ իրենք էլ մասնակցում հայ բնակչության նկատմամբ կիրառված, մեղմ ասած, բռնություններին²:

Դիմանի ճակատամարտից հետո մոտակայքի գյուղերի հայ բնակիչները դիմել են Անդրանիկի ջոկատը մտնելու ցանկությամբ: Ինչպես երեւում է, դրա համար պետք է լիներ բանակային զորամասի հրամանատարության թույլտվությունը: Պահպանված հեռագրաթղթում, որը հասցեագրված է Սալմաստի զորախմբի շտաբ, ապրիլի 23-ին Անդրանիկը խնդրում է իրեն թույլ տալ, որ ջոկատի կազմում ընդունի տասը բաշկալեցիներին³:

Ավելի մանրամասն նկարագրելու համար, թե ընդհանուր առմամբ ինչպիսի բնույթ են կրել բանակային հրամանատարությանը Անդրանիկի հղած հեռագրերը, մեքբերենք դրանցից մի քանիսը եւս:

«Ապրիլի 23-ին, Վարդանից Սուղանջուղ, երեկոյան ժամը տասն անց քսան: Սալմաստյան զորախմբի շտաբի պետ գեղապետ Պոլտավցեւին: Տեղանքը ուսումնասիրելու համար այսօր ես մեկնեցի Շեյթան գյուղը... վաղը հետախույզներ կուղարկեմ Բուրուշ խորան⁴»:

Նույն օրը, ապրիլի 23-ին, Անդրանիկը «1-ին հայկական ջոկատի հրամանատար» բառերը կրող իր պաշտոնաթղթով Նազար-

*Մեր ջոկատը Նազարբեկովի արտա-
կառավարությանը վերադարձնելու
ընդհանուր խնդրում...*
Անդրանիկ
27.05.1919

*Սալմաստի ջոկատի մասին
Մարտի 22-ին Նազարբեկովի
հրամանագրով...*
Անդրանիկ

*Մարտի 22-ին Նազարբեկովի
հրամանագրով ջոկատը
Սալմաստում էր կազմակերպում
Սալմաստի ջոկատի
10 ջոկատի մասին
Նազարբեկովի հրամանագրով
Կառավարությանը
Անդրանիկ*

*Սալմաստի ջոկատի
Մարտի 22-ին Նազարբեկովի
հրամանագրով ջոկատը
Սալմաստում էր կազմակերպում
Սալմաստի ջոկատի
10 ջոկատի մասին
Նազարբեկովի հրամանագրով
Կառավարությանը
Անդրանիկ*

ԱՆԴՐԱՆԻԿԻ ԾԱԿԱՏԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԵՐԸ

բեկովին հայտնում է, որ նրան է ուղարկում ռազմի դաշտում զոհված թուրք սպայի մոտ գտնված երկու օրագրերից մեկի թարգմանությունը, որը կատարվել է իր հանձնարարությամբ¹: Օրագիրը գտնվել է ամսի 19-ին, երբ թուրքերը, հեռանալով, դաշտում թողել էին իրենց սպայի դիակը: Սա իր մեջ անդժվածի մի բաժին ունի, որի մասին խոսք կլինի ստորեւ:

Ապրիլի 24-ին Վարդանից Սուղանջուղ երեկոյան ժամը 6 անց 15 րոպեին Անդրանիկը հեռագրել է. 35 հեծյալ հետախույզները, որոնց ուղարկել եմ այսօր առավոտյան, շրջել են Աշնակ եւ

1 Լ. տ., ք. 49:

1 ԿՊՊՈՒ ք. 2543, ք. 1, գ. 1, ք. 15: Նաե՛ւ և տ., ք. 77: 2 ԿՊՊՈՒ ք. 2543, ք. 1, գ. 1, ք. 14: 3 Լ. տ., ք. 42 եւ ք. 39: 4 Ստորագրությունը՝ Անդրանիկ: ՏՆՍ և տ., ք. 46:

Բուրուշ Խորան գյուղերում, մինչեւ Խանիկ լեռան բարձունքն ու Արաուլի ստորոտը, բայց ոչ մի տեղ թշնամի չեն նշմարել: Միայն պարսկական կողմում, Դերիկի ձորում, տեսել են շեյխ Սադիդի հոտը¹:

Ամսի 25-ին, երեկոյան ժամը 6 անց 15-ին Լազարեկովին Անդրանիկը տեղեկացնում է, որ այդ օրը ուղարկած իր հետախույզները դարձյալ թշնամի չեն նկատել²:

Պատահում էր, որ ռուսական զորամասի հետախույզները բռնում-բերում էին հայ մարդկանց կամ թե հայերը ռուսներին գտնելու ցանկությամբ իրենց կամովին գալիս հանձնվում էին: Ռուս հրամանատարները այդ մարդկանց իսկությունը իմանալու համար ավելորդ բարդություններ էին ստեղծում իրենց հայերեն չիմանալու պատճառով: Լուրերը հասնում էին Անդրանիկին: Այդ կապակցությամբ նա միջամտում էր, հաճախ պահանջում, որ հայ «լեզուներին» իր մոտ ուղարկեն հարցաքննության: Ահա մի գրություն, 22-ը ապրիլի, 1915թ., Սալմաստի զորախմբի հրամանատարին (այսինքն Լազարեկովին), **Խնդրում եմ երեկ Վանից մեր կողմը անցած հայերին, որոնց բռնել են կազակները, ուղարկեք ինձ մոտ հարցը մանրամասնորեն պարզելու համար³:**

Չեռնոզուբովը դիմում է սալմաստյան զորախմբի շտաբի պետ Պուտավցեիին, **Իմացեք Անդրանիկից՝ կան արդյո՞ք նրա ջոկատում հայեր, որոնք ավստրիական հրացաններ ունեն եւ այդ մասին անմիջապես հայտնեցեք, որպեսզի նրանց թույլատրվի անցնել խոյ⁴:**

Հավանաբար, դրա հետ կապ ունի այն, որ նույն օրը Անդրանիկը շտապ հեռագրել է Լազարեկովին, թե երեկ իր ջոկատի գումակի հետ **ինքը խոյ է ուղարկել 52 ավստրիական հրացան, այնտեղ պահելու համար⁵:**

Պարզ երեւում է, որ Անդրանիկը հաճախակի կապի մեջ է գտնվել ռուսական զորամասի հրամանատարության հետ: Ե՛վ հարցրել է, ե՛լ հայտնել, ե՛լ թույլտվություն է խնդրել, ե՛լ առաջարկ արե՞լու պահանջել:

Մարտի 26-ին, առավոտյան վաղ հետախույզներին գործի է ուղարկել: Խոստանում է լրացուցիչ ուղարկել նաեւ ուրիշ հեծյալներ⁶: Նույն օրը, մի այլ հեռագրով խնդրում է իրեն բահ ուղարկել ու քլունգ⁷: Դարձյալ նույն օրը երրորդ հեռագիրը, երեկոյան ժամը 8-ին, առավոտը ուղարկել է հետախույզություն, որից հետո հրամանատարության պահանջով լրացուցիչ կարգով ուղարկել է հեծյալների

1 Լ. տ., ք. 63: 2 Լ. տ., ք. 98 3 Լ. տ., ք. 5: 4 Լ. տ., ք. 122:
5 Լ. տ., ք. 123: 6 Լ. տ., ք. 136: 7 Լ. տ., ք. 138:

մի խումբ եւ: Եվ հայտնում է, որ պետք է վաղն էլ ուղարկել¹:

Մարտի 27-ին Լազարեկովից Անդրանիկը վերստային քարտեզ է խնդրում, տեղանքում լավ կողմնորոշվելու համար²:

Ապրիլի 27-ին Անդրանիկը Լազարեկովին տեղեկացնում է, որ իրենց հետախույզության ենթակա սահմաններում կուտակվում է հետեւակի եւ հեծյալների մեծ քանակություն: Իսկ արդեն մայիսի 1-ին նա Լազարեկովին հարցնում էր՝ ի՞նչ անենք, հիմա եւթ մարտի դուրս գա՞նք, թե՛ սպասենք ձեր հրամանին³:

Հաջորդ օրը Անդրանիկն իր շտաբի պետ Սամսոնի հետ միասին ստորագրած գրությամբ Լազարեկովին է ուղարկում գյուղերից մեկում հայ կամավորների գերի բռնած ջուրդ Ջնդոյին, որը, հավանաբար, կարող էր օգտակար տեղեկություններ հայտնել⁴:

Բերված եւ չբերված նույնատիպ մյուս փաստաթղթերը, որոնց պահպանված բնագրերի մի մասը կրում է Անդրանիկի ձեռագիր ստորագրությունը, ցույց են տալիս, թե Վանի մատույցներում հետախույզական աշխատանքով ռուսական բանակին օգնելու ինչպիսի անխոնջ աշխատանք են կատարել հայ կամավորները:

Դեռ Վան չհասած, Վան տանող ճանապարհին, Անդրանիկը լուրեր էր ստանում քաղաքում տիրող վիճակի մասին: Ինչպես ասվեց, ապրիլի սկզբներից թուրքական իշխանությունները զորքեր էին բերել, պաշարել քաղաքը եւ թնդանոթային կրակ բացել խաղաղ, սկզբնապես գրեթե անզեն բնակչության վրա: Այդ լուրերը Անդրանիկն իր պարտքն է համարել հաղորդել Չեռնոզուբովին, ահազանգել եւ միջոցներ հայցել շտապ Վան հասնելու, բնակչության սկսված կոտորածը դադարեցնելու համար: Ապրիլի 14-ին հղած նամակում պատմվում էր, թուրքերը տասը կրականոց մաուզերներով զինել են Վանի մոտակայքի 18-ից 60 տարեկան ողջ թուրք տղամարդ բնակչությանը, նրանց մի մասին հազցելով զինվորի զգեստ, թեւ քիչ չէին կոտորածի համար բերված նաեւ իսկական բանակային զինվորները: Խալիլ բեյը զորամասի բանակային կովի մարտերը վարելու փոխարեն թնդանոթներով ու զնդացիներով զինված ջոկատներով շրջում է գյուղերում, հավաքում են քրիստոնյա տղամարդկանց, ջշում են նրանց ծանր աշխատանքների, իսկ վերջն էլ կոտորում են բոլորին: Մինչ այդ օրվա, ապրիլի 14-ի, վիճակով հայերի կոտորած է եղել Չուխե, Կասրիյուտ եւ Վանա լճից դեպի հարավ՝ Խաշաբ գետի ափին գտնվող բոլոր գյուղերում, ինչպես նաեւ Լորդուզում: Անդրանիկը նաեւ հայտնում է Չեռնոզուբովին, որ Վանում Արամ Մանուկյանի ղեկավարությամբ մարտնչում են մոտ հազար զինված հայեր, չենթարկվելով Ջեղեթ բեյի հրամանին, հույս ունենալով,

1 Լ. տ., ք. 148: 2 Լ. տ., ք. 217: 3 Լ. տ., ք. 352: 4 Լ. տ., ք. 235, 256:

որ ուր որ է ոուսաց բանակը նրանց օգնության կհասնի¹:

Թուրքական իշխանությունները Վանի բնակչության կոտորածը վաղուց էին ծրագրում: Նախահարձակման պատրաստությունները սկսելով ոուսաց զորքերի դեպի Դիլման շարժվելուց առաջ, հարձակման անցան ապրիլի սկզբին: Որ դա թուրքական իշխանությունների համար պարտադիր մի խնդիր էր եւ գերադասվում էր մինչեւ իսկ պատերազմի բերումով տերության հողային տարածությունների կորուստը կանխելուց, պարզ երեւում է նրանից, որ, ինչպես ասվում է շտաբային փաստաթղթում, Վանի բնակչության դիմադրությունը ճնշելու համար այնտեղ է բերվել ոչ միայն նահանգի տարածքում տեղավորված 12 հազարանոց բանակը 18 թնդանոթներով զինված, այլեւ, նշվածից բացի, երզրումի շրջանից էլ՝ երկու կանոնավոր գումարտակ եւ չորս լեռնային հրանոթ: Թուրքերը պնդում են, որ այդ զորքերը բերվել են Վանում ապստամբությունն սկսվելուց հետո, բայց դա այդպես չէ: Վանը իրականում ապրում էր, ճիշտ է, սպասողական, բայց խաղաղ վիճակում: Վանեցիք այնուամենայնիվ, եթե իրենց ձեռքի տակ զենք էլ ունեցել են, ապա այդ օրերին չեն դա ձեռք բերել—կուտակել, եւ երկրում հայերից բացի բոլոր ազգությունների ներկայացուցիչների զենք կրելու իրավունք ունենալու դեպքում հայերի թեկուզեւ անիրավունք ձեռք բերածը, վերջին հաշվով, գաղտնիք չէր, եւ եղածն էլ թուրքական սպառազինությունից ազատություն հայցելու համար բոլորովին աննշան մի բան էր:

Ժամանակի դիվանագիտական փաստաթղթերում նույնպես հերքվում է Վանի բնակչության *Նախամտածված*, ոչ միայն *պատերազմից անկախ*, այլ մինչեւ իսկ պատերազմական վիճակից օգտվելու պատճառով ապստամբվելու գաղափարը: Հերքվում է: Եվ հաստատվում է, որ ապստամբությունը թելադրվել է, հրահրվել է բնակչության նկատմամբ բռնությունների գործադրմամբ, որոնք կոտորածները նախապատրաստելու եւ դրանք կիրառելու համակարգի բաղկացուցիչ մասն էին: Այդ ենք կարդում ոուսաց արտաքին գործերի նախարարի հեռագրում, որը 1915-ի մայիսի 1-ին միաժամանակ հաղորդվել է նաեւ Փարիզ.

«Կասկած չկա, որ հայերի ապստամբությունը Վանում թելադրված է կոտորածով, այլ ոչ թե ընդհակառակը, որովհետեւ հայերի համար միտք չուներ քրդերի եւ թուրքերի գերակշիռ ուժերի դեմ շարժումը սկսել մինչեւ մեր զորքերի տեղ հասնելը»²:

Կազմակերպված գլխաջարդը Վանում սկսվել է ապրիլի 7-ին, դեպի Դիլման ոուսական զորքերի շարժվելու փոխում, եւ շարունակվել է մինչեւ մեր զորքերի տեղ հասնելը»²:

¹ ՀԿ ԿԿ-ի կուսարխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 87, թ. 9: ² ՈւՊԱ, ֆ. Զաղարխիվ, 1915թ., գ. 3505, թ. 5:

վել է մինչեւ մայիսի 3-ը: Հարձակվողների ստեղծած սպանդանոցային պայմաններում հայությունը աննկարագրելի հերոսական մարտ էր մղում իսպառ բնաջնջվելու վտանգից կյանքեր փրկելու, եթե ոչ լոկ միայն պատվով մեռնելու համար: Սա վանեցիների ինքնապաշտպանական առաջին կոիվը չէր: Ինչպես ասվում էր մամուլում, այն «թելադրված էր թուրքական իշխանությունների կողմից, նրանց գործողություններով: Հայերը, զենք վերցնելով, սպանդից փրկվելու ելք էին որոնում»: Ապստամբության ղեկավարները մինչեւ իսկ աշխատում էին հետաձգել բնակչության ըմբոստացումը, գոնե մինչեւ ոուսաց զորքի մոտենալը: Այսինքն ապստամբության գաղափարը հրամայական չէր: Մինչդեռ տեղական իշխանությունները ջանք էին գործադրում, որպեսզի «արագացնեին ապստամբությունը եւ անսպասելի հարվածով հաշվեհարդար տեսնեին հայ բնակչության հետ»:

Արդեն փետրվար ամսից էին քաղաքում սկսվել ձերբակալություններն ու բազմապիսի բռնությունները: Մինչեւ իսկ թալանվում եւ կրակին են հանձնվում նահանգի տասը հայկական գյուղեր: «Մնում էր կամ ապստամբվել, — ասվում է նույն հոդվածում, — կամ ենթարկվել, կամ մեռնել հերոսի մահով, կամ մորթվել ինչպես ոչ-խար»: Այդ ընթացքում լուրեր են հասնում Արձեշում, Հայկաձորում, Բերկրիում եւ այլ գյուղերում հայերի ջարդի մասին: Եվ դարձյալ նախահարձակը թուրքերն են լինում, ամսի 7-ին նրանք բացահայտորեն հարձակվում են մոտակա գյուղերում սկսված կոտորածներից Վան փախած հայերի վրա, որը առաջ է բերում պատասխան կրակ եւ սկսվում է փոխհարձությունը...¹:

Ամսի 14-ին Չեռնոզուբովին Մակու հեռագիր է հղել հայ եկեղեցու Ադրբեջանի թեմի առաջնորդ Եպիսկոպոս Ներսեսը, «Միակ հույսը Դուք եք», գրել է նա եւ պաղատանքով խնդրել՝ «աղաչում եմ Ձեզ, ազատեք Վանը...»²:

Ռուսական զենքի եւ քաղաքական ազդեցության դիրքերն ամրապնդվելու գործում Վանի գրավմանը ոուս թե ուղղաճեղքները եւ թե դիվանագետները մեծ նշանակություն էին տալիս ոչ միայն կոիվների Դիլման-Վան նեղ գծում, այլեւ ուղղաճակատի հարավային այն լայնարձակ տարածություններում, որոնք ընդգրկում էին Պարսկաստանի հյուսիս-արեւմուտքը եւ թուրքիայի ամբողջ հարավը՝ արեւելքից մինչեւ արեւմուտք, որը դուրս էր գալիս Միջերկրական ծով: Մակուի ոուսական հյուպատոսը Վանը գրավելու շեմին, մայիսի 1-ին, իր պարտքն է համարել գրավոր զեկույցի ձեւով հայտնել իր վերադասին, որ Վանի գրավումը հսկայական չափով կնպաստի

¹ «Ռուսակոնց սլովո» N 141, 10. 06. 1915թ.: Տե՛ս ՈւՊԱ, ֆ. Զաղարխիվ, 1915թ., գ. 3505, թթ. 7-8: ² ԿՊՈՊԱ, ֆ. 551, ց. 1, գ. 5, թթ. 177-178:

ինչպես Թուրքիայում ոռոսական զենքի հետագա հաջողություններին, այնպես էլ Պարսկաստանն է՛լ ավելի խոնարհ դարձնելուն: Նա այն կարծիքին է, որ Վանի գրավումը Թուրքիայի համար անելանելի դրություն կստեղծի: Նախ եւ առաջ թուրքական եւ պարսկական հակառուս ջրղերը ստիպված կլինեն զենքը վար դնել: Սա շատ կարելու էր: Այդ դեպքում, երբ ոռոսական զենքը կհիշի երկրի այդ հատվածում, նրանց համար թուրքերի ահաբեկումներն այլեւս սարսափելի չեն լինի: Վանի գրավումը երկրի հարավ-արեւելյան մեծ հատվածից մենչեւ Սիջազետքի խորքերը բնակչության տրամադրությունը կշրջի հոգուտ Ռուսաստանի: Եվ այն ժամանակ նրանց օրինակին կհետեւեն թե՛ Մոսուլի եւ թե՛ Բիթլիսի վիլայեթների ջրղերը: Եվ հիշում է նրանց պարագլուխ Աբդուլ Ռզակին, որը հսկայական ազդեցություն է ունեցել Նշված վայրերի ջրղերի վրա: Հյուլպատոսի հետ զրույցի ժամանակ նա խոստովանել է, ո՛վ գիտե՛ կեղծ թե անկեղծ, իբր իր երազանքը ոռուս զորքերի հետ Վան հասնելն է, որովհետեւ այդտեղից այլեւս շատ հեշտ կլինի մտնել Բիթլիս եւ այնտեղ թուրքերի դեմ ոտքի հանել իր ազգակից ջրղերին: Համենայն դեպս, աննշան չէ հավատի եւ ճշմարտության հիմքը այս խոսքերում: Զրղերը Նշված կողմերում նախորդ տարի, 1914-ին, ծառայել էին թուրքերի դեմ: Հիշելով այս, հյուլպատոսը չի մոռանում ոռոսական զենքի համար կարելու այն նպատակը, որը բերում էին այդ վայրերի հայ բնակիչները իրենց ոռուսասիրությամբ: Վանի գրավման մեջ հյուլպատոսը նաեւ այն է տեսնում, որ դա կարող է ոտքի հանել Երզրումի եւ Մուշի միջեւ ընկած աննվաճ լեռներում ապրող Դերսիմի ղզլբաշներին, որոնք վաղուց ի վեր սպասում են, ինչպես Նշում է հյուլպատոսը, ոռուսների Թուրքահայաստան մտնելուն: Այստեղ, խորանալով իր դատողությունների մեջ, նա մտնելում է որոշակի այն խնդրին, որը շատ է շոշափվել հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ, թեեւ շոշափելի արդյունք չի տվել: Դա հայ-քրդական դաշինքի հարցն է: Հյուլպատոսը դրանում օգտակար շատ բան է տեսնում Ռուսաստանի համար, վկայակոչելով իր իսկ կատարած քայլերը այդ ուղղությամբ: Չմոռանք, երբ դեռ ոռուսաց զորքերին սպասվում էր արշավը դեպի Վան, նա հանդիպել է եւ խոսել Կովկասյան ռազմական օկրուգի շտաբի պետ Յուդենիչի հետ, որը մանրակրկիտ ուսումնասիրել է այդ հարցերը: Այդ ժամանակ նախատեսվել էր հատուկ մարդիկ ուղարկել Դերսիմ՝ ղզլբաշներին ոտքի հանելու համար: Իսկ հիմա, երբ արդեն գրավված կլինե՞ր Վանը, այն ժամանակ հայերն էլ կօգնեին, որ Դերսիմի ջրղերը ոտքի ելնեին եւ կօգնե՞ր նաեւ ոռուսական ոսկին, որն այնպես սիրում էին ջրղերը:

Ինչո՞ւ ենք վերապատմում հյուլպատոսի այն պատմությունները, որոնցում հայոց սիրտը թրատող տողեր կան եւ ինչպե՛ս չպատմենք, երբ նույն այդ տողերը Վանի հանդեպ ոռուսական զորքերի առաջիկա վերաբերմունքի նկատմամբ անդրանիկյան զայրալից տարակուսանքների դառը պատճառն ու բացատրությունն են հայտնագործում ճշմարտության սառած աչքերի առաջ: Եվ ինչպե՛ս պիտի իմանար նաեւ այդ ճշմարտությունը ոռուսաց զենքի ու ժողովրդի մեծ, աներկմիտ բարեկամ Անդրանիկը: Զանի՞ երես ուներ այդ անիրավ գորովագութ ճշմարտությունը, որն այնպես հաստատ ու խորը մեխվել էր հայոց պատմության մեջ, հայի սուրբանուն զավակների աներկմիտ կամքով ու մաքառմամբ:

Հյուլպատոսը, որ տվյալ պահին Մակուում էր, անցյալում եղել է Վանի ոռուսաց փոխհյուլպատոսը: Եվ պատմում է որպես Վանին քաջատեղյակ դիվանագետ: Թուրքերի դեմ քարոզը հիմնականում մղվել է Վանից, գրում է նա: Լավ գիտի, որ Վանում հայերն են եւ այդ նրանք են քարոզիչները, որի մասին, ասում է, «ես միշտ գրել եմ այնտեղից»: Եթե մենք նվաճենք Բայազետ-Վան գիծը, բացատրում է հյուլպատոսը, թուրքերը մեկընդմիշտ հրաժեշտ կտան Պարսկաստանի նկատմամբ իրենց ձգտումներին: Եվ ապա սկսվում է թունալից խոստովանությունը. «Պետք է արժանին հատուցել Վանի ներկայիս գլխավոր նահանգապետ Ջեւդեթ բեյին, նա Պարսկաստանի ջրղերի մեջ շատ հմտորեն եւ հաստատակամորեն ագիտացիա է տարել եւ տանում է: Ես նրան գերազանց գիտեմ, նույնպես եւ այն, որ նա մանրամասնորեն ուսումնասիրել է սահմանամերձ շրջանը եւ ամուր կապեր է հաստատել ջուրղ բեկերի հետ, երբ որ ինքը սկզբում կայմակամ էր Սարայում, իսկ հետո մութասերիֆ՝ Բաշկալեյում: Այդ պատճառով էլ Վանում փոխհյուլպատոս եղածս ժամանակ ես կայսերական դեսպանության առջեւ անդադար հարց եմ բարձրացրել այն մասին, որ Ջեւդեթ բեյը վերցվի այդ վայրերից, որպես մի մարդ, որը միշտ ցանկացել է դժվարություններ ստեղծել պարսկա-թուրքական սահմանի հարցում: Կարելի է վստահորեն ասել, որ մեր դեմ պարսից ջրղերի ակտիվ ելույթների համար մենք գլխավորապես պարտական ենք Ջեւդեթ բեյին, որի տրամադրության տակ, որքան ինձ հայտնի է, հսկայական գումարներ են դրվել ջուրղ բեկերին բաժանելու համար: Իսկ այդ վերջին հանգամանքը եական նշանակություն ունի ոչ միայն երիտասարդ պարսիկների, այլեւ ջուրղ բեկերի մեջ»¹:

1 Կորու. ք. 551, ց. 1, գ. 5, թթ. 218-219:

Ահա եւ Վանում ոռուսատեր հայերին կոտորողի իսկական կերպարը. մոլի ոռուսատյաց, որ ոռուսատեր հայերի արյունը ազահորեն ըմպելով, զուցե թե ոռուսատյացության իր անհագուրդ ծարավն էր հագեցնում:

Այս ամենը առավել էս պարզ է դառնում պատերազմի ժամանակ ոռուսական զորքերի առաջանալու պայմաններում ճակատից թուրքական հրամանատարության կողմից զորքերը ետ քաշելու, նահանջելու կոնկրետ տակտիկայով: Դեպի Վան տանող հայաշատ այս գծի վրա դա սովորական հարկադրության, պատահականության բերումով նահանջ չէր, ինչպես եղել է բոլոր պատերազմներում եւ ինչպես որ էր նաեւ այդ պատերազմի մյուս ճակատներում: Դա զորքերը մտածված ետ քաշելու, զիջումների, ուժերը այլ խնդիրներ լուծելու համար պահպանելու, օգտագործելու տակտիկա էր: Եվ դա ցույց է տալիս, թե թուրքական ղեկավարությունը ինչպիսի կենսական, անհետաձգելի նշանակություն էր տալիս հայության կոտորածին, տվյալ դեպքում ոչ միայն Վան քաղաքում, այլ առհասարակ երկրի բոլոր հայաբնակ վայրերում՝ անկախ նրանից, թե ինչպիսին էր ուժերի հարաբերակցությունը ճակատային վայրերում, կոիվներ կային, թե՛ ոչ (ինչպես թիկունքային բազմաթիվ վայրերում, որտեղ հայության ցեղասպանությունն էր իրագործվում):

Վերլուծելով Վանի ուղղությամբ թուրքական զորամասերի տեղաշարժի ասպարեզում նրանց հրամանատարության գործողությունները, ոռուսական շտաբային փաստաթղթերում դրանք ռազմական տեսակետից նույնպես որակվում են միանգամայն աննպատակահարմար, որովհետեւ դրանք բխեցվում էին պարզապես ամեն զնով ուրիշ նպատակի հասնելու անհրաժեշտությունից. «Վանի շրջանի այդ շարժումը, — կարդում ենք փաստաթղթում, — որը ետ քաշեց նշված զորքերը, ակնհայտ ձեւով խախտեց թուրքերի հաղորդակցության ռազմական ուղիները եւ Ջելդեթ բեյը չէր կարող Խալիլ բեյին օգնել...»¹: Մնում է հարց տալ՝ իսկ ռազմական հրամանատարությունն ուզում էր, իսկապես, որ Ջելդեթը թողնի Վանը եւ շտապի օգնության հասնել Խալիլին:

Նույն այս փաստաթղթում որոշակի ասվում է, որ Ջելդեթը Խալիլին «օգնել չէր կարող ոչ լրացուցիչ ուժերով, ոչ էլ մթերքներով»: Այլեւս ինչպես պետք է կարողանար, երբ նա էլ իրեն այդտեղ էր հյուծել: Փաստաթղթում միտքը ավելի պարզ է դառնում համիդեական կոչված քրդական զորամասերի վերաբերյալ նշելով, որ նրանք էլ «վախենալով հայ ֆիդայիներից, չէին հեռանում իրենց տեղերից, որը նպաստում էր մեր (այսինքն ոռուսական — Հ. Կ.) զորքերի դեպի Վան

1 ԿՊՐՄԱ, ֆ. 551, ց. 2, գ. 79, բ. 1: Լաւե' և տ., ֆ. 2100, գ. 646, ք. 72-73, ֆ. 2300, ց. 1, գ. 745, ք. 1-3:

անարգել առաջխաղացմանը... »¹: Սույն փաստաթուղթը իր հերթին հավաստում է, որ Արարատյան ջոկատը 1915-ի ապրիլի 15-ին դուրս է եկել Երեւանից, Վարդանի եւ նրա տեղակալ Խելչոյի ղեկավարությամբ² եւ արդեն ապրիլի 24-ին անցել է հարձակման: Հենց Արարատյան ջոկատի մարտիկներն էլ ուղիղ եկել են դեպի Վանի դարպասները: Մայիսի 4-ին Վարդանը նամակ է ստանում, որում պատմվում էր Վանի բնակչության հուսահատ վիճակի մասին: Վանեցիք խնդրում են անհապաղ, առանց ձգձգելու օգնության հասնել իրենց: Ի պատասխան, ջոկատը Վան է ուղարկում իր առաջապահ զինվորներին: Եվ հենց նրանք էլ պարզում են, որ արդեն մայիսի 4-ին թուրքերը Վանի պաշարումը հանել են եւ վերադասից իրենց հանձնարարված կոտորածի սեւ գործը ավարտած համարելով՝ ճողոպրել: Առաջինը, մայիսի 5-ի երեկոյան մթնշաղին, քաղաք են մտել Արարատյան ջոկատի միացյալ հեծելախմբի զինվորները՝ հրամանատար Խելչոյի զլխավորությամբ: Դառնալով առաջապահ, այդ զինվորները, մի խումբ հայ քաջորդիներ, զուցե թե բոլորն էլ անհամբեր վանեցիներ, երկու օրում 80 վերստ ճանապարհ կտրելով շտապում են մահու եւ կենաց կովի թեկուզ վերջին ժամին օգնության հասնել իրենց հարազատներին: Խոր ցավի ու վշտերի գրկում ջուն մտնող քաղաքը կամավորների գալստյան ավետիսի կանչերով վերստին ռզորման շունչ է առնում: Բնակչության ուրախությունը կատարյալ էր հաջորդ օրը, երբ ցերեկը ժամը 12-ին քաղաք են մտնում Արարատյան գնդի ջոկատները: Մինչ այդ, վաղ առավոտյան, ժամը 6-ին, տեղ են հասել նաեւ կազակային զորամասի առաջապահ զինվորները, որոնց հետքով ցերեկը ժամը 4-ին քաղաք է ժամանում նաեւ զորամասն ամբողջությամբ³: Նույն օրն էլ Վան է մտել թե՛ Արարատյան գնդին, թե՛ կազակային զորամասին իր կազմում ընդգրկած զորախմբի հրամանատար գեներալ Նիկոլաւելը: Նրան ընդառաջ է եկել Վանի ինքնապաշտպանության ղեկավար Արամ Մանուկյանը, հանդիսավոր կերպով գեներալին հանձնելով Վանի բանալիները: Գեներալ Նիկոլաւելը Արամ Մանուկյանին նշանակել է Վանի նահանգապետ, այդ վճիռը համաձայնեցնելով Կովկասյան բանակի շտաբի պետ Յուդենիչի հետ⁴:

Ոռուսաց բանակի ու կամավորների միատեղ մուտքը Վան զուգահեռ է Նիկոլայ 2-րդ թագավորի ծննդյան օրվան: Իրար են խառնվում արյունաքամ բնակչության իրական եւ ճարահատյալ ռզելորության պատճառները: Անընկճելի մազապուրծ բնակչությունը

1 Լ. տ. ֆ. 2300, ց. 1, գ. 745, ք. 1-3: 2 Լ. տ., Լաւե' ֆ. 2100, ց. 1, գ. 646, ք. 53-84: Լաւե' Ս. Վրացեան, Կեանքի ուղիներով, հ. 9, Բ., 1963, էջ 77: 3 Ս. Վրացեան, Լշված գիրքը: Լ. տ.: 4 ԿՊՐՄԱ, ֆ. 2100, ց. 1, գ. 646, ք. 73-74: Լաւե' և տ., ֆ. 2300, ց. 1, գ. 745, ք. 1-3, ֆ. 551, ց. 2, գ. 79, բ. 3:

ցնծալից հեռագիր է հղում «Նորին կայսերական մեծությանը»։ «Այսօր, Ձեր կայսերական մեծության ծննդյան օրը, պանծալի կովկասյան գնդերը գեներալ Նազարբեկովի առաջնորդությամբ եւ երեք հազար հայ կամավորների հետ մտան քաղաք»։

Մեր հավատարիմ հպատակության գագուցները հայտնելով Ձեր կայսերական մեծությանը, ամբողջ հայությունն աղոթում է առ առողջությունն Հայաստանի ազատարարիդ եւ հանուն իր բոլոր թշնամիների դեմ ոուսաց բանակի հաղթանակների»¹։

Պատերազմը շարունակվում էր։ Մայիսի 6-ի լույս 7-ի՝ գիշերը ոուսական զորամասի առաջապահ զինվորներ են ուղարկվել առաջ, դեպի արեւմուտք՝ Ոստան ու Բաշկալե քաղաքները։ Դրոյի ջոկատը մայիսի 7-ի ցերեկը հրաման է ստացել ընթանալու դեպի Շատախ ու Մոքս, իսկ Ջեռու ջոկատը՝ Նույնպես դեպի Ոստան, այն հաշվով, որ գրավի լեռնանցքները, բայց դրանից այն կողմ չհամարձակվի գնալ։ Իսկ նա էլ, տեսնելով որ գործը հաջող է գնում, խախտելով հրամանը, խորացել է դեպի առաջ, որը նրան հաջողվել է գեներալի ուղարկած օգնական ուժերի շնորհիվ, բայց հենց որ թուրքերը ուժերը ի մի են բերել եւ սկսել են դիմադրել, հարկադրված է եղել ետ դառնալ²։

Ո՞ր մնաց Անդրանիկի ջոկատը։

... Գարնան ծիլ կանաչներով ու ծաղիկներով ծածկված բլուրներով ու սարերով էր ճանապարհը չորս հարյուր կազակների հետ միասին Անդրանիկի կամավորների ջոկատին բերել դեպի Վան։ Անցած գյուղերն են՝ Վարդանը, Բյոհնա Շահարը... բարձունքները՝ Ալիբուլաղ, Սովուջբուլաղ, Արաուլ։ Վերջինիս թմբերի տակ ու քարափների արանջում դիրքավորված է եղել թուրքական մի զորամաս։ Մայիսի 1-ին համառ ու տեսական մարտ է սկսվել, որ տեւել է մինչեւ մուրթ ընկնելը։ Թուրքերը կրակը չեն դադարեցրել։ Առավոտ լույսին պարզվել է, որ նրանք նահանջել են։ Նազարբեկովը կամավորներին գրավոր հրամանով հետախուզական հանձնարարություն է տվել։

Օրագրողը գրում է. «Մայիսի 1. Վարդան գյուղից դուրս եկանք Բյոհնա Շահար եւ այնտեղից անցնելով, ուշ ժամի հասանք Ալի Բուլաղի բլուրները եւ այդտեղ հանգստացանք»³։ Նույն օրը երեկոյան ժամը 7-ին Չեռնոզուրովը Նազարբեկովին Մուղանջուղից հեռագիր է հղել. «Ձեր հրամանատարության տակ գտնվող զորամասը, որի կազմում է հայկական ջոկատը...»⁴, վաղը, մայիսի

* Խոսքը 1-ին ջոկատի մասին է, որը թվարկվում է մյուս զորամասերի հետ միասին

1 ՈւՋԱ, ֆ. Զաղարիկ, 1915թ., գ. 3506, ք. 6: 2 ԿՊՊԱ, ֆ. 2300, ք. 1, գ. 745, ք. 1-3, նաեւ ֆ. 551, ք. 2, գ. 79, ք. 3: 3 «... օրագրութիւնը», էջ 21:

2-ին, պետք է գրավի Խանասորի լեռնանցքը եւ հետախուզի հակառակորդին։ Ձեր ուշադրությունը հրավիրում եմ Դեյիրից՝ սկսվող ճանապարհի վրա»։ Չեռնոզուրովը խոստանում էր շուտով լրացուցիչ հրետանի տրամադրել եւ երկու գումարտակ, նաեւ միջոցներ ձեռք առնել Բուրուշ Խորանի կողմից վտանգը կանխելու համար։ Ինքը՝ Չեռնոզուրովը, գտնվելու էր Մուղանջուղում։

Մայիսի 2-ի վերաբերյալ օրագրողը գրում է. «5-ն անց 30-ին ճամփա ընկանք Խանասոր։ Ժամը 7-ին Սովուջ Բուլաղ գագաթը հասանք։ ...7 անց 30-ին կոհիվ սկսվեց թշնամու դեմ, որը ժամը 10-ին նահանջեց...»⁵։

Նույն օրը Չեռնոզուրովը հրաման է հղել Նազարբեկովին Մուղանջուղից, որպեսզի նա իր տրամադրության տակ եղած զորամասերով, այդ թվում նաեւ առաջին ջոկատով, հնարավորին չափ արագ փակի Բաշկալեից Չուխա Գյաղուկով դեպի Վան նահանջող հակառակորդի ճանապարհը։ Խոստանում է վաղը տրամադրել լրացուցիչ ուժեր։ Այնպես որ թվարկվում են բավական քանակությամբ զորամասեր, բազմիցս հզոր, քան Անդրանիկի ջոկատը։ Նորից հայտնում է, որ Բուրուշ Խորանի լեռնանցքը եւ Խանիկը գրավելու համար նույն օրը կուղարկի մեկ գումարտակ⁶։

Օրագրողը գրում է. «Մայիսի 4-ին ջոկատը առավոտ վաղ ճանապարհ է ընկել, ժամը 10-ին հասել է Խանասոր գյուղը, որից երկու ժամ հետո ս. Բարթողումեսի վանքը, որը Բաշկալեի գավառակում էր։ Մայիսի 5-ին Անդրանիկի ջոկատի ձիավորներին երկրորդ եւ երրորդ վաշտերի հետ ուղարկում է Բաշկալե, ուր նույն օրը հեծյալները մտնում են կազակների հետ միասին»⁷։

Ամսի 3-ի հրամանում նշվում է, որ հակառակորդը Դերեկից ետ է քաշվել Խանասոր։ Հաջորդ օրը զորախումբը հրաման է ստանում գնալ դեպի Դեյիր։ Առաջընթացի գլխավոր ուժերի մեջ թվարկվում է նաեւ առաջին հայկական ջոկատը՝ որպես մեկ գումարտակ։ Նազարբեկովն անձամբ ինքն էր առաջնորդելու այս զորամասերին⁸։ Հաջորդ օրը, մայիսի 4-ի երեկոյան ժամը 6-ն անց 45-ին Նազարբեկովը հրամանը հղում է արդեն Դեյիրից։ Հրամանի այդ տեքստը, որ ուղարկվել է ստորաբաժանումների պետերին ի գիտություն, բնագրով պահպանվել է Ի թիվս այլ ընթերցողների, նրա տակ նաեւ Անդրանիկի բնագիր ստորագրությունն է՝ «Antranik»⁹։ Նույն ձեռով Անդ-

* Դեյիրը Վանի նահանգում էր, Բաշկալեի գավառակում։

1 ԿՊՊԱ, ֆ. 2543, ք. 1, գ. 2, ք. 1: 2 ԿՊՊԱ, ֆ. 2543, ք. 1, գ. 2, ք. 2:
3 «...օրագրութիւնը», էջ 21: 4 ԿՊՊԱ, ֆ. 2543, ք. 1, գ. 2, ք. 4 նաեւ՝ Вагаршак
Овакимян. В поход с Андраником. «Арм. вестник», NN30, 32 34, 1916 г.
5 ԿՊՊԱ, ֆ. 2543, ք. 1, գ. 2, ք. 5:

րանիկը ստորագրել է նաեւ Լազարբեկովի հղած հաջորդ օրվա հրամանը¹:

Ըստ օրագրության, մայիսի 7-ին Անդրանիկի ջոկատը կտրել է Խալիլ փաշայի զորքի դեպի Վան տանող ճանապարհը, մտնելով Բաշկալե²: Հաջորդ օրը Լազարբեկովն իր հրամանում երեկվա հաջող կոիվների թվում նշել է նաեւ հենց այդ՝ հայկական ջոկատի մարտը Խալիլի առաջապահ ուժերի դեմ: Նույն տեղում ասվում է. «Մեր զորքերը վերցրել են Վանը, հակառակորդը այնտեղից փախել է»³: Ըստ երեւույթին Խալիլն այնուամենայնիվ մտադրություն է ունեցել շրջանցումով օգնության հասնել Վանի բնակչությանը կոտորող Զեւդեթ բեյին⁴: Ամսի 8-ին Լազարբեկովը հիշյալ հրամանով անդրադառնալով իր վաղվա խնդրին, հայտնում է, որ դա «Խալիլ բեյի զորախմբի ոչնչացումն է»: Իր զորամասի այդ օրվա ավանգարդում նա նախատեսում է նաեւ հայկական առաջին ջոկատը⁵: Ցավոք սրտի, նյութերը չեն բավարարում ավելին ասելու:

Օրագրողը հուշում է, որ մայիսի 16-ին թշնամու հետ նոր ընդհարում է եղել, որում Անդրանիկի կամավորները համագործակցել են ռուսական զորամասի հետ եւ օգտվել նրա օգնությունից: Մայիսի 18-ին ջոկատը հասնում է Տիգրիսի ափը եւ ճանապարհը շարունակելով գետեզրով, մտնելուս Սուկինիս գյուղին, իսկ հաջորդ օրն առավոտյան ժամը 9-ին՝ Միրվանա գյուղին: Կոիվներ են եղել Սուկինիս գյուղում, ապա Միրվանա գյուղի մոտակայքում եւ Ճարճալան գյուղում: Եվ այստեղ՝ Տիգրիսի ձախափնյա գյուղամիջում սկսվում, բորբոքվում է կոիվը⁶:

Ըստ պահպանված զինվորական փաստաթղթերի, Լազարբեկովի զորախումբը մայիսի երկրորդ կեսին եւ հետագայում հանդես է գալիս Բիթլիսյան անվամբ⁷: Այդ ընթացքում ռազմախմբի գրեթե բոլոր հրամաններում հիշատակվում է Անդրանիկի ջոկատը՝ կամ առաջապահի, կամ գլխավոր ուժերի թվում: Պահպանված այդ փաստաթղթերի թվում է տասն օր անց, նույն 1915-ի մայիսի 29-ին, կազմված զեկուցագիրը՝ ամսի 19-ի ճակատամարտի մասին: Ստորագրել են գեներալ-լեյտենանտ Տրուխինը եւ զորախմբի գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար Պոպովը, հասցեագրված է Կովկասյան բանակի չորրորդ կորպուսի հրամանատարին: Մեջբերենք միայն նշված ճակատամարտին վերաբերող մասը, որոշ կրճատումներով.

«Ամսի 18-ի լույս 19-ի գիշերը զորախումբը կանգնած էր դիրքերում՝ ունենալով պահակություն: ...Առավոտյան ժամը 11-ին մոտ

1 Լ. տ., ք. 6: 2 «...օրագրություն», էջ 21: 3 ԿՊՊԱ, ք. 2543, ք. 1, գ. 2, ք. 10:
4 «...օրագրություն», էջ 21: 5 Լ. տ., ք. 1, գ. 3, ք. 10 նաև՝ В. Овакимян.
В поход с Андраником. «Арм. вестник», NN30, 32-34, 1916 г. 6 «...օրագրություն», էջ 21-24: 7 ԿՊՊԱ, ք. 2543, ք. 1, գ. 3, ք. 11-12:

բանակային ավագը՝ փոխգնդապետ Վասիլեւը, իմանում է, որ հակառակորդը զգալի ուժերով անցնում է Բորչալու Դաղ լեռը: Նույն այդ ժամանակ էլ լուր է ստացվում, որ առավոտյան ժամը 5-ին կովի ելած եւ առջեից ընթացող Անդրանիկի ջոկատը արդեն մարտի մեջ է մտել Միրվանա գյուղի հարավ-արեւելյան կողմում, լեռնային ձորակում:

Արագ կերպով այնտեղ գալով, բանակային ավագ Վասիլեւը տեսնում է հետեւյալը. հսկայական լեռնային փոստրակը լցվել է հապճեպորեն երկու շարասյունով նահանջող հակառակորդով: Շարասյուններից մեկը, որը, ինչպես հետո պարզվեց, բացառապես քրդեր էին, արեւելյան կողմում էր, մյուսը, որ կանոնավոր զորք էր՝ հարավ-արեւմուտքում: Անդրանիկի 1-ին հայկական ջոկատը տազնապի մեջ էր գցել հակառակորդին, որը հեռանում էր, իր թիկունքում ունենալով ուժեղ վերջապահ ուժ:

Հայերը, շատ քաջաբար, հաշվի չառնելով, որ իրենք վեց անգամ թույլ են թշնամուց, գրոհում էին վերջապահի վրա: Հակառակորդը արագորեն նահանջում էր, նրա ձախ շարասյունը անցնելով ձյունածածկ թմբով, տառացիորեն խրվում էր ձյան մեջ: Խնդրի կատարումը Անդրանիկը հեշտացնում է տեղանքի իր իմանալով¹: «Ենց այս խոսքի վրա էլ վերհիշենք ընդդիմախոս Սեպուհին եւ կոիվների հետ կապված մի քանի հարցեր:

Մայիսի երկրորդ կեսին, վերլուծելով Անդրանիկին, նա դարձյալ ըննադատի իր դերում է: Նրան զայրացնում է, թե ինչո՞ւ է Անդրանիկն իր ջոկատի համար նախընտրում առաջապահի դերը, ինչո՞ւ է նա ընդհանջ գնում ջոկատին այդքան հաճախակի հրամանատարության կողմից հետախուզական առաջադրանք տալուն: Չէ՞ որ թե մեկը, թե մյուսը կամավորների կյանքի համար անհամեմատ վտանգավոր էին:

Վտանգավոր լինելու հարցում Սեպուհն անվիճելիորեն ճիշտ էր: Բայց Անդրանիկի մեղքը չէր ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը: Ռուսական հրամանատարությունը սկզբից էլ ի դեմս հայ կամավորների, ի միջի այլոց, ի դեմս հենց իրեն Անդրանիկի, տեսնում էր տեղանքին տեղյակ մարդկանց եւ ուզեր-չուզեր պետք է դիմեր նրանց կարծիքին ու օգնությանը: Անդրանիկը չէր կարող համբերել, որ ռուս հրամանատարը սահմանափակվելով քարտեզով, խարխափեր տեղանքում, անտարբեր դիտել զորքերի քաշքշուկը, դրանից բխող բարդություններով հանդերձ: Ճիշտ է, դժվար էր, վտանգներով հղի, բայց կար էւ այն, որ այդ հանձնարարությունները մյուս զորամասերի համեմատ հայկական ջոկատների համար հեշտ էին եւ այդքանով էլ փոխհատուցվում էր: Եվ, դրանից բացի, հայ կամավորներն իրենք

1 ԿՊՊԱ, ք. 551, ք. 2, գ. 47, ք. 84, 89:

ր
ի

ն
ք
ձ
Վ
«
Ե
ո
ր
լ
բ
լ

Էին առաջ մղվում, իրենք էին շահագրգռված նպաստելու զորքերի ոչ միայն արագ առաջընթացին, այլև այն ճանապարհներով ընթացքին, որոնք ըստ հնարավորին նպաստավոր լինեին հայ բնակչության ինքնապաշտպանությանն ու պահպանությանը:

Անդրանիկը ոչ թե չէր կարող հրաժարվել հետախույզի պարտականությունից, այլ չէր ուզում: Ուրիշ էլ ո՞վ կարող էր այդ անել հայ զինվորից լավ, էլ ո՞ր օրվա համար էր տեղանքի նրա իմացությունը, ոչ ոք նրանից լավ չգիտեր ըստ հնարավորին կարճ ճանապարհն ու ապահովը, ձորն ու գետը, որտեղ են կամուրջն ու որտեղ հայ ու թուրք կամ ջուրդ ու ասորի գյուղերն ու նրանց ճամփաները: Սա չի նշանակում, թե Անդրանիկը հաշվենկատ չէր, թե նա հենց այնպես, բուրբ պատեհ ու անպատեհ դեպքերում, ընդառաջ էր գնում, միայն թե նախընտրեր հետախույզությունը: Հրամանատարական գրագրություններում, 1914-ի նոյեմբերի երկրորդ կեսի վերաբերյալ, ասվում է, օրինակ, որ «Անդրանիկը խնդրում է [ջոկատը] մարտի ուղարկել որտեղ ուզում են, միայն թե չդնել պահակային ծառայության»¹: Այս էլ է եղել:

Անդրանիկը ջանում էր իր եւ իր զինվորների բուրբ ուժերով ու հնարավորություններով օգտակար լինել ռուս զինվորին ու նրա հրամանատարությանը: Նա գիտեր, որ ինքը չէ, որ ջարդելու է Խալիլին ու Ջեղեթին: Ուստի իր իսկ սեփական ուժերի կորուստների գնով ռուսին օգնելու անդրանիկյան, այսպես ասած, տակտիկան, որքանով որ դա այդպես էր, իհարկե, է՛լ զինվորի, է՛լ հրամանատարի, է՛լ իր ազգի ամեն մի հայրենասեր զավակի՝ մեծ ու անարատ բարոյականություն էր, որով ներծծված էր Անդրանիկի ողջ էությունը: Այդ դասը, որ Սեպուհը կարդում էր Անդրանիկի գլխին, լավ կլիներ, որ կարդար նրա՛ն, ով Անդրանիկին հարկադրում էր նման գործողությունների: Իսկ որ շատ հաճախ դեպքերի ընթացքն էր այդպես պահանջում, անուղղակիորեն Սեպուհն ինքն էլ է հաստատելու առիթ տալիս, ասելով փաստը եւ չխորանալով նրա մեջ: Փաստը հետեւյալն է, որը դարձյալ կապված է Խալիլ-Ջեղեթ այն դաշինքի հետ, որի արդյունքը Վանի հայության շուտափույթ կոտորածն էր: Նախապես որոշված է եղել, ասում է Սեպուհը, որ ռուսական զորքը «Չուլուր Կետիկ-Խոշապ գծով յառաջանա դեպի Վան, սակայն երբ Խալիլ սկսած է նահանջել Նորդուզի կողմը, հարկ եղավ հալածել զայն եւ ջանալ ամբողջովին ջարդել անոր ուժը, ապա անցնելու համար Վան»²: Երկու հարց է ծագում, որովհետեւ ասվածում երկու հանգա-

* Տվյալ դեպքում բացի բուշեփկներից: Դա հասկանալի կդառնա ստորև: Նրանք կամավորական շարժման կատարման այլ կարծիքի էին:

1 ԿՊՊԱ, ֆ. 551, ց. 2, գ. 441, ք. 352: 2 Սեպուհ, ... հ. Ա, էջ 221:

մանք կա թաքնված ի վնաս Վանի հայության: Նախ՝ Խալիլը նահանջեց ոչ թե դեպի Վան, այլ նրանից հեռացնող Նորդուզ, որպեսզի ռուսաց զորքին իր ետեւից ջարջ չտա անմիջապես դեպի Վան, որտեղ Ջեղեթը դեռ ամեն միջոց գործ էր դնում պաշտպանվող հայությանը կոտորելու համար: Եվ ապա՝ ռուսների մոտեցումն ու մուտքը ջարդաբե՛ր դրան կխանգարեր: Իսկ եթե մեկն էլ հարց տա, թե՛ չէ՛ որ Խալիլի համար պետք է որ մեկ լիներ, թե որտեղ ինքը կպարտվեր ռուս զորքերից, ապա այդ հարցն իր հերթին կհաստատի, որ իսկապես թուրքական հրամանատարության համար տվյալ դեպքում մեկ էր, թե ինչպես կավարտվեր Խալիլի եւ ռուսաց բանակի բախումը, բայց բուրո՞րովին մեկ չէր, թե դեպի ո՞ւր տանող ճանապարհի վրա եւ որտե՞ղ կլինի այդ բախումը: Իսկ եթե դա լիներ Վանի ճանապարհին եւ հենց Վանի մատակայքում, ապա դա, ինչպես ասվեց, կխանգարեր Վանի՞ հայ բնակչության ջեղեթյան կոտորածին, որը թուրքական հրամանատարության համար մյուս խնդիրների համեմատ փաստորեն վեր էր ու գերադաս:

Խալիլը Ջեղեթ բեյի կրավորականն էր, նրան հեռվից պատնեշողը, նրան հայությանը Վանում կոտորելու համար հանգիստ ու ապահով իրավիճակ եւ տրամադրություն ընձեռողը: Երբ Վանից աղաչական խնդրագրեր էին գալիս, եւ ձգձգվում էր ռուսաց բանակի ու նրա հետ Անդրանիկի ջոկատի ջայլքը, դա ինքնին նկատելի էր դառնում ու հասկանալի: Սեպուհը հիշում է հատկապես Նազարբեկովի կահումն ու անհանգստությունը:

«Կը տեսնե՛ք, կըսեր հայազգի զորավարը, մեր դեմ կա թշնամի մը, որ չի թողուր մեզի հրացան ռուսին յառաջանալ մինչեւ Վան: Մենք կովով պիտի բանանք ճանապարհը, եւ այդ կոհվն. ալ կախված չէ մենե: Վերին հրամանատարությունը ինչ որ հրամայէ, ա՛յն պիտի ընենք: Ասկե գատ, չենք գիտեր, թե մեր ապագայ կոհվները ի՛նչ ընթացք պիտի ստանա: Դուք գիտեք, որ քանի մը օր առաջ թուրք զենքերը յարթող հանդիսացան: Կրնա՛նք գուշակել վաղը: Չենք կրնար օգնութեան հասնիլ: օրհասական պայջարողներուն»¹:

Այ քեզ պատմություն: Առեղծվածն առեղծվածի ետեւից, որոնք իրար են հաջորդում Ջուլֆայի կամուրջն անցնելուց մինչեւ Վանի պարիսպներին մոտենալը:

Իսկ այժմ մեռած թուրք սպայի օրագրի մասին: Նրանում պատմվում էր, թե ինչ գործասեր են ելել, միացել Խալիլ բեյի զորքին: Օրագրող սպան մասնակցել էր Դարդանելի նեղուցում մղված կոհվներին: Նրանց զորամասը այնտեղից էր ետ քաշվել, բերվել Վանի ճանապարհը՝ ռուսների առջեւ փակելու համար: Բայց սա չէ որ խոր

1 Լ. տ. հ. Ա, էջ 207:

պիտի վշտացնէր Լազարբեկովին ու Անդրանիկին: Սեպուհը հիշում է այն, ինչ կարող էր լսել օրագրի թարգմանչից եւ այդ օրերին Լազարբեկովի ու Անդրանիկի դռնփակ ու դռնբաց գրույցներէրից.

«Յուշատետրին մեռյալ հեղինակը կարձանագրեր Սմկոյի եւ Ապտիւ Ռիզակի կատարած դերը, թէ ինչպէս անոնք զենք ու ռազմա-նիւթ կը ստանային ռուսներէն եւ միւս կողմէ կը դիւրացնէին թուրք զօրքին շարժումները»¹:

Եվ այս բոլորը Անդրանիկի կյանքի այն բաղկացուցիչ մասի անբաժան պատմությունն է, որն ստեղծում է տրամադրություն: Ուստի թող ընթերցողը չգարմանա, որ փաստերը մանրանում են:

Սեպուհի կարծիքով Անդրանիկը սիրում էր, որ իր անձը մեծար-վեր, գովասանքի խոսքեր ասվեն իր հասցեին, մանավանդ իր մղած ու ղեկավարած կռիւների մասին, ունկնդրում էր, երբ իր գովքն էին անում, լսում էր, չէր լռեցնում: Բայց դա պարզ, անմեղ մի բան էր, որից երբեք էլ նա քաղաքականություն չի սարքել՝ ոչ կենցաղում, ոչ էլ իրեն վիճակված մեծ գործերում:

Անդրանիկին անսխալական չիամարելով, նորից վկայակոչենք նրա հուշերի գիրքը, որից վերելում առատ մեջբերումներ արինք: Սրանից էլ լավ ինքնագովության առիթ: Մինչդեռ իր պատմություններն անե-լիս ասես կարկամած լինի, բառեր չի գտնում հերոսությունն հերոսություն անվանելու, սխրանքը՝ սխրանք, պատմում է հենց այնպէս, որպէս կենցաղային մի պատմություն, հատկապէս իր մա-սին խոսելիս: Այդ գրքում, ճիշտ է, նրա պատմածն է, բայց ոչ լոկ նրա՝ պատմությունը: Այդ գիրքը նրա ժամանակակից գործընկերների պատկերասրահն է եւ բոլորի միատեղ ստեղծած պատմությունը: Միայն կարդալով կարելի է դրանում համոզվել: Որովհետեւ սեպուհ-յան մի մեղադրանք էլ նրա առաջաբանում կա, թէ ինքը՝ հեղինակն է կենտրոնում եւ իր եսն է մեծարում: Իրականում Անդրանիկի ֆիդայական կռիւների օրերի պատմության մասին հուշերի բոլոր հեղինակների մեջ ժամանակակից մյուս ֆիդայիների ու ֆիդայապե-տերի մասին ամենից շատ պատմություններ պարունակում է հենց Անդրանիկի հուշերի գիրքը, առավել, ի միջի այլոց, քան Սեպուհի իսկ հուշերի երկհատորը, որում առաջինի զգալի մասում վերհուշի առիթը Անդրանիկի սխալներն են եւ կարծես թէ հենց այդ է, որ եղել է պատմության առանցքը, իրենից անկախ տեղի տալով տարակու-սական այն հարցին, թե՛ եթէ Անդրանիկի ջոկատը սխալներով էր ղեկավարվում, այդ ինչպէ՞ս էր կռիւների մեջ քաջ ու հաղթական եւ ինչպէ՞ս է, որ բոլոր զինվորները պաշտել են նրան, իսկ բանակային հրամանատարները նրան հերոսին ու հրամանատարին արժանի

գովասանքի, էլ չենք ասում, նաեւ մեծարանքի այնքան շոռայ խոսքեր հղել: Հենց, օրինակ, քիչ առաջ վերելում վկայակոչված հրամանա-տարության փաստաթուղթը: Նրանում եւ Անդրանիկի անունը կա, եւ գովասանքի խոսք՝ մղված կովի մասին: Ո՛ւմ վերագրենք պատիժը: Անպայման զինվորներին՝, անպայման ղեկավարներին՝, որոնք մեջ են Անդրանիկն էր, ե՛ւ Սեպուհն ու մյուս վաշտապետերը: Ի՛ դեպ, Սեպուհի մասին, նրա՝ որպէս ռազմիկի եւ վաշտապետի մասին: Անդրանիկի այս կռիւների օրագրություններում, որոնք լույս են տեսել նրա կենդանության օրոք եւ նրա իսկ անմիջական իմացությամբ, մի խոսք անգամ չկա Սեպուհի հասցեին որպէս ըննադատություն կամ հանդիմանություն: Այնպէս որ, ինչպէս Սեպուհի շոռայ ըննադատու-թյունը չի ասում, թէ Անդրանիկը ծայրեծայր սխալական էր, այնպէս էլ անդրանիկյան կռիւների օրագրությունում Սեպուհի հասցեին ճըն-նադատական խոսք չիլինելը չի ասում, թէ Սեպուհն էլ անսխալական հրեշտակ է: Իսկ որ Սեպուհը քաջ ռազմիկ է եղել եւ քաջ հրամա-նատար, այդ էլ Անդրանիկը հաստատում է նաեւ նրանով, որ միշտ իր կռիւների համար զինակից ընտրելիս առաջինների թվում նրան է գործի հրավիրել եւ նրա վրա հենվել:

Սեպուհը կուլ չի տվել մի մեղադրանք եւս, պակաս են Անդրանիկի գորավարական գիտելիքները, անուս է գորավարը, որ դեռ չգիտե, թէ ինչ հեռավորության վրա իմաստ ունի հրացանների ու հրանոթ-ների կրակը եւ հեռադիտակը, թեւէ վզից կախ, մի աչքը փակ ու մատը ցից է որոշում թշնամու դիրքերի հեռավորությունը: Եվ բերում է օրինակներ: Սովորական բաներ է ասում: Ինքը՝ Սեպուհն էլ շատ անգամներ է տեսել, որ բարձունքում Լազարբեկովն ու Չեռնոզուր-վը նույնպէս թշնամու մոտեցող շարասյան վրա կրակը ճշտելու համար, մինչեւ հեռադիտակը շտկելը, աչքն են փակել եւ մատն են առաջ պարզել: Անկախ ամեն ինչից, Անդրանիկը ոչ ամենազետ էր, ոչ էլ ամենակարող: Բայց մեկ է, կռիւներում հաջողակ էր, հաշվե-նըկատ ու զգույշ: Իսկ երբ արդեն որոշել էր անպայման հարձակվել ու անպայման ջարդել, այլեւս հեշտ չէր նրան ետ պահել, որովհետեւ նրա կողքին կանգնածներից ոչ մեկն այդպէս հանդուգն ու սրընթաց չէր: Եվ զինվորներն ու վաշտապետերը, եւ նրանց մեջ ամենից հպարտն ու վեհանձը՝ քաջությամբ, ինքնավստահությամբ ու ինքնա-հավանությամբ ոչ մեկին չգիշող Սեպուհը, ուզեին—չուզեին պետք է զնային նրա հետքով, որովհետեւ չէին կարող չզնայլ, որովհետեւ գտնված էր պահը եւ ստեղծված էր մահվանն ընդառաջ զնայու տրամադրությունը, եւ եթէ գնում էին՝ առջելում Անդրանիկն էր, անպայման հասնում էին հակառակորդի դիրքերին, դուրս էին ջշում նրան՝ կրակոցով թէ անկրակոց, դաշույնի ու սրի հարվածով, թէ

¹ Լ. տ. էջ 208:

առանց դրա, եւ առաջադրանքը կատարված էր: Հրամանատարը, որը այդպէս գնում էր առջեւից, ոչ թէ դպրոցում բառերը գերազանց սերտած աշակերտն էր, այլ անհատականություն, կոնկրետ մի մարդ, որ հավատի զանգված լինելով ու հավատի կծիկ, ներշնչել գիտեր էւ, չնայած իր տարիքին, ոչ թէ ձեռնափայտին հենված, այլ ոտքերին ամուր կանգնած՝ ոչ միայն առաջ գնալ գիտեր, այլեւ առաջ տանել... Անհատականություն էր եւ առավել քան՝ անձնական օրինակ: Որպէս զինվոր ունեցած նրա հատկանիշներից գուցէ թէ ոչ մեկը ձեռքբերովի չէր, բոլորը իրենն էին: Հավելյալն էլ նա ոչ թէ ձեռք էր բերել բազմահատոր գրքեր կարդալով, այլ մարտերի ընթացքում ինքն էր իր համար ջոկել, նախընտրել ու մարսել, ապա ստուգել ու վերստուգել, ի վեջո խտացրել որպէս անդրանիկյան յուրօրինակություն: Ռազմուսույց էր գրել: Ինչո՞ւ: Գրվածք ունենալու կիրքը չէր նրան հարկադրել ձեռքը գրիչ վերցնել, այլ իր գրելիքն ապրած ու վերապրած լինելը, անձնափորձով ստուգած, վերստուգած եւ համոզմունք ու կանոն դարձրած լինելը...

Վերջում դարձյալ Սեպուհի դժգոհության (թե՛ դժկամության) մասին: 1915-ի մայիսյան կռիվների ժամանակ Սեպուհը Անդրանիկին նույն հանդիմանությունն է հասցեագրել, մեր ձիավորները 5-6 հազար քայլ հեռավորությունից հրացանային կրակ են բացել թշնամու վրա, գրեթէ զուր է եղել նաեւ թնդանոթաձիգների կրակը եւ այդ նրանից էր, որ, ոչ ավել, ոչ պակաս, «Անդրանիկի խելքը գլուխը չի եղել»: Սեպուհը բացատրել է ու հանդիմանել, բայց հաջորդ կռվին, ըստ նրա, նույն պատմությունն է կրկնվել, եվ Անդրանիկը պատասխանել է.

«-Ես այդպէս կը կամենամ, եւ դուն պետք է ենթարկվիս իմ հրամաններուն»:

Սեպուհը այլեւս կուլ չի տվել:

«-Մնաս բարով, -ասել է, -ես իմ ձեռքերն այսօրվընէ կը լվամ ու ապագա բոլոր պատասխանատվությունը կը թողամ քու վրա»:

Այդ օրվանից երրորդ վաշտի պետը Գրիգոր Ամիրջանն էր: Սեպուհը ընկերակից մի քանի հեծյալ զինվորներով վերադառնում է Վան, որտեղից զարտուղի ճամփաները նրան դուրս են բերում Թիֆլիս: Առաջիկայում կհանդիպենք:

Սեպուհը նախընտրել է ուղղի դաշտը լքելը նաեւ խոստովանելով, թե՛ «հանձն առնելով ամեն նվաստություն»¹:

Հետաքրքիր է, թէ որտե՞ղ էր Սեպուհը այդպէս սովորել ուղղի գործը, երբ նրա ճամփան նույն ֆիդայականն էր եղել:

¹ Սեպուհ, ... հ. Ա. էջ 232-243:

Հետաքրքիր է նաեւ՝ իսկ ի՞նչ պիտի աներ Սեպուհը եւ ինչպե՞ս պիտի ուղղի դաշտից վերադառնար, եթէ նրա պահանջի համապատասխան կարգապահություն լիներ բանակում: Այդ ինչպե՞ս պետք է, զայրանալով, լքեր, ուղածին պէս, ուղղի դաշտն ու հեռանար: Եվ այդ դեպքում ի՞նչ պիտի սովորեին զինվորներն իրենց վաշտապետից:

Հուշերի գրքից միայն վերը բերված «նվաստություն» բառն է հասկանալի դարձնում, որ Սեպուհը դա կամ ժամանակին, կամ տարիներ հետո է գլխի ընկել:

Ջոկատի համար դժվար օր է Սեպուհը լքել: Վաշտապետերից երկուսը՝ Սմբատն ու Սրտաշեսը, վիրավոր պառկած էին հիվանդանոցում: Հեղինակավոր անձ Սամսոնը, որը որպէս շտաբի պետ ուղեկցում էր ջոկատին Սալմաստից ի վեր, ուզում է օգտակար լինել: Ջանք է գործադրում համոզելու Սեպուհին չանել այդ քայլը, չի հաջողվում: «Օրագրության» հեղինակն Անդրանիկի նկատմամբ նախանձով ու չարությամբ է բացատրում Սեպուհի քայլը, ինքն ինչով էր պակաս, որ Անդրանիկը իրեն հրամայեր ու կարգադրեր: Չէ՞ որ ինքն էլ Անդրանիկի նման ու նրա հետ միասին ֆիդայական կռիվների մեջ էր խմորվել եւ ումից էր պակաս քաջ եղել: «Օրագրության» հեղինակը օրվա անձնական տպավորությունն է վերհիշում, «Սեպուհ նախանձելով Անդրանիկի հաղթանակներին եւ համբավին, հաշտ աչքով չէր նայեր իր երբեմնի «փաշա»-յին, մոռանալով, որ Սասունի մեջ ալ «Անդրանիկ փաշա»-յի հրամաններն էր, որ կկատարեր» (էջ 25):

Խոստնք Սեպուհի բառերով.

«Սակայն Անդրանիկ մտիկ չէր ընել ինծի եւ իմ դիտողություններս զուր կանցնեին: Անդրանիկ հիվանդություն մը ուներ, որ ուրիշ բան չէր, եթէ ոչ առաջ երթալ անպայման»¹:

Եթէ Սեպուհի ասածից հանենք «հիվանդություն մը ուներ» եւ գրենք «նպատակ մը» կամ «երազ ու ձգտում մը ուներ» բառերը, ամեն ինչ պարզ ու հասկանալի կլինի: Այդ, քուն թէ արթուն Անդրանիկը մտածում էր վայրկյան առաջ հասնել Վան եւ հայի մի շունչ ավել փրկել թուրքի կեռ յաթաղանից: Եթէ ոռուսաց բոլոր զորքերի հրամանատարը լիներ Անդրանիկը եւ այդպէս աճապարեր, նույն ձեռով ուժերը դասավորեր ժամ ու րոպէ առաջ Վան հասնելու նպատակով, համոզված ենք, որ այդ նույն նպատակին ձգտող Սեպուհը միայն ուրախության խոսքեր պիտի ասեր, անկախ նրանից, թէ որքան կհամակրեր զինվորներին առաջ տանող հրամանատարի անձն ու եւությունը:

¹ Սեպուհ, ... հ. Ա. էջ 206-219:

Ջոկատի զինվորները անհետանք չեն թողել իրենց դառնությունը: Նամակ են գրել Երեւան: Եվ երբ Սեպուհը հասել է Բանաքեռի բարձունքը, այնտեղ գորանցում վարժություններ կատարող ջոկատի հրամանատարները, իսկ մինչ այդ՝ Երեւանում գործին տեղյակ ազդեցիկ մարդիկ, ջննադատել են ու պարսպել ուղղի դաշտից՝ հյուր եկած հերոսին¹:

Առաջ գնանք:

Պետք է պատկերացնել, թե թիկունքում, ամբողջ Հայոց աշխարհում՝ թե՛ Արեւմուտքում, թե՛ Արեւելքում, ինչ խանդավառություն՝ եր առաջացել Վանի՝ հայության հնագույն մայրաքաղաքի, գրավմամբ: Պատմական փաստաթղթերն էլ վկայում են նշում են, որ էլ ավելի է ծավալվել կամավորական շարժումը, եւ Ազգային բյուրոն շտապել է դիմել փոխարքայությանն ու բանակային հրամանատարությանը՝ հազար հոգիանոց եւս չորս կամավորական ջոկատ ձեւավորելու առաջարկով²: Այստեղ հարկադրված ենք զբաղվել մի տեսակետի վերլուծությամբ:

Այն ժամանակ, երբ ծավալվում էր կամավորական շարժումը, հայ իրականության մեջ գործող սոցիալ-դեմոկրատ բոլշեւիկները երկու առիթ ունեցան պաշտոնական ձեւով այդ մասին արտահայտելու իրենց կարծիքը: Առաջինը՝ 1915-ի փետրվարին Թիֆլիսում կայացած Հայոց ազգային համագումարում³, երկրորդը՝ նույն տարվա հոկտեմբերին Կովկասի բոլշեւիկյան կազմակերպությունների Բաքվում կայացած խորհրդակցությունում⁴: Նկատենք, որ անցյալում, իրենց կուսակցության ձեւավորվելու պահից, հայ բոլշեւիկները եւ առհասարակ բոլշեւիկները ջանիցս հանդես էին եկել արեւմտահայության ազատագրական պայքարի օգտին: Նրանք դա կապում էին բանվոր դասակարգի պայքարի, ցարիզմի խորտակման եւ հեղափոխական ճանապարհով Ռուսաստանում սոցիալիզմին անցման հետ: Սակայն վերջը նշված փետրվարին, երբ կամավորական շարժմանն օժանդակելու հարցն էր ջննարկվում, բոլշեւիկներ Բագրատ Բոքյանը եւ Այոշա Ջափարիձեւն համագումարին ներկայացրած փաստաթղթում ժխտում էին իայության ինքնապաշտպանական կռիվ այն ձեւը, որպիսին կամավորական շարժումն էր, կամավորական ջոկատների ստեղծումը եւ նրանց գործունեությունը ուղղաճակատում ռուսաց բանակների հետ: Նրանք դա նպատակահարմար ձեւ չէին համարում:

Բաքվի խորհրդակցությունը, որը կայանում էր այլեւս այն ժամանակ, երբ փաստ էր հայության ցեղասպանությունը, հանգում է այն հայտնուն եզրակացության, որ դրանում, մեղմ ասած, մեղավոր է

Ղաշնակցությունը՝ կամավորական շարժումը ծավալելով եւ կամավորական ջոկատներում տարած ճակատային գործունեությամբ: Սոցալոգիայի էին տրվում արդուկամիդյան օրերից ի վեր եւ երիտթուրքերի իշխանության գլուխ անցնելուց հետո կազմակերպված հայության բազմաթիվ ջարդերը, եւ ամեն ինչ դիտվում էր որպէս կամավորության դեմ վրիժառության արտահայտություն: Իբրեւ թե՛ չլինէր կամավորությունը, չէին լինի հայոց կոտորածների սարսափները, երբ կոտորածները թուրք տերության համար մինչ այդ էլ սովորական բան էին բոլոր հայաբնակ վայրերում, քանի որ խնդիրը հայության գլխովին ու լիակատար բնաջնջումն էր: Նման հարցադրման հանգամանակից հերքումը այս շարադրանքի համար շատ տեղ կզբաղեցնի: Ասենք միայն հետեւյալը:

Կամավորական շարժումը ինքնաբուխ էր, այն չէր կարելի կանգնեցնել: Կամավորն ինքը չէր կարող առաջ չմղվել, ինչպիսին էլ լինէր արգելքը: Ռուսաց բանակը գնում էր դեպի հարավ ու արեւմուտք, հայերը միշտ օգնել էին, մասնավանդ 1826-1828-ի ռուս-պարսկական կռիվ ժամանակ, եւ պատերազմի արդյունքը եղել էր Հայաստան աշխարհի արեւելյան հատվածի միավորումը Ռուսաստանին: Ճարն ու նրա տեղական կամակատարները քրիստոնյա՝ էին եւ համեմատաբար մեղմ՝ հայության լուսավորչական եկեղեցու, նրա լեզվի եւ նիստ ու կացի նկատմամբ: Չէր կարող հայ մարդը ռուսաց զորքին ընդառաջ չգնալ, ու չգնալ նրա հետ իր արեւմտյան եղբայրներին ու ջուրերին օգնության:

Բոլշեւիկյան փաստաթղթում շատ բան գլխավորապէս Ղաշնակցության եւ հայոց մյուս ազգային կուսակցությունների նկատմամբ հեղինակների անմաքսելի վերաբերմունքից, անզիջում հակամարտությունից էր բխում: Մենք տեսանք կամավորների երթը մինչեւ Վան: Ո՞վ էր թուրքական բանակի դեմ մարտնչող հիմնական ուժը: Եվ միթե՞ այնտեղ ռոշիչը ռուսաց բազմահազարանոց բանակի կողքին կամավորական մի ջանի ջոկատներն էին, միթե՞ նրանք այնքան սարսափելի ուժ էին ներկայացնում, որ հապճեպ պետք էր թիկունքում հայերին բնաջնջել: Հակառակի պէս եթէ սարսափելի լինէին, վերաբերմունքն էլ այլ կլինէր: Թուրքիայում ուրիշ քրիստոնյաներ էլ կային, ինչպէս ռուսները՝ Կարսի մարզում ու Սեւ ծովի ափերին, ինչպէս հույներն ու ասորիները՝ երկրի այդ ու մյուս վայրերում: Եվ նրանք նույնպէս համակիր էին երկիր մտնող ռուսաց զենքին: Բայց թուրքի սուրը իջավ հատկապէս հայության գլխին: Սա առանձին ծրագրի կենսագործում էր: Իսկ հայ մարդը չէր կարող առաջ չմղվել:

Չլինէին հայությանը կոտորելու հատուկ պլանը, պատերազմի ընթացքում թուրքական զորքերի գործողությունները՝ հարձակումով

¹ «...որպարուհի», էջ 25: ² ԿՊՊԱ, ք. 2100, ց. 1, գ. 646, ք. 74: ³ Ե. Գառաջ, Պայքարի ճամփան, Ե., 1932թ., էջ 19: ⁴ Ստ. Եսիւնյան, ԵԱԺ, հ. 3, էջ 26-29:

ու նահանջումով հանդերձ այդ պլանին համաձայնեցնելը, եւ եթէ պատերազմը լինէր ինչպէս որ պատերազմի կարգն է, չէր լինի հայության նման կոտորածը, ինչո՞ւ պետք է զորքերը ռազմի դաշտից ետ քաշվէին, ինչո՞ւ պետք է սովորական պատերազմական կարգին հակառակ թուրքական հրամանատարությունը հատուկ հոգ տանէր, որ ոուսաց զորքը ջարդի մեծ օջախից քաշվէր, ուրիշ կողմ տարվէր... Կամավորական շարժում եղել է նաեւ Լեհաստանում՝ հօգուտ ռուկների եւ ընդդէմ Գերմանիայի, հարձակվող բանակների ազգակից եւ նրանց նկատմամբ, մեղմ ասած, համակիր բնակչություն է եղել թե՛ Գերմանիայում ու Ֆրանսիայում, թե՛ Իտալիայում, Բուլղարիայում ու Ռուսաստանում... Եվ ոչ մի տեղ մարդիկ անտարբեր չեն եղել հարձակվող կամ պաշտպանվող ազգակից զորքերի ճակատագրի նկատմամբ: Բայց ոչ մի տեղ էլ հրացանն ու մանավանդ հրանոթը թիկունքի դէմ չեն ուղղվել, համատարած ցեղասպանություն չի եղել:

Ուրիշ հանգամանք էլ կա: Կամավորական շարժումը բորբոքելու համար ցարն ու նրա մերձավոր կամակատարները խանդավառող խոսքեր էին ասում եւ, փաստորեն, ուրիշ ոչինչ, իրենց իրական, անկեղծ նկատառումները առեղծվածի նման թողնելով թաքստոցում: Իսկ երբ դրանք քիչ թե շատ բացահայտվեցին, արդեն բավական ուշ էր: Այդ նույն պահին էր, երբ հայ հասարակայնության վերնախավը ջոկատների համալրման հարց էր դնում, իսկ ժողովրդի մեջ սկսում են տարածվել լուրեր այն մասին, ինչպէս ասվում է փաստաթղթում, որ բանակում անբարյացակամ, մինչեւ իսկ թշնամական վերաբերմունք է տիրում հայկական ջոկատների նկատմամբ: Եվ այդպէս էլ համալրման, նոր ջոկատների ստեղծման հարցը մնում է օդից կախված:

Այլեւս պարզ էր, որ նոր ջոկատներ չեն լինի:

Մայիսի 19-ի կովից հետո պարտված, մեծ թվով զոհեր տված խալի բեյը նահանջում է դեպի հարավ, Մոսուլի կողմը: Դեպքերի մասնակիցը նշում է, որ ռուսական զորքը, այդ թվում նաեւ Անդրանիկի ջոկատը, ուղեւորվում է դեպի ասորական Ջուլամերկ տեղանքը, ուր նրանք հասել են մեծ դժվարություններ հաղթահարելուց հետո¹:

Նազարբեկովի մայիսի 26-ի հրամանում հայտնվում է, որ խալի փաշայի զորքը ետ է քաշվել դեպի Բիթլիս²: Իսկ նրա դիվիզիայի կոիվը այս փուլում խալիի զորամասի հետ էր՝ արգելել նրա առաջընթացը, խփել, հյուծել նահանջելիս:

1 Վ. Հովակիմյանի հոդոքը «Արմյանակի վեստիկ», NN 30, 32, 34, 1916թ.:
2 Կոռու. № 2543, ք. 1, գ. 3, ք. 20:

Հունիսի 2-ին Անդրանիկի ջոկատը հասնում է Վանա լճի եւ Վան քաղաքի մոտակայքի Վարազա վանք, որտեղ նրան հանդիպելու էին եկել Վանի երիտասարդության ներկայացուցիչները¹: Այդտեղից ջոկատը գնում է մերձավոր Կուրաբաշ գյուղը: Ի վերջո մոտենում է ընդհուպ Վանին եւ կանգ առնում քաղաքի արեւմտյան կողմում Այգեստան թաղամասին կից Արտամետ այգեշատ գյուղում: Ջինվորները հապճեպ վրաններ են խփում, իսկ նրանցից ավելի անհամբերները, բնիկ վանեցիները, չնայելով վրա հասած գիշերվա մութին, մտնում են քաղաք: Համատարած խավարի մեջ այստեղ ու այնտեղ ճրագներ էին վառվում, փոքրիկ օջախներն էին լուսավորում եւ լուցկին ու կայծքարն էին առկայծում: Կամավորների հայրենակարոտ աչքերի առջեւ ալան-թալանի տեսարան էր: Զաղաք մտած կազակային զորամասի զինվորները մուլուցքի մեջ էին: Ի՞նչ էին սպասում եւ ինչի՞ հանդիպեցին: Բացառված չէր, որ կամավորն ինքն էլ կանգնելով դատարկված, ավերակված տների առջեւ, մի մասունք վերցնէր՝ ձեռքը, բայց ի՞նչ սրտով եւ այլեւս ինչի՞ համար: Նա իր տունն էր որոնում եւ իր հարազատներին... եւ այլեւս ո՛ւմ կարող էր նա համոզել, որ եթե ժամանակին՝ մի օր, մի ժամ անգամ շուտ՝ մտնեին քաղաք, գուցե ոչ թե ավերակված տունը, այլ ողջ-աողջ հարազատներն ընդառաջ կգային, ո՛ւմ համոզեթ այն, ինչը ինքնին հավսկանալի էր, եթե միայն մարդը տրամադիր լինէր հասկանալու:

Ջոկատի մոտենալը Վանին հայտնի է դառնում, եւ քաղաքի բնակչությունը հունիսի 3-ին դուրս է գալիս դիմավորելու կամավորներին: Մեծ հացկերույթ է լինում, եւ Անդրանիկը ոգեշունչ՝ բաժակաճառ է արտասանում: Բացադրում է, որ առջեւում Բիթլիս, որտեղից էլ դեպի Մուշ տանող ճանապարհն է, օգնական զինվորներ են հանրակոր, երկու հազար հոգի: Առանց Բիթլիսն ու Մուշը գրավելու, բացատրում է, Վանի գրավումը հաստատ չի կարող լինել: Նույն պահանջով Անդրանիկը դիմել է Վանի նահանգապետ Արամին եւ նրա առջեւ խնդիր դրել: Բայց ապարդյուն: Այնքան զոհեր տված վանեցին փաստորեն այլեւս ուժ չի գտնում շարունակվող կռիվներին տրամադրելու²:

Ճանապարհը շարունակել են: Ստակա ճամփակերով, զուգահեռ ուղղությամբ առաջ էին շարժվում նաեւ Դրոյի, Համազասպի եւ Զեռու խմբերը: Այս ընթացքում հայկական ջոկատները ներառած ռուսական զորամասի հրամանատարը գեներալ Տրուխինն է եղել, կորպուսինը՝ դարձյալ Օգանովսկին: Մի շարք հաջող մարտերից հետո, հուլիսի 6-ին, նախապատրաստվող հարձակման նախորդ օրը Տրուխինը միասնական առաջադրանք է տալիս մի ռուզոլության վրա դասավորված 600 հոգուց բաղկացած կազակային եւ Անդրանիկի,

1 «Արմյանակի վեստիկ», NN 30, 32, 34, 1916թ.: 2 «... օրագրութիւն», ԿշՁԹ-28:

Դրոյի, Համագասպի ու Քեռու ջոկատներին, միաժամանակ նպատակահարմար գտնելով սպասվող մարտի ընդհանուր հրամանատար նշանակել Անդրանիկին:

Հայկական ջոկատները ուսական զորամասերի հետ միասին գտնուում էին բուն Հայաստանի դաշտերով ու ձորերով: Կամավորներից շատերին ծանոթ, հարազատ վայրեր էին: Առջեւում Բիթլիսն էր, Սասունն ու Մուշը: Անհամբեր Անդրանիկը հրամանատարության առջեւ խնդիր է դնում, որ իրեն թույլ տրվի գնալ ուղիղ դեպի այդ վայրերը տանող ճանապարհով, օր առաջ հայ բնակչությանը փրկության հասնելու նպատակով: Օգանովսկին համաձայնում է: Նույն միացյալ զորակազմով, որ երեք հազար հոգի էր, Անդրանիկը իրեն ծանոթ ճամփաներով մարտերով առաջանում է եւ խորանում: Անդրանիկի զորախումբը հունիսի 16-ին եւ 17-ին լարված կռվով թշնամուս հարկադրում է նահանջել: Հունիսի 28-ին եւ 29-ին զորախումբը ավելի ուժգին հարված է հասցնում թուրքերին, որոնց չի փրկում մինչեւ իսկ օգնության եկած համալրումը: Վերջապես մարտ է եղել Ուրթաբ բնակավայրի պատերի տակ: Այստեղ թուրքերի հետ դաշն կնքած՝ դարձյալ մարտնչել են քրդերը: Կռիվները, որ ընթացել են Վանի հարավային գծով, ղեկավարել է գեներալ Տրուխի-նը, իսկ լճի հյուսիսային կողմով ընթացել են գեներալ Շարպանտյեի ղեկավարած զորամասերը: Ժամանակին կազմված գեկուցագրում այս բոլորը պատմող հրամանատարը ոգեշունչ բառեր է գրում.

«Բոլոր այդ մարտերում պանծալի հայկական ջոկատների եւ հատկապես վերին աստիճանի խիզախ, եռանդուն եւ անձնուրաց հրամանատար Անդրանիկի գլխավորած առաջին ջոկատի գործողությունները վեր էին ամեն տեսակի գովասանքներից եւ արժանի էին... բարձրագույն պարգևների, որի մասին ես հարց եմ բարձրացրել իմ անմիջական ղեկավարի՝ Կովկասյան 4-րդ կորպուսի հրամանատար Օգանովսկու առջեւ»¹:

Ախլաթում Անդրանիկը հանդիպում է միայն հեռախոսային կապ պահպանող մի քանի ուս գինվորների: Անակնկալ ձեւով պարզվում է, որ մյուսները, այդ գծի վրա գտնվող շուրջ ութ հազար գինվոր, բռնել էին ետդարձի ճանապարհը: Պետք էր շտապել նրանց հասնելու համար: Վերադարձի երթուղու Ալջավազ գյուղում Անդրանիկին ենթակա գինվորները միանում են ուսական զորամասին:

...Նահանջում էր Կովկասյան ճակատի 4-րդ կորպուսը, 60 հազարից ավելի մարդկային հսկայական զանգված, ժամանակի զենքի բոլոր տեսակներով բեռնավորված: Դանդաղ քայլվածքով, տառապանքով, զոհեր տալով ու հաղթանակի քաղցրությունը ճաշակելով,

¹ ՀՀ ԴԿՄ, ֆ. 370, ք. 1, գ. 76, ք. 9: Լաւել և Մ., գ. 73:

թե անհանգիստ ցերեկներ, թե անքուն գիշերներ անցկացնելով, Դիւմանից հետո ավելի քան երեք ամսում անցած ճանապարհը ետդարձին սրընթաց եղավ: Մի շաբաթ անց կամավորներն՝ Իգդիրում էին (հունիսի 26-ին): Այնտեղ միաժամանակ դադարից հետո հասնում են Եւման դիրքերը՝ օգոստոսի 8-ին Էջմիածին ու Երեւան, հաջորդ օրը՝ Զանաքեռ¹: Եվ սա կոչվում է՝ ոչ թե հերթականությամբ՝ **Երկրորդ** նահանջ, այլ **մեծ** նահանջ: Եղան մեծ հաղթանակներ, որոնց վայել՝ Լաւել մեծ նահանջ:

Նորից Անդրանիկը պետք է մոայլվեր, նորից մի կողմ քաշվեր, մտներ հրամանատարական թաքստոցը, որ գինվորի երես չտեսներ, չլսեր նրա հարցականը, ստիպված չլիներ անստույգ պատասխաններ տալ եւ սուտ պատճառներ բռնել...

Բայց այս անգամ սովորույթի ուժը իր դերը խաղաց: Մոայլվեց ու զայրացավ, սակայն շատ բան կուլ տվեց, շատ բան, որ պետք է ասեր, չասեց, գինվորն էլ էր ամեն ինչ հասկանում, նրան էլ էին պարզ անիմաստ խաղերի իմաստը: Դրա համար պետք չէր անպայման հրամանատար լինել:

Հայոց աշխարհում նորից հնչում էր նահանջ բառը: Գայլի ոռնոցը հաճելի էր, ագռավի կոնչուկը՝ անուշ մի երաժշտություն այս կահանջ բառի համեմատ: Նահանջը վերադարձ չէր, որին նույնպես սպասում էին ու երազում արեւելքից արեւմուտք եկած արեւելքի զավակները: Նահանջը արյունը իզուր թափելն էր, թափանք արյան վրա խաչ քաշելը, մեռյալների ոգին հավերժումի ջալանումից զրկելը, էլ ինչպէ՛ս, ո՞ր հողի վրա ու ո՞ր երկնքում պիտի աստված զոհված կամավորների հոգին լուսավորեր:

Այս վիշտն ու տառապանքն է ձուլվել որպէս նամակ եւ Թիֆլիսից Բոստոն ուղարկվել այն օրերին, երբ ուսմաց հրամանատարները Դիւմանից Վան հասած եւ Վանից Բիթլիս ու Մուշ տանող յարերով ու դաշտերով անցնող գինվորին հրաման էին արձակում ետ հանալ, նորից գնալ ու բռնել Եւման այն դիրքերը, որտեղից նրանք դուրս էին եկել: Նամակը ուղարկված է «Հայրենիք» ամսագրում գետեղելու համար, որպէսզի աշխարհն իմանա Հայոց աշխարհին հասած հերթական ողբերգության մասին:

Ողբերգություն փառահեղ հաղթանակներից հետո, դուրախության ամենավերին աստիճանի վրա: Կարգանք օրերի թանկ տպավորությունը:

Ուզմաճակատում լուրեր են տարածվել, թե թուրքական զորքեր կորպուս գալիս է ուսների վրա, եւ ուսներն էլ, ինչպէս ասվում է

¹ «...որագրութիւն», էջ 28-37:

Նամակում, ահ ու սարսափի մեջ որոշել են Նահանջել: Հայոց աշխարհն արդեն գիտեր, թե ոուս հրամանատարի համար Նահանջն ինչ է. երեկ հարձակում էր, վաղը, Նահանջից հետո, դարձյալ հարձակում կլինի: Սա գրում էր հայ մարդը, արդեն փորձից ու տառապանքից իմանալով Նահանջի այս նոր իմաստը: Երեկ այդպես չեղա՞վ: Եվ ողջ բանակի հետ Նահանջում են կամավորների ջոկատները, թե՛ առաջինն ու երկրորդը, թե՛ երրորդն ու չորրորդը:

Նահանջի լուրն ստանալուց հետո Նահանգապետ Արամը մոտեցել է գեներալ Նիկոլաեին, իմանալու՝ ինչու՞մն է բանը, որտեղից բուսնեց Նահանջի անհրաժեշտությունը, եւ այդ ի՞նչ թուրքական զորքեր են զալիս, որ այդպես աճապարանքով պիտի փախուստի ճպնապարհ դուրս գալ: Գեներալի մեջ հավանաբար զորավարական արժանապատվությունն է խոսել, ոչ ոք էլ Նահանջի մասին չի մտածում, վճռաբար պատասխանել է նա: Իսկ լուրերը զալիս են ու զալիս, եւ տանջահար Վանի կրակի բոցերից չազատագրված մթնոլորտը ժամ առ ժամ շիկանում է: Արամի առաջին հոգսը երեխաներն են՝ ազգի ապագան, Վանի ապագան, վաղվա օրը: Հոգսը մայրերն են, կանայք: Անհապաղ վճռվում է, հենց որ ոուս զինվորը ելավ ոտքը քաղաքի մերձակայքից ու քաղաքից դուրս դնելու, կանանց ու երեխաներին հանել քաղաքից, իսկ գենքի ընդունակ բոլոր մնացածներին զինել եւ վերստին կանգնել քաղաքին ի պաշտպանություն: Բայց ինչո՞վ զինել: Հույսը գեներալ Նիկոլաեին էր, որին դիմել է Արամը, տվեց մեզ գենքի ավելը, այն, որը զորքին այլեւս պետք չէ: Իսկ զորավարը մերժելու թաքուն ձեւն է գտել, ոչ մի զորք էլ չի Նահանջում, ոչ մի գենք տալու կարիք չկա: Չորքերը մնո՞ւմ են քաղաքում: Ահա մի հուսադրում, որ հարյուրապատիկ ավելի վատ էր բացահայտ մերժումից: Որքան լավ կլիներ ու մխիթարական, եթե ասեր, թե մենք գենք չունենք կամ ունենք, բայց չենք կարող տալ, դուք ձեր գլխի ճարը տեսեք: Որքան լավ կլիներ: Բայց սա վերաբերում է սոսկ Նիկոլաեի բարոյական կերպարին: Բարեբախտաբար Արամը այդքան միամիտ չի գտնվում, որ սուտը հալած յուզի տեղ ընդունի: Ստացվում է Անդրանիկի հեռագիրը: Հեռագրեր են հղում ժողովրդի պահպան քաջորդիները՝ Զեռին ու Դրոն, դրությունը լուրջ է, ոուսաց զորքը ոչ թե Նահանջելու է, այլ արդեն Նահանջում է, բնակչությանը՝ տեր կանգնեք: Հազիվ այս հեռագիրն էր ընթերցվում, երբ արդեն ազնիվ ու անկեղծ Նիկոլաեը զորքերը քաղաքից դուրս էր բերում՝

Ընթերցողի ջղերը կոխմանա՞ն, որ նա կարդա Վանի Նահանջի իրական պատմությունը: Դիմանան թե չէ, պիտի պատմենք, գոնե հանուն այն բանի, որ իմանանք ինչ տառապանքների է Անդրանիկը վկա

եղել, եւ որքան խոր պետք է լիներ նրա վիշտը, եւ որքան ամուր նրա ջղերն ու համբերությունը, եւ քանիցս առավել զայրույթի այն պատճառները, որոնք միատեղ գումարվել էին նրա մեջ, որպեսզի նրանից մի զինվոր ու մի զորավար ձուլվին, գթության եւ փրկության զորավար, բայց ոչ երբեք կոտորածի ու նվաճումների: Չեղնազուրկ կուզենա՞ր Անդրանիկի տեղը լինել: Մերժող Նիկոլաեը կցանկանա՞ր Անդրանիկի պես առանց զինվորական ուսադիրների, առանց աստիճանի ու կոչման զինվորների հետ հավասար ու առավել տառապել նրանց հետ կողք կողքի խրամատներում ու սվինամարտի ժամին, եւ այն էլ հանուն ոչ թե նվաճումների ու զավթումների, ոչ թե մարդկանց կոտորելու, այլ հրացանի ու հրանոթի կրակի բերանից խլելու, հեռու պահելու համար: Ջուլֆայից մինչեւ Վանի արեւմտյան ափերը տանող ճանապարհին նրանցից ո՞ր մեկը եւ քանի՞ անգամ էր խրամատում եղել ու սվինամարտի գնացել, եւ այն էլ ոչ թե զինվորների հետ, այլ նրանց առջեւից... Ռուս գեներալը ուզվի դաշտում ի՞ր ժողովրդի բախտն էր կիսում, հայ հրամանատարը՝ ի՞ր: Անդրանիկը միայնակ չէր կիսում հայի ճակատագիրը: Կար նաեւ Արամը, Վանի Նահանգապետը, որի մասին էլ փաստաթղթի ստորել բերվող պատմությունն է:

Առաջին Նահանջից հետո Վանից փախած հայերի զգալի մասը վերադարձել է: Հետագայում, հայերը նկատում են, որ քաղաք մտած ոուսական զորքը իրեն հանգիստ չի զգում եւ «վախի նշաններ է ցույց տալիս», ամեն ինչ պատրաստ լինելով Նահանջելու: «Ռուս հետախույզները անհեթեթ տեղեկություններ են բերում, իբր թե թուրքերը մեծ ուժեր են առաջ քաշում, որոնք հասել են մինչեւ Ռոտան եւ շուտով կանցնեն Հայոց ձորն ու կլինեն Վանի մոտ: Ռուս հրամանատարները փախուստի պատրվակ են որոնում: Մի օր էլ հանկարծ Նալգինը հայտնում է, որ թշնամու խոշոր ուժեր են զալիս Ներքին Հայոց ձորով, եւ իրենք որոշել են Նահանջել դեպի Խոշապ: Ռուս հրամանատարը առաջարկում է Արամին, որ նա իր մարտիկներով եւ ժողովրդով քաշվի Խոշապի կողմը»: Ինչպես երեւում է, ոուս հրամանատարը այդ առաջարկն արել է վերելում ասված մերժումներից հետո: Ի վերջո ոուս հրամանատարությունը առաջարկում է, որ բնակչությունը իր հետ Նահանջի: Ծեր ու մանուկ, տղամարդ ու կին քաղաքը թողնում են երեսի վրա ու բռնում գաղթի ճանապարհը: Ու մեկ էլ հանկարծ ոուս հրամանատարությունը գտնում է, որ ճիշտ էր Արամը, երբ ասում էր, թե ոչ մի թուրք զորք էլ չկա, եւ պետք չէր Նահանջել, ուստի առաջարկում է, որ ժողովրդը կրկին դառնա դեպի Վան: Արամը կրկին հանդիպում է գնդապետ Նալգինին: Գնդապետը հավաստիացնում է, որ այլեւս ոչ մի վտանգ չի սպառ-

1. Կողմ. ք. 521, ք. 2, ք. 492, ք. 31:

նում, որ ինքը՝ Արամը, հրամանատարության ցանկությամբ, նշանակվում է հետախուզության ղեկավար, եւ այսուհետեւ կարվի այնպես, ինչպես նա կասի ստացած տեղեկությունների համաձայն: Բայց հիմա էլ տեսնե՞ք, թե Լալզիելը, մահմեդական գնդապետը, ինչ նոր խաղ է խաղալու Արամի եւ բնակչության գլխին: Արամը հազիվ տուն էր մտել, երբ երեկոյան մթին Լալզիելի կազակ սուրհանդակը լուր է բերում, թե «ոուս զորքը նահանջել է, եւ Լալզիելը հրամայել է այս լուրը հասցնել հայերին»: Արամը ձին թամբում է եւ աճապարում դեպի ոուս զորակայան, որտեղ «նրա աչքերի առջեւ բացվում է մի վրդովեցուցիչ տեսարան, ոուս զորքերը թողել են ամեն ինչ ու փախել: Վրանները մնացել են կանգուն, մոմերը վառ, կաթսաները կրակի վրա եւ կերակուրը մեջը եփվելիս»: Եվ ուրիշ գաղտնիքներ, «Վրանների տակ մեծ քանակությամբ գորգեր, կարի մեքենաներ, ձայնապնակներ եւ նալ կարգի ապրանքներ, որոնք քաջարի, ոուս զինվորները փախցրել են քաղաքից: Իսկ այժմ ամեն ինչ թողել են ու ճողոպրել...»:

«Ամոթալի փախուստ առանց պատճառների», — այսպես է բնութագրում պահպանված բավական զրազետ ձեռագրի հեղինակը: Եվ փողոցներում, հնչում է մունետիկի ձայնը՝ գաղթ դեպի Ռուսաստան, անհապաղ գաղթ: Եւ այնքա՞նչ հաղորդելու համար սուրհանդակներ են ուղարկվում գյուղերը:

Երեքհազարամյա Կանց այսպիսի դժխեմ օրեր ե՞րբ էր տեսել Փախուստի եր դիմում բնակչության պահպանված չնչին մասը: Փախուստն հետ անտեքության ու թալանի եր մատնվում հնամենի մի մշակույթ, հայրենի օջախում մահվան երախին եր հանձնվում քաղաքակրթության հզոր մի շղթա...

Կովկասի բնակչային շտաբը իր կազմած փամտաթղթում նշում է, որ արդեն հուլիսի 11-ին հայաբնակ Արևազկերտի շրջանից ոուսական զորամասերին նահանջի հրաման է տրվել: Պարզ էր, որ նահանջին անմիջապես հաջորդելու եր անպաշտպան մկացած հայ բնակչության կոտորածը: Սա դարձյալ նույնն էր, թե նահանջի հրաման էր տրվում Վանի շրջանում գտնվող ոուսական զորամասերին: Ահա այս ժամանակ է, որ Վանի նահանգապետ Արամը, Վանում գտնվող առաջին եւ երկրորդ հայկական ջոկատների հրամանատարները դիմում են գեներալ Լիկուլաեիին, պահաջելով, որ նա թույլ տա իրենց չնահանջել, մնալ տեղում, իրենց հետ թողնելով եղած լեռնային հրետանին: Ստանալով փաստորեն մերժում, Արամը հետախոսով դիմում է Կովկասյան բանակի շտաբի պետ Յուդեևիչին, որից հետո գեներալ Տրուխինը, ասվում է փաստաթղթում, ջոկատներին առաջար-

1 Կողմ, ք. 521, ք. 5, գ. 492, ք. 46-ի 1-ից 7 էջերը:

կում է մնալ, եթե իրենք կամենում են, որովհետեւ այդ ընթացքում հայ բնակչությունը արդեն հասցրել էր գաղթել եւ նրանց հետ նաեւ ջոկատները, որոնք արդեն, դուրս գալով գրաված դիրքերից, հասել էին Բերկրի Կալե: Այդ պատճառով Արամը հայտարարել է, թե հայկական ջոկատները Վանում չեն մնա, կգնան գեներալ Տրուխինի հետ: Այնպես որ ամսի 18-ին զորքի հետ նահանջում էին ջոկատները, վերջիններիս հետ՝ նաեւ բնակչությունը: Անդրանիկի եւ Դրոյի ջոկատները՝ Վանի հյուսիսային, իսկ երրորդ եւ չորրորդ ջոկատները՝ հարավային ափով: Հուլիսի 22-ին երրորդ եւ չորրորդ ջոկատները հասել են Վան, որտեղից շարժվել են դեպի Բերկրի եւ Խոյ: Իսկ առաջին եւ երկրորդ ջոկատները Ախլաթի ճամփով եկել են Արճեշ, ապա՝ Բերկրի, որտեղ թուրքերի հետ կռվի մեջ մտնելուց հետո ուղեւորվել են Իզդիբ:

Նահանջող այս զորամասերը հուլիսին ձեւավորված են եղել որպես Արճեշի զորախումբ՝ գեներալ-լեյտենանտ Շարպանտյեի ընդհանուր հրամանատարությամբ: Հուլիսի 15-ին նրա շտաբը եղել է Վանի նահանգի հյուսիսային կողմում գտնվող գավառի կենտրոն Արճեշ քաղաքի հարավ-արեւելյան հատվածում: Այդ զորախմբի կազմում որպես առանձին ստորաբաժանումների հրամանատարներ նշվում են գեներալներ Տրուխինը, Աբացիելը, Մուդրին, գնդապետ Պոտտոն եւ ուրիշներ, որից հասկանալի է դառնում, որ մեծ էր զորքերի կուտակումը նահանջի այդ հատվածում: Ջորախմբի հրամանատարի տեղակալներն էին գեներալներ Նազարբեկովն ու Վիվեն դե Շատոբրիանը: Ջորախմբի զբաղեցրած տեղանքի առանձին հատվածներում 1915-ի հուլիսի 15-ի հրամանով հետախուզական գործողություններ էին կատարում Անդրանիկի եւ Դրոյի ջոկատները: Ջորախմբի հրամանատարը նույն օրվա իր հրամանում զինվորներին հեռու էր պահում գաղթող բնակչության նկատմամբ ոտնձգություններից.

«Նկատված է, որ որոշ ցածրաստիճան զինվորականներ գաղթողներից խլում են անասունները, սննդամթերքը, պոկում են կանանց զարդերը:

Կարծում եմ, որ սպանակազմին եւ ջոկատի հսկայական մեծամասնությանը պարզ է մնում արարքների ստորությունը: Հուսով եմ, որ զորախմբի պաշտոնյաները եռանդուն միջոցներ կգործադրեն նման անկարգություններին վերջ տալու համար եւ ինձ այնպիսի ծանր վիճակի մեջ չեն դնի, որ կողպուտի մեջ առաջին իսկ բռնվածին հանձնեմ ռազմադաշտային դատարանին»: Ջուր չենք համարում նշել, որ այս փաստաթղթի տակ նաեւ զորախմբի գլխավոր շտաբի պետ գնդապետ Դորդանյանի (Կորգանովի) եւ ավագ ադյուտանտ

Մելիք-Աղամալյանցի ստորագրություններն են¹: Անհետաքրքիր չէ նաեւ այն, որ գեներալ Շարպանտյեն հատուկ մի հրամանով հայկական ջոկատներին է հանձնարարել զորախմբի համար հաց թխելը, որը նրանք պետք է անեին Արճեշի հայ բնակչության տներում²: Նույն այդ հրամանով հայկական ջոկատները հրամանատարությանը պետք է տրամադրեին մեկական զինվոր, որպէս սուրհանդակներ: Սեպուհի ականջը կանչի, ինչպէ՞ս կարելի էր այժմ էլ հրաժարվել սուրհանդակներ տալուց:

Այնուամենայնիվ նահանջ էր: Ռազմական փաստաթղթում նշվում է երկու հարյուր հազար հայության սոսկալի գաղթ՝ Վանի հյուսիսային ափերից մինչեւ Խոյ՝ մի կողմից եւ մինչեւ Իզդիր՝ մյուս: Ջորջի դեպի Կովկաս նահանջի ճանապարհի ամբողջ երկայնքով մեծ ու փոքր տարիքի գաղթած բնակչության դիակներ էին. «Բոլոր կրծքի երեխաները առանց բացառության մեռնում էին: Մարդիկ մեռնում էին հյուծումից, սովից ու ծարավից»: Տխուր այս տեսարանները նկարագրվում են շտաբային փաստաթղթում, ապա նշվում է գեներալ Տրուխինի զորամասի կազակների մարդասիրական վերաբերմունքը. «Իրենց սեփական նախաձեռնությամբ եւ կարեկցանքի զգացումից դրդված փրկում էին հայ երեխաներին, տանելով նրանց ձիերով՝ ամեն մեկը մի քանի հոգու»: Մինչդեռ քրդերը ճանապարհին թալանում էին եւ սպանում մարդկանց, հարձակվում կազակային ջոկատների վրա:

Այս տեսարանները նկարագրող ռազմական փաստաթղթում հարցական է դրվում, եթե այդ նահանջը անհրաժեշտ էր ինչ—որ ռազմաստրատեգիական թելադրանքով, ապա ինչպէ՞ս է, որ ամբողջ ետդարձի ճանապարհին, Վանի շրջանում ոռոսաց զորքի դեմ չի երեւացել թշնամու ոչ մի ուժ: Եվ ահա եզրակացությունը, որը քանիցս հարկ եղավ անելու այս շարադրանքի վերելում. «Հայերը չեն կարող հրաժարվել այն համոզմունքից, թե եթե մեր [ռուսական] բանակի նահանջին համաչափ կերպով կատարվեր հայ բնակչությանը զինելու մասին նրանց խնդրանքը, ապա դժբախտությունը այդքան սարսափելի չէր լինի»³:

Օրագրողը օգոստոսի 9—ին Անդրանիկին Երեւանի մոտակայքի բարձրադիր Ջանաքեռի զորակայանում է տեղում՝ իր ջոկատի զորավարժական փորձերը ղեկավարելիս, այդ ժամանակամիջոցում նաեւ այցելություններ կատարելով Թիֆլիս եւ հանդիպումներ ունենալով հայ հասարակական գործիչների հետ⁴:

Ե. Բաղեշ եւ Մուշ

Իզդիրյան կանգառում ջոկատը երկու շաբաթ հանգստացել է: Օգոստոսին արձակուրդ է ստացել: Կամավորները վերադարձել են իրենց տները: Հավաքավայր է նշանակվել Ջանաքեռը: Արձակուրդի ժամկետը լրանալուց առաջ, սեպտեմբերի 4—ին, Անդրանիկն իր զինվորներին դիմել է վերադարձի կոչ՝ անող թերթիկներով: Միաժամանակ հայտնել է, որ ջոկատը հնարավորություն ունի նոր կամավորներով համալրվելու, առանձնապէս ընդգծելով հեծյալ մարտիկների կարիքը: Տեղեկացնում էր, որ նրանք, ցանկանալու դեպքում, ներկայանալու են հեծյալի հատուկ զգեստով: Երեւում է, զուր չէին անցել առաջին հավաքի ժամանակվա բացթողումները: Անդրանիկը հարկ էր համարում նշել, որ զորամաս կարող են ընդունվել նրանք, ովքեր «բոլորովին առողջ են, ծանր կյանքի ու զրկանքների ընդունակ»: Ցանկալի էր համարվում եւ շնորհակալության արժանի, եթե զորագրողները իրենց հետ բերեին ներքնահագուստ, զուլպա, ծխախոտ, չորահաց, շաքար եւ առհասարակ դիմացկուն սննդամթերքներ, որոնց կարիքը: Նշվում էր, որ շատ մեծ է՝:

Եվ հին զինվորները, եւ նորապսակ կամավորները Ջանաքեռում զինավարժության դասեր են անցնում: Առաջին ջոկատի հետ վարժվում էր նաեւ կամավորների դարձյալ հինգերորդ համարվող ջոկատը՝ Հովսեփ Արղույանի հրամանատարությամբ: Նրան այցի է գալիս Անդրանիկը, հետաքրքրվում պարապմունքների ընթացքով: Հրավիրել էր Արղույանը, ցանկալի էր, որ զինվորները տեսեին փառաբանված Անդրանիկին, լսեին նրա խոսքը: Ջոկատը երկու մասի է բաժանվում: մեկին հրամանատար է դառնում Անդրանիկը, մյուսին՝ Արղույանը: Եվ սկսվում է երկուսի միջեւ փորձամարտը: Արղույանը թերեւս այդպէս էլ սպասում էր, որ հաղթողը Անդրանիկի զինվորներն են լինելու:

Ջոկատը Երեւանից դուրս է եկել սեպտեմբերի 28—ին, Իզդիրում համալրվել է 14—ին հասել, կանգ է առել Վանում: Ռազմաձակատ մեկնելու տրամադրությունն այլեւս առաջվանը չէր: Անդրանիկը Ջանաքեռում, Երեւանում երկու շաբաթ մնալուց հետո գնացել է Թիֆլիս: Նույնամբերի վերջին փոքրիկ մի հեծելախմբով նա եկել է Խոյ եւ երկու շաբաթ գործերով կանգ է առել այնտեղ: Խոյում էր գտնվում Ադրբեջանական զորախմբի հրամանատարությունը, այդ թվում նաեւ ինտեղանտական ծառայության ղեկավարությունը: Հարկավոր էր լուծել ջոկատի զինվորների համար հանդերձանք, վարձատրման դրամ

1 ԿՊՊԱ. № 2543, ք. 1, գ. 95, ք. 1, 2: 2 Լ. տ., ք. 2: 3 ԿՊՊԱ. № 2100, ք. 1, գ. 646, ք. 82—83: 4 «... օրագրությունը», էջ 37:

1 ԿՊՊԱ. № 521, ք. 5, գ. 413, ք. 161:

ստանալու, դրանք տեղ հասցնելու հարցերը եւ տեսակցել հրամանատար Չեռնոզուբովի հետ¹: Դեկտեմբերի 19-ին ԱՆդրանիկը մեկնել է Խոյից, 23-ին հասել Վան: Այստեղ էլ եղել է Վանի գործադիր հրամանատար գեներալ Կուլեբյակինը, որի անմիջական ենթակայության տակ գտնվում էր Անդրանիկի ջոկատը: Ուստի հարկ է եղել դեկտեմբերի 25-ին հանդիպելու նրան, անդրադառնելու իր ջոկատի հետ կապված հարցերի լուծման այն հանձնարարականներին, որոնք Չեռնոզուբովը վերապահել էր Կուլեբյակինին:

Մինչ Անդրանիկի Խոյ եւ Վան հասնելը, Չեռնոզուբովը Վանում այցի էր եկել այս անգամ էլ այնտեղից՝ ռազմի դաշտ մեկնելու պատրաստվող ջոկատին իր բարի խոսքն ասելու: Նրա գործը հեշտ էր: Նորից սովորականի պես ողջունել է կամավորներին եւ դարձյալ «համոզմունք հայտնել, որ հայերը նախկին եռանդով ու արիությամբ կշարունակեն իրենց փառահեղ մարտական գործունեությունը»²:

Ամանորի օրերից հետո Անդրանիկը Վանից ճանապարհվել է դեպի լճի հյուսիս-արեւմտյան կողմում գտնվող Արճեշ քաղաքը, զավառային կենտրոնը, որտեղ այդ ժամանակ ջոկատը բավական երկար ժամանակ հանգրվանել էր: Վանից ջոկատը ճանապարհ էր ընկել պոլտավյան կազակների հետ Արճեշից Ուրմիա տեղափոխված թամանցի կազակներին փոխարինելու համար:

Ճանապարհին իր զորավարին ընդառաջ է եկել վաշտապետ Արմբատը՝ հեծյալների մի խմբով³: Սմբատը, որ հրամանատարի բացակայության այդ տեսական ժամանակամիջոցում ինքն էր հրամանատարի պարտքը կատարում, կարող էր ընդառաջ գալ ոչ միայն տեղակալի զիտակցությամբ, այլեւ հնօրյա ֆիդայական ընկերոջ կառույցի զգացումով:

Արճեշում տեղակայված հայկական ջոկատի եւ կազակների հիմնական խնդիրը համարվել է այնտեղ կուտակված քրդական ուժերը ցրելը, որոնք մշտապես անհանգստացնում էին արճեշյան խմբի զորքերին: Սրանից երեւում է, որ ուսները բացահայտորեն ճանաչել են կամավորներին՝ որպես քրդերի դեմ հաջող մարտերի հուսալի ուժ: Այնտեղ, ուր ուղարկվում էր Անդրանիկի ջոկատը, ճշգրիտ՝ Ջիլան Դարասի բնակավայրը, մի ռազմական ճամբարում՝ համախըմբվել էին քրդական զիլան ցեղի մարտական ուժերը: Այդտեղ, այդ, այսպես ասած, ռազմական ճամբարում «քրդերին թուրք ու

¹ Անդրանիկին ուղեկցել է Վ. Ահարոնյանը եւ նա էլ, որպես «Օրագրական արձանագրություններ», պատմել է ընթացքը դեպի ռազմական տուրքեր 1916-ի մարտի 18-ի դեպքերը ներառյալ: Տե՛ս «Հայաստան», Թ., 1917թ., NN 46, 49, 52, 53, ևս: Կրա «Անդրանիկ» հուշերի գիրքը, Բ., 1957թ.: ² Տե՛ս գեյ Կուլեբյակիի օրագրական փաստաթուղթը, «Հ. Դ. Գ. Ա.», 121, ց. 1, գ. 8, ք. 29-43: Լսե՛ք Վ. Ահարոնյան, Անդրանիկ, Բ., 1957թ., էջ 34-38: Լսե՛ք «Օրագրություններ», էջ 37-39: ³ Վ. Ահարոնյան, էջ 48:

գերմանացի սպաները ուժգնորեն նախապատրաստում էին զործողությունների, որոնք նախատեսում էր թուրքական հրամանատարությունը, եւ որոնց առաջին ազդարարը եղավ նրանց փախուստը Մանազկերտից 1915թ. նոյեմբերին»¹:

Անդրանիկի ջոկատը Արճեշ հասնելուց հետո ստանում է հենց այն հանձնարարությունը, որի համար նա հմուտ էր ճանաչվում: Այսինքն՝ ուղարկվում է հետախուզության, խնդիր ունենալով՝ որոշել թշնամու ուժերն ու տեղաբաշխումը: Տվյալները, երեւում է, ստացվել են ճշգրիտ, եւ քրդերի դեմ, դուրս են բերվել համապատասխան քանակի զորքեր: Նախապատրաստությունն ավարտելուց հետո, ռուսական զորքերը 1915-ի նոյեմբերի 30-ի, լույս զեկտեմբերի 1-ի գիշերը անցնում են զործողության ի կատար ածմանը: Հարձակվող առաջամարտը զորամասը եղել է ռուսական զորախմբի գեներալի մի հարյուրյակ, որպես ավանգարդ, իսկ «գլխավոր ուժերի» տակ հրամանում հիշատակվել են առաջին հայկական ջոկատի 1-ին եւ 2-րդ վաշտերը, նրանց հետ՝ երկուական հրանոթ եւ գնդացի: Գլխավոր այդ ուժերը մարտարշավի պետք է դուրս գային վաղ առավոտյակ մթին, ժամը 4-ն անց ջսան րոպեին: Ջորքերի վերջապահում ընթանալու էր կամավոր հեծյալների դասակը: Մնացյալը բերենք զորախմբի հրամանատար գեներալ Կուլեբյակինի՝ նկարագրությունից, որը նա կատարել է իր ժամանակին, որպես պատմական ակնարկ.

«Թնդանոթների առաջին իսկ կրակոցներից հետո Աղբաշ գյուղում ամրացած քրդերը թողնում են դիրքերը եւ բարձրանում նրանից հյուսիս-արեւելք գտնվող Ալի-Ջեթե գյուղը: Այդ գյուղերը իրենցից ներկայացնում էին որպես իրար հաջորդող դժվարամատչ բնական դիրքեր»: Ընդհատելով, ուզում ենք ասել, թե ամեն դժվարություն կարծես հայերի համար էր ստեղծված, եւ չէր սխալվել ռուսական հրամանատարությունը, որ հենց չեռների մագլցումն էր նրանց հանձնարարել, «Կամավորների ջոկատի 1-ին եւ 2-րդ վաշտերը, թնդանոթային կրակի քաղցրությամբ, սկսում են թշնամու կարկտահար գնդակների միջով բարձրանալ զանոյվեր սարերով: Ի վիճակի չլինելով արգելակել հայերի ընթացքը, որոնք առաջ էին մղվում բարձրաձայն «ուռա» բացականչություններով, քրդերը, թեւ նահանջելով դեպի ետ ու ետ, դիմադրելու մի վերջին վճռական փորձ են անում լեռնակատարի վրա, որտեղ կենտրոնացված էին նրանց գլխավոր ուժերը: Սակայն կամավորները կոտորում են նաեւ այդ դիմադրությունը, եւ քրդերը, կորցնելով մոտ հարյուր հոգի, ստիպված նահանջում են կիրճի խորքերը: Կամավորների ջոկատը տալիս է չորս զոհ

¹ «Հ. Դ. Գ. Ա.», 121, ց. 1, գ. 8, ք. 29-44:

եւ ութ վիրավոր, որոնց թվում էր հեծյալ դասակի հրամանատարի օգնական Արշակը»¹:

Հարյուրի դիմաց չորսը, ճիշտն ասած, մեծ տարբերություն է, բայց չենք կարծում, թե գեներալ Կուլեբյակինը թվերը ուռճացնելու կամ նվազեցնելու շահագրգիռ է:

Դրանից հետո ջոկատը վերադարձել է Արճեշ, իսկ քրդերի հարձակումներն էլ չեն դադարել: Բանակային հրամանատարությունը Արճեշի զորամիավորումը համալրող նոր ուժեր է ուղարկել: Դեկտեմբերի 29-ի վաղ առավոտյան քրդերի դեմ կռվի են ուղարկվել հայկական ջոկատի երկու վաշտ, երեք վաշտ էլ ռուսական զորամասերից եւ երկու թեթեւ հրանոթ ու երկու գնդացի: Այդ օրվա, դեկտեմբերի 29-ի, կռվի նկարագրությունը կազմել է ջոկատի ղեկավարությունը եւ ուղարկել բանակային հրամանատարությանը: Համառոտագրությունը հետեւյալն է.

Ջոկատը Արճեշից դուրս է եկել առավոտ ժամը 9-ին: Ցերեկը ժամը 3-ին 400 հեծյալ եւ հետեւակ քրդերը, հետեւելով իրենց դեմ ելած կազակային հարյուրյակին, բարձունքներից ցած են իջնում: Նույն ժամին քրդերին օգնելու համար ընդառաջ են գալիս իրենց ուժերից 200 հոգի: Նկատելով խաղաղ երթի ճանապարհով ընթացող կամավորների ջոկատը եւ նրան մարտի անպատրաստ կարծելով, քրդերը մոտենում են մինչեւ հրացանազարկի հեռավորությունը:

Եվ հենց այդ պահին էլ ջոկատը մարտական կարգի է բերում իրեն եւ կազակային հարյուրյակի հետ միասին խարձակման է անցնում գինված քրդերի երկու խմբերի դեմ: Կռվելով մինչեւ ուշ երեկո, խումբը գիշերում է եւ հաջորդ օրն առավոտյան շարունակում մարտը: Կազակների եւ կամավորների համագործակցությունը ետ է մղում քրդերին՝ նրանց լուրջ վնասներ պատճառելով, որով եւ ավարտվում է դեկտեմբերի 30-ի օրը, որից հետո կամավորները վերադառնում են Արճեշ²:

Ջոկատը հանգիստ է առնում եւ հրամանատարության հետախուզական հանձնարարությունները կատարում: Քրդերը կրած պարտություններից հետո չեն նահանջում: Շուտով նրանք վերադառնում են իրենց գյուղերը: Հունվարի 15-ին՝ տեղանքը կամավորները հետախուզել են անձամբ Անդրանիկի ղեկավարությամբ: Եվ նա էլ նշել է, որ Արճեշի մոտակայքի երեք գյուղերը գրավել են քրդերը: Նրանք զավթել են ոչխարների հոտը, ջշել լեռներն ի վեր եւ դիրքեր գրավել գյուղերում: Անդրանիկը գրելով այս մասին Վանի ջոկատի հրամանատարին, նրան հայտնում է նաեւ քրդերի գրաված գյուղերի անունները:

1 Ն. տ.: 2 Ն. տ.:

Կամավորական ջոկատը ձմռան այդ ընթացքում ավելի քան երկու ամիս մնացել է Արճեշում, որտեղից հաճախակի մարտերի մեջ է մտել քրդերի դեմ: Եվ արդեն այն ժամանակ, երբ ջոկատը պատրաստվել է Բիթլիս շարժվելու, իր կազմում ունեցել է ընդամենը 800 հոգի, այդ թվում՝ 110 հեծյալ:

Բիթլիս տանող ճանապարհին ռուսական զորամասերի կազմում հայկական ջոկատը մասնակցում է Ջյոփրի Ջյոյ եւ Ննուս Կալա բնակավայրերի գրավմանը: Դա ռազմական կարեւոր այն գործողությունն էր, որը հեշտացրեց զորքերի երթը միաժամանակ դեպի թե՛ Էրզրում, թե՛ Բիթլիս ու Մուշ: Բիթլիսի գրավման համար զորքեր նախապատրաստելիս չորրորդ կորպուսի հրամանատարությունն առանձին մի զորասյուն է ուղարկել գեներալ Աբացիեի ղեկավարությամբ: Այս գեներալը, որի մասին հատուկ խոսակցության հարկ է լինելու ներքեւում, անմիջապես, հունվարյան ցրտին, ռազմական գործողություններ է ծավալում, եւ նրան հաջողվում է հունվարի երկրորդ կեսին գրավել հայոց Նեմրութ սարի շրջանը, այնուհետեւ զորքերն ուղիղ տանել դեպի Բաղեշ: Այս մարտերին կամավորների առաջին ջոկատից բացի մասնակցել է նաեւ երկրորդ ջոկատը՝ Դրոյի հրամանատարությամբ¹: Ճակատ դուրս գալու առաջին կռվի ժամանակ, որի մասին ասվեց վերեւում, վիրավորվելուց ու ապաքինվելուց հետո Դրաստամատ Կանայանը ոչ մի քայլ կանգ չի առել եւ ջոկատի գլուխ անցած գտնվել է միշտ այնտեղ, որտեղ առանձնապես քաջերի կարիքն է զգացվել, եւ առաջադրանքն է եղել պատասխանատու: Ռազմական հրամանատարության բոլոր հրամաններում, որտեղ հիշատակվում է հայ կամավորականների ջոկատը եւ նրա հրամանատար Դրոյի անունը, թոսքը միայն գովասական է:

1916-ի հունվարի 1-ի օրը Անդրանիկը եղել է Վանում: Զաղաքը խաղաղ էր, զանազան կողմերից փախած վանեցիները վերադարձել էին ավեր ու կիսավեր իրենց օջախները: Զաղաքում ռուսական զորք կար: Հրամանատար գեներալի հրավերով նոր տարվա գիշերն Անդրանիկը նրա հարկի տակ է անցկացրել: Դրանից հետո է, ամսի 10-ին, որ նա ժամանել է Արճեշ²: Ջինվորներին հայտնի էր, որ զորավարը գալիս է³:

* Այսպես, ամիսներ ու օրերը կշելով, պատմում է երեսնից Անդրանիկի հետ ճանապարհ ընկած Վ. Ա. Ահարոնյանը իր հուշերի գրքում, Տե՛ս էջ 39-40: Միևրդե քակիցս հիշատակված «...օրագրութիւնը»-ում ուրիշ է. տպւմբերի 15-ին եկել է Արճեշ եւ ճակատ գնացել: Լջվում են կռիվներ տպւմբերի 7-ին, դեկտեմբերի 29-ին, 30-ին, ապա, բոհչեով, հունվարի 20-ին: Տե՛ս էջ 37-39:

1 << ԴԿՊԱ 》, 121, ց. 1, գ. 8, թթ. 29-44: 2 Ն. տ.:

Հունվարի 13-ին Դրոյի ջոկատը մտնում է արձեշյան զորախումբը՝ լրացնելու համար այդ օրը Խնուս Կալա եկած ուսական այն զորամասի կազմը, որի հրամանատարը գնդապետ Լոսկովն էր:

Հունվարի 20-ին Արձեշի զորախումբը, այդ թվում ևաւ Ընդրահիկի ջոկատը, առաջ շարժելով դեպի Բիթլիս, ուղեւորվում է Լորշեն գյուղը: Այստեղ էլ, Բիթլիս առաջանալու ճանապարհին, Արձեշից արեւմուտք 10 կմ հեռավորության վրա, Լորշեն գյուղի մոտ տեղի է ունենում ընդհարում ջրդական ուժերի հետ: Զրդերը զբաղեցրել էին գյուղից դեպի Լորշեն տանող ճանապարհի երկու բարձունքները եւ, ինչպես երեւում է, մարտի պատրաստ ապաստում էին ուսական զորամասի մոտենալուն: Վերջինիս կազմում հայկական 1-ին ջոկատն էր, պոլտավյան կազակների երեք հարյուրյակ եւ երկու դաշտային հրանոթ: Գնեթալ Կուլեբյակինը պատմում է, որ առաջինը կրակ են բացել ջրդերը: Եվ սա եղել է Սիփան սարի արեւելյան ստորոտում, որը դեմքով դեպի վաղամտեռիկ Աղբյուր Սերոբի հայրենի Ախլաթ գյուղն էր:

Ու՞ր էր հասել կամավոր հայ զինվորը: Ջինվորական հրահանգներում Սիփան եւ Եմերութ սարերն էին հիշատակվում եւ Վանա լիճն ու Վան քաղաքը, Ախթամար կղզին, հայոց դաշտերն ու գյուղերը, գետերը... Կամավոր զինվորը ջահել էր, սիրտը՝ փափուկ, աչքը՝ ճանապարհին եւ հոգին կարոտներով լի: Սի տեղ սիրած աղջկան էր թողել, տանը՝ մորը սուրբ, իսկ ինքը ձմռան այս ցրտին ոտքը սրսուտ ձյունին էր դնում եւ չէր տրորում, որովհետեւ ուր որ է զարուս էր բացվելու, եւ ձնծաղիկն էր ձյան տակից ճերմակ ժպտալու, ապա կապույտ մանուշակն էր զմրուխտ կանաչի հետ ծարձակվելու: Ձնծաղիկը չպետք է հողե սափորում փշրվեր եւ մանուշակի ծիւղ տրորվեր... Ուրիշ էր այս հողի վրա կազակի քայլը, ուրիշ էր ու տարբեր կամավոր զինվորինը: Երկուսն էլ մոր զավակ էին եւ հայրենիքի որդի: Մեկը ամեն քայլի հետ հայրենի օջախից ու հայրենի դաշտերից հեռանում էր եւ կուզեր ետ դառնալ, զգալ սիրտ ջերմացնող սառնամանիքն իր երկրի, մյուսը ամեն քայլի հետ իր հայրենի հողն էր մտնում, իր պապենական տունը, ուր կանգառ էր երազում: Եթե կոխվ չլիներ ու հրամանատար, հրացան չլիներ շալակին, թեկուզ ձմռանը, հենց այդտեղ շորերը վրայից դեն կնետեր ու Վանա լճի ջուրը կմտներ, որ հովացներ ձմռան ցրտին կարոտի կրակից վառվող սիրտը, եւ կգտնե՞ր ուրիշ մի տեղ աշխարհում, ուրիշ ավելի զովացուցիչ, քան Վանա ծովի ջուրը հոգեհարազատ: Ու տեսնում էր կամավոր զինվորը իր մտած գյուղերը, մարդիկ գաղթել էին, հին շեները դատարկ էին, միայն թե, գյուղերը, թեւեւ անշունչ,

բայց մեռած չէին, կամավորի ձեռքին էին սպասում, որ շարժեր իրենց եւ շունչ տար ու կենդանացներ:

Դատարկված էին գյուղերը, որ չէին կարողացել հողից պոկվել եւ իրենց տերերի հետ գաղթել: Գյուղերն իրենց տներով, որքան էլ զարկված ու կողոպտված, ամուր կառչել էին հողին եւ սպասում էին տերերի վերադարձին: Տները, որ Լույն հողից էին շինված, ու՞ր պետք է գնային, ավելի լավ է, Լորից հող դառնային եւ սպասեին, ո՞վ գիտե, գուցե մի օր դարձյալ վերադարձած տիրոջ տուն դառնային: Հևար լիներ Վանա ծովն էլ կգաղթեր իր ջրերի վիթխարի սափորով, հուներից դուրս կգային ու իրենց տերերի ձգողական հետքով գաղթի ճամփան կբռնեին գահավեժ ջրերը գետերի, որ Լույն գաղթի դժվար ճամփաներին եւ հեռավոր աշխարհների հանգրվաններում իրենց տերերի հայրենիքի ծարավը հագեցնեին: Իրենց ճամփան կփոխեին եւ գաղթող մանուկների հետ Երկրից կաթիլ-կաթիլ դուրս կգային գարնան հետ սարերում ու դաշտերում հավիող ձյան ջրերը, որ ուրիշ մի տեղ առվակ ու գետակ դառնային եւ իրենց խոխոջով օրորի անուշ երգն ասեին հայրենակարոտ գաղթական մոր օրորոցային զավակին...

Վեր կկենային, կանեին իրենց բազմահազարամյա բարձրանիստ քույր ու կգաղթեին ևաւ ամպեր ճեղքող լեռներն հայոց: Ո՞ւր ենք մնացել եւ ինչո՞ւ, խոռվքի պապանձված զայրույթով հարցնում էին ևրանք: Կողոպտված գյուղերն անգամ շարունակվում էին թալանվել, Վանա լիճը էլ որտեղից պետք է իրեն հարազատի սիրով փարվող լողորդ գտներ, լեռներն էլ ո՞ւմ պետք է պահապան կանգնեին, եւ ո՞վ պետք է այսուհետ արժանի լիներ իրենց բարձունքներին, ով պետք է իր լանջերի ու կրծքի քար ու ապառաժ խորխորատներով իրենց անհաս կատարներն ի վեր մագլցելու քաջությունն ունենար: Հարցեր չէին սրանք եւ ոչ էլ տարակուսանքներ: Վճիռներ էին: Հաստատուն: Հողն ու ջուրը իրենց փորձն ունեին եւ իրենց դասը, այսօր մեկն անցավ, վաղը մյուսն է գալու: Հարազատն է մնալուն: Լեռներն անփորձ չէին եւ անգետ: Բոլորը ևրանք հայացքի առջեւ էր եւ իրենց մեջքի վրա, ամպեր են, ինչպես որ գալիս, այնպես էլ գնում են: Եվ ո՞վ պիտի այս դաշտերով, առվակներով ու գետերով, լեռների այս բարձունքներով այնպես ներշնչվեր, որ բնության գովքն այնպես հարազատ լիներ ու այնպես սրտամոտ, ինչպես բնածին բանաստեղծինը.

Ջո ծարաված սրտի համար երգիս ոսկե սափորով
Իմ Սիփաննա Վանա ակնից պաղ ջուր առա ջերմ սիրով:
.....
Արեւն, ահա, Վանա ծովից Ավախորիկ է ելնում.

Ավախորհկն առնում ուսին՝ Վարագա ուսն է հանում,
Վարագն առնում ու հանում է Ծովասարի վարդ ուսին,
Ծովասարը ուսին առնում ու տալիս է Առնոսին,
Առնոսն արեւն առնում ուսին, ուսն է հանում Մարութա,
Մարութա սարն ուսին առնում՝ ուսն է հանում Նեմրութա,
Նեմրութա սարն ուսին առնում՝ ուսն է հանում Անդրոքի,
Անդրոքն արեւն առնում ուսին՝ ուսն է հանում Թոնդրակի,
Թոնդրակն առնում ու Գրգուռի ուսն է հանում Ժպտալով,
Գրգուռն արեւն առնում ուսին՝ այսպես ուսե-ուս տալով
Սիփան սարի ուսն են հանում, եւ արեւը Սիփանին
Առավոտն է թագադրում, վերածնում հույսը հին...¹
Այս տողերը գրել է նա, ով մի օր էլ հայրենիքից հեռու-հեռու-
վում է տեսել Անդրանիկի գերեզմանը ու վրան հեծյալի նրա հուշար-
ձանը: Եվ լսել է նրա հայրենատենչ ձայնը.
Գերված հողս ինձ կկանչէ,
Ինչպես որդուն՝ մայրը բանտված,
Ինձ կկանչէ Մուշն իմ, քանդված...
Վանա ծոփս կհառայէ,
Սասնա գոց դուռն ինձ կկանչէ...²
Համբերենք, այդ էլ կիմանանք, թե ինչու հողի զավակի աճյունը
հող հայրենիքից հեռու-հեռույ՛ գետեղվեց: .

Կուլեբյակիներ շարունակում է նկարագրել Բաղեշի ճանապարհին
սկսված կոիվը: Ռուսական երկու կիսավաշտ ուղիղ ընթացքով հար-
ձակվում են հակառակորդի հենց կենտրոնի վրա: Միաժամանակ պո-
տավան կազակների մի մասը փորձում է ձախից ու աջից շրջապատել
քրդական դիրքը: Ստեղծված բարդ, երկկողմանի տանջալից վիճակում
քրդերը, դիմադրելով երկու ժամ, հեռանում են մարտադաշտից: Անդ-
րանիկն իր վաշտերից մեկի եւ պոլտավյան կազակների մի հարյուրյա-
կի գլուխ անցած նահանջող քրդերին հալածում է մինչեւ մոտակայքի
լեռնանցքը: Երեկոյան կողմը վերադառնալով, կամավորների ջոկատը
եւ կազակները լրիվ կազմով մտնում են Նորշեն գյուղը: Կուլեբյակինն
ասում է, որ ջոկատը ոչ մի զոհ չի տվել, կազակներից եղել է մեկ զոհ,
իսկ «քրդերի տված զոհերը հաշվվել են տասնյակներով»:
Ջոկատը ութօրյա դադարից հետո, ըստ Կուլեբյակինի, հունվարի
29-ին առաջ է գնում դեպի Ալջավազ գյուղը³: Օրագրողը նշում է,
որ հունվարի 29-ի օրը ջոկատը ընդհարվել է Հուսեյին փաշա-
յի քրդական ցեղի եւ թուրք ոստիկանական ուժերի հետ, նրանց մեծ
թվով զոհեր է պատճառել եւ հարկադրել նահանջել: Փետրվարի

¹ Հովհաննես Երրագ, Երկեր, հ. 3, 1984, էջ 194, 196:
տակ ձիավորը... Փարիզում: ² Նշված փաստաթուղթը: ³ Հովհաննես Երրագ, Սպի-

1-ին ջոկատը մտել է Ալջավազ գյուղը: Հաջորդ օրը եղել է
Ախլաթում: Այստեղ նույնպես քրդերն ու թուրքերը միատեղ հարձակ-
վել են, բայց դարձյալ հարկադրված են եղել փախուստի դիմել:
Ինչպես երեւում է նրանք բռնազավթած, բերած են եղել բավական
թվով հայ կանանց ու աղջիկների, որոնց Անդրանիկը ազատել-ու-
դարկել է Վան: Նույնը եղել է առաջընթացի ճանապարհին, Ծղակ
գյուղում, որտեղ դարձյալ ազատագրվել են նույնքան բռնազավթված
հայ կանայք ու աղջիկներ եւ դարձյալ ուղարկվել Վան¹:

Բաղեշը Տիգրիսի ճյուղավորվող երկու գետերով գրկված երկի-
զարամյա բերդ էր ու բերդաքաղաք²: Բաղեշին մոտենալու կոիվների
այս փուլում, Կուլեբյակինը նույնն է՝ գրում, ինչ որ Նազարբեկովը.
«Ինչպես Նորշենի վրա հարձակվելիս, այնպես էլ այժմ, ջոկատը
գնացել է ավանզարդում: Եվ ընդհանրապես Վանա լճից դեպի
հյուսիս եւ արեւմուտք կատարված հետագա բոլոր գործողություննե-
րի ժամանակ... ջոկատը միշտ եղել է առջեւում եւ կրել է արշավի
բոլոր ծանրությունները»³:

Փետրվարի 14-ին սկսվում է Բիթլիսի գրավման վճռական գրոհը:
Գրոհող ուժերի առաջին շարասյունը կազմում էին գեներալ Աբացի-
եւի հրամանատարության տակ գտնվող զորամասերը: Նրանք պետք
է գրոհն սկսեին առավոտյան ժամը 5-ին, այդ հատվածում հակա-
ռակորդին շրջափակման մեջ վերցնեին ձախ թելից, որտեղից որ
հարձակման գլխավոր ճանապարհն էր: Այստեղ է գետեղվել Դրոյի
գլխավորած 2-րդ ջոկատը: Անդրանիկի ջոկատը գրոհելու էր միջին
շարասյան կազմում, որի անմիջական հրամանատարն էր գնդապետ
Ֆիլիպովը: Այս շարասյունն իր կազմում ավելի շատ ուժեր էր
ընդգրկում, քան առաջինը: Եղել են նաեւ ձախ շարասյուն եւ
ընդհանուր պահեստային ուժ:

Նախապես որոշված էր, որ ռուսական զորամասը ելման դիրքում
պետք է գտնվեր փետրվարի 16-ի վաղ առավոտյան ժամը 5-ին,
այդ պահից էլ անցնելու էին եռանդուն հարձակման: Բայց պարզվում
է, որ մինչ այդ թուրքերը հեռացել են իրենց առաջավոր գծերից: Այդ
պատճառով հարձակումը տեղափոխվում է 15-ի վաղ առավոտյան:
Նման պայմաններում գնդապետ Ֆիլիպովի զորախումբը, նրա կազ-
մում Անդրանիկի ջոկատը, առաջ են շարժվում եւ առանց դիմադ-
րության ու առանց կոփի գրավում ճանապարհին ընկած երկու
գյուղերը: Օրվա երկրորդ կեսին ջոկատի դեմ դուրս է գալիս թշնամու
զորամասը: Վրա է հասնում մուրթ, եւ կոիվը դադարում է: Բայց
ռուսական հրամանատարությունը դրա հետ չի հաշտվում: Պետք էր

¹ «...որագրուփուլը», էջ 39: ² Դ. Գ. Կերտմենյան, Բաղեշ քաղաքը եւ նրա եկեղեցի-
ները, «Պ. ք. հանդես», հ. 1, 1990թ: ³ Տե՛ս Կուլեբյակիի՝ Նշված նույն փաստաթուղթը:

առաջխաղացումը չկանգնեցնելու համար թուրքերին դուրս մղել իրենց գրաված դիրքերից: Եվ ահա Անդրանիկի ջոկատին հանձնարարվում է առաջադրանքն իրականացնել սվինամարտի միջոցով: Մարտն անձամբ վարել է Անդրանիկը, եւ առանց լուրջ դիմադրության թշնամին այնտեղից եւս դուրս է մղվել: Լահանջելով, թուրքերը ընդհուպ մոտենում են Բիթլիսի դարպասներին: Եվ այստեղ դեմ հանդիման ելնում է վճռական դժվարությունը:

Կամավորների ջոկատը առաջ էր գնում ցածրադիր կիրճով, որից վեր թուրքերն էին իշխում: Նրանց համար հեշտ էր մոտեցող ուժերին կրակի տակ պահել եւ արգելել նրանց առաջխաղացումը, ինչպես եւ նրանք վարվում են: Ըստ երեւոյթին ջոկատի համար ուրիշ ելք չի եղել:

Փետրվարի 16-ի վաղ առավոտյան ջոկատի 1-ին եւ 2-րդ վաշտերը սկսում են հրաձգությունը բարձունքում գտնվող թուրքերի դեմ: Նրանք ոչ թնդանոթ ունեին, ոչ էլ գնդացիր: Դրանք բերվել են կոհվն սկսվելուց երկու ժամ հետո: Ներքեւում, որտեղով առաջանում էին կամավորներն ու կազակները, խոր ձյուն էր, վերից՝ հարմարադիրը թշնամու կրակը: Եվ այդ անդադար կրակի տակ զինվորները պետք է խրամատներ փորեին իրենց համար եւ դիրքեր գրավեին: Դա պարզապես անհնար էր: «Աջ թեւում, — գրում է Կուլեբյակինը, — մազլցում էին հայերը, ձախում՝ ռուսները: Սակայն բոլոր ջանքերը ապարդյուն, թուրքերը համառորեն պաշտպանվում էին եւ մութն ընկնելուն պես մարտը դադարում է: Ջոկատը ունենում է 15 սպանված եւ 55 վիրավոր»¹: Կարճատեւ կռվում այսքան կորուստ երբեք չէր եղել:

Կամավորները նախորդ օրերի կռիվների հետ միասին արդեն 36 ժամ ոտքի վրա էին, անքուն, փետրվարյան ցրտին ու սառնամանիքին: Եվ այնուամենայնիվ, վերջին ուժերը լարելով, քաջաբար կռվում էին: Վերջապես թե՛ կամավորներին, թե՛ կազակներին թուլատրվում է հեռանալ դիրքերից եւ իրենց տեղը զիջել փոխարինող նոր ուժերին: Կռիվը շարունակվում է, եւ թուրքերը համառորեն չեն զիջում դիրքերը:

Փետրվարի 18-ի լույս 19-ի գիշերը կամավորների ջոկատը ճակատ է ուղարկվում: Սա ստույգ է ռազմական փաստաթղթերով: Անդրանիկին ուղեկցող Վարդգես Ահարոնյանը նաեւ հետեւյալն է պատմում, որը նման փաստաթղթերում կարող էր եւ տեղ չգտնել:

Բիթլիսը գրավելու նախորդ օրը, ցերեկվա՛ն վճռական գրոհի նախապատրաստվող երեք զորամասերի հրամանատարներ Նոսկովը, Չեմցովը եւ Ֆիլիպովը Անդրանիկին հրավիրում են խորհրդակցու-

¹ ՀՀ ԴԿՊԱ, ք. 121, ք. 1, գ. 8, թ. 29-44:

թյան: Գիշերային հարձակում էր լինելու: Ինչպե՛ս, ի՞նչ ձեւերով, որքա՞ն զինվորով կարելի կլինի ընկճել թուրքերի դիմադրությունը, այս հարցերին ի պատասխան ցանկացել են իմանալ Անդրանիկի կարծիքը, պատմում է Վարդգես Ահարոնյանը: Անդրանիկն իր կարծիքը հայտնել է, խորհուրդ տվել: Միայն թե նաեւ վրդովմունքի առիթ է ունեցել, որը հայերեն արտահայտել է Վարդգեսին, բայց գնդապետ Ֆիլիպովը, որի ենթակայության տակ էր նաեւ առաջին ջոկատը, խոսքի շեշտից հասկացել, հարցրել է, թե բանն ինչումն է: Անդրանիկը վրդովված էր, որ ջոկատին կռիվների մի ծայրանկյուն էին բաժին հանել: Ֆիլիպովն ասել է, թե դա հեշտությամբ կարելի է շտկել, Անդրանիկը թող ասի, որտեղ հարմար է գտնում, այնտեղ էլ նա կարող է իր համար տեղ ընտրել: Չի ցանկացել փոխել վիճակը, համաձայնել է: Այդ դեպքում Ֆիլիպովը խնդրել է, որ գիշերային կռիվ ժամին Անդրանիկն իր հետ լինի որպես օգնական, իսկ իր տեղը ջոկատում նշանակի մեկ ուրիշի: Այդպես էլ եղել է¹:

Վրա է հասնում կեսգիշերը: Հարմարավետ շենքերում գտնվող թշնամու դեմ իրենց անհարմար դիրքից նրանք բացառիկ հերոսություն եւ հմտություն են ցուցաբերում: Գործադրվում են բոլոր ջանքերը՝ գիշերային խավարի մեջ թշնամուն շրջանցելու համար: Ճակատային գրոհը չէր օգնում, բայց եւ ոչ ուրիշ ելք չէր տեսնում: Կյանքի 51-րդ տարին բոլորող Անդրանիկն իր զինվորների հետ էր՝ ատրճանակը ձեռքին եւ սվինամարտի պատրաստ: Հրամանը տրված էր: Այլեւս հարկ չկար լրացուցիչ խոսք ասելու: Անձնական օրինակն էր հրամանը եւ առաջ մղողը: Իսկ խոսքերը, որ նա ասում էր թշնամու հասցեին, բառարաններից ոչ մեկում չկային: Գիշերվա կեսին, ժամը 3-ին, ջոկատի 3-րդ վաշտն ընթանում էր արդեն որպես առաջին շարասյուն՝ առաջապահ ռուսական մի վաշտի հետ միասին: Առաջադրանքը կտրուկ էր, «անպայման նախապես գրավել բարձունքը»: Գրոհն սկսվելու ժամը նշանակված էր գիշերվա երեքը, դրանից հետո այլեւս անվերապահորեն պետք էր շրջանցումով մտնել քաղաք:

Կուլեբյակինը պակաս ոգելորությամբ ու պատկերավորությամբ չի գրում.

«Սահմանված ազդանշանով, որը միջին շարասյան «ուռան» էր, սկսվում է հարձակումը: Առաջ են շարժվում ջոկատի 1-ին եւ 2-րդ վաշտերը եւ աճապարող հեծյալները՝ Սմբատի հրամանատարությամբ: Նրանց տեղը գրավում է 3-րդ վաշտը, որը թողնվում է պահեստում: Իջնելով կիրճ, վաշտերը բարձրանում են դեպի թուրքական դիրքերը, ընդհուպ մոտենում են, կրակ արձակում եւ սվինա-

¹ Վ. Ահարոնյան, ... էջ 100-101:

հարում ժամապահներին: Վերցվում է երկու լեռնային հրանոթ եւ 40 հրացան: Թուրքական դիրքերից առաջ անցնելով, 2-րդ վաշտն իջնում է քաղաք, իսկ 1-ինը եւ շտապող հեծյալները, հետամուտ լինելով փախչող թշնամուն, աջ կողմից լեռնալանջերով դուրս են գալիս քաղաքից եւ ելնում են նրա հարավային ծայրամասը»¹:

Ուղղամիտ է գեներալ Կուլեբյակինը: Եթե այդպիսին լինեին բոլոր գեներալները... Եվ եղել են, համենայն դեպս, եթե ոչ գեներալներ, ապա գոնե եղել է մի գեղապետ, որի անունը մեզ հայտնի է. խոսքը Բիթլիսի համար մղված մարտերի աջակողմյան զորամասերի հրամանատար Ֆ. Լոսկովի մասին է, որը գնահատելով Անդրանիկի ծառայությունը, հետագայում պարտք է համարել հրամանատարությանը հղել հետեւյալ գեկույցը.

«Բիթլիսի գրոհի ժամանակ փետրվարի 18-ի եւ 19-ի գիշերները, 1916 թվականին, գումարտակի հրամանատար Անդրանիկը, Նշանակված լինելով աջակողմյան ռազմական շրջանակի հրամանատար՝ իր երկու վաշտերով ...անձամբ քաջության եւ անվախության օրինակ ցույց տալով, ոգետրում էր իր կամավորներին, որոնք արագորեն թուրքերին դուրս նետելով, տիրեցին խրամատներին եւ վերցրին գերիներ, գրավեցին թնդանոթներ եւ տիրեցին Բիթլիսին»: Աշելով այս, Լոսկովը առաջարկում է Անդրանիկին պարգևատրել սուրբ Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշանով, սրով եւ ժապավենով²:

Հերոսաբար են մարտնչել նաեւ Դրաստամատ Կանայանն ու նրա զինվորները: Անդրանիկ եւ Դրո՝ հայոց քաջության երկու ռահվիրաներ: Բիթլիսի գրավման պատմությունը Լազարբեկովն սկսում է դեռեւս փետրվարի 4-ի դեպքերով: Այդ ժամանակ դեպի Բիթլիս արշավում էր Աբաղիւսի գլխավորած զորամասը, ընթանալով Լազիկ, Կարմուռ, Թեղուտ, Դատվան գյուղերով: Փետրվարի 5-ին վերադառնալով Ախլաթից, Անդրանիկի ջոկատը գալիս է Կարմուռ, որտեղից հաջորդ օրը՝ Դատվան: Փետրվարի 11-ին ուսական զորքերը հրաման են ստացել թուրքերին դուրս քշել գրաված դիրքերից: Ջոկատը գտնվել է աջից ուսական մի զնդի, ձախից՝ հարյուրյակի միջեւ: Անդրանիկի ջոկատը լրիվ կազմով, երկար շարաշղթայով կանգնում է հակառակորդի դեմ հանդիման: Ըստ Լազարբեկովի Նկարագրության, ջոկատի վիճակը ծանր էր, հակառակորդն իր գրոհը կենտրոնացնում է հենց ջոկատի վրա, որից հետո այլեւս այն դժվարանում է դիմանալ ճնշմանը: Հարկադրված նրան օգնության են ուղարկվում հետախույզներն ու պահեստի ուժերը: «Դրությունը դառնում է երբրուն, — գրում է Լազարբեկովը, — հայկական ջոկատը գնում է սվինամարտի, բայց

սվինահարվածով ետ է մղվում...»¹: Վիճակը փոխվում է լրացուցիչ ուսական զորքեր մարտի մեջ մտնելուց հետո:

Բիթլիսը, ըստ Լազարբեկովի, գրավվում է երկու կողմերի համար էլ անսպասելիորեն աննշան կորուստներով: Բնակչությունը խաղաղ ընկ մեջ էր, կայազորի զինվորների մի մասն անգամ նույնպես նրիում էր՝ տեւական ու անընդհատ կոիվներից հոգնած: Եվ հենց այս առիթով էլ գեներալը պատմում է հնամենի մի առասպել: Ալեքսանդր Մակեդոնացին արեւելք իր արշավի ճանապարհին, քաղաքը գրավելուց հետո, թողել է իր հրամանատարներից մեկին եւ հանձնարարել, որ ոչ մի թշնամի այնտեղ ոտք չդնի: Եվ երբ Մակեդոնացին վերադարձին պետք է անցներ Բիթլիսով, հրամանատարը նրան այնպիսի մի դիմադրություն է ցույց տվել, որ վերստին քաղաք մտնելը նրան հաջողվել է մեծ դժվարությամբ: Բռնի Ալեքսանդրի մոտ բերված հրամանատարը նրան պատասխանել է, որ ինքը ոչինչ ավելին չի ձգտել անել, քան իր զորավար Ալեքսանդրի հրամանը ճշտորեն կատարելը²:

Փետրվարի 19-ին Բիթլիսի գրավման տառապալից կոիվները նոր էին ավարտվել, երբ նույն օրը գեներալ Աբաղիւսը, որ Լազարբեկովի ընդհանուր հրամանատարությանը ենթակա Բիթլիսյան զորախմբի հրամանատարն էր, նոր հրաման է թողարկում, որով Անդրանիկի ջոկատին եւ այդ ժամանակ Բիթլիսում գտնվող Դրոյի ջոկատի վաշտերից մեկին կազակային մի հարյուրյակի հետ պարտավորեցնում է հաջորդ օրը եւթ, փետրվարի 20-ին, ձեռնամուխ լինել Մուշի կողմում եւ դեպի հարավ—արեւմուտք հետախուզական պարտականության կատարման³: Փոխանակ հանգիստ տալու՝ անմիջապես նոր, ոչ պակաս ծանր հանձնարարություն: Անդրանիկը շատ պետք է իր ջոկատի զինվորների Նկատմամբ անտարբեր, նույնիսկ անհոգի, արհամարհական լինելը, որպեսզի համաձայներ նման հրամանի հետ եւ ելներ հապճեպ այն կատարելու: Անդրանիկը բողոքի դիմում է հղում Աբաղիւսին եւ խնդրում, որ ջոկատին հանգիստ է պետք տալ, այլ ոչ թե հետախուզության ուղարկել: Ջինվորներն անչափ հոգնած են, գրում է նա, անդադար արշավներից ու ծանր մարտերից հետո կոշիկները մաշված են, հագուստը նույնպես, եւ հյուծված են հաճախակի անսնունդ մնալով... Աբաղիւսը բոլորովին անտեսում է նաեւ ջոկատի զինվորների ցուցաբերած հերոսությունը Բիթլիսի գրավման կոիվներում եւ ակնարկ անգամ չի անում նրանց պարգևատրելու մասին: Ավելին, նա իր հրամանում այնպես է նշում,

1 << ՊԿՊԱ, ք. 45, ց. 1, գ. 11, ք. 12: 2 Ն. տ., գ. 11, ք. 11, 16, 17, (Լազարբեկովի եւ Անդրանիկի քիկնապահի օրագրության տարբերվելը չեն համընկնում: Հաճախ 9-10 օրվա տարբերությամբ է: Այնպես էլ ճշտել համեմատությունների միջոցով): 3 << ՊԿՊԱ, ք. 121, ց. 1, գ. 8, ք. 54-61:

1 << ՊԿՊԱ, ք. 121, ց. 1, գ. 8, ք. 29-44: 2 «...օրագրությունը», էջ 164:

որից ստացվում է, թե այդ հերոսությունը ցուցաբերել են մյուս զորամասերի զինվորները, բայց ոչ հայ կամավորները: Այս ամենը առաջ են բերում Անդրանիկի խոր զայրույթը, որը եւ առիթ է տալիս ջոկատի հրամանատարի իր պաշտոնից հրաժարվելու դիմում ներկայացնելուն: Դա լուրջ եւ ծավալուն պատմություն է, որի մասին առանձին կխոսենք ստորեւ:

1916-ի փետրվարի 27-ի Նազարբեկովի հրամանից երեւում է, որ ինքը: գուցե է իր ենթակայության առանձին զորամասեր, գտնվել են Չարբորոխում: Այդ ժամանակ, ինչպես ասվում է հրամանում, «ջախջախված թուրքական բանակը նահանջում է դեպի Բայբուրթ եւ Էրզրում»: Միաժամանակ թուրքերը մտադիր են եղել Երզնկա-Խարբերդ-Դիարբեքիր գծի վրա նոր, ուժեր կուտակել՝ ոչ միայն ոռոսաց զորքերի արշավը դեպի երկրի խորքը կանգնեցնելու, այլեւ հարձակման անցնելու նպատակով: Ենթադրվում էր նախ ետ գրավել Էրզրումը եւ ամրապնդել Դեբեժոյիսի դիրքերում: Այդ այն ժամանակ էր, երբ Մուշ-Բիթլիս ցուղոյության հարավակողմում գործողությունների էր նախապատրաստվում Խալիլ բեյի կորպուսը, իսկ Նազարբեկովի զորախմբից դեպի ձախ, Վանի շրջանում Ադրբեջան-Վանական անվանված զորախումբն էր: Նազարբեկովի զորախմբի նպատակն էր, ի թիվս այլոց, ամրապնդել Դիարբեքիրից եւ Եփրատի ձախ ափով տանող ճանապարհը, ամուր պահել Բիթլիսի կիրճն ու այն շրջապատող ճանապարհը: Նշված օրվա հրամանով Նազարբեկովն առանձնացրել է երկու վաշտ եւ հայ կամավորների առաջին ջոկատը, նրանց միասին հանձնարարելով տեղավորվել Բիթլիս տանող ճանապարհի խաչմերուկի մոտակայքի գյուղերում եւ փակել հակառակորդի երթը դեպի Մշո դաշտ: Աջ կողմից գեներալ Աբազիեի զորախումբն էր, ձախից՝ Վանի կոչվածը: Նույն հրամանում նշվում է նաեւ ընդհանուրից առանձնացված եւ Բիթլիսյան անվամբ ձեւավորված զորախումբը, զնդապետ Օբրազցովի հրամանատարությամբ, որի կազմում անմիջականորեն մտել է Անդրանիկի ջոկատը, իբրեւ բանակային մեկ գումարտակ: Փաստաթղթի տակ ընդհանուր հրամանատար Նազարբեկովից բացի նրա երկու տեղակալների՝ զնդապետներ Օբրազցովի եւ Զայցեի ստորագրություններն են: Անդրանիկի անմիջական հրամանատար Օբրազցովը փաստաթուղթը ստորագրելուց հետո մեկնել է Մուշ, այնտեղից՝ Բիթլիս: Մի երկու օր հետո Նազարբեկովն է իր շտաբի հետ տեղափոխվել Մուշ¹:

¹ «...» ԳԼԿԱ. ք. 45. ց. 1. գ. 7. քք. 28-34:

Մարտի 9-ից ջոկատը շարժվում է ուղիղ դեպի Մուշ եւ մեծ զորախմբի կազմում մասնակցում այդ ուղղությամբ տեղի ունեցող ռազմական գործողություններին¹:

Առհասարակ հայտնի փաստաթղթերն ու հուշագրությունները, մասամբ նաեւ մեր հայտաբերած նյութերը հնարավորություն չեն տալիս պարզելու ինչպես դեպի Բիթլիս, այնպես էլ Բիթլիսից Մուշ ջոկատի ընթացքի ամբողջական պատմությունը:

Օրագրության այս հատվածի փաստերը սուղ են, ամիս ու ամսաթիվ, գյուղ ու քաղաք, առաջ ու ետ, երեկո կամ առավոտ: Վերջ քանիցս հիշատակված Ավետիս Ահարոնյանի որդին՝ Վարդգես Ահարոնյանը, դարձյալ օրագրության կարգով, բայց հուշեր է գրել: Դրանցում իրական կոհվներն են եւ իրական Անդրանիկը: Ընթերցենք համառոտած մի քանի էջ:

Վանի հյուսիսով ջոկատը լքի երկայնքով ընթանում է դեպի արեւմուտը: Ջոկատի թիկունքից առաջանում են կազակ հեծյալներն ու հրետանին, զնդապետ Վասիլեւի հրամանատարությամբ: Հեծյալից ներսն ու հրացաններից կրակ են բացում քրդերը: Բայց Վասիլեւը խաղաղ ու անձայն զորամասի հետ ընթանում է առաջ: Կովի անխուսափելիությունը եւ մարտի մեջ մտնելու անհրաժեշտությունը զգալով, Անդրանիկը Վասիլեւի մոտ կապավոր է ուղարկում՝ թշնամու դեմ կովի մեջ մտնելու հրաման տալու առաջարկով: Վասիլեւը հակադրվում է, ասելով, որ ես եմ այստեղ հրամանատարը:

— Յա՛ նաչալնիկ, — պնդելով, որ ինքը կրակելու անհրաժեշտություն չի տեսնում:

Անդրանիկը, որ միչ այդ տեղ էր հասել, զայրույթով գոչում է.

— Յա՛ նաչալնիկ, — եւ ջոկատին կոհի սկսելու հրաման է տալիս: (Ասում են Անդրանիկը ոռուներն հրամայում էր, թուրքերեն՝ հայիոյում):

Ջոկատն առաջ է մղվում, հետն էլ ոռու զինվորները: Վերջում Վասիլեւը հարկադրված է լինում իր հրետանուն կրակ բացելու հրաման տալ:

Թշնամին ցաք ու ցրիվ է լինում: Անդրանիկը կողքին կանգնած Վարդգես Ահարոնյանին հանձնարարում է գնալ Վասիլեւի մոտ եւ ասել նրան՝ «ճամփան բաց է, թող գա ու քալե»:

Քրդերի հետ ջոկատի թեժ կովի ժամանակ Անդրանիկը էլ չի համբերում: Սուրը հանած էլնում է, որ կովի մեջ մտնի, մոտիկ կանգնած կամավորները նրան հագիվ էտ են պահում²:

Կոհվներից մեկից հետո Անդրանիկը տեսնում է մի ջուրղ երեխա, որը մեռած մոր դիակի մոտ աղեկտուր լալիս է: Վերցնում է երեխային, հանձնում մոտիկ գտնվող կամավորին եւ պարտավորեցնում.

¹ «...» օրագրությունը, էջ 39-46: ² Վ. Ահարոնյան, Անդրանիկ..., էջ 62-63, 69-70:



ՍԵՂՈՒՔ

«Հոգ տար այս երեխային, եթե իր գլխեն մազ մը իյնա, ձեռքես չես ազատիր»:

— Ջարմանալի է Անդրանիկը.
— մտածում է Վարդգես Ահարոնյանը, — կովող քրոհի հանդեպ՝ անողոք, նրա որբ մնացած երեխայի հանդեպ՝ քնքուշ...

Անդրանիկը, կազակային զորամասի հետ զուգահեռ ու միատեղ ընթանալիս, շատ անգամ էր իր ջոկատն առաջ տարել ու կազակներին նույնպես մարտի մղել: Բայց մի անգամ կազակ զինվորն Անդրանիկից հանձնարարություն ստանալուն պես աճապարում է գնդապետ Վասիլի

լեի մոտ եւ ասում, թե Անդրանիկը հրամայում է արագ քայլել: Վասիլեւը զայրանում է՝ ինչպես թե Անդրանիկը հրամայում է: Կազակը ստիպված ուղղում է.

«Անդրանիկը խնդրեց, որ հետեւակն արագ շարժվի»¹:

Գնդապետն ըստ երեւույթին հասկացել է, թե բանն ինչումն է, ընդունել է սովորականի նման:

Փետրվարի սկզբից ջոկատը ճիշտ այն կողմերով է ընթացել, որտեղ Անդրանիկի 1903 — 1904-ի ձմեռ-ամառային կռիվներն էին, թաքստոցներն ու կացարանները, դեպի Բիթլիս եւ Բիթլիսից Մուշ: Գիտեր բոլոր ճամփաները, գիտեր գյուղերը, մարդկանց, կռիվների հարմար ու անհարմար դիրքերը:

Բիթլիս տանող ճանապարհին, խոր ձյան պայմաններում, ձոր ու լեռների միախառն հատվածում, ուր Ռահվե Դուրան դաշտն է, դեմ դիմաց դուրս են գալիս թուրքական ու ռուսական զորամասերը: Կռիվը միանգամից լինում է ե՛լ հրացանային, ե՛լ գնդացրային, ե՛լ հրանոթային: Անդրանիկը ջոկատի մարտը վարում է հեռադիտակով, հետեւելով հատկապես հրանոթային կրակին: Տեսնում է, թե որտեղից են գալիս թուրքերի արկերը եւ գտնում է, որ իրենց ամբողջ դժվարությունը բխում է դրանից: Թարգմանիչ դարձած Վարդգեսի հետ մոտենում է մարտկոցի հրամանատար ռուս սպային եւ մատնացույց անում հեռվում այն կետը, որտեղից գալիս էին թշնամու թնդանոթների արկերը: Վարդգեսը լսում է նրանց զրույցը, Անդրանիկը

¹ Լ. տ., էջ 72-73:

պահանջում է, որ հենց դեպի այդ կետը ուղղվեն հրանոթների փողերը: Սպան քմծիծաղ է տալիս, հեռու է, հրանոթների համար անհասանելի: Անդրանիկը հեռադիտակը շտկում է, այքով չափում է պահանջում կրակել: Սպան նորից է համառում: Մյուս մարտը ավարտվելուց հետո, երբ ջոկատը ռուս զինվորների հետ միասին անցնում էր հենց Անդրանիկի նշած տեղով, ապրզվում է, որ նա միանգամայն ճիշտ էր:

Այս ընթացքում ինչե՛ր է տեսել Անդրանիկը, եւ ի՛նչ մտորումների տեղիք կտար տեսածը, ռուսական բանակը առաջանում էր, թուրքականը՝ նահանջում: Նահանջի ճամփաներին՝ Բիթլիսից դեպի Մուշ, հապճեպ, անկանոն երկրի խորքերն էր գաղթում թուրք եւ ջուրդ բնակչությունը: Թուրքական բանակը թիկունք էր կանգնել գաղթողներին, երբ հաղթող ռուսական զորքը ոչ խփում էր, ոչ էլ բնաջնջում անգեն բնակչությանը: Եվ այնուամենայնիվ Վարդգես Ահարոնյանը հիշում է. «Պարզ էր, որ թուրք բանակի դիմադրության գլխավոր, եթե ոչ միակ նպատակը այդ գաղթականության պաշտպանությունն էր»¹: Կարող էր բարենախանձ Անդրանիկը նախանցյալ եւ անցյալ տարիների դեպքերի վերհուշի ծովն ընկզմվել, երբ հայերի նահանջն էր Սալմաստից Ջուլֆա եւ Վանից Իզդիդ: Ի՛նչ համեմատություն:

Սկզբում թուրքական զորքերը ետ ու առաջ էին գնում, որպեսզի թիկունքում իրենց մյուս զորամասերը եւ անկազմակերպ զինված ամբոխը արագ ու շատ հայ բնակչություն կտորոտին, չնայելով, թե այդ միջոցին ինչքան հողեր հարկադրված կլինեին զիջելու... Սա արյունոտուշտ մոլուցքն էր հայության նկատմամբ:

Իսկ այժմ դեպի Բիթլիս եւ Բիթլիսից դեպի Մուշ թուրքական բանակի նահանջի ճանապարհին կուտակվել էր նահանջող ջուրդ եւ թուրք բնակչության հսկայական զանգված: Զաղաք ու գյուղ իրար հետեւից բաց թողնելով, թուրքական բանակը խնամքով պատսպարում էր անգեն բնակչությանը եւ ավելի շատ նրան ռազմի դաշտից հեռացնելու գործով էր զբաղված, քան բուն մարտական խնդիրների կատարմամբ: Անդրանիկը կարող էր միայն ցավել Սալմաստից ու Վանից հայ գաղթականության նկատմամբ իրենց աջակից բանակային զորամասերի ոչ լիովին հոգատար գտնվելու համար: Մուշի ճանապարհին շարունակվող կռիվների ժամանակ Անդրանիկն իրեն ուղեկցող զինվոր Թուրցիկ Գետրգի հետ միասին գնացել է դեպի Բաբբենի դիրքերը, որտեղ կռվում էր ջոկատը: Տեղ հասնելուց անմիջապես հետո ուղեկցողը ձիուց իջնում, ձեռքը մեկնում է Անդրանիկի ձիու սանձին, որ նա ապահով իջնի, տեղն ու տեղը բռնում է կողքը եւ տապալվում գետին, հազիվ ասելով՝

¹ Լ. տ., էջ 84-85:

«Ես զարկվեցի, փաշա»:

«Ի՞նչ կը խոսիս, տղա, կատակ կընես» — ասել է Անդրանիկը:

Գեւորգն այլևս չկար¹:

Սա միակ պատահականությունը չէր Անդրանիկի կյանքում: Դրա համար մարդիկ բերնբերան տարածում էին, թե Անդրանիկն զնդակ չի կանում, որ դա աստծո կամքով է, իսկ Անդրանիկը այդ կապակցությամբ ըմբիժաղ տալով ասում էր. «աղիկ սիմբոլ է»:

Ինչպես Վանում, Բիթլիսում նույնպես քաղաքի հայությունը անհամբեր սպասում էր ոռոսաց բանակին ու նրա հետ հայ կամավորներին: Այստեղ էլ ջարդ էր եղել, անհաշիվ ջանակությամբ զոհեր: Շատ քիչ մարդ էր մնացել հայրենակիցներից, ովքեր գաղթի ճամփան չէին բռնել: Զաղաք մտած կամավորները շտապել են հետաքրքրվել նրանցով, աշխատել օգտակար լինել: Այցելել են տեղի ամերիկյան միսիոներական դպրոցի շենքը, որտեղ պատսպարված են եղել մի քանի տասնյակ հայ աղջիկներ² 10—18 տարեկան: Տխուր ու մռայլ տեսարան. նրանք բուրդն էլ զրկվել էին իրենց ծնողներից, հարազատներից եւ պատսպարանում անգամ ապրում էին ահով ու դողով: Այնպես որ կամավորների ուրախառիթ այն անգամ նրանց դեմքին ժպիտ չի բերել: Սրանք այն աղջիկներն էին, որոնց տարիներ հետո Վարդգես Ահարոնյանը հանդիպել է Ամերիկայում եւ այնտեղ էլ նրանցից իմացել, թե ինչ հրաշքով են հետագայում փրկվել մահվան ճիրաններից²:

Անդրանիկն այնուհետեւ իր ջոկատի զինվորների հետ քայլում է Բիթլիսից Մուշ տանող ճամփաներով: Տասներկու տարի առաջ էր դուրս եկել այս կողմերից: Բայց կարծես ավերումների մի հազարամյակ անցած լինելը: Հագիվ էին ճանաչվում երեկվա շեն գյուղերը: Միայն լեռներն էին կանգուն, գետերն ու առվակներն էին իրենց հոսքով ձայն տալիս, կարկաչում ու կանչում, բայց ո՛վ էր այլևս նրանց լսողն ու նրանց հասկացողը: Մնացյալ ամեն ինչը կարծես անկենդան լինելը: Մի ամբողջ տարի կոտորած ու մահ էր եղել, անթաղ դիակները նեխել էին, եւ ազոպներն էին կոնչում չորս կողմում: Եվ մեկ էլ քրդերն էին ու թուրքերը՝ հրացանակիր ու հոշոտող որոնումներով, որոնք ոռոսաց բանակին դիտում էին բվի աչքերով, չէին մոտենում նրանց, միշտ ընտրում էին այն արահետը, որ ոռուներից դիրքով վեր լինելը, սարերի կատարներին, որովհետեւ վախենում էին մոտենալ նրանց, բայց եւ տեսադաշտից բաց չէին թողնում:

Կոտորածն արդեն եղել էր, եղել էր ու շարունակվում էր այն, ինչ մարդկության պատմությանը պարզել է նրա անմարդկային սխրա-

¹ Լ. տ., էջ 95—96: ² Լ. տ., էջ 101—111:

գործության սեւ հրաշքը, որը կոչվում է ցեղասպանություն: Եղել էր ու շարունակվում էր, մեռածները՝ թաղված ու անթաղ դիակներ, իսկ սպանողները՝ ծով արյան դիմաց իրենց ծարավը չհագեցրած զինվորներ, որոնք նույն պրյունուուշտ մուլուցքով հետեւում էին Անդրանիկին ու նրա ջոկատի տղաներին... Եվ հեռվից, սարերի կատարներից տեսնում էին նրանք ու գուցե թե զարմանում, այս ի՞նչ է, զինվորներ են հայ կամավորները, թե՛ հուղարկավորողներ: Ճանապարհի բուրդ գյուղերն էլ գերեզմանային լուծյան մեջ էին: Եկել էին թաղողները եւ ձյունից մաքրում էին հողը, որդիների իրենց պարտքն էին կատարում՝ հողին հանձնելով վաղուց մեռածների դիակները: Եվ բուրդ թաղողների հետ նաեւ Անդրանիկն է, նաեւ նույն այս վայրերում ֆիդայական կոիվների օրերի նրա հին ընկեր Սմբատ Բորոյանը, առաջին ջոկատի առաջին վաշտի պետը...

Ուրախության առիթ էլ էր լինում: Ճանապարհի գյուղերից մեկում, ջոկատի կանգառի ժամին երկու քուրդ համարձակվել են իջնել սարերից, որպեսզի գան Անդրանիկին տեսնելու: Կամավորները բռնել, ուղեկցել—բերել են: Պարզվել է, որ այդ կողմերում ապրող Շեկոյի տուն կոչված գերդաստանի զավակներն են: Նրանք նախճիրի ժամին իրենց մոտ պահել, ապաստան են տվել 147 հայի, թե՛ կին, թե՛ տղամարդ, թե՛ մեծ, թե՛ փոքր ու նրանց հետ էլ՝ քահանային: Ի՞նչ կկարգադրե Անդրանիկը, ի՞նչ կերպ վարվենք, եկած քրդերի հարցն է: Հաջորդ օրը 147 հայերն իրենց պահապան քրդերի ուղեկցությամբ իջնում են բարձունքից եւ հետեւում կամավորների ջոկատին:

Ինչպես Վանից են սուրհանդակները նամակ բերում մոտեցող Անդրանիկին, այնպես էլ՝ Մուշից: Մի նամակ, 1916—ի մարտի 1—ի թվակիր, բերել են Սասունի գյուղերից մազապուրծ հայեր, փետրվարին լսելով Անդրանիկի մերձենալը, եկել, պատսպարվել էին Մուշում, որ դիմավորեին նրան եւ նրա հետ էլ որոշեին իրենց ապագան, 328 տղաներ, 189 կին ու մանկահասակ աղջիկներ, որոնց շարունակվում են գումարվել նոր—նոր եկողները: «Չէր ուշադրությունը հրավիրեք դեպի մեզ», այս էր նամակի ամփոփ իմաստը: Ուշադրությունը շուտ տեղ հասնելն էր, որը կարող էր կատարվել միայն ոռոսաց բանակային հրամանատարության կամքով:

1916—ի մարտին գորքերի Վանից դեպի Բիթլիս ու Մուշ շարժվելու ընթացքում Անդրանիկը իր պարտքը համարելով առավելագույնս օգտակար լինել տեղանքի իր մանրակրկիտ իմացողությամբ, ամսի 4—ին Նասըրյոյից հեռագիր է հղում Բիթլիս՝ գնետալ Աբացիեին, պատճենը՝ Լազարբեկովին: Այս շրջանը, որտեղ հիմա գործում են

Բիթլիսի եւ Մուշի զորամասերը, ինչ լավ ծանոթ է: ասվում էր այնտեղ: Եվ հայտնում է, որ ինքը տեղյակ է, որ Բիթլիս-Մուշ-Սուրբ Հովհաննէս ճանապարհից հարավ կուտակված են խիզան, բոզիկ, խիան, բատկան, բիսյակ, բատիր ցեղախմբերը, ընդհանուր թվով՝ 60 հազար մարդ, որոնցից 10 հազարը՝ զինված: Ճեղապետերն են Մուսա բեկն ու Բյասիմ բեկը: Վերջիններս աշխատում են ամեն կերպ համոզել, որ նշված ցեղախմբերը չհանձնվեն ռուսներին, որովհետեւ շուտով իրենց օգնության են գալու թուրքական զինված ուժեր: Անդրանիկը պարտք է համարում եզրակացնել եւ զգուշացնել, որ գարունը բացվելու հետ այդ քրդերի դեմ կռվելը գնալով դժվարա-նալու է¹:

Վերը շարադրվածը Անդրանիկը հաղորդել է ցերեկը ժամը 1-ն անց 35 րոպեին: 15 րոպե անց Նույն հասցեով ևս հաղորդել է, որ հենց տվյալ պահին լեռներից իջել են քրդերի ձեռքից փախած վեց հայ տղամարդ, որոնք հայտնում են, որ քրդերի մեջ իրարանցում է եւ խուճալ: Պատճառն այն է, որ Մուսա բեկի խոստացած օգնութ-յունը տեղ չի հասել: Եվ ահա Անդրանիկը հետագա շարադրանքում մտնում է իր դերի մեջ, եթե թույլ կտան, ապա ինքն իր ջոկատով եւ մի գումարտակ լրացուցիչ ուժով կարող է գրավել մոտակայքի գյուղը, դրանով էլ հարկադրել քրդերին, որ ազատեն զբաղեցրած տեղանքը: Ըստ որում Անդրանիկը սենդամբերքի պահանջ չի դնում, որովհետեւ 400 հայեր ստանձնել են, որպես բռնակիր, իրենց ուսերի վրա սարերը բարձրացնել պարենը²:

Ամսի 3-ի առավոտյան ժամը 5-ին 200 զինվորներ իջել են բարձունքից, գրավել մոտակայքի տեղանքը Նոկ գյուղին հանդիման եւ կրակ բացել գյուղի բնակիչների վրա: Այդ ժամանակ Անդրանիկի ջոկատն սկսել է քրդերին դուրս մղել գյուղերից: Հրաձգությունը տեւել է մինչեւ ժամը 12-ը: Ջոկատի վաշտերից մեկի կեսը մնում է Նոկ գյուղում, սպասելով, որ ընդառաջ եկող փոխադրականով վերա-դառնա խասքոյ գյուղը³:

Երբ ռուսական զորքի հետ կամավորները մտնում են Մուշ, ավեր թաղաքի փլատակներից Անդրանիկին տեսության են գալիս ահ, ու սարսափի՝ օրեր ապրած հայերը, նրանց մեջ նաեւ Սասունի գյուղե-րից գաղթած-փախածները: Անդրանիկը հիշում է հին ծանոթներին, հարցուփորձ անում նրանց հարազատներից, բարեկամներից: Արցունք-ները թաքցնել չի լինում՝ ոչ պատասխանողի, ոչ էլ հարցնողի ով էր ողջ մնացել, որ ում մասին պատմեին: Բայց, ինչ արած, հայի սիրտը Նորից բաբախում էր: Մեկը մեկին սիրտ է տալիս եւ հույս ներշնչում⁴:

Հոգսերի բազմապատկման այս պահին, այո՛, հենց այս պահին, երկար ու ձիգ ճանապարհին հանդիպած բոլոր սարսափների մեջ թերեւս ամենասուկալիի առջեւ Անդրանիկն ասես միանգամից հոգ-սաթափ է լինում, սթափվում է: Անցել էր Հայոց աշխարհի հարավա-յին զինը ծայրից ծայր, կատարել էր որդու իր պարտքը, որքան ուժերը ներել էին, եւ, ի վերջո, նրա դեմ դիմաց իր կարոտած ու կարոտակեզ սասունցիներն էին: Աշխարհում կռիվը վերջացել էր թե չէ, Անդրանիկին թվում էր, թե այստեղ է, որ, ահա, այն ավարտվում է. կամավոր որդիները անցել են ամբողջ ճանապարհը, Հայոց աշ-խարհի Արեւելքը հանդիպել է Հայոց աշխարհի Արեւմուտքին: Սրա-նից հետո կամքը ռուսաց զենքին է ու նրա տեր ցարինը: Հայ մարդը այդ զենքին զորավիգ եղավ՝ ցարի ու նրա ժողովրդի առաջ տված իր երդմանը հավատարիմ: Հիմա խոսքը դարձյալ ռուսաց զենքին էր ու ռուսաց թագինը: Կուլեֆին՝ դատարկված երկրից գնացած զավակները ետ կգային, վշտի ծանր բեռան տակ տեղում թաքստոց մտածները դուրս կգային ու ոտքի կկազնեին, կուլեֆին՝ ռուսի օգնությանն ակնկալած հայ մարդը բռիչը ձեռքը կվերցնէր, շունչ կտար իր աշխարհին, կապրեր ու դարեդար իր երախտագի-տության խոսքը կասեր ու մեծ բարեկամության պարտքը կհատուցեր ռուսաց զինվորի ու նրան՝ մարտի դաշտ ուղարկած ցարի ու ժողո-վրդի նկատմամբ, իսկ եթե հիմա էլ չէին ուզենա, ինչ արած, հայի բախտն իր հետ է, կապրի, կհամբերի՝ զուցե թե ուրիշ մի ժամանակ կգա եւ ուրիշ մի դար կբացվի, եւ ուրիշ մի ուժ կլինի, եւ ուրիշ մի վճիռ, որ նա էլ ուրիշների պես ոտքերի տակ հայրենի հող ունենա եւ գլխի վրա հայրենի երկնակամար:

Անդրանիկի եւ ռուսաց զորքի Բիթլիս ու Մուշ մտնելու լուրերը հասնում էին Արեւելքում ու Արեւմուտքում այնքան ճանապարհին պա-հած բոլոր հայերին: Բոլորն էին հուսով, որ եղել է պատերազմ ու կտորած, հիմա փրկության դռները բացվելու ժամ է...

Զ Նազարբեկով եւ Անդրանիկ

(Կամ՝ Թովմաս Նազարբեկյանց եւ Անդրանիկ Օզանյանց)

Ռազմի գործն էր նրանը, թե՛ արվեստը: Նրա օրինակն էլ է հաստատում, որ ռազմի գործն էլ արվեստ է, որից նա իր ունեցածից շատերին էր բաժին հանել, բոլոր նրանց, ովքեր նրա հետ համագոր-ծակցել են որպես վերահաս, թե՛ ստորահաս: Անդրանիկի զորամասը Նույնպես զերծ չի մնացել այդ շնորհից՝ կարճատեւ ու տեսական ընդհատումներով լինելով նրա՝ դեկավարած զորախմբերի կազմում: Նազարբեկովը կարող էր նրան լրացուցիչ ուժեր տալ եւ իր զորախմբի

1. Կողով. ք. 2300, ք. 1, գ. 828, ք. 411-413: 2. Լ. տ., ք. 409-410: 3. Լ. տ., ք. 421-422: 4. Լ. տ., ք. 122-124, 128-129:

2րջանակներում նրան տրամադրել մեկ ուրիշի որպես զորավիգ, սահմանելով նրանց փոխգործողության խնդիրներն ու ձևերը, ի վերջո պարտավոր լինելով մարտերի հետեւանքների համար բարձր հրամանատարության առջեւ պատասխան տալ:

Ուրիշ երևազարթուցումը Անդրանիկի համար՝ որպես վերադաս, եւ նույնը չէր Անդրանիկը Լազարբեկովի համար՝ որպես, այսպես ասած, ստորադաս: Որովհետեւ Լազարբեկովը գիտակցում էր եւ հաշվի էր առնում Անդրանիկի ու նրա ջոկատի զինվորների խնդիրների առանձնակիությունն ու տարբերությունը մյուս զորամասերի խնդիրների համեմատ, իսկ Անդրանիկը գիտակցում էր եւ հաշվի առնում, որ ինքն ու իր ջոկատը ոչ միայն ուրիշ խնդիրներ ունեն տվյալ պատերազմում, այլեւ ի վիճակի են եւ պարտավոր բանակային հրամանատարությանը մատուցելու ծառայություններ, որոնք իրենց հեշտությամբ ու գուցե նաեւ լավ կհաջողվեն, քան մյուսներին:

Առատ նյութ են մատուցում Լազարբեկովի հուշատետրերը, դրանք մի ժողովրդի երկու զավակների համատեղ ռազմաճակատային գործունեության պատմությունն են պարունակում, եւ Անդրանիկի՝ որպես հրամանատարի ու ռազմիկի հավաստի բնութագիրը:

Լազարբեկով Ֆոմա Իվանովիչը նույն ինքը Թովմաս Հովհաննեսի Լազարբեկյանցն էր, պատերազմի սկզբում Կովկասյան բանակի չորրորդ կորպուսի՝ սկզբում 2-րդ հրաձգային բրիգադի, ապա՝ դիվիզիայի, եւ առանձին դեպքերում էլ զորախմբերից մեկի կամ մյուսի հրամանատարը: Պատերազմը 1914-ի հոկտեմբերի 19-ին հայտարարվելուց անմիջապես հետո էր նա ճանապարհ ընկել Ջուլֆա, ուր հասել էր ամսի 26-ի երեկոյան¹:

Լազարբեկյանցը Անդրանիկից իննուկես տարով մեծ էր, ծնվել է 1855-ի օգոստոսի 4-ին, Թիֆլիսի Նահանգում²: Ծագումով ունեւոր ընտանիքից էր: Վաղ մանկության օրերից նրա շրջապատը եղել են ռուսախոս հայերը: Եվ կրթությունն է եղել ռուսական միջավայրում, եւ աշխատանքը: 1874-ին Մոսկվայում ավարտել է ռազմական 2-րդ գիմնազիան, 1876-ին՝ Ալեքսանդրյան ռազմական ուսումնարանի 1-ին կարգի դասընթացները՝ ստանալով սպայի աստիճան: Բանակային ծառայությունն սկսել է Երեւանի կայազորի զնդերից մեկում: Անդրանիկի նման հայդուկ չէր եղել, որ այդ միջոցով մանրամասն իմանար Արեւմտյան Հայաստանի սարերն ու ձորերը, քարքարոտ ճանապարհները, գետերն ու լճերը: Բայց արդեն բուրոյովին երիտասարդ օրերից էր նրան բախտ վիճակվել ծանոթանալ Երկրի հետ,

որովհետեւ 1877-1878 թթ.ռուս-թուրքական կռվի Կովկասյան ճակատում էր իր ռազմական մկրտությունն ստացել, թեւ, ճիշտ է, միայն սահմանի հյուսիսային կողմում: Այդ ժամանակ երիտասարդ, նորապսակ սպան եղել է բերդը պաշարող ռուսական զորքի հրամանատար Գեյմանի համհարզը եւ իր ռազմական պարտքն ըստ արժանավունյ կատարելու համար արժանացել շքանշանի:

Շատ տարիներ անց, երբ նորից Ռուսաստանը պատերազմի մեջ էր, Լազարբեկովն արդեն այդ կռվին մասնակցում էր գնդապետի աստիճանով եւ հրամանատարի դիրքով: Դա ռուս-ճապոնական կռվի ճակատն էր, ուր նա մեկնել էր Կովկասից, եւ որտեղ կուզենար աշխատանքի վերադառնալ պատերազմից հետո, իր հայրենի երկրի կողմերը, բայց դա անհնար եղավ:

Կովկասի հայության նկատմամբ ցարը ծանր հալածանքների գիծ էր բռնել, որն իրականացնում էր զինվորականության միջոցով: Հայ սպային վստահելը չափազանց շատ կլիներ, եթե հենց այդ պահին նա հրամանատարի դերում գտնվեր այնտեղ, ուր զորքն իր հայրենակիցներին հպատակվելու արվեստին էր վարժեցնում: Ուստի Լազարբեկովը մերժում ստացավ «Հայ ծագում ունեցողը չի կարող լինել որեւիցե զվարդիական զնդի հրամանատար» պատասխանով եւ այն հավելումով, թե՛ դրանից բացի կարող է ծառայել որտեղ ցանկանա: Եվ նա սրտի անկեղծ ցանկության փոխարեն պիտի մի ուրիշ ցանկություն հորիներ: Չի՛ հորինել, գրել է անկեղծը որպես դիմում եւ գրպանը դրած՝ գնացել Կովկասյան բանակի ընդհանուր հրամանատարին ներկայացնելու: Նա համառորեն եւ առանց վարանելու պահանջում ու պնդում է՝ իր անցած ճանապարհի ընձեռած իրավունքի ուժով: Միչդեռ ընդհանուր հրամանատարը ընդամենը մի կամակատար էր, որքան նա զորավոր էր ուրիշի թելադրանքը կատարելիս, նույնքան վեհերոտ էր ու կամազուրկ, երբ խոսքը իրեն ուղղված դիմումի պատասխանին էր վերաբերում: Հրամանը տրված է վերելից եւ կամքն էլ նրանն է, իսկ իմ դերը՝ միայն կատարելը, այս պատասխանը իրականում մերժման վերին սահմանագիծն էր: Լազարբեկովի՝ նախընթաց տարիների սրտի թոթովանքով խոսելու կապանքները ճայթում են եւ այլեւ լեզուն չէ, որ պատասխանում է, եւ միտքը չէ որ թելադրում է, երբ կրծքի տակ ինքնասիրությունն ու հայրենասիրությունն էին պայթում որպես սրտի բաբախյուն: Եվ հիշում է, թե քանի՛ անգամ իր կյանքի վերընթացի ճանապարհին իր դեմքին շարտել էին, թե Լազարբեկովը հայի զավակ է, բայց հրամակազմից ոչ մեկը նրա հետ դեռ չէր խոսել որպես հայի, որովհետեւ ոչ ոք հարմար չէր գտել նրա մեջ կուտակված այդ ամբողջ զորավարական շնորհքն ու տաղանդը վերագրել մեկին, որը

1 ՀՀ ՊՀԱ, ք. 45, գ. 1, գ. 1, թթ. 1-15: 2 Լ. Ա., ք. 121, գ. 127: Լաւե՛ Գ. Լազբեկովի, Դեմքեր հայ ազատագրական շարժումին, Գ., էջ 390-395: Թ. Հ. Լազարբեկյանցը մահացել է 1931թ. փետրվարի 19-ին, Թիֆլիսում: Լ. Ա.:

այլազգի եր: Վերջապես նա ձեռքը տարել է գրպանը եւ դուրսը քաշել դիմումը՝ «...այսօր ես պատիվ ունեմ հայտարարելու, որ ոչ թե հայի ծնունդ եմ, այլ հայ եմ...», եւ որպէս հայ հայտարարում է, որ նման պայմաններում հրաժարվում է բախակային ծառայությունից:

Գիտե՞ր, արդո՞ք, Անդրանիկը այս մանրամասնություններով հանդերձ, որ մի Անդրանիկ էլ իր հրամանատար ծերուկ Լազարբեկյանցի մեջ էր նստած: Գիտե՞ր, թե՛ չգիտե՞ր, ՚հայ չէր կարելորդ, այլ այն, որ անկեղծ հարգանքով ու խորին ակնածանքով էր լցված գեներալ Լազարբեկովի հանդեպ: Եվ ոչ թե նրա ազգային պատկանելության, այլ մարդկային բարձր հատկանիշների ու զորավարական տաղանդի համար: Սա ինքնին ոչ միայն Լազարբեկյանցին էր բարձրացնում, այլև նրա ազգային պատկանելությունը: Ո՞վ չի ուզե՞նա, որ իր անձով ու ծառայություններով եւս իր ազգը պատվի զգացողությամբ ներշնչվի: ՚հայ երազանք էր, որով ապրում էր նաեւ Անդրանիկը, իր մեջ գուրգուրելով մարդկային ազնիվ այդ տեսչը:

«Ես այլեւս բանակից դուրս եմ գալիս»: Ասել է Լազարբեկյանցը եւ 1907-ին թողել ծառայությունը՝ հետը տանելով ոչ ոքի պետք չեկած գեներալ մայորի իր կոչումը: Դիմումը դնելուց եւ դուրս գալուց հետո այլեւս ինքը չի գնացել խնդրելու, նրան այլեւս ոչ ոք գործի չի հրավիրել: Այդպէս մինչեւ 1914-ը, երբ «բախտը ժպտացել է» եւ նրան հիշել, հրավիրել են, որովհետեւ ժամանակն արդեն պատերազմական էր: Հրաձգային բրիգադի հրամանատարի պաշտոնում նշանակվելուց անմիջապէս հետո Զուլֆայից գնացել է խոյ, որտեղ հանդիպել է զորախմբի հրամանատար Չեռնոզուբովին:

Իր հուշերի տետրում Լազարբեկովը հաստատում է, որ Անդրանիկի ջոկատը ձեւավորվել է Դիմանի մոտակայքի հայկական գյուղերում, եւ ինքն էլ հոկտեմբերի 30-ին իր զորամասի շտաբի հետ փոխադրվել է Դիման, որտեղ նույն օրը ժամանել է նաեւ Չեռնոզուբովը զորախմբի շտաբի կազմով:

Ինչպէս երեւում է, նախապէս նոյեմբերի 4-ին է նշանակված եղել Անդրանիկի ջոկատի զորատեսը: Լազարբեկովը, Չեռնոզուբովի առաջարկով, նախապատրաստվել է ներկա լինել արարողությանը: Բայց Դիմանից դեպի արեւմուտք՝ Բուրուշ Խորան լեռնանցքի ուղղությամբ գտնվող ուղեկալից լուր է ստացվել, որ այդ կողմում թուրքական զորքեր են կուտակվում, ուր եւ ամսի 3-ին, նույն օրը կայացած զորատեսից հետո, ուղարկվել է 1-ին եայկական ջոկատը: Այդ պատճառով Լազարբեկովը զրկվել է նշված օրը Անդրանիկին հանդիպելու, նրա հետ ծանոթանալու հնարավորությունից:

1 Գ. Լազան, կղ. էջ 390-395: Նաեւ «Հ. Գ. Ա.», ք. 45, ք. 1, ք. 1, էջ 1-15:

Լազարբեկովը հիշում է նաեւ, որ Անդրանիկի ջոկատը Զուլֆա-Դիման եւ այստեղից դեպի Վան տանող ուղղությամբ առաջացող զորամասերից առաջինն է եղել, որը մարտի մեջ է մտել թուրքական զորքի հետ: ՚հայ եղել է Դիմանից հյուսիս-արեւմուտք գտնվող Աշնակ գյուղի մոտ, որն արդեն նկարագրվեց վերելում:

Հետագայում կազմած օրագրություններում մարտերի մանրամասն նկարագրություններ են, որոնք վերաբերում են նաեւ Անդրանիկի գլխավորած ջոկատին. Դոթուր քաղաքը վերցնելուց հետո կամավորների առաջին ջոկատը կարճատեւ հանգիստ է առել, ապա, ինչպէս գրում է Լազարբեկովը, «Անդրանիկի նախաձեռնությամբ մարտեր մղելով շարունակել է առաջանալ կիրճով»: Զոկատի հետեւակայինները գրոհել են թշնամու վրա լեռներում, իսկ հեծյալները՝ կիրճում: «Գլխավոր ուժերով շարժվելով դեպի Դոթուր, - գրում է Լազարբեկովը, - ես բարձունքից տեսա, թե ինչպէս ջոկատը լեռնային դիրքերից դուրս էր մղում հակառակորդին»: Մտնելով Դոթուր, Անդրանիկը տեսել է քաղաքի վաղուց մահմեդականություն ընդունած հայ բնակչությանը: Այդ միջոցին հայկական ջոկատին ամրացված սպա Հովսեփյանցը, որը մշտական կապ էր պահպանում դիվիզիայի հրամանատարի հետ, հայտնում է, որ 1-ին ջոկատը գրավել է Հարաթել գյուղը, իսկ մահմեդական, քրդական երեք գնդերի հրամանատարները ցանկություն են հայտնել գերի հանձնվելու: Լազարբեկովը եկել է Հարաթել, որտեղ վերջապէս երես առ երես հանդիպել է Անդրանիկ Օզանյանին: Եվ այս կապակցությամբ նա մի քանի բառով նկարագրել է Անդրանիկից իր ստացած առաջին տպավորությունը. «Նա ինձ վրա թողեց ինքնավստահ, հպարտ եւ տիրական մարդու տպավորություն»²: Լազարբեկյանցը տեղնուտեղը կարգադրություն է արել, որ ընդունեն հանձնվող ջուրդ հրամանատարներին եւ նրանց, արժանապատվությունը չվիրավորելու համար, չզինաթափեն: Անդրանիկը հրաման է ստացել իր ջոկատը տանել Շարաբխան: Լազարբեկովը մնացել է Հարաթելում եւ սպասել ջուրդի հանձնվելուն: Բայց տեսնելով, որ դա ձգձգվում է, ինքը եւս գնացել է Շարաբխան: Ճանապարհին նրան ընդառաջ են եկել ջուրդ հրամանատարները՝ ասորական ընտիր նժույզներ հեծած: Մոտեցել են եւ Լազարբեկովին զինվորական պատիվ տվել: Լազարբեկովն ասում է, որ երկու ջուրդ հրամանատար են եղել՝ Սատուն բեկը եւ Զաֆար բեկը: Մյուսները չեն եղել, այդ պատճառով էլ նրանք ուշացել են:

Լազարբեկովը հոգատար էր ջուրդ հրամանատարների հանդեպ: Երբ նրանք բողոքում են, թե ուս սպաները մինչեւ տեղ հասնելը խել են իրենց գեներ ու հեռադիտակը, նա կարգադրություն է անում

1 Լ. Ա., էջ 17, 18: 2 Լ. Ա., էջ 24-26:

անհապաղ վերադարձել թե՛ մեկը, թե՛ մյուսը: Կարծես թե քրդերը հանձնվել էին հենց նրա համար, որ ոուս հրամանատարությանը անընդհատ պահանջներ ներկայացնեին: Եվ միասին գնացել են դիտելու մոտակայքի քրդական Կավելիկ գյուղը: Հաջորդ օրը ուշ երեկոյան Լազարբեկովը ջուրդ հրամանատարների հետ միասին հասել է Շարաբխանե, ուր նրան ընդունել է տեղի մուլան: Բողոք ունեին: Սմկոյի եղբայր Ախմեդը իր զինված խմբով հարձակվել, զավթել էր մի քանի հարյուր ոչխար, մեծ թվով կով ու եգ, եւ ջշել—տարել էր Ղոթուր: Լազարբեկովը կազակային հարյուրյակին հրամայում է հասնել եւ ետ բերել: Բայց ահա առավոտյան նույն գյուղի քրդերը դարձյալ այցելել են Լազարբեկովին եւ դարձյալ բողոքել, թե գողերն էլի գողացել են հարյուր ոչխար: Մեծահոգի Լազարբեկովը քրդերին զոհացնելու համար զորամասի հաշվից զումար է հատկացնում նրանց: Առավոտյան զորամասի երթը դեպի Սարայ շարունակելիս, ճանապարհին զալիս հանձնվում է նաեւ երրորդ ջուրդ հրամանատարը՝ Զհանգիր բեկը¹:

Լազարբեկովը լուր էր ստացել, որ թշնամին հարձակվել է Սարայի վրա, որտեղ մեծամասամբ հայեր էին ու ասորիներ, եւ ամեն ինչ թալանել, սրբել—տարել է: Զաղաքին դեռ չհասած, զորամասին ընդառաջ են եկել բնակիչները: Պարզվել է, որ Սարայը հարթավայրի վրա փոկած, բուսականությունից բուրոգովին զուրկ, մեծ բնակավայր է: Իսկ Չեռնոզուրովը նախապես Լազարբեկովին հեռախոսագիր էր հղել, որ ծառերը պահպանվեն, եւ ոչ մի ճյուղի ձեռք չտրվի: Լազարբեկովը պատասխանել է. «Ոչ մի ծառ չկա ոչ քաղաքում, ոչ էլ շրջակայքում»: Սա պարզապես կոպին ոուսների պատրաստ լինել—չլինելու եւ հետախուզության որակի մի նմուշ է: Բնակչությունը հիմնականում փախած է եղել, բացի մի քանի հայերից ու ասորիներից: Նահանջած թուրքական բանակից մնացած է եղել մի հայ զինվոր, որը Լազարբեկովի բանակին տեղեկացրել է, որ թուրքերի բանակը զիջերը նահանջել է դեպի Վան տանող ճանապարհի վրայի գյուղերը: Լազարբեկովը կամավորների ջոկատին հանձնարարել է անսկատ հետեւել թշնամուն¹:

Ջուրդ բեկերի գերի հանձնվելը եւ հատկապես ոուսական բանակում նրանց ողջ—առողջ պահել—պահպանելը դրական ազդեցություն է ունեցել ճանապարհի վրա գտնվող գյուղերի հայ եւ ջուրդ բնակչության հարաբերությունների վրա. «Չորս կողմը մեր հանդեպ թշնամի քրդական գյուղեր էին», — գրում է Լազարբեկովը, ավելացնելով,

¹ Վերելում ասվեց, որ այս պատմության զանազան տարբերակներ են փաստաթղթերում:

¹ Դարձյալ Լազարբեկովի օրագրության եւ Անդրակիկ թիկնապահի օրագրության որոշ ամսաթվեր նույնական չեն:

որ չնայած դրան, զորամասի դրությունը եղել է «քիչ թե շատ տանելի միայն այն պատճառով», որ իրենց ձեռքին գտնվել են պատանդ ջուրդ հրամանատարները. «Նրանց ազդեցությունը բնակչության վրա հսկայական էր: Նրանք հայերի հետ շատ լավ են վարվել: Եվ պետք է արդարացի լինել ասելու, որ այդ ընթացքում ոչ մի կոտորած ու ջարդ չի եղել»¹:

Այստեղ է, որ Լազարբեկովը Չեռնոզուրովից հեռագիր է ստացել Անդրանիկին դեպի Վան շարժվելու թույլտվություն տալու մասին, բայց ինքը, դա հնարավոր չհամարելով, ջոկատն ուղարկել է Ասուրլի, որտեղ կռիվներ էին սպասվում:

Այս ընթացքում, բուրոգովին անսպասելի, Չեռնոզուրովը կրկին Լազարբեկովի հայեցողությանն է ուղարկել համիդեական զնդերի հրամանատարներին: Ընդունելով եւ պահելով մի քանի օր, Լազարբեկովը նրանց դարձյալ ետ է ուղարկել, պատճառաբանելով, որ հարմար չէ պահելը, եւ համոզված է, որ նրանք կապ կունենան իրենց զինյալ ազգակիցների հետ, որն իր համար նպաստավոր չի լինի: Չեռնոզուրովը նրանց այս անգամ ուղարկել է Մակուի խանություն, որտեղից նրանք ի վերջո փախել են²:

Ինչեւէ, կամավորները տեսնում են եւ զգում, թե ինչպես ոուս հրամանատարությունը, հոգատարություն ցույց տալով ջուրդ հրամանատարներին, փաստորեն հոգատար է առհասարակ քրդերի նկատմամբ:

Այստեղ, Սարայում, նոյեմբերի 30—ին Լազարբեկովին այցի է եկել տեղի հայ քահանան՝ ցանկանալով անհապաղ նրան տեսնել: Նա հայտնում է, որ քրդերի ու ասկյարների մեծաքանակ ուժեր են կուտակվում Սարայի հյուսիսային կողմում, որպեսզի շարժվեն դեպի Ղոթուր եւ Բելաջուկ գյուղի մոտակայքում փակեն ոուսաց զորքի նահանջի ճանապարհը: Պետք էր ստուգել քահանայի հաղորդումը: Լազարբեկովը հեռախոսի մոտ է հրավիրել Անդրանիկին, եւ նա ասել է, որ թշնամու թիվը 25—30 հազար է՝ չորս հրանոթով: Լազարբեկովին ուրիշ ոչինչ չի մնում, իր զորախումբը ետ քաշելուց բացի: Նրա հետ նահանջում է նաեւ բնակչությունը՝ հայեր ու ասորիներ: Նահանջ է: Ամեն մի նահանջ ծանր էր Անդրանիկի համար: Հենց այդ է նկատել Լազարբեկովը: Եվ Նշել է փաստ, որը ուրիշ աղբյուրներից մեզ հայտնի չէ. «Հոգնեցուցիք երթից հետո եւ մեր նահանջի պատճառով կրելով հոգեկան տառապանքներ, հայկական ջոկատը ժամանակավորապես հեռացել է Սարայից»³: Նշել է այս իրոք հիմնավոր պատճառը, եւ ինքն էլ գտնելով, որ ջոկատը առանց այդ էլ

¹ ՀՀ ՊՊԱ, ք. 45, ց. 1, գ. 1, էջ 32 (չեղբ մի քանի համարակալում ունեկ):

² Ն. տ., էջ 34: ³ Ն. տ., էջ 35—36:

լինելով հոգևած ու հյուծված թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես, իսկապես դժվար է տարել նահանջի փաստը: Լազարբեկովը դրանում գլխավոր մեղքը տեսնում է Անդրանիկի մեջ: Ընթերցե՛ք. «Իհարկե, դրանում գլխավոր մեղքը Անդրանիկինն է»: Եվ հետևում են Անդրանիկի բնավորության գծերը. «Կարգադրող, անհավասարակշիռ, բռնակալական բնավորության տեր մարդ, որն իր ռազմական գիտելիքներով իրեն բուրից բարձր է դասում եւ անկարող էր ուրիշներին ենթարկվել»¹: Դժվար չէ այս բուրիք բացատրել, այս բուրիք Լազարբեկովը նկատում է եւ թվարկում նահանջի առիթով, որը գաղթ էր, հայրենի օջախի եւ հողի լքում ցուրտ ձմռան ճգճան սառնամանիքին, երեխաների ողբ ու կոծ, կանանց անասելի տառապանք, ցրտահարություն ու մահ... Լազարբեկովի ջղերը ամուր էին, որովհետեւ այդպես պինդ ու ամուր էին ռազմական այն դպրոցի ուսանողների ջղերը, որում նրան ուսուցանել էին ռազմի արվեստը, եւ նրանց ջղերը, որոնց հրամանատարությամբ ու որոնց հետ միասին եղել էր բանակներում, կռվի էր գնացել ու գնում էր հիմա: Լազարբեկովն էլ հնայ էր, բայց ոուսահայ էր եւ ոուսախոս, որի ազգանվան «յան» վերջավորությունը «ով»-ով փոխելը, ի միջի այլոց, ծննդյան օրից ի վեր, իր հոգեկան աշխարհի ձեւավորման վրա առանց հետեւանքի չէր անցել: Զաղաքական ու ազգային արժանապատվությամբ աղետցուն զինվորականի համար, որպիսին ճանաչվելու առիթներ էր նա ունեցել բանակում, հանկարծ, այս դժվար պահին, իրավիճակին հարմարվելն ու գլուխ խոնարհելն էր դարձել զինվորական պարկեշտության միջոցը: Հակառակ դեպքում Լազարբեկովը իր հուշերի հանգամանակից ու ծավալուն օրագրական տետրերում ընդամենը երկու բառով չէր գրի, թե հարմար չգտնվեց, որ Անդրանիկն իր ջոկատով գնա դեպի Վան, երբ գորախմբի հրամանատարը դրան համաձայնել էր: Իսկապե՞ս գորախմբի հրամանատարը համաձայնել էր: Այա ինչո՞ւ հարմար չգտնվեց, ի՞նչ վատ նպատակ էր հետապնդում Անդրանիկը՝ ցանկանալով ճարահատյալ մեն-մենակ իր ջոկատով առաջ գնալ դեպի Վան, ինչո՞ւ մեն-մենակ, ինչո՞ւ ուրիշներն հանձն չառան օգնել, ուղեկցել նրան, եւ, վերջապես, ի՞նչ հոգեկան ապրումներ ունեցավ նա՝ իր ազգի փրկությունն հայցող նույն այդ ազգի՝ ռազմի դաշտում հրամանատարությունից մերժված զավակը: Ոչ ոք այդ ամենը այնպես լավ չգիտեր եւ չէր կարող իմանալ, ինչպես թե՛ հրամանատարության եւ թե՛ Անդրանիկի ու կամավորների հետ կողք կողքի գտնվող Լազարբեկովը: Զե՛ որ քիչ առաջ բերեցինք իր իսկ՝ Լազարբեկովի գրավոր խոսքը, հայկական ջոկատը «...հոգնեցուցիչ երթից հետո... կրելով հոգեկան տառապանքներ...»:

¹ Լ. տ., էջ 37:

Այդ ինչո՞ւ հանկարծ տառապանքները հոգեկան դարձան, երբ ռազմի դաշտում դրանք գերազանցապես ֆիզիկականն են... Չպատասխանելով այս հարցին, չանդրադառնալով Անդրանիկի տառապանքներին եւ դրանց հնարավոր հետեւանքներին, Լազարբեկովն, այնուամենայնիվ, իր հուշատետրում Անդրանիկի մասին գրում է, որ նա «ընդունում էր, չգիտես թե ինչու, առայժմ միայն իմ [Լազարբեկովի] հեղինակությունը» (Լ. տ., էջ 36): Դառնանք, պատկերացնենք ետմահու հնարավոր մի գրույց մեծարգո Լազարբեկովի հետ:

Ի՞նչ կար այստեղ չիմանալու, սիրելի Լազարբեկով, եւ այն էլ՝ Ձեզ համար, հուշերի այս տետրերի հեղինակի համար, որի շատ տողերում եւ էջերում հոգեբանի զգացումներն ավելի ուժգին են եւ քաղաքացիական խոհեմությունն առավել, քան, քիչ է մնում ասելք, ռազմարվեստի իմացությունը: Ուրիշ բան, եթե Դո՛ւք չլինեիք այս տետրերի հեղինակը, եթե այդ տողերի հեղինակը այս աստիճան նրբազգաց չլիներ, ամեն ինչ նկատում եք, ամեն ինչ զգում ու գրի առնում, Չեղնուզուրով ի վերջո ջուրդ առաջնորդներին ազատ արձակեց, Անդրանիկի մյուս հրամանատարները նրա նկատմամբ անհոգի էին եւ կամավորների նկատմամբ անուշադիր... Ձեր մեջ էր նա ուզում տեսնել իրեն ցանկալի հրամանների հեղինակին՝ «առաջ դեպի Վան», «առաջ ու անդադար, անկա՛նգ...» եւ, մանավանդ, վերջապես՝ «...աննահանջ»: Իսկ Դուք, հայազգի Լազարբեկով, Ձեր վերաբերմանցած հուշերի ծովում ընկնված, Ձեր ձեռքով գրել եք, որ սկսված նահանջի իրավիճակում կապիտան Հովսեփյանցը հարկադրված է եղել մի քանի տասնյակ կամավորների հետ, կեսգիշերին, դուրս գալ ճանապարհին գտնվող բարձունքը գրավելու, որպեսզի դադարեցնեք նահանջը: Եվ Ձեր հրամանատարական իրավունքով դա համարել եք անկարգապահություն, մինչեւ իսկ ցանկանալով այդ մասին տեղյակ պահել վերին հրամանատարությանը, որը հազիվ կասեցրել է ընդամենը մի բժիշկ... Հակոբ Զավրիելը: Բժիշկը այստեղ գերազանցել է Ձեզ ոչ միայն որպես հոգեբան եւ հոգեբույժ, ոչ՝, նա ռազմի գործի մեջ է փորձել իր կարողությունները եւ ըմբռնել, որ հրամանատարները կամ չեն հասկանում, կամ նրանց համար, հասկանալի է, մեկ էր, հրամանը տրված էր, պետք էր կատարել՝ ճիշտ թե սխալ: Ե՛վ Անդրանիկը, եւ՝ Հակոբ Զավրիելը, եւ՝ Հովսեփյանցը մազաչնափ չէին տարակուսում, որ եթե ոուսաց բանակում տվյալ պահին փաստը խորապես ըմբռնող ուրիշ ոչ մի գորավար չլիներ, իսկ հանկառակի պես քիչ չէին նրանց շարքերում ամեն ինչ էլ շատ լավ ըմբռնողներ, ապա Դուք խորապես գիտակցում էիք, որ նահանջը անիմաստ է, ռազմարվեստի տեսակետից՝ անհրաժեշտությունից զուրկ: Անդրանիկը համոզված էր, որ Դուք շատ լավ էլ դա հասկա-

նում եւ, որովհետեւ նա տեսնում էր եւ գնահատում Չեր գործակարական խոհեմությունը ամբողջությամբ վերցրած, տեսնում էր դա մյուսների հետ համեմատության մեջ դնելով եւ գործի ընթացքով ու արդյունքով: Անդրանիկը, հոգեբանական գիտելիքներից զուրկ երեկվա ֆիդային, Չեր բառերից չէր Չեզ հասկանում, Չեր խոսքերով չէր Չեր մասին կարծիք կազմում, նա Չեր այլերին էր նայում եւ հրամանների Չեր շեշտերից էր կոահում, իսկ այդ ամենը, որ Դուք հարկ չհամարեցիք ասել ժամանակին, գրեցիք Չեր հուշերի տետրում մի երկու բառով, թե՛ անիմաստ էր այդ նահանջը... Դրանով իսկ ասացիք այն ամբողջը, որը Դուք որպես զինվորական զուցեւ բուրից լավ գիտեիք հենց, երբ ուզում էիք կապիտան Հովսեփյանցին պատժել, դրանով իսկ անուղղակիորեն եւ ուղղակիորեն փաստի առաջ կանգնեցնելով եւ սաստելով նաեւ Անդրանիկին: Անկարգապահության մեջ մեղադրելով Հովսեփյանցին, Դուք անկարգապահության մեղադրանքի սլաքն ուղղում էիք Անդրանիկին: Առանց այն էլ տեղից վերկացող հրամանատարը նրան անկարգապահ էր անվանում: Ոչի՞նչ, որ մի անգամ էլ Դո՛ւք այդպես վարվեիք, թեեւ Անդրանիկը հասկանում էր, որ, հարվածն ուղղելով Հովսեփյանցի կողմը, փաստորեն իրեն պաշտպանության տակ էիք վերցնում եւ այն էլ ոչ թե մի ավելորդ անգամ անկարգապահ կոչելու, այլ ջոկատի գործողության համար նրա հրամանատարին պատժելու վտանգից:

Սա եղել է 1914-ի դեկտեմբերի առաջին օրերին: Նահանջը, ինչպես վերելում ցույց տրվեց, չի դադարել, եւ թուրքական զորամասերը ոռուսական զորքերի հետեւից դեկտեմբերի 4-ին մտել են Հարաթել: Այստեղից սկսած Նազարբեկովի եւ Անդրանիկի կարծիքները համընկնում են. «Ես նահանջի առանձին հիմք չէի տեսնում: Դա վերաբերում էր զորախմբի պետ գնդապետ Չեմցովի անվճռակա- նությանը»¹, սա գրում է Նազարբեկովը այն զորախմբի մասին, որը ռազմաճակատի այդ հատվածում բռնել էր նահանջի ճանապարհը, եւ որի հետ միասին ետ պետք է քայլեին Անդրանիկի կամավորները:

Երկուսն էլ՝ թե՛ Նազարբեկովը, թե՛ Անդրանիկը, նահանջը անիմաստ են համարել: Բայց նրանցից մեկը՝ կարգապահ ու մեծարվեստ ռազմիկն ու զորավարը, խնդիրն ընկալել է ծառայողական տեսակետից եւ ենթարկվել հրամանատարության կամքին, իր առաջին ու միակ պարտքը համարելով նույն ոգով զինվորներին տոգորելը եւ հրամանը խոնարհաբար, ճշտորեն կատարելը: Եվ մի՞թե ուրիշ կարգի ռազմիկ է լինում ու զորավար, եւ այն էլ ռազմի դաշտում, երբ կարգապահության ամեն մի խախտում, որպես ընդունված է ասել ու գնահատել առհասարակ, կարող է բանակում բարոյալքում ու քայ-

¹ Լ. տ., էջ 37:

քայում մտցնել, եւ որը նույն այդ ռազմի դաշտում աններելի քայլ է ու սխալ, որը պատժվում է ռազմական տրիբունալի չարված խստազույն օրենքներով: Նրանցից մյուսը՝ կամովին ռազմի դաշտ եկած, հրամանատար դարձած զինվորն էր, որին մղում էւ առաջ էր տանում օր ու ժամ, թույլ ու վայրկյան առաջ իր հայրենակիցներին թշնամու սրի բերանից փրկելու բարոյականությունը: Իր եւ իր զինվորների ամեն մի հապաղումն արդեն նա հանցագործություն էր համարում, էլ ո՛ւր մնաց, որ ներողամիտ լիներ ամբողջ բանակի նահանջի նկատմամբ: Եվ այստեղ է, որ նա է՛ւ «մեծամիտ» է, է՛ւ «հրամայող»:

Նազարբեկովը կարգապահ էր ու համեմատ, Անդրանիկը՝ անկարգապահ ու կամակո՛ր: Որովհետեւ մեկը ենթարկվում էր, մյուսը ըմբոստանում: Մեկը նահանջը ընկնում էր ու նրա անմիտ լինելը սոսկ գործիմացության պակասով ու բացակայությամբ բացատրում, իսկ մյուսը, ով գիտե, թե դրանից բացի դեռ քանի ուրիշ պատճառներ էլ էր տեսնում ու նաեւ հետեւանքներով էր չափում նույն այդ սխալը, հետեւանքներ, որոնք իր հայրենակիցների, իր արյունակից հարազատների ոչ թե մեկ ու հարյուր, այլ հազար ու տասը հազար կյանք էր արժենում: Եվ նա մեծամիտ էր: Իսկ ինչ մի մեծ անպատվություն է այս դեպքում *մեծամիտ* կոչվելը, երբ մարդը պարզապես ըմբոստ է, երբ նա հրամանի արժեքը իր սրտի լարերով է չափում, այլ ոչ թե ռազմուսույց գրքի տառերով: Մանավանդ որ ինքն էլ ռազմուսույց մի գրքի հեղինակ էր եղել եւ այն էլ՝ դեռ տասը տարի առաջ...: Եթե բանակը Հայոց աշխարհինը լիներ, նրան այդ ըմբոստության համար մեծ հայրենասեր կկոչեին, քաջի անուն կտային եւ մեծարանքի պսակներով կզարդարեին, այլ ոչ թե երկաթյա խաչերով... Ռ՛վ նրան ասաց, թե այդ մի քանի հայրուկ-զինվորներով ուր ես մտել Առաջելոց վանքը եւ ի՞նչ կարող ես անել դու սուլթանի գնդերի դեմ: Ռ՛վ նրանից հարցրեց, թե ինչու է կառավարության կանոնավոր բանակ կարգը, երբ նորից թույլ են ու ժամը ճանապարհի մյուս կողմում հարյուրավոր կյանքեր էին խլում, կյանքեր, որոնք խնայելու համար նա եկել էր ռազմի, դաշտ... Եվ եթե ոչ ի ծնե, բայց զոնե իր ընտանեկան բախտի, իր կյանքի անցած օրերի բերումով, իսկապես իր խոսքի տեր դարձած, իր ասածը պնդող, իր թեքածը չիզող, իր ժողովրդի պես վիթխարի համբերության տեր Անդրանիկը, որ հանդուգն էր, նաեւ կամակոր եւ ուրիշի խոսքի նկատմամբ անհամբեր ու մերժողական էր դարձել: Որովհետեւ մեկը հայրենիք ու ազգ-եր փրկում, մյուսը՝ ռազմուսույցի կանոններն էր կատարում... Ոչինչ, թող

այստեղ, կովի թեժ պահին ու նահանջի այս ժամին Նազարբեկովն իր սիրելի Անդրանիկին նաեւ մեծամիտ կոչի ու կամակոր: Այս պահի համար հազիվ թէ խոհեմ ու հարգարժան Նազարբեկովը ավելի ճիշտ, ավելի լավ բնութագրական բառեր գտներ... Նրա բառապաշարում ուրիշ բառեր էլ կային, որոնք նա հավանաբար պահել էր հանրագումարի համար, իսկ հիմա դեռ ընթացք էր ու մանավանդ՝ նահանջ...

Ընթերցողին սպասեցնել չտալու համար վկայակոչենք Նազարբեկովի՝ հենց այդ օրերի կապակցույ ամբ ասածն ու գրածը: Նախորդ դեպքից մի երկու օր հետո Նազա, րեկովն իրեն ենթակա գումար: տակներից մեկին հրաման է տվել թշնամուն Բելաջուկ գյուղից դուրս մղել: խոր փոսորակում է թաղված եղել գյուղը, նկարագրում է Նազարբեկովը: Ջինվորների կրակը տեղ չի հասել, գումարտակը անվճռական է եղել: Նազարբեկովը, նույն ինքը՝ երեկվա հանդիմանողը, գրում է. «Տեսնելով հրաձիգների անվճռականությունը, ես այդ խնդիրը հանձնարարեցի Անդրանիկին»: Անդրանիկի երեկվա զայրույթը անցած է տեսել, մարել էր նաեւ իր վրդովմունքը: Փակագծերում նա գրում է. «(Չոկատն արդեն մի քանի օրում հանգիստ էր առել, եւ հանգստացել էր նաեւ Անդրանիկը)»: Սրանով չի բավարարվել ուսյալ ու կիրթ զորավարը, այլ նաեւ մարտի նկարագրական բառեր է գրել. «Չոկատի մարտիկները անմիջապես հարձակման անցան առանց կրակոցների: Լավ իմանալով տեղանքը— նրանց մեջ մի քանի հոգի կային այդ տեղից— նրանք հնարամտորեն իրականացրին հարձակումը: Մարդ զարմանում էր, թե ինչպիսի հմտությամբ էին նրանք հարմարվում այդ գրեթե անմատչելի տեղանքին: Ուղղակի թեք լեռներից սահելով իջնում էին խոր ձյունով լեցուն կիրճը եւ կուտակվելով՝ գրոհի էին անցնում ու հակառակորդին դուրս բջում գյուղից ու մերձակայքի սարերից»¹: Եվ սա նույնպես կամակոր Անդրանիկն է ու նրա ջոկատը:

Այդ մարտից բավական ժամանակ անց էր Նազարբեկովը Չեռնոզուբովից ստացել Սարիղամիշի ճակատամարտի եւ հարավային այս գծի վրա ուսական բանակի նահանջի հրամանը: Երբ չկան անուններ ու դեմքեր, Նազարբեկովն էլ Անդրանիկից պակաս անկեղծ չէր անկեղծության մեջ հուզվող ու զայրացող: Լսեք նրա խոսքը, թե ինչ ասում է ունեցել հեռագիրն ստանալու պահին. «...հրամայված էր պատրաստ լինել նահանջի: Այդ հանգամանքը բոլորի վրա ծանր ու ճնշող տպավորություն թողեց»: Չի համարձակվել անձամբ կամավորների ջոկատին հայտնել այդ մասին: Ելք է գտել. «Կանչեցի Ջավրիեիին, նրա միջոցով կապվեցի ջոկատի հետ եւ նրան ծանու-

1 Լ. ս., էջ 37-39:

թացրի հեռագրի բովանդակությանը»: Բժիշկ Ջավրիեը, հիշում է Նազարբեկովը, այնպես է ցնցվել այդ լուրից, որ նրա այքերից արտասուքներ են թափվել: «Ես սկսեցի, — պատմում է Նազարբեկովը, — հորդորել եւ ասել, որ առայժմ պետք չէ հուսահատվել: Նա ինձ պատասխանեց, որ ինչպես չվշտանա, երբ իր ամբողջ կյանքը նվիրել է հայ ժողովրդի ազատության գործին, իսկ հիմա այդ բոլորը փլվում է այն պատճառով, որ կովկասյան հրամանատարությունը նշանակություն չի տվել թշնամու մեծ ուժերի մասին իր ցուցմունքներին»: Պատմում է այս Նազարբեկովը եւ ամենից վշտալին տեսնում Անդրանիկի վիճակը. «Սոսնձնապես ճնշված վիճակը Անդրանիկին էր, նրա օգնականներինն ու ջոկատի զինվորներինը: Նրանք ստվերների նման թափառում էին, չիմանալով ինչ անել: Իմ բոլոր հուսադրումները զուր էին»¹:

Այնուամենայնիվ Անդրանիկը երախտապարտ էր Նազարբեկովին: Որովհետեւ նահանջի ճանապարհին նա Անդրանիկին թույլ էր տվել ջոկատը ետ քաշել իր հայեցողությամբ, որը եւ հնարավոր դարձրեց, որ նա Սալմաստից հայերի գաղթին օգնության հասնի, որի մասին պնտմվեց վերելում: Նազարբեկովը դրանում անկեղծ շահագրգռություն է ցուցաբերել եւ օժանդակել է: Իմանալով, որ Ջավրիեը մոտիկ հարաբերության մեջ է Կովկասյան բանակի ընդհանուր հրամանատար փոխարքա Վորոնցով—Դաշկովի հետ, նրան խորհուրդ է տվել հեռագրել եւ խնդրել, որ թույլատրվի հետաձգել զորքի նահանջը, մինչեւ գաղթող հայերի տեղ հասնելը, որը Ջավրիեը տեղնուտեղը կատարել է:

Նազարբեկովը չի շրջանցել գաղթի տեսարանները: Հուշերի տեսրի այդ տողերը վերաբերում են օրերի անմիջական տպավորությանը.

«Գաղթականների վիճակը ողբերգական էր: Մայրերը ուսերին տանում էին իրենց երեխաներին, տղամարդիկ՝ բռնավորված ձիերի, էջերի, գոմեշների ու եզների հետ, մինչեւ գոտին ցեխի մեջ խրված եւ տանջված, հազիվհազ առաջ էին գնում: Մեզ էին հասնում խոր հոգոցներ, բողոքի ճիչեր: Անասուններն անգամ, ասես զգում էին, որ դրությունը հուսահատական է: Եզների ու գոմեշների տխուր բառաչք, ձիերի վրնջունք, ոչխարների մկկոցը եւ վերջապես ֆուրգոնների ակների սոսկալի ճոռոցը ծանր, սրտամաշ տպավորություն էին թողնում: Տեսնելով բոլոր այդ տառապանքները, մեզնից շատերի այքերից արցունքներ էին թափվում»²:

Այդ լավ է, որ Նազարբեկովը իր ձեռագրով սերունդներին է թողել իր անհամակարծությունը դեպի թշնամու թիկունքը այսքան խորանալուց հետո զորքերը ետ քաշելու չարաբաստիկ հրամանի հետ:

1 Լ. ս., էջ 39-40: 2 Լ. ս., էջ 45-46:

Վերը թվարկված տարակարծությունից անկախ եւ ոչ էլ տակ հայ-
ութեան ճակատագիրը նկատի ունենալով, Անդրանիկն ու Լազար-
բեկովը արմատական այս հարցում միեւնուրոյն հոգսով բաբախող
երկու տարբեր սրտեր էին: Դա պայմանավորված էր նախ եւ առաջ
պատերազմի տակտիկայի նկատմամբ նրանց միասնությամբ:

Լազարբեկովը հարց է տալիս. ի՞նչ իմաստ ուներ ռուսական
զորքերը 1914-ի ձմռանը Պարսկաստանում զբաղեցրած բնակավայ-
րերից ետ քաշելը, երբ արդեն «բարելավված էր դրությունը Սարի-
ղամիշի տակ», որը պատրվակ էր բերված նահանջի համար: Լա-
զարբեկովը տառացի-բառացի մտածում է ինչպես որ Անդրանիկը,
նահանջի մասին հրամանը միանգամայն ճիշտ կլինէր, եթէ Թուրքի-
ային հաջողված լինէր ջարդել Պարսկաստանում գտնվող գլխավոր
ռուսական ուժերին: Բառացի՝ «Առհասարակ շատ կարգադրություն-
ներ, որոնք ես ստացել եմ ադրբեջանական զորախմբում իմ գտնվե-
լու երկու ամսվա ընթացքում, ինձ այնքան էլ հասկանալի չէին:
Այդպես էր զորքերի առաջխաղացումը դեպի Բաշկալէ եւ Սարայ: Եթէ
դրա նպատակը դեպի Վան ընթանալն էր, ապա պետք էր դա
նախապես մշակել, ապահովել թիկունքը, մեր ուժերը համապատաս-
խանեցնել հակառակորդի ուժերի հետ, եւ սկսված ռազմական գոր-
ծողությունը հասցնել ավարտին: Մինչդեռ զորքերը այդ քաղաքները
գրավեցին եւ այլևս առաջ չգնացին»: Անդրանիկը գտնում է, որ այդ
քաղաքների գրավումը եղել է պարզապես տպավորության համար:
Լազարբեկովը դա վերագրում է նրան, որ տվյալ դեպքի համար
կոնկրետ պլան չի եղել, որից եւ բխել են զորամասերի աննպատակ
տարուբերումները, որոնք եւ առաջ են բերել մեծ քանակությամբ
մարդկային եւ նյութական կորուստներ: Հենց դրանց թվում էլ Լա-
զարբեկովը հիշատակում է հայության եւ ասորիների տխուր գաղթը:
Լազարբեկովը մատնանշում է, որ այդ երեւումներին հետեւեց Ռու-
սաստանի հեղինակության անկումը քրիստոնեական բնակչության
աչքում:

Այո, ինչպես Անդրանիկը, Լազարբեկովը նույնպես 1914թ. դեկ-
տեմբերի նահանջը որակել է «աննպատակ» բառով¹:

1915-ի ապրիլի 14-ին Լազարբեկովն իրեն ենթակա զորախմբի
հրամանատարությունը հանձնում է գնդապետ Օբրագովին եւ մեկ-
նում Խոյ: Դիմանի կողմում վերը պատմված դեպքերն էին հասու-
նանում: Չեռնոզուբովը նպատակահարմար է գտնում, որ Լազարբե-
կովն անհապաղ մեկնի Դիման: Միաժամանակ հայտնի էր, որ
Վանում էլ սկսվել են կոհվելու խաղաղ բնակչության եւ քաղաքը
պաշարած թուրքական զորքերի միջեւ: Լազարբեկովը հրավիրված էր
հիմնականում դեպի Վան ուղարկվող զորքերին առաջնորդելու հա-

1 Լ. տ., գ. 2, էջ 1:

մար: Նույն օրը, տեղ հասնելուց հետո, Չեռնոզուբովը կարգադրում
է, որ՝ նա ամսի 16-ին անհապաղ մեկնի Դիման: Համենայն դեպս
Լազարբեկովը հիշում է այն, ինչն այլևս անտարակուսելի է: Արդեն
հայտնի էր, որ Վանում ստեղծված է արտակարգ դրություն: Ջաղաքի
եվ մերձակայքի բնակչության երեք կարեւոր հենակետերը՝ Այգե-
տանը, Կենտրոնը եւ Շատախը դեռ դիմանում էին: Թուրքական
հրամանատարությունը լրջորեն մտահոգված էր Ջեղեթ փաշային
օգնելու հարցով, որպեսզի նա կարողանար շուտափույթ ավարտել
քաղաքի բնակչության հետ լիովին հաշվեհարդարը: Վերջինիս մի
բաղկացուցիչ մասն այն էր, որ ռուսաց բանակի երթը դեպի Վան,
քանի դեռ հեռու էր, եթէ չէր կասեցվելու լիովին, ապա գոնե
քաշքշվեր, հետաձգվեր: Մյուսը, եթէ դա չէր հաջողվելու եւ ռուսա-
կան բանակը ճեղքելու էր շրթան, ապա թուրքական զորքը պետք է
կարողանար եկող բանակին իր հետեւից քարշ տալ Վանից հեռու,
ուրիշ մի կողմով, որպեսզի այնտեղ սկսված սմանդը Ջեղեթ փաշան
կարողանար այժմ էլ այդ ձեւով ավարտել: Իսկ թե այդ գործողության
դիմաց ինչքան հողեր կգրավեին ռուսները եւ մինչեւ ուր կհասնեին,
դա, ինչպես երեւում է, թուրքական հրամանատարության համար
հոգս չէր կամ գոնե այնպիսին չէր լինի այդ հոգսը, ինչպիսին Վանի
խնդրի ձախոհումը:

Ապրիլի 16-ին Լազարբեկովը Խոյից ճանապարհվել է ուղիղ դեպի
Դիման: Ճանապարհին նա հանդիպել է վիրավոր զինվորներին
թիկունք ուղեկցող երկու վաշտի չափ զինվորների եւ նրանց իր հետ
վերցնելով գնացել է դեպի Մուղանջուղի հարավային կողմը: Այստեղ
էլ նրան տեղաշարժի բերումով ընդառաջ են գալիս մի վաշտ
զինվորներ: Պարզվում է, որ դա Անդրանիկի ջոկատի՝ Սմբատի
դեկավարած վաշտն է՝ վաշտապետի հետ միասին: Վաշտը մի օր
առաջ դուրս էր եկել Կարաթափա լեռնանցքով դեպի Խանիկ գյուղն
ընկած ճանապարհը հետախուզելու:

Թուրքերը ուժեղ հարձակում էին սկսել: Լազարբեկովը Սմբատին
կարգադրում է հենց այդտեղ՝ մերձակայքում, Խանիկ գյուղից դեպի
արեւմուտք, Մուղանջուղից՝ հարավ-արեւելք, դիրքեր գրավել եւ
«մեռնել, բայց չնահանջել»: Երեւում է, Դիմանի շուրջը թուրքերը
ամուր պատնեշ էին կազմել: Լազարբեկովը ընթացքից վերադաս-
վորում է ուժերը: Իր զորախմբում գտնվող 5-րդ գնդին կանգնեցնում
է մի գծի վրա, որպեսզի հակառակ դեպքում հնարավոր լինէր
Մուղանջուղը ճեղքած թուրքերին ետ շարտել: Երեկոյան մթին Լա-
զարբեկովն իր շտաբի պետի հետ միասին գնում է Դիման՝ դրու-
թյունը պարզելու եւ հակառակորդի մասին տեղեկություններ իմանալու:

Կողմի այս որոշակի հատվածի վերաբերյալ Լազարբեկյանը խոստովանել է հակառակորդին «կանգնեցնելու իմ հույսը հայկական ջոկատն էր, որը լիովին արդարացրեց իմ վստահությունը»: Եվ շարունակել է նկարագրել. «Ջոկատի մարտիկները մի քանի անգամ հակառակորդի հետ ձեռնամարտի մեջ են մտնում: Սմբատի եռանդի եւ քաջության շնորհիվ հակառակորդի բոլոր սրընթաց գրոհները ապարդյուն են անցնում, որից հետո հակառակորդը դադարեցնում է հարձակումը եւ ետ քաշվում»:

Կռիվները դեռ շարունակվելու էին: Լույս 17-ի գիշերը Լազարբեկյանը Չեռնոզուբովից լրացուցիչ ուժեր է խնդրել: Պատասխանը ընտրությունը նրա կամքին է թողել, որ զորամասը կամենում է կարող է վերցնել իր տրամադրության տակ: Եվ գիշերային խավարի այդ ընթացքում էլ տեղի է ունենում սպասվելիք մարտի համար նախատեսված զորամասերի համակենտրոնացումը: Ամբողջ գիշերը, հիշել է հետագայում Լազարբեկյանը, դիրքերն ամրապնդվել են, եւ անձամբ ինքը շրջագայել է դիրքերում, գլխավորել զորամասերի աշխատանքն ու ոգետրել զինվորներին: Արշալույսին արդեն պատրաստ էին մարդահասակ փորված թե՛ առաջագիծ, թե՛ ճակատը ընդարձակվելու դեպքում օգտագործելու համար նաեւ պահեստային խրամատները: Ռուսական բանակի համար դիրք է ընտրվում Մուղանջուղ գյուղի հարավային կողմում, որտեղ առաջին գծի վրա տեղավորվում են 6-րդ զնդի երկու գումարտակներ եւ Անդրանիկի ջոկատի մի մասը: Իսկ մոտակա բարձունքի վրա դիրք է գրավում 8-րդ զնդի մի գումարտակը: Համապատասխանորեն դիրքավորվում է հրետանին, իսկ 17-ի առավոտյան գայիս են նաեւ լրացուցիչ ուժերը, նրանց մեջ Անդրանիկի ջոկատի մյուս երեք վաշտերը: Պետք էր, որ նրանք եւս խրամատներ փորեին: Եվ այդ վճռական ժամին պարզվել է, որ հայկական վաշտերը խրամատ փորելու համար հարմար փոքրիկ բահեր չունեին: Ասում է Լազարբեկյանը եւ ավելացնում, որ կամավորներն ստիպված են եղել սվիններով փորել:

Ապրիլի լույս 16-ի գիշերն են մարտերի վայր հասել թուրքական զորամասերը: Ընդհանուր հրամանատարը Խալիլ բեյն էր: Նրա գլխավորած զորամասերի կազմում էին Կոստանդնուպոլսից եկած գերմանական ռազմագետների վարժեցրած երրորդ հետեւակային դիվիզիան, որը ուժեղացվել էր Բաղդադի ռազմական տեսչության ժանդարմական զորամասերով, ինչպես նաեւ Ջեղեթ փաշայի գլխավորած մի քանի թուրքական գումարտակներ, թուրք, ջուրդ ու պարսիկ կամավորներից բաղկացած խառնամբոխ զինված զանգվածը, որոնք բոլորը միատեղ կազմում էին տասնվեց հետեւակային գումարտակ, երկու կանոնավոր հեծյալ եսկադրոն, 8 հրանոթ, 12 զնդացիք եւ

մոտ 5-6 հազար ջուրդ: Դրանք համատեղ, հանկարծակի ու սրընթաց գրոհում են Դիլմանից հարավ գետեղված ռուսական զորամասերի վրա¹:

Ապրիլի 16-ի ցերեկը, ժամը 2-ին, ռուսական զորքերը, հակառակորդի, ինչպես Լազարբեկյան է վկայում, լավ վարժված զորքերի ճնշման տակ հարկադրված էին դուրս գալ Դիլմանից եւ մոտակայքի իրենց զբաղեցրած գյուղերից: Զաղաքի տներից հրանոթային կրակ են բացում թուրք բնակիչները: Հենց այստեղ էլ բացվում է հայոց գաղթի մի նոր տեսարան, որը Լազարբեկյանի պատկերավոր նկարագրությամբ այսպիսին է.

«Մեր զորամասերի նահանջը դժվարանում էր նաեւ նրանով, որ... նրանց հովանավորության ներքո սկսեցին ջաղաքից եւ մերձակա գյուղերից մեկնել նաեւ հազարավոր հայեր եւ ուրիշ քրիստոնյաներ՝ իրենց ունեցվածքով, անասուններով ու ֆուրգոններով: Բոլոր այդ զաղթականները արագ կարգով ձգտում էին դեպի Խոյ տանող միակ ճանապարհը, ըստ առ ըստ ուժեղացնելով քառսը, անկարգությունը եւ կուտակումը, դրանով իսկ մարտերով նահանջող զորքի համար ստեղծելով նրանց վրա տհաճ տպավորություն թողնող տեսարան, երբեմն էլ նրանց նույնիսկ ներգրավելով այդ անհանգիստ նահանջի մեջ»²:

Լազարբեկյանը ճակատամարտի իրեն դիտակետ է ընտրել Մուղանջուղից դեպի հյուսիս գտնվող ջրաղացը: Այնտեղից ամբողջ մարտադաշտը պարզորեն կարելի էր տեսնել: Ամսի 17-ը, Լազարբեկյանի բնութագրմամբ, ուժեր ստուգելու, միմյանց շոշափելու օր էր: Իսկ իր մասին նա այսպես է ասել. «Ես հաստատապես որոշել էի հաղթել կամ հենց այդտեղ էլ ընկնել մահացած: Եվ բոլոր ուժերովս ձգտում էի նույնը ներշնչել իմ զորքերին»:

Ապա Լազարբեկյանը վերլուծում է: Խալիլ բեյը ձեռքից բաց է թողել հաղթանակի հավանականությունը: Եթե նա շարունակեր ամսի 16-ի հանկարծակի հարձակումը, ապա լիակատար հաղթանակի կհասներ, քանի որ ռուսական ուժերը դեռ մարտական կարգի չէին բերված: Իսկ հիմա արդեն ուշ էր:

Վճռական պահն է մոտենում, ապրիլի 17-ի լույս 18-ի գիշերը: «Ես, իհարկե, գիտեմալով, թե ինչ պատասխանատվություն եմ կրում, չեմ կարողանում այքս փակել, թեեւ նախորդ օրն էլ չէի քնել»³:

Ամսի 18-ի առավոտյան ժամը 4-ին մոտ, վերհիշել է Լազարբեկյանը եւ շարունակել նկարագրությունը, լսվում են հակառակորդի առաջին կրակոցները: Սկսվում է թուրքերի հարձակումը: Նրանք կանոնավոր քայլերով ու շարքերով առաջ են շարժվում: Ռուսները

1 Լ. ս., էջ 23-25: 2 Լ. ս., էջ 26: 3 Լ. ս., էջ 28:

ձեռնպահ են, ուշ են կրակ բացում, այդպես էր հրամանը: Հակառակորդը փորձում է աջ թելից թիկունք մտնել: Դրան դեմ հանդիման երկարաձգվում են խրամատները, ուր գալիս են նոր ուժեր:

Դիմանի այս ճակատամարտի մասին քիչ չեն գրվածքները, եւ բազմազան, եւ իրարամերժ են կարծիքները: Նույնն է նաեւ Անդրանիկի եւ նրա ջոկատի մասին: Բայց այդ բոլորի մեջ հազիվ թե ավելի հավաստին լինի, քան Նազարբեկյանի կարծիքը՝ գրված հեղինակի, ի միջի այլոց, միանգամայն գրագետ ու վարժ ուսերենով: Համառոտակին հետեւյալն է.

Թշնամին անհաջողության մատնվելով ուսական ուժերի աջ թեւով, որոշում է անցնել ձախ թելը: Նազարբեկովը դրան հակառակ միջոցներ է ձեռք առել, ուժեր է տրամադրել եւ խնդիր առաջադրել, որը «այնքան հաջող է կատարվում, որ հակառակորդը սկսում է կեսօրից հետո ժամը 5-ին մոտ մաքրել իր աջ թելի առաջապահ կետերը», այսինքն՝ նահանջել: Հակառակորդի նահանջն իմանալուն պես Անդրանիկը Նազարբեկովին խնդրել է, որ իրեն թույլ տրվի հարձակման անցնել: Այստեղ հիշենք Նազարբեկովի վերը ասված խոսքը եւ հիշեցնենք նրան, սա էլ, ահա, հենց Անդրանիկն է, մեծարգո զորավար, անհանգիստ առաջ մղվող, մյուսներին շրջանցող, անմիջական Անդրանիկը, որն զգայուն է, օգնության հասնող, հանդուգն, հարվածն իր վրա վերցնող: Հնարավոր է, որ Նազարբեկովն ասել է կամ կուզենար կյանք խնայելու, զգուշավոր լինելու համար ասել, որ պետք չէ շտապել, մի փոքր էլ հաշվենկատ պետք է լինել եւ վտանգի չպետք է գնալ: Իսկ եթե դրան էլ ի պատասխան Անդրանիկը դառնար ու բարձրաձայն ասեր, թե՛ «մի վախեցեք, ինձ գնդակ չի դիպչի», ավելացներ նաեւ, թե՛ զինվորներն էլ ուրիշինը չեն, ի՛ր զինվորներն են, թե՛ իրեն, թե՛ նրանց գնդակը չի խոցելու, քանի դեռ իր հայրենիքն ազատություն, ժողովուրդն անկախություն չի ձեռք բերել: Նազարբեկովը, բարեկիրթ ու ծանրախոհ, եթե քահ-քահ չէր ծիծաղելու, քմծիծաղ չէր տալու, բայց անպայման ասելու էր, որ Անդրանիկը սևտոհապաշտ է ու մոլեռանդ, այլ ոչ թե անլուրջ ու խելագար կամ ինքնահավան ու մեծամիտ: Դիտի ման գար ու գտներ այն բառը, որով կոչում են այն զորավարին ու զինվորին, որը հավատում է, թե հրացանային կրակի տարափի տակ իրենից գնդակը խուսափում է:

Հեռացանք: Իսկ ի՞նչ եղավ Անդրանիկի պահանջը: Նազարբեկովը չի մոռացել, գրի է առել, «Անդրանիկն իր տաքարյունության համաձայն չսպասելով իմ կարգադրությանը, ինքնուրույնորեն հարձակման է անցնում առջեւում գտնվող գյուղը գրավելու համար»: Եվ ավելացրել է, գուցե եւ ցավով, որ Անդրանիկը գյուղը գրավել է, «բայց

ունեցել է մեծ կորուստներ»¹: Չգիտենք մանրամասն ինչպես է եղել, բայց եթե Նազարբեկովը Անդրանիկին դիտողություն աներ, նա էլ պետք է որ համաձայներ, ցավ հայտնելով միայն, որ ուրիշ կերպ չի կարողացել: Վերհիշենք, ինքնապաշտպանական, ֆիդայական կոիվների ասպարեզ գալու օրից Անդրանիկը կոիվների իր օրենքն ուներ, որ կիրառում էր ինքը եւ պահանջում ուրիշներից, քիչ ուժերով շատին հաղթել, ըստ հնարավորի՛ն քիչ կորուստներով, ձգտելով մինչեւ իսկ առանց կորստի կոիվը շահել: Փաստորեն Նազարբեկովի «բայց ունեցել է մեծ կորուստներ» բառերը այդ են նշանակում, լինելով ըստ երեւույթին մեղմ հանդիմանություն: Ահա թե ինչու՛:

Ամսի 18-ի կովով Դիմանի ճակատամարտը ավարտվել է, թուրքական զորքերի հրամանատար Խալիլ բեյի խնդիրը անկատար է մնացել: Նազարբեկովը բացատրում է, թե որն էր այդ խնդիրը, «Հետախուզությունից լավ իմանալով, որ մեզ մոտ [Հարավային] Ադրբեջանում առանձնապես շատ ուժեր չեն կենտրոնացված, նա իր համահավաք կորպուսով պետք է [ձգտեր] ջախջախել մեր զորաբանակը եւ իր շարքերը լրացնելով Պարսկաստանի ջրէրով ու կամավորներով, շարժվել դեպի Ջուլֆա, այնտեղ ոտքի հանել արդեն պատրաստ մահմեդական բնակչությանը, իսկ ապա Ղարաբաղի եւ Ջանգեզուրի վրայով թափանցել Ելիզավետպոլի եւ Բաքվի նահանգները, ավերել երկաթուղին եւ, եթե հաջողվեր, ընթանալ դեպի Ղաղզստան»²: Այդ բոլորը չէին կատարված: Անդրանիկն ու իր ջոկատի կամավորներից ամեն մեկը դրանում իր համեստ ավանդն ուներ: Ահա թե ինչու *մեղմ* հանդիմանություն:

Նազարբեկովի անուկը գրվում էր այդ օրերին հայ մամուլի եջերում: Գրվում էր որպես փառաբանված հայ զորավարի եւ հայ կամավորների ջոկատների հովանավորի: Եվ ահա Դիմանի կովից հետո Նազարբեկովի զորակայան, որի կենտրոնն այդ ժամանակ Մուղանջուղում էր, այցի են գալիս հայ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները՝ «Վշակ» թերթի խմբագիր Համբարձում Առաքելյանի ղեկավարությամբ: Գալիս են ուղիղ Նազարբեկովի կացարանը եւ այդտեղ էլ հանձնում կամավորների համար հայության ուղարկած նվերները: Ուրախալի առիթ էր: Նազարբեկովը հարմար է գտել, որ կամավորների նվերները նրանց բաժանի անձամբ Առաքելյանը: Բայց նա այդ առաջարկն անուշադրության է մատնել, բավարարվելով նվերները զորախմբի հրամանատարի մոտ թողնելով: Շատ է ցավել հրամանատարը, որ խմբագիրն իր ձեռքով նվերները չի բաժանել: Նազարբեկովը հետո իմացել է եւ առավել եւս վշտացել, որ Առաքելյանը չի կամեցել այդ անել: Վատ են եղել

1 Լ. Կ., էջ 29-30: 2 Լ. Կ., էջ 33:

Անդրանիկի եւ Առաքելյանի հարաբերությունները¹: Մնում է զարմանալ կամ Առաքելյանն ինքը չպետք է վճռեր զալ այդ դեպքում ռազմի դաշտ, կամ նրան չպետք է ուղարկեին: Զաղաքականության մեջ նրբանկատության մասին խմբագիրը հավանաբար իր թերթի էջերում հոդվածներ գետեղել է. բայց այս պահին գործնական քայլի մի նրբերանգը շրջանցել է:

Մայիսի 2-ին Անդրանիկի ջոկատը Լազարբեկովին ենթակա զորամասերի հետ գնացել է Դեիր, որի մոտակայքում եղել է սուրբ Բարդուղեմիոսի վանքը: Լազարբեկովը կամավորների հետ այցելել է վանք, որտեղ նրան բացատրություններ է տվել համալսարանական կրթությունն ունեցող կամավոր զինվոր Աշխարհբեկ Զալանթարյանը (Զալանթար):

Ենթադրելով, որ Չեռնոզուբովը ուր որ է կհրամայի հետեւել եւ ջախջախել Խալիլ բեյին², Լազարբեկովը որոշում է նախապես ծանոթանալ հակառակորդին մոտենալու եւ մարտեր վարելու տեղանքին, ինչպես նաեւ նահանջի՝ ըստ հնարավորին մատչելի դիրքերին: Սակայն այդ նպատակով առաջին անգամ ուղարկված հետախուզությունը լրիվ պատկերը չի տվել: Լույն խնդիրը Լազարբեկովը հանձնարարում է Անդրանիկին, «որպես այդ տեղանքին ուղիղներից ավելի լավ ծանոթի»³: Հաջորդ օրը, մայիսի 14-ին, Անդրանիկը բերում է օգտակար տվյալներ, գտնելով, որ խնդրի կատարման համար բավական ուժեր կպահանջվեն: Ի վերջո, թշնամու դիրքերը եւ ուժերը մանրամասն պարզելուց հետո, Լազարբեկովն առանձնացնում է որոշակի զորամասեր, որոնք սկսում են հարձակումը. «Հայկական ջոկատը, — գրում է նա, — մյուս բոլորից շուտ մոտենալով հակառակորդի արհերգարդին, սկսում է հրաձգությունը: Դրանից հետո մոտենում է նաեւ ավանգարդը եւ սկսվում է թեժ կռիվը, որը շարունակվում է մինչեւ մութն ընկնելը»: Երկու կողմերն էլ կորուստներ են ունեցել, բայց ամենից շատ կորուստները եղել են հայկական ջոկատինը, նշում է Լազարբեկովը⁴: Այս կռիվը ըստ «...օրագրության» եղել է մայիսի 15-ի օրվա երկրորդ կեսին հայկական Արագ գյուղից երկու կիլոմետրի վրա գտնվող Զեիրի գյուղի մոտակայքի Էմիրզուլե բարձունքի վրա⁵: Հաջորդ օրը նույնպես, զորախումբը գնդապետ Օբրազցովի հրամանատարությամբ, առաջ գնալով, մարտի մեջ է մտնում հակառակորդի հետ: Այսօր նա կարծես ավելի համառ դիմադրություն է ցույց տվել, որին նպաստել են նրա թնդանոթները: Օրագրողը այսպես է նկարագրում. «Թշնամին սկսեց լրջորեն դիմադր-

* Խալիլն էլ, Չեռնոբն էլ մեկ բեյ են, մեկ՝ փաշա փաստաթղթերում եւ գրականության մեջ:

1 Լ. տ., էջ 35: 2 «ՎՊՊԱ», § 45, ց. 1, գ. 4, էջ 7, 8: 3 Լ. տ., էջ 8-11:
4 «...օրագրություն», էջ 22:

րել մեզ: Ժամը 2-ին թշնամու թնդանոթները լավ ծեծեցին մեզ: Այդ ժամանակ մեզ հետ կողջ կողջի կռվում էր Սուլեյմանի գնդի 6-րդ հարյուրյակը՝ պորուչիկ Պերեկյազովի ղեկավարությամբ: Ժամը 4-ին մեր թնդանոթները հասան, եւ մենք պատասխանեցինք: Այդ օրը 5 վիրավոր եւ 2 սպանված ունեցանք»: Լազարբեկովի նկարագրությունը. «Մեր զորամասերը գնացին եռանդուն գրոհի... Մարտը տեւեց մի քանի ժամ եւ դադարեց միայն մութն ընկնելու հետ»: Շարունակելով, նա գրում է. «Ավերիկյան թղթակիցը ներկա էր այդ մարտին եւ վերջում ինձ ասաց, որ բոլորից լավ կովեցին պլաստունցիները (ոռուական զորամաս է՝ Հ. Կ.), հետո հայերը, իսկ բոլորից թույլ՝ հրաձիգները: Ես նրան բացատրեցի դրա պատճառը: Պլաստունցիները առաջին անգամ էին կռվում, հայերը՝ զաղափարապես, իսկ հրաձիգներին արդեն ձանձրացրել էին այդ կռիվները»¹: Այստեղ Լազարբեկովը վերջապես հայտնագործեց, հայերի կռիվը զաղափարական է եղել: Եղել է ազգին օգնության հասնելու, նրա գոյությունը ապահովելու հարցը, որի համար նրա զավակները պատրաստ էին կռվելու կյանքի գնով, միայն թե հարազատների գանգաձեղ օր առաջ օգնություն ստանար ու փրկվեր: Այստեղ արդեն Լազարբեկովը դրսեւորեց ոչ այնքան ռազմագետի, որքան քաղաքագետի իր աշխարհայացքը, որում նույնպես նրա մակարդակը գնահատելիք էր:

Հաջորդ օրը, մայիսի 18-ին, կամավորները դարձյալ հետախույզ են: Եվ այս անգամ այժի են ընկել հետախուզությանը այնպես դեմ Սեպուհի վաշտի զինվորները: Յերեկը Սուլիկնիս գյուղի մոտ ընդհարում է եղել հակառակորդի հետ: Լազարբեկովին այստեղ ընդառաջ են եկել զաղթող հայերը եւ տեղեկություններ հայտնել Խալիլ բեյի ընթացքի մասին²:

Ամսի 19-ին ջոկատը ոռուական զորախմբի կազմում հասել է Միրվանա գյուղը: Այստեղ անմիջապես հակառակորդի հետ ընդհարում է սկսվել: Լազարբեկովը գրում է. «Մարտը մղում էր բացառապես հայկական ջոկատը: Չոկատը ընդհարվեց հակառակորդի մեծ ուժերի հետ, բայց սիբիրյան կազակների օգնության շնորհիվ մարտն ավարտվեց հաջողությամբ, իսկ թշնամին մութն ընկնելուն պես այնպես արագորեն նահանջեց, որ Տրուկինը... նրա հետքը կորցրեց»: Այստեղ նորից եղել է եռանդուն եւ անհանգիստ Անդրանիկը, որի մասին Տրուկինի կարծիքի հիման վրա Լազարբեկովը հարկ է համարում գրել. «Պետք է ըստ արժանվույն գնահատել Անդրանիկին, որը միայնակ (պարզ է ջոկատով՝ Հ. Կ.) եռանդով հետեւում էր հակառակորդին, ճիշտ կերպով կռահելով նրա նահանջի ճամ-

1 «ՎՊՊԱ», § 45, ց. 1, գ. 4, էջ 12-14: 2 «ՎՊՊԱ», § 45, ց. 1, գ. 4, թ. 19, նաեւ՝ «...օրագրություն», էջ 23:

փան, միշտ առաջինն էր հասնում նրա ծայրապահին եւ մարտի մեջ մտնում: Ընդհատեց: Որովհետեւ Լազարբեկովն ասելու է այն, ինչը լիովին բնորոշ է մեզ արդէն ծանոթ եւ իսկական Անդրանիկին. «Եթե բոլորն այդպես ոգեւորված եւ եռանդուն հետամուտ լինեին, արդյունքները կարող էին անհամեմատ լավ լինել»¹:

Այ ջեզ հրաշք՝ եթե բոլորն այդպես լինեին: Բայց չէ՞ որ մինչեւ հիմա Անդրանիկը հենց այդպիսին լինելու համար էր հանդիմանության արժանանում: Եւ անակում է՝ Լազարբեկովն անկեղծ է:

Դեպքերի ընթացքի հետ Լազարբեկովի պատկերացման մեջ ձեւավորվում է ամբողջական Անդրանիկը, իսկ մեր պատկերացման մեջ՝ նույն ինքը անկեղծ ու խոհեմ Լազարբեկով— Լազարբեկյանցը:

Բայց չընդհատեց Լազարբեկովին: Տրուխինի վրանի տակ նա հանդիպել է նրա շտաբի պետ Պոպովին, որի մասին վերելում ասվեց: Զրույցի ընթացքում Լազարբեկովը նկատել է, որ գնե՞րալ Տրուխինը մտադիր է շարունակել Խալիլ բեյին հետեւելը դեպի Զուլամերկ, ուր որ նա նահանջում էր ըստ Տրուխինի տեղեկությունների: Այս կապակցությամբ, ինչպես երեւում է, Լազարբեկովի եւ նրա միջեւ խոսք է բացվել Անդրանիկի կարծիքի մասին: Լազարբեկովը գրում է, որ վերջին մարտից առաջ գաղթականների հետ ունեցած զրույցներից Անդրանիկը լիովին պարզել է, որ Խալիլ բեյը գնում է դեպի Մոսուլ: Կարծես Տրուխինին որպես հանդիմանություն, Լազարբեկովն ասում է. «Անգամ առողջ բանականությունն էլ նույնը պետք է ցույց տար: Ոչ մի նպատակ չունի, որ Խալիլ բեյը գնա Զուլամերկ: Եթե նա դա անի, ապա բոլորովին ետ կքաշվի թուրքական զործողությունների գծից»: Եվ եզրակացությունը. «Ես գնե՞րալ Տրուխինին ասացի, որ լիովին պետք է վստահել Անդրանիկի հետախուզությանը»: Եվ Լազարբեկովն ուրախ է, ինչպես գրում է ինքը, որ շտաբի պետի հետ այս ձեւով համոզել են Տրուխինին²:

Այնուամենայնիվ, Տրուխինի ինքնասիրությունը թույլ չի տվել վարվելու ըստ Անդրանիկի, եւ նա հաջորդ օրը, ամսի 20—ին, զորքը շարժել է դեպի Զուլամերկ: Անդրանիկի ջոկատը մնացել է Միրվանայում: Մնում է պատկերացնել Անդրանիկին, եթե ինչ—որ չափով ճանաչեցինք նրան որպես մարդու եւ բնավորության, թե նա ինչ աստիճան պետք է զայրացած լիներ իր պետի նման վերաբերմունքից, որը բառիս բուն իմաստով կամակորությունն էր, ինչում սովորաբար Անդրանիկին էին պիտակավորում: Լազարբեկովը գրում է. «Բոլորից շատ զայրանում է Անդրանիկը, որ գնե՞րալ Տրուխինը

1 << ՊԵՊՍ, ք. 45, ց. 1, գ. 4, էջ 25—26: 2 Լ. տ., էջ 27:

չհավատաց Խալիլ բեյի իսկապես Մոսուլ, այլ ոչ թե Զուլամերկի ուղղությամբ գնալուն»¹:

Սխալ ճանապարհով գնալու պատճառով, բնական է, Խալիլ բեյի հետքը Տրուխինը լիովին կորցնում է: Լա ոչ միայն ցանկությունն չի ունենում կատարելու Անդրանիկի՝ իրեն շտկող առաջարկը, այլեւ քաջությունն չի ունենում չկատարելու այդ ժամանակ կորպուսի հրամանատար գնե՞րալ Օգանովսկու Զուլամերկ գնալու հրամանը: Տրվել է ճիշտ խորհուրդը, բերել են դրա ապացույցները, բայց Տրուխինը ետ չի կանգնել իր սխալ կարծիքից, որովհետեւ նրա համար վերահասի կամքն ու վերաբերմունքը ամեն ինչից վեր էր: Եվ Տրուխինը զորքը քարշ տալով տարել է սարերով ու անանցանելի ձորերով, հաշվի չառնելով ոչ զինա— եւ ոչ էլ սննդ—մթերքների կորուստները, ոչ մարդկանց ավելորդ ուժերի ու ջանքերի ծախսը, ոչ էլ այդ բոլորին հետեւող զոհերը: Վերջապես ամսի 25—ին վերին հրամանատարությունից ստացվում է ետդարձի հրամանը՝ Լազարբեկովին իր ջոկատով դեպի Բաշկալե, Տրուխինին՝ Վան: Լազարբեկովին պարտավորեցվում է հայկական ջոկատը ուղարկել դեպի Վան: Լազարբեկովը այստեղ հրաժեշտ է տալիս Անդրանիկի ջոկատին եւ իր զորախմբի հետ գնում այլ ճանապարհով: Հայկական ջոկատի հետ գնում է նաեւ ամերիկյան թղթակիցը, որը իր ժամանակը անց էր կացնում ջոկատում, եւ դա հատկապես այն պատճառով, հիշում է Լազարբեկովը, որ նրա կազմում եղել են կամավորներ նաեւ Ամերիկայից²:

Լազարբեկովն իր զորամասով Վան է հասել հունիսի 14—ին: Զորքի գիշերատեղ է ընտրել քաղաքից մի քանի կիլոմետր հեռու գտնվող Ղարաբաշ գյուղի մոտ: Այցելել է Վանի կայազորի պետ գնե՞րալ—մայոր Լիկոլաեւին, փողոցում պատահամբ հանդիպել Անդրանիկի ջոկատի բժիշկ Տեր—Թովմասյանին եւ նրա ուղեկցությամբ շրջել քաղաքում: Լահանգապետ Արամին չի տեսել, հանդիպել է նրա տեղակալ Պարույր Լեւոնյանին:

Վանեցիներն իմացել են Լազարբեկովի այցի մասին: Երբ նա վերադառնում է իր կացարանը, թեւ քաղաքից հեռու, նրան այցի են գալիս Վանի թեմի եպիսկոպոսներից մեկը, քաղաքի ղեկավարության եւ բնակչության բազմաթիվ ներկայացուցիչներ, այդ թվում՝ Պարույր Լեւոնյանը եւ ուրիշներ: Նրանց բոլորի դեմքերին Լազարբեկովը հարցական է կարդում: Բոլորն էլ նույնն էին ցանկանում իմանալ՝ հաստատո՞ւն է ոուս զինվորի մուտքը Վան, մնայո՞ւն է նրա այցը: Պատասխանելուց առաջ, Լազարբեկովը, ոուս բանակի վաստակաշատ զորավարը, հիշում է ոուսաց զրավումների փորձը. «Զգտել

1 Լ. տ., էջ 29: 2 Լ. տ., էջ 30—31:

որջան կարելի է շատ հողեր գրավել, հաշվի չառնելով, թե իր առկա ուժերով կարողանալու է դրանք պահել թե ոչ»։ Այդ պատճառով էլ, ինչպես խոստովանում է, աշխատել է ոչ մի որոշակի խոսք չասել։ Պարզ երևում է, որ Լազարբեկովը տարակուսել է, այս գրավումն էլ հաստատ չի համարել։ Ուստի վանեցիներին խորհուրդ է տվել հույսն իրենց վրա դնել, լավ պատրաստվել¹։

Իսկ հիմա պատմենք Լազարբեկովի իսկ պատմածը, ընթերցողին թողնելով եզրակացությունը՝ դրանով նա հաստատե՞ց Անդրանիկին, թե՛ մերժեց։ Վանից դեպի արևմուտք շարժվելու ընթացքում Անդրանիկի ջոկատը հայկական մյուս ջոկատների հետ միասին մտցվում է գետերալ Տրուխինի հրամանատարությանը հանձնված զորախմբի մեջ, որն այդ ժամանակ գտնվում էր լճափի Ջեյվա գյուղի եւ Սուրբ Հակոբ վանքի միջև։ Եվ այդտեղ էլ կոիվներ են սկսվում հակառակորդի թվապես գերակշիռ ուժերի հետ։ Հենց սկզբից կամավորների 1-ին եւ 4-րդ ջոկատները մեծ կորուստներ են կրում։ Թուրքերը չորս հրանոթ ունեին, որոնք դիպուկ խփում էին։ Գետերալ Տրուխինը ուրիշ ելք ու հույս չգտնելով, որոշում է իր զորքը ետ քաշել։ Թվում է, թե դրա հետ պետք է որ ամենից առաջ համաձայնեին 1-ին ու 4-րդ ջոկատները, որոնք բոլորից շատ կորուստներն էին ունեցել։ Բայց ստացվում է հակառակը։ Անդրանիկը լքողներն հակառակում է նահանջին, պահանջելով մարտը շարունակել։ Ընթերցողն հավանաբար պատկերացնում է, թե կամակո՞ր Անդրանիկն ինչպես է պնդում, իսկ գետերալը ինչպես է զայրանում։ Ճերեկը հակառակորդի առաջին գծի խրամատները գրաված մի քանի մարտիկների գիշերային նախաձեռնության շնորհիվ նրանց դասակները լուսադեմին առաջ են մղվում՝ գրավելով նաեւ խրամատների երկրորդ շարքը։ «Մյուս ջոկատները, — հիշում է Լազարբեկովը, — լսելով բարձրաձայն «ուռա՛ն»։ հարձակման են անցնում, վերջ ի վերջո գրավելով դիրքը։ Թուրքերը հապճեպորեն նահանջում են...»։

Ի՞նչ աներ Անդրանիկը, ո՞րն է նրա մեղքը։ Թեւեւ ով էլ լիներ, հազիվ թե հաճույք ստանար այդ աստիճան կամակոր ենթակայից։ Իսկ Տրուխինը, գետերալը, առավել եւս։ Նաեւ այդ կովից հետո է ջոկատները տարել դեպի Բիթլիս։

Այս պատմությունն անելուց հետո Լազարբեկովը անցում է Տրուխինի բնութագրմանը. «Բավական անդեմ անձնավորություն է, բարեհոգի։ Շատ շարժունակ չէ, ծեր է, ռազմական իրադրության մեջ, ըստ երեւույթին, թույլ է կողմնորոշվում։ Անձնապես խիզախ է։ Նրա գրեթե բոլոր գործերը կատարում էր շտաբի պետը։ Ենթակաների հետ համերաշխ էր»²։

1 Լ. տ., գ 3, էջ 49, 52-54։ 2 Լ. տ., գ 3, էջ 56-57։

Լազարբեկովն էլ իր նախասիրություններն ուներ։ Ռա անմիջապես պարզ կդառնա հուշատետրում նրա գրառած բնութագրերից։

«**Քեռի**։ Հայկական ջոկատների բոլոր հրամանատարներից ամենից ավելի համակրելին։ Ռազմական գործը իրականում շատ լավ հասկանում էր եւ մարտի ժամանակ լիովին իր տեղում էր որպես հրամանատար։ Նկատվում էր մանրուքներին միջամտելու եւ ... հրամայելու ձգտումը։ Ռուս զինվորների մեջ հարգանք էր վայելում, թեւեւ ռուսերեն չէր խոսում։ Մարտի մեջ շատ խիզախ էր եւ հանգիստ։ Պետերից իրեն հեռու էր պահում։

«**Համազասպ**։ Խելացի էր, բանիմաց, մի փոքր աճապարող։ Սիրում էր պետերի աչքին երեւալ։ Ռազմական գործը հասկանում էր, բայց խուսափում էր իրեն ռիսկի ենթարկելուց։ Սիրալիր էր, մարդամոտ։

«**Գրո**։ Շատ խելացի էր, բանիմաց, տաքարյուն։ Մարտը կարողանում էր լավ վարել։ Խիզախ էր, սիրում էր զբաղվել քաղաքականությամբ եւ այդ թեմաներով զրուցել։ Երբեմն դրսևորում էր իր ռուսահարազատությունը։ Բնավորությամբ դաժան էր։ Ռուս հրամանատարությունն ու սպայությունը չէր սիրում նրան։

«**Անդրանիկ**։ Իր ինքնահավանությամբ բացարձակապես բոլորի վրա վատ տպավորություն էր թողնում։ Ջորադասավորությունը հաշվի չէր առնում, հրամանները չէր կատարում»։ Գրում է այս Լազարբեկովը եւ օրինակ է բերում։ Ջեյվայի մարտից գրեթե անմիջապես առաջ, երբ ամեն ինչ նախապատրաստված էր, առաջարկել է գրոի իր պլանը, որն, ըստ Լազարբեկովի, ռազմական տեսակետից անգրագետ էր կազմված եւ տարբերվում էր անսովոր բարդությամբ։ Լազարբեկովը գտնում է, որ Անդրանիկի պլանում ամեն ինչ կառուցված է եղել «ոչ թե իրադրությունը արդյունավետ օգտագործելու վրա, այլ բացառապես մանր խորամանկությունների, որոնք մեծ մասամբ միամիտ էին, ինչպես [օրինակ] հակառակորդին թյուրիմացության մեջ օգցելու մտադրությունը»։ Լազարբեկովի միտքն այն է, որ Անդրանիկը ընդունակ չէր մեծ զորամաս դեկավարելու, օրինակ բերելով այն, որ երբ Տրուխինն Անդրանիկին ասել է, թե գրոի պլանը փոխելն այլեւս ուշ է, նա «նեղացել եւ խոռվել է»³։

Հարկ չկա երկար բացատրության։ Խոռվյալն լինելն էլ, կամակորն էլ, իր պահանջը առաջարկելն էլ իրենց տեղում պարզ դարձան։ Ամբողջ բանը, այսպես ասած, խոնարհ լինել—չլինելու մեջ է, դե, որ ենթակա է, ծառայակատար լինել կամ չլինելու մեջ։ Իսկ որ ռուս հրամանատարները զորքերը ետուառաջ էին անում, հաշվի չառնելով, թե այդ ամեն մի տեղաշարժից որքան մարդ կկոտորվի, այդ ոչինչ,

1 Լ. տ., գ 3, էջ 57-58։

դա նրանց կարելի է. քանի որ դրա համար մե՛ծ արվեստ է պահանջվում:

Վերելից եւ այն էլ ուրիշի աչքով, միշտ մի բան պակաս է: Լազարբեկովը վկայում է, թէ ինչպէս դեռ մարտ ամսին, Դիմանի ճակատամարտից առաջ, ռուսական զորամասերի «սպաները եւ հատկապէս շտաբային ծառայողները վատթարացրել են իրենց վերաբերմունքը հայկական ջոկատի եւ առանձնապէս Անդրանիկի նկատմամբ»: Լազարբեկովը ձգտել է պարզել դրա պատճառը. բայց իրեն դա չի հաջողվել եւ նա խոստովանում է, որ ինքն այդ բոլորը խոր ցավով է դիտել: Սա բնական է եւ հասկանալի: Անբնական է եւ անհասկանալի այն, որ Լազարբեկովը, ուրիշ էլք չգտնելով, պատճառն ուզում է տեսնել Անդրանիկի բնավորության եւ վերաբերմունքի մեջ: Փոխանակ պատճառի մեջ խորամուխ լինելու, նա իր ձրոջ գործընկերների նման դարձյալ նույն բանն է ասում, թէ Անդրանիկը «զոռոզ է. իրեն մյուսներից վեր է համարում եւ հաշվի չի նստում ոչ վերին հրամանատարության եւ ոչ էլ՝ սպայության հետ»¹: Ինչպէս ասում են, նորից նույն երգն է: Լազարբեկովը լավ կաներ, եթէ մի անգամ պարզ ու անկեղծ, այլ ոչ թէ տողատակերում, ասեր, որ Անդրանիկը խոռվածի մեջ էր, զայրացած այն ամենից, ինչ արվում էր առհասարակ բանակում ու նրա հրամանատարության կազմում, եւ այլեւս ինքն էլ, ըստ երեւոյթին, ստիպված չէր լինի զանազան առիթներով, պատեհ ու անպատեհ, ասելու եւ կրկնելու նույնը, ամեն ինչ հանգեցնելով բնավորության գծերի, որը պարզապէս կեղեւն է, այլ ոչ թէ միջուկը: Ստացվում է, որ ամեն ինչի մեղքը նրանում է, որ Անդրանիկը ոչ խոնարհ է, ոչ էլ՝ խոհեմ: Թէ չէ ցարը ռուսաց զորքին հրաման էր տալու անկանգ գնալ եւ ազատել Վանն ու Հայոց որջ Արեւմուտքը եւ այլեւ՝ ոչ մի քայլ ետ:

Վերը պատմածը հեռու չէ այն հարցից, թէ ինչո՞ւ ավարտվեց Չեյվայի կռիվը:

Կրկնենք Տրուխիկի մասին վերելում բերված բնութագրի բառերը, «անդեմ անձնավորություն», «թույլ է կողմնորոշվում», «ծանրաշարժ է», «ծեր», թեւ ուրիշ մի դեպքի համար էլ հարմար կլինեն մյուս բառերը: Տվյալ դեպքում ստացվում է, որ նա պարզապէս համառել է, պլանը չի փոխել, ալարել է ինքն անել, չի թողել նաեւ Անդրանիկին եւ շտապ որոշել է զորքերը ետ քաշել: Դրանից էլ հեշտ գո՞րծ: Ինչ կարելու է, թէ դրանից ժողովուրդ կկոտորվի ու գլուղեր, քաղաքներ կավերվեն:

¹ Լազարբեկովն ասում է, որ Տրուխիկի մասին այդ կարծիքը պատկանում է նրան երթակա փամբարակի հրամանատար գերապետ Ռշակովին (Լ. տ., գ. 3, էջ 57):

1 << ԳԿԳԱ. ք. 45. ց. 1. գ. 2, էջ 13-15:

Օգտվելով առիթից, հարց տանք Լազարբեկովին, իսկ ինպիսի՞ն էր գեներալ-լեյտենանտ Չեռնոզուբովը, որը որպէս հարավային գծով դեպի Վան, Բիթլիս ու Սուշ արշավող զորքերի հրամանատար, լուծում էր նաեւ հայկական ջոկատների ռազմավարական խնդիրները: Իր հուշերի չորրորդ տետրում Լազարբեկովը չի զլացել այդ հարցի պատասխանին երեք էջ տրամադրել:

«Գեներալ Չեռնոզուբովը խելացի, կրթված, լավ հիշողության տեր մարդ էր, արագ ըմբռնում էր, ռազմական գործից հասկանում, բայց բնավորությամբ զինվորական չէր, այլ ավելի շատ վարչարար եւ դիվանագետ: Չունէր զինվորականի ոգետրություն եւ արիություն, թեւ նրան չի կարելի նաեւ վախկոտ անվանել, [պարզապէս] զգույշ էր... Համենայն դեպս, լինելով ջոկային մարդ, երբեմն խուճապի էր մատնվում ծանր իրադրության պահերին: Վտանգի ժամին իրեն կորցնում էր: Նույնիսկ փոքր անհաջողությունը նրան վշտացնում էր: Նա շատ էր ծանր ու թեթեւ անում, վերլուծում քարտեզի վրա, ինքն էր որոշումները կայացնում եւ կարողանում էր իր վրա վերցնել որոշման պատասխանատվությունը: Բայց որովհետեւ նա մարտական գծերից հեռու էր, չէր ղեկավարում կռիվներին անմիջապէս մասնակցող զորամասերին, զուրկ էր մարտի ոգու ըմբռնումից եւ նրանից, թէ ինչ կարելի էր եւ ինչ չէր կարելի պահանջել զորքերից: Խորամանկ էր, եսասեր, բարի էր, ոչ էլ բավականաչափ արդարացի եւ հազվադեպ էր իր խոսքին հաստատ մնում: Ենթականների հետ միատեսակ չէր վարվում, սիրալիությունից անցնելով ամբարտավանության: Չէր վայելում իր ենթակաների սերը, թեւ իր ծառայողական հատկանիշներով արժանի էր եթէ ոչ սիրո, ապա գոնե՛ հարգանքի: Մեծ բանասարկու էր... կարողանում էր մարդկանց գժտեցնել: Սիրում էր նվերներ ստանալ: Մի խոսքով, որպէս շատ մեծ ռազմաճակատի շահերը պաշտպանող զորախմբի պետ եւ միաժամանակ նաեւ վարչական պետ, նա իր տեղում էր»¹:

Ի՞նչ դուրս եկավ՝ շիլա-փլավ, եւ այնուամենայնիվ «նա իր տեղում էր»: Եթէ ըստ Լազարբեկովի այսպիսին է Չեռնոզուբովը, ապա Անդրանիկի հասցեին արված նրա քննադատական դիտողությունները փառք էին, մանավանդ որ դրանք ոչ թէ փաստացի էին, այլ հիմնականում բխեցվում էին տարակարծություններից եւ գրեթէ բոլոր այն դեպքերից, երբ ի վերջո պարզվում էր, որ Անդրանիկն էր ճիշտը:

Լազարբեկովը առիթ էր ունեցել բնութագրելու նաեւ կորպուսի հրամանատարին, գեներալ Օգանովսկուն՝ պաշտոնից նրա հեռանալու եւ նրա փոխարեն գեներալ-լեյտենանտ Դե Վիտտեին նշանակելու փաստին անդրադառնալու առիթով, նշելով դրա ստույգ օրը՝

1 Լ. տ., գ. 4, էջ 50-52:

1915—ի նոյեմբերի 29—ը: Ցավ է հայտնել, «Կորպուսի բոլոր զինվորներն ու հրամանատարները լոջորեն ցավեցին զեներալ Օգանովսկու գնալու կապակցությամբ: Իր պարզությամբ, մատչելիությամբ, բարեհամբույր բնավորությամբ եւ բարության վայելում էր բոլորի հարգանքը: Գեներալներից գրեթե միակն էր, որը հայերի հետ լավ էր վարվում եւ գնահատում էր հայկական ջոկատների աշխատանքը»:

Ի տարբերություն հուշագրությանը բնորոշ¹ պատմողի անձը առաջ մղելու առանձնահատկության, Լազարբեկովի հուշերը, կարող ենք ասել, այդ կողմից այքի չեն զարնում: Անպայման իր մասին էլ փաստեր բերում է բայց-ինքնագովությանը տուրք չի տալիս: Ահա մի օրինակ: 1915—ի օգոստոսի 20—ին Լա ստացել է Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար փոխարքա Վորոնցով—Դաշկովի պաշտոնական նամակը եւ ֆրանսիական «Միլիտեր» մեդալը: Լազարբեկովը քաղվածաբար պատմում է նամակի բովանդակությունը: Գլխավոր հրամանատարը նշում է, որ գերագույն գլխավոր հրամանատար Նիկոլայ Նիկոլաեւիչ Ռոմանովը այդ մեդալը ուղարկել է, որպեսզի «այն տրվի Կովկասյան ճակատի ամենաարժանավոր սպային»: Ապա հետեւում է Վորոնցով—Դաշկովի հղումը, «Զե՛գ համարելով բոլորից ավելի արժանավորը, կից ուղարկում եմ այս մեդալը, որը գերագույն գլխավոր հրամանատարը միշտ կրում է Գեորգեւյան խաչ 4—րդ աստիճանի շքանշանի կողքին»: Չի թաքցնում Լազարբեկովը, որ նամակը եւ մեդալը իրեն «հսկայական ուրախություն են պատճառում»: Եվ ուրիշ ոչինչ: Մինչդեռ դա, իրոք, ծառայությունները գնահատելու տեսակետից երեւոյթ էր, որը Լա կարող էր ինչ—որ կերպ ակնարկել: Ի պատասխան, անմիջապես հաջորդում է շնորհակալության անպաճույճ խոսքը Վորոնցով—Դաշկովին¹:

Սրանից մի քանի օր անց, օգոստոսի 28—ին, հեռագիր է ստացվել, որ ցարն ինքն է ստանձնել ամբողջ բանակի հրամանատարությունը, իսկ Նիկոլայ Նիկոլաեւիչը նշանակվել է Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար եւ Կովկասի փոխարքա: Գուցե թե Վորոնցով—Դաշկովը իմացել է սպաքվող այս փոփոխության մասին եւ շտապել է մեդալը Լազարբեկովին ուղարկելով կատարած լինել հրամանատարի իր վերջին պարտքը Նրա նկատմամբ: Լազարբեկովը անտարբեր չէ. «Բոլորն էլ ափսոսում էին, որ փոխարքա Վորոնցով—Դաշկովը թողնում է մեր երկրամասը եւ բանակը: Իր մարդամոտությանը Լա ընդհանուր սիրո էր արժանացել»²:

Դարձյալ մի «մանրուք»:

Լավ չէին հազնված կամավորները, թեւե մի լավ օրի չէին Լաեւ բուն ոռուսական զորամասերի զինվորները: Լազարբեկովը նշել է, որ

1 Լ. ս., գ. 6, էջ 4—5: 2 Լ. ս., էջ 6:

Նրանց յուրաքանչյուր վաշտի 250—300 զինվորին բաժին է ընկել, ձմռան ցրտին, հազիվ 60 զույգ թաղիքավոր կոշիկ (валенки), իսկ հայկական ջոկատներում՝ դրանից էլ քիչ: Եվ դա այն դեպքում, երբ Նրանք այնքան հաճախակի կատարում էին հետախույզի դժվարին պարտականությունը: Լազարբեկովն իր աչքով է տեսել, թե ինչպես 20 աստիճան ցրտին անփորձ զինվորները սառած գետն անցնում էին առանց կոշիկները հանելու, որից հետո անհնար էր դառնում քայլելը, եւ տղաների ոտքերը սառչում էին...

Եզրափակենք Անդրանիկի մասին Լազարբեկովի ամփոփիչ խոսքով, որը Լա գրել է 1917—ի մայիսի 12—ին եւ հրապարակել 1917—ի հունիսի 1—ին, երբ արդեն հնարավորություն ուներ կշռադատելու բոլոր փաստերը, բոլոր դեպքերն ու դեմքերն ամբողջության մեջ.

«Անդրանիկը հրաշալիորեն իմանալով տեղանքն ու հակառակորդին, կոիվների իր փորձառությամբ ու խորհուրդներով քանիցս ինձ անգնահատելի ծառայություն է մատուցել իմ զորամասի կազմում իր գտնված ժամանակ: Անձնապես Լա խելահեղորեն քաջ է: Նրա նշանաբանն էր «Հարձակումը»: Սրանից բացի, վայելելով մեծ վրտահուրություն եւ հեղինակություն, Անդրանիկը շատ լավ ազդում էր քիչ վարժված մասսայի վրա եւ իր հաստատակամությամբ ու տուրկունությամբ կարգ ու կանոն էր պահպանում կամավորական խմբի մեջ»¹:

Անդրանիկին բնութագրելու համար Լազարբեկովը մոտիկ կանգնած մարդու իր բառերը գրեց: Իսկ մենք այս հեռավորությունից Լազարբեկովին բնութագրելու համար, բառեր որոնելու փոխարեն, լսենք Նրա երկու պատմածը:

«Մշո դաշտից հեռանալիս դիվիզիայի գնդերը իրենց հետ վերցնում էին գյուղերում անտեր մնացած երեխաներին: Ջարմանք էր հարուցում, թե ինչպես ոչ միայն առանձին անհատներ, այլեւ ամբողջ վաշտեր հայրաբար էին վերաբերում երեխաներին: Ցածր պաշտոնյաներից շատերը իրենց զրկում էին եղած սուղ միջոցներից, միայն թե երեխաներին խնամքով հազցնեին եւ լավ սնեին: Երբ Մուշից, Վանից եւ ուրիշ տեղերից գաղթածները հավաքվում են Երեւանում, Էջմիածնում եւ Իգդիրում, Նրանց լուրեր են հասնում, որ 2—րդ Կովկասյան հրաձգային դիվիզիայում զգալի քանակությամբ երեխաներ կան Մշո դաշտից: Եվ այդ վայրերից գաղթականները ճանապարհ են ընկնում իրենց երեխաներին ու հարազատներին գտնելու համար: Եկան Նրանք ու հասան մեզ Նաեւ Չըլկան գյուղում (որտեղ կանգնած էր դիվիզիան—Հ. Կ.): Ստիպված եղա անձամբ որոջել, թե որքանով ճիշտ են գաղթածների պահանջները եւ երբ հարցուփորձի միջոցով

1 «Հայաստան», №36, 1917թ.:

համոզվում էի, որ Նրանց պահանջները ճիշտ են, հրամայում էի, որ երեխաները վերադարձվեն ծնողներին ու հարազատներին: Եվ դա ինձնից քիչ քանք չէր պահանջում, որովհետեւ երեխաները իսկապես չէին ուզում գալ հարազատների եւ ծնողների մոտ: Հեշտ չէր ներկաներիս համար տեսնել լացակուսած երեխաների ու զինվորների աչքերից հոսող արցունքները: Ոմանց ուժով էինք ֆուրգուները նըստեցնում, մյուսներին էլ հրապուրում էինք թաղցրավենիքով: Այս ձեռով գրեթե բոլոր հայ երեխաներն էլ գտան իրենց հարազատներին կամ ծնողներին: Մեր վաշտերում մնացին միայն ջուրդ երեխաները: Այստեղ կանգ առնեց: Թող այս պատմության թե հայ, թե ջուրդ ընթերցողը կշռադատի: Լազարբեկովի զորքի համար երեխան երեխա է, այլ ոչ հայի կամ ջրդի զավակ, ինչը երբեք չհասկացավ ու չզգաց ուրիշ մի գեներալ, որի մասին ստորեւ խոսք է լինելու:

Մենակ չի եղել Լազարբեկովը: Նրան օժանդակել է Կովկասյան բանակի հայ տերտեր Բեդլուկյանցը, որը Չըլկան գյուղում եղել է հայերի հոգեւոր պահանջմունքով¹:

Մուշը գրավելուց հետո, այնտեղ օրեցօր մեծանում էր գաղթականների կուտակումը ոռուսաց բանակի եւ հայ կամավորների շուրջը: Գլխավոր հոգսը մնում էր-Նրանց սնելը: Հակառակի նման դա էլ հենց դարձել էր ամենադժվար լուծելի հարցը բանակի համար, որը իրեն անգամ բավարար չափով չէր կարողանում ապահովել: Լազարբեկովը անկեղծորեն խոստովանել է. «ցավոք սրտի, ես էլ Նրանց (գաղթականներին՝ Հ. Կ.) չէի կարողանում որեւէ օգնություն ցույց տալ, քանի որ զինվորներն էլ սուր կարիքի մեջ էին»:

Խոր ձմռան ցուրտ սառնամանիքին թիկունքից եկել, Մուշ են հասել կարիքավոր բնակչությանն օժանդակող համառուսաստանյան «քաղաքների միություն» կազմակերպության ներկայացուցիչները, որոնց շտեմարանները նույնպես դատարկվել էին եւ, ինչպես հիշում է Լազարբեկովը, չնայած գործադրած միջոցներին, նրանք նույնպես չեն կարողանում «որեւէ իրական քայլ կատարել»: Մեծ դժվարությամբ էրզրումի կողմում, խնուս Կալա մեծ գյուղում ստեղծվում է սննդամատուց մի կետ, բայց այնտեղ հասնելու համար պետք էր երեք-չորս օր ճանապարհ գնալ: Եվ, ահա, հենց այդ դժվար պահին է, որ Լազարբեկովին այցի է եկել նշված «քաղաքների միության» ներկայացուցիչ Ստեփան Ջորյանը, որը նույն ինքը՝ Ղաշնակցության ականավորներից հայտնի Ռոստոմն է:

Գեներալից նա մի մեծ բան չի խնդրում, մի շտեմարան տրամադրել՝ լքյալ գյուղերի հորերում պահված ցորենն ու գարին ամբարելու համար: Լազարբեկովն ուրախությամբ համաձայնել է օժանդակել

¹ ՀՀ ԳԿՄ, ֆ. 45, ք. 1, գ. 6, էջ 53-54:

է՝ պահելիքի կեսը բանակի հոգսերին տրամադրելու պայմանով: Առարկություն չի եղել: Լազարբեկովը ոգեւորվել է: Դա նրա համար ամենից դժվար լուծելի հարցն էր, բանակի ապահովման խնդիրների մեջ ամենից անհետաձգելիս եւ ծայրահեղը:

Ջորյանի՝ հացահատիկի հայթայթման ջանքերը եղել են արդյունավետ: Նրան օգնում էին տեղանքին ծանոթ է՛լ կամավոր զինվորները, ե՛լ հայ գաղթականները: Դրանից հետո նա հայ գաղթականներին եւ տեղում էր հաց տալիս, եւ լրացուցիչ՝ 3-4 օրվա պաշար-Նրանց, ովքեր գնում էին ու կգնային խնուսից ստանալու: Ուրախ էր Լազարբեկովը, որ այդպես ստացվեց: Բայց չանցած մի երեք օր կորպուսի հրամանատարից անսպասելի ու զոտիկ հեռագիր է ստանում. «Դուք հեռագրում եք, թե հայ չկա, մինչդեռ ձեր հայերը գալիս են խնուս Կալա, ամեն մեկը ունենալով երեքից-վեց գրվանքա հաց»: Լազարբեկովը պատասխանել է կարծես-բանի եւությունը հասկանալու համար. «Եթե իմ զինվորները առ այսօր հաց ունեն, ապա դրա համար պետք է շնորհակալ լինել հայ գաղթականներին, որոնք այն ձեռք են բերում եւ կիսում ինձ հետ»¹: Լազարբեկովը մարդ էր, այլ ոչ միայն հրամանատար: Իսկ ինչ վերաբերում է «ձեր հայերը» բառերին, ասենք, որ, ա՛յո, հայեր, բայց նրանք գործում էին ոչ միայն սոսկ հայերի համար: Ռուսաց բանակի հրամանատարը պետք է որ այդքանը լավ իմանար եւ նրբազգացություն ունենար այդպես չարտահայտվելու:

Է Հովսեփյանց եւ Անդրանիկ

Կապիտան Արտեմ Հովսեփյանցը ոռուսաց բանակի սպա էր: Հրամանատարությունը նրան կցել էր Անդրանիկի ջոկատին, կամավորներին վարժեցնելու, ջոկատի եւ ոռուսական զորամասերի միջեւ կարգապահական, մարտավարական ընդհանրություն ստեղծելու համար: Բայց եղել է, որ առանձին դեպքերում նա ինքն է վարել ջոկատի մարտերը, երբ Անդրանիկը բացակայել է կամ, հանգամանքների բերումով, ինքն է մարտի տարել ջոկատին, անշուշտ, Անդրանիկի գիտությամբ եւ համաձայնությամբ: Որոշակի է, որ 1914-ի սեպտեմբերից Սալմաստում եւ շրջակայքի հայկական գյուղերում, մինչեւ Անդրանիկի գալը, նա էր ղեկավարում կամավորների վարժանքը՝ կատարելով ջոկատի հրամանատարի դեր: Սկզբում նա կապված է եղել միայն առաջին ջոկատի հետ: Հետագայում, 1915-ի փետրվարյան օրերից, նա փաստորեն աշխատել է չորս ջոկատների հետ: Փաստաթղթում, որը կազմված է 1915 թվականի սեպտեմբերի

¹ ՀՀ ԳԿՄ, ֆ. 45, ք. 1, գ. 11, էջ 36-38 (18-19):

18-ին, նրան աշխատավարձ վճարելու կապակցությամբ, շատ բան է պարզ գրված՝ օգտագործելով ե՛լ ղեկավար, ե՛լ չորս ջոկատներ բառերը.

«1914 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1915թ. ապրիլի 21-ը չորս հայկական ջոկատների ղեկավարը եղել է բանակային 9-րդ հրաձգային գնդի կապիտան Հովսեփյանցը: Այդ ամբողջ ժամանակամիջոցում նա միանշնայա եւ առանց օգնականների վարել է այդ ջոկատների կյանքի բոլոր կողմերի եւ նրանց մարտական պատրաստության աշխատանքները»: Չնայած նրան, որ ջոկատներից ամեն մեկի թվակազմը համապատասխանել է գումարտակի, նրան տրվել է վաշտի հրամանատարի աշխատավարձ: Եվ դա մինչև 1915-ի ապրիլի 21-ը, որից հետո նրա ծառայության անհրաժեշտությունը վերացել է, թեև մինչև 1915-ի սեպտեմբերի 18-ը դեռ պաշտոնապես ազատվելու հրաման չի տրվել: Ինչպես երևում է փաստաթղթից, Հովսեփյանցը աշխատավարձի տարբերության դիմաց, որպես պարգև, ստացել է հարգելավճար եւ այնուհետև վերադարձել իր նախկին զորամասը¹:

Կողմնապես բանակի դաշտային շտաբի՝ պահպանված գրագրությունների թղթապանակում կա նաեւ այսպիսի մի գրություն, որը, հավանաբար, հետաքրքրության արժանի է:

«Չեթագույն գլխավոր հրամանատարության հերթապահ զեներալին: 1914թ. նոյեմբերի 1-ից մինչև 1915 թվականի..... ը՝ հայկական 1-ին ջոկատում որպես ղեկավար եղել է գնդի կապիտան Հովսեփյանցը:

Զանի որ այդ ջոկատում նրա ձեւավորման առաջին օրերին չի եղել ռազմական ծառայության կարգ ու կանոնին ընդ թե շատ ծանոթ մի մարդ՝, հարկ է եղել, որ կապիտան Հովսեփյանցն առանց օգնականների վարի իր շարքերում ավելի ջան հազար մարդ ունեցող ջոկատի կյանքը՝ նրա ինչպես մարտական, այնպես էլ շարային եւ տնտեսական բնագավառներով հանդերձ»: Եշելով Հովսեփյանցի դրական հատկանիշները, փաստաթղթում համոզմունք է հայտնվում, որ եթե նա մնար իր նախկին զորամասում, անպայման գումարտակի հրամանատար կլիներ, անհրաժեշտ գտնելով, որ հենց այդպես էլ նա վարձատրվի²:

¹ Փաստաթուղթը ձեռագիր է, նրանում ամիս-ամսաբաժնի տեղը բաց է թողնված ** խոսքը այդ օրերի մասին է, երբ Անդրանիկը դեռ չէր եկել Սալմաստ՝ գնդի զինվորների հավաքատեղը կամ գործով վերադարձել էր Թիֆլիս:

² ԿՊՊՊԱ, թ. 2100, ց. 1, գ. 557/2, ք. 102: 2 Լ.տ., ք. 105-106: Երևում է, Հովսեփյանցը աշխատել է վարձատրվել է մինչև 1915-ի սեպտեմբերը, բայց զամարտակի հրամանատարի աշխատավարձի վճարման հարցը որպեսզի է միկել ապրիլը ներսուման հաշվով:

Մի խոսքով, «ղեկավար» եւ «վարել» բառերը աշխատավարձի չափը եւ ժամկետները որոշելու նկատառումով օգտագործված լինելով հանդերձ, բոլորովին էլ չեն արտահայտում լիակատար հրամանատարի իմաստը:

Հովսեփյանցը ջանք էր գործադրում ռազմական կանոնավոր ուսուցումից հիմնականում զուրկ, զորական կյանքին անտեղյակ կամավորներին մարտ մղելու արվեստին ծանոթացնելու համար: Ականատեսը յիշում է Անդրանիկի հետ զրույցի մի պահ, երբ Հովսեփյանցը նրան ասել է.

«-Անդրանիկ, ինչպես ես տեսնում եմ, ջո գործերը բոլորն էլ անփորձ եւ անվարժ մարտիկներ են, իսկ մեր դեմինը կանոնավոր զորք եւ բանակ ունի, թողեք, որ ես դիսցիպլինով ղեկավարեմ այս բանակը: Գուցե դուք ինձանից ավելի շատ պատերազմներ եք անցել, բայց այս կոիվը ձեր տեսածներին չի նմանվում: Դուք էլ, մենք էլ եւ բոլոր բանակն էլ միասին զոհ պիտի դառնանք թշնամուն»¹:

Այս խոսքը չէր կարող Անդրանիկին պարզ չլինել: Բայց նա առարկել է: Առարկել է ոչ թե Հովսեփյանցի մտքին, այլ վարժեցնելու գործը, առհասարակ, իրենից բացի որեւէ մեկին հանձնելուն: Ականատեսը հենց այդ է հիշում.

«-Ո՛չ, ես իմ իրավունքը ոչ ոքի չեմ հանձնել: Ես բոլորոյի՞ կողմից լիազորված եմ, եւ իմ բանակը ես պիտի կառավարեմ»:

Հովսեփյանցի խոսքը.

«-Այո՛, գիտեմ, որ այդ ձեր իրավունքն է, եւ ես որպես հայ ցավում եմ ասելու, որ բոլորս էլ պիտի կոտորվենք, թողեք որ ես պատերազմական դիսցիպլինով կովեմ եւ գործերը կարգի դնեմ»:

Անդրանիկը համառել է.

«-Ոչ մի կերպ չեմ կարող ընդունել»:

Զրույցին ներկա սրտացավ Հակոբ Զավրիեը հարազատի պես միջամտել է, Անդրանիկին հորդորելով, որ համաձայնի, հակառակ դեպքում ինքը կվերադառնա թիկունք: Անդրանիկը մեղմացել է, հաշտվել, միայն թե, այսպես ասած, պայման կապելով, որ այդ դեպքում պատասխանատվությունն իր վրա չդրվի: Հովսեփյանցը վստահ ասել է.

«-Ես եմ պատասխանատուն»:

Իրավունք ուներ Հովսեփյանցը վստահ լինելու իր ուժերին: Ուսյալ զինվորական էր, կարգապահություն հաստատելու, զինվորներին հաջողակ մարտի տանելու ձիրքով:

¹ Ազգային բյուրո:

² Խորեն Ծայրագիւն Վարդ, Լազարեան, Արձանական, Սոֆիա, 1932, էջ 147-150:

Այս գրույցը եղել է ջոկատի մարտի մեջ մտնելու առաջին օրերին: Ականատեսը, որ ջոկատի քահանա Խորեն Վարդապետ Լազարյանն է, նկարագրում է թուրքական զորքի դեմ ջոկատի հաջող մի մարտ, որն անձամբ նախապատրաստել է ղեկավարել է Հովսեփյանցը¹: Այնուամենայնիվ, ջոկատում Հովսեփյանցի գտնվելը շոշափում է Անդրանիկի ինքնասիրությունը: Այդ նույն էլ նկատել է Լազարբեկովը եւ գրել իր հուշերի տետրում, ինչը որ քիչ առաջ ասաց ծայրագույն վարդապետը, մեկ անգամ, երբ կոիվների միջեւ դադար է ստեղծվել, Հովսեփյանցը «ցանկացել է ջոկատին ծանոթացնել հարձակման եւ նահանջի գործողություններին, Անդրանիկը նեղացել է եւ կոպիտ կերպով մերժել նրան, գտնելով, որ ջոկատը շատ լավ պատրաստված է դրա համար... Առհասարակ Անդրանիկը շատ ինքնավստահ էր եւ հպարտ»²:

Ծիշտ է, Հովսեփյանցը, որքան որ հեռավորությունից հասկանում ենք նրան, գիտակ ու բարեկիրթ սպա է եղել: Բայց դա ուրիշ հարց է: Իսկ եթե ոչ գիտակ լինելու ու ոչ էլ բարեկիրթ եւ հսկիչի նման միշտ կանգներ Անդրանիկի գլխին, այդ ի՞նչ պիտի նշանակեր: Փաստորեն ցարն ու բանակային հրամանատարությունը կամավորներին պատերազմի դաշտ էին բերել իրենց ուզածի պես օգտագործելու, բայց ոչ երբեք նրանց ուզածը կատարելու համար, մի բան, որը միանգամայն հակառակ էր Անդրանիկի կամքին: Ուստի Անդրանիկը զուր չէր Հովսեփյանցի վրա զայրանում եւ դժկամությամբ ընդունում նրա գտնվելն իր կողքին, չնայած նրան, որ Հովսեփյանցը գործիմաց, բարյացակամ եւ աշխատասեր զինվորական էր: Նա, ինչպես երեւում է պահպանված բազմապիսի փաստաթղթերից, բոլորովին էլ հավակնություն չի ունեցել ղեկավարությունն իր ձեռքը վերցնելու, խորապես գիտակցելով տվյալ պոստում ջոկատի կամավորների համար Անդրանիկի անփոխարինելի լինելը:

Հովսեփյանցին Լազարբեկովն անցյալից գիտեր: Ծանաչում էր որպես իրեն ծանոթ 14-րդ գրենադերյան-վրացական գեղի սպայի, որպես մի մարդու, որը «գիտեր գործը եւ շատ եռանդուն» անձնավորություն էր³:

Չունենալով պիտի ոուսաց հրամանատարության կամքին ներդաշնակ լինելու, այս էր նրա համար՝ գլխավորը: Հովսեփյանցը հայ զինվորներին ռազմի ճամփաներին հանդիպած թուրքի ու քրդի նկատմամբ զուսպ ու համբերատար վերաբերմունքը պիտի ներարկեր: Բացառված չէր, որ կամավորը կուզենար վրեժխնդիր լինել, զայրույթի մեջ համբերության սահմանն անցնել եւ թշնամուց օրինակ վերցնելով, վայրենությանը տուրք տալ: Դա շատ լավ էր հասկանում Զեռնոզու-

1 Լ. տ., էջ 151-157: 2 ՀՀ ԴԿՊԱ ֆ. 45, ց. 1, գ. 1, բ. 30-32: 3 Լ. տ., գ. 1, էջ 15:

բովը, հեռագրելով՝ Լազարբեկովին եւ հիշատակելով նաեւ Հովսեփյանցի ազգանունը, «Շուրապ, գեներալ Լազարբեկովին: Բազմաթիվ բողոքներ են ստացվում մեզ հպատակություն հայտնող քրդերի նկատմամբ հայերի կատարած բռնությունների եւ թալանի մասին: Հարկավոր է ջոկատը բռի մեջ հավաքել եւ թույլ չտալ նրա ոչ մի ինքնուրույն ելույթ: Հարկավոր է, որ ջոկատին միշտ ուղեկցի մեր զորքերի մի որեւէ զորամաս: ... Կանչեցեք Ձեզ մոտ Հովսեփյանցին եւ պահանջեք, որ նա ծայրահեղ գզուշություն հանդես բերի»¹:

Մի՞թե Զեռնոզուրովը չգիտեր, որ ճանապարհի ամբողջ երկարությամբ, Արեւմտյան Հայաստանի բոլոր հայ բնակավայրերում թուրքի եւ քրդի սրից հայի արյան գետերն էին հոսում: Թող աստծո որդի գեներալը հային, եթե նա մեղավոր էր, զգուշացներ ու պատժեր, բայց գոնե հայի արյունը գետերի պես հոսեցնող ալլախի զավակներին էլ շտապեր կանխել, ստիպել, որ կեո սուրը պատյան դնեն: Ինչ վերաբերում է Հովսեփյանցին, ապա նա էլ, ինչպես պատմում են փաստաթղթերը, հոգատար լինելով հայ զինվորների նկատմամբ, պարտաճանաչ էր թուրքի եւ քրդի հանդեպ սխալ արարքների համար նրանց պատժելու հրամաններ տալիս: Հովսեփյանցը, սա վիրավորանք չէ, այլ փաստ, հայերից զատ ապրած, ոուսական միջավայրում դաստիարակված հայ էր, որը նոր միայն, գաղթի տեսարանները դիտելիս էր սկսում իրապես ըմբռնել *գաղթ* եւ *կոտորած* բառերի իմաստը:

Լազարբեկովը հիշելով 1915-ի փետրվարը, երբ Անդրանիկը դեռ չէր վերադարձել թիկունքից, գրում է, թե այն ժամանակ ջոկատի ղեկավարը Հովսեփյանցն էր: Ավելացրել է նաեւ, որ շատ հմտորեն է ղեկավարել ջոկատի մարտերը, «Ականատեսները... հիացած էին ջոկատի առաջխաղացմամբ եւ կապիտան Հովսեփյանցի հմուտ ղեկավարությամբ, մի մարդու, որը խիզախ էր, փորձված, լավ գիտեր ռազմական գործը եւ հայերի հոգեբանությունը», չլրանալով նաեւ ասել, որ Անդրանիկը նրան չէր սիրում, միշտ կարծելով, թե նա իրենից խլում է «մարտական փառքի դափնեպսակները»²:

Հովսեփյանցին, ինչ խոսք, օգնում էր վարժ ոուսերեն իմանալը: Նա է՛լ իր անունից էր գրություններ հղում հարակից ոուսական զորամասերի ու ընդհանուր հրամանատարության հասցեներով, է՛լ Անդրանիկի: Հաճախ դրանք վերաբերում էին ջոկատի կարիքները հոգալուն, նրա հետ մարտերը համաձայնեցնելուն եւ ջոկատի երթուղին որոշելու հարցերին: Քիչ չէր պատահում, որ բանակային սպայի արժանապատվությանը վայել ձեւով նա պաշտպան ու պահապան էր

1 ԿՊՊԱ ֆ. 551, ց. 2, գ. 441, թթ. 264-265: 2 ՀՀ ԴԿՊԱ ֆ. 45, ց. 1, գ. 2, էջ 8-9:

կանգնում սրտի թելադրանքով ռազմի դաշտ եկած կամավոր հային: Մի օրինակ միայն:

1914-ի նոյեմբերի 26-ի երեկոյան ժամը 7-ին Սարայ գյուղաքաղաքից Աստուծի մտնելուն պես տեղի ուսական զորամասի հրամանատար Ջեմցովը անձամբ Հովսեփյանցին հրամայում է անհապաղ ջոկատի մարտիկներով փոխարինել կազակների պահակային ծառայությանը, որոնք մեկ ժամ առաջ էին եկել Աստուծի: Հաջորդ օրն առավոտյան դարձյալ Ջեմցովի հրամանով ջոկատի չորս վաշտերն էլ այլ զորամասերի հետ միասին գյուղի տակ դիրքեր են գրավում, դիտելով թե ինչպես իրենց ձախ թեւի դեմ դիմաց Մերկերհու գյուղում էլ դիրքավորված են քրդերն ու թուրքերը: Վերջիններս կրակ են բացել առաջապահ կազակների վրա եւ սպանել նրանցից մեկին: Այդ բոլորը հայ կամավորների այքերի առջեւ: Հովսեփյանցը, անհանգստացած, մտտեցել է Ջեմցովին եւ հարցրել, թե ինչու՞մն է, ապա, հայ կամավորների խնդիրը: Եվ պատասխանը, ասես Հովսեփյանցի կամքը. «Քրդերին եւ թուրքերին պատժելը եւ նրանց Աստուծից ետ շարտելը»: Բայց զարմանում է Հովսեփյանցը, որ Ջեմցովը չի համաձայնում հարձակման անցնելու իր առաջարկի հետ, դա բացատրելով նրանով, որ իր հրամանատարության տակ գտնվող զորախումբը կատարել է իր խնդիրը՝ Աստուծին պաշտպանելը: Այդ ընթացքում քրդերն ու թուրքերը շարունակում են կուտակվել: Եվ Հովսեփյանցը նորից է դիմում Ջեմցովին, այս անգամ ջոկատի երկու երթաշարով հարձակման անցնելու առաջարկով: Եվ այս անգամ պատասխանը լինում է կտրական, «Ես եմ այստեղ պետք, բարի եղեք կատարել իմ հրամանը»: Հովսեփյանցը սկսել է համոզել, որ չի կարելի համբերել, երբ թուրքերն ու քրդերը անընդհատ հարձակումներ են գործում եւ բոլորովին ձեռնտու չէ այդքան մոտիկ թողնել թշնամուն, որ նա հանգիստ իր ուզածն անի: Երկար բացատրելուց եւ պնդելուց հետո Ջեմցովը թույլ է տվել վերցնել ջոկատի մի մասը, հրանոթներ, հեծյալներ եւ անցնել հարձակման: Վերջիններսիս հաջողվել է գրավել մոտակա գյուղը, որից հետո ժամանել է նաեւ կազակային մի հարյուրյակ: Սրանից հետո մնացածը վերելում մենք պատմել ենք, կամավորները մտնում են գյուղ, տներից նրանց վրա կրակ են բացում եւ այլն: Այս ընթացքում, գրում է Հովսեփյանցը, Սեպուհի վաշտն էլ, անցնելով հարձակման, գրավում է Զեհրիչ գյուղը: Սա զորախմբի ղեկավարությանը ուղարկված զեկույց է, վերջում եզրակացությունը. «Հայտնում եմ, որ ջոկատը եւ նրա պետերը գործել են եռանդուն կերպով եւ քաջաբար»¹: Սա Հովսեփյանցը ընդարձակ «սովորական» հեռագրով հայտնել է նոյեմ-

¹ Կոռու. թ. 551, ց. 2, գ. 441, ք. 416-419:

բերի 28-ի երեկոյան ժամը 10-ն անց 20 րոպեին: Երեւում է կոիվն այնուամենայնիվ չի դադարել, քրդերը ու թուրքերը գյուղը հանձնելու մտքի հետ չեն հաշտվել: Հաջորդ օրը, ցերեկվա ժամը երեքին Հովսեփյանցը Սարայի զորախմբի հրամանատարությանը «շտապ» հեռագրով տեղեկացրել է. «Հենց նոր իմ դեմ դուրս եկան թուրքական երկու զումարտակ եւ երկու հրանոթ: Նրանք եռանդուն կերպով հարձակվում են: Հիմա գնում է հրետանային մարտ: Պահելը դժվար է, բայց չեմ նահանջում: Մեզ օգնության են գալիս օժանդակ ուժեր, հենց նոր սկսեցին կրակել նրանց զնդացիները»¹:

Երկու ժամ քսան րոպե անց նորից հեռագիր, դարձյալ Հովսեփյանցի ստորագրությամբ, թուրքերը հանկարծակի հարձակվել են Հասպիսբան գյուղում գտնվող հայ կամավորների պահակակետի վրա: Ինքը կամավորներին հարձակման է տարել իրենց դեմ դուրս եկած հինգ զումարտակի վրա, մտադիր լինելով մութն ընկնելուն պես նահանջել դեպի Աստուծի գյուղը²: Հաջորդ օրը առավոտյան Հովսեփյանցը տեղեկացրել է Չեռնոզուբովին, որ երեկ իրենց դեմ կովոդները եղել են վերը հիշատակված գետի հանձնված քրդերը, եւ որ ձեւավորվում են հարձակողական նոր ուժեր, որոնց դեմ, բնականաբար, պետք է միջոցներ նախատեսել: Միաժամանակ տեղյակ է պահում, որ թիկունքից, Ռազիից, իրենց հետեւում է քրդերի մի զաղտնի ռազմական միավորում, որը նպատակ ունի հարձակման անցնելու³:

Աստիճանաբար մարտերին մասնակիցների թվում Հովսեփյանցի ազգանվան հիշատակումը գնալով նվազում է, գրկելով մեզ նրա պատմության լիակատար շարադրանքի հնարավորությունից: Հետագայում, 1918 թվականին, նա զնդապետ է եւ Նազարբեկովի ղեկավարած զորաբանակի կազմում մարտնչում է թուրքական բանակների մուտքը Հայաստան արգելակելու համար:

Առաջին աշխարհամարտի տարիներին ուսական բանակների կազմում կոիվների բոլոր ճակատներում մարտնչում էին տասնյակ հազարավոր հայ ռազմիկներ, որոնց թվում քիչ չէին նաեւ աչքի ընկնող հրամանատարները: Այստեղ դեպի Վան արշավող ադրբեջանական խմբի զորքերի փաստաթղթերում բազմիցս հիշատակվողներից ցանկալի է մի երկու բառով կանգ առնել Սիլիկով դարձված զնդապետ Սիլիկյանի անվան վրա: Նրա գունդը հաճախ է հանձնարարականներ ստանում եւ ուղարկվում առաջին գիծ: 1915-ի ապրիլի 26-ի հրամանով Սիլիկովն իր զորամասով հետախուզական-պաշտպանա-

¹ Լ. տ., ք. 429: ² Լ. տ., ք. 430-431: ³ Լ. տ., ք. 461:

կան դիրք էր գրավում Վանա լճի ափին¹: Հաջորդ օրը նրան հրամայվել է միանալ գնդապետ Դոկուչանեի զորամասին եւ պատ-
րաստվել գործողության²: Ապրիլի 28-ին նրա անունը հիշատակվում
է զորքերի դիմանյան խմբի հրամանում. նախապատրաստվող առաջ-
խաղացում նրա զորամասը պետք է գտնվեր միջին տեղամասում եւ
խնդիր էր ունենալու «համառորեն իր ձեռքում պահել գիծը», որը
ռուսական զորամասերի տեղաբաշխման հատվածներից մեկն էր: Այդ
գործողությունների ընթացքում դիմանյան զորախմբի հրամանա-
տարն իր երկու տեղակալներից մեկի պաշտոնում նշանակում է
Սիլիկովին³: Սա 1915 թվականին:

Հիշատակված հրամանները և՛ Սիլիկյանի ծառայությունները կա-
րող էին իրենց վրա ուշադրություն չիրավիրել, եթե Սիլիկյան
ազգանունը հետազայում առանձին հուշակ չստանար: 1918 թվականի
մայիսին նա առիթ ունեցավ մի խումբ հայ սպաների հետ իր ուժերն
ու գիտելիքները չափել թվաքանակով քանիցս առավել թուրքական
զորամասերի հրամանատարների զորավարական կարողությունների
հետ: Այդ ժամանակ թուրքերը Արարատ լեռան հայացքի առջեւ
փռված սարդարաբադյան հարթավայրով աճապարում էին Երեւան:
Հայաստան աշխարհը լքված էր ու մոռացված բուրդի կողմից: Հա-
յությունն իր վերջին ճիգերն էր գործադրում պաշտպանվելու, հար-
ձակվող թշնամուն ետ մղելու նպատակով: Եվ օրհասական այդ
ժամին բարձրանում է Սիլիկովը, բարձրանում են ռուսական բանակում
1914-17-ի կոիվներին մասնակցած ե՛ւ հայ, ե՛ւ ռուս սպաներ ու
զինվորներ: Թուրքերը, որ իրենց գերակշիռ ուժերով մղում էին կոիվը
թերզինված ու մինչեւ իսկ չզինված մարդկանց դեմ, որոնք կովի
դաշտ էին եկել կյանքի հետ իրենց հաշիվները մաքրած եւ գերեզ-
մանային պատանջով հանդերձավորված, պարտություն են կրում եւ
դառնում դեպի ելման դիրքերը: Դրանում մեծ էր Սիլիկյանի ավանդը:
Նրա անունը փառքով է պսակվում եւ դասվում հայոց անմահ
երախտավորների շարքը:

Անդրանիկի ջոկատում էր տասնիննամյա *Անաստաս Սիկոյանը* .
Թիֆլիսի Լեոսիսյան դպրոցի աշակերտը, որը հետագայում
(1964-1965թթ.) Խորհրդային Միության բարձրագույն պետական
մարմնի՝ Գերագույն խորհրդի նախագահության նախագահը դարձավ:
Մարտականի առաջին իսկ օրերից նա կամավոր է գրվել եւ մաս-
նակցել մինչեւ առաջին նահանջը եղած կոիվներին՝ որպես երրորդ
վաշտի երկրորդ հիսնյակի պետ:

Բարեբախտաբար *փաստաթղթեր* են պահպանվել: Պատանիկներ
են դրանք: Հիմա ենք առում բարեբախտաբար: Իսկ եթե դրանք
ժամանակին հայտնի դառնային: Մինչեւ իր ուսուցիչ ու առաջնորդ
Ստալինի մահվան օրն ու դրանից դեռ տարիներ էլ անց արխիվները
երկաթյա շղթաներով էին փակված: Ամբողջ գովասանքը հասցեագր-
վում էր քաղաքացիական կոիվների աննմա՞ն հերոսներ Բուդյոննուն
ու Վորոշիլովին, ձերբակալված ու բնաջնջված էին *ժողովրդի ոխերիմ
թշնամի* պիտակին արժանացած շատ ու շատ արժանավորապես
ակնավոր զորահրամանատարներ: Ստեղծված հեղձուցիչ մթնոլոր-
տում Անդրանիկի անունը տալը, հայ ֆիդայիներին ու 1914-ին
ռազմի դաշտ մեկնած կամավորներին հիշելը նսեմացուցիչ կլիներ
փառաբանվողների համար, ուստի դա գնահատվում էր որպես խն-
տազույն պատժի ենթակա հանցագործություն: Լոում էին բուրդը,
լոում էր նաեւ Սիկոյանը: Անդրանիկը ռուսաց բանակի կազմում
մարտնչել էր, մինչեւ իսկ հայոց հողերի պահանջ էր դրել, նշանա-
կում է, թե օգնել էր բուլշեիկներին հալածող ցարին, չվճարեց
Սիկոյանի պես բուլշեիկ-դեկավարն էլ Անդրանիկի՝ ջոկատում: Դա
ասելու, հիշելու բան չէր:

Փաստաթղթերը հետեւյալն են: Մեկը հեռագիր է, տրված Սալմաստ,
ջոկատի նախնական զորակայան: Ըստ այդմ՝ Սիկոյանը եկել է
մյուսներից առանձին: Թիֆլիսում մնացած է եղել՝ վաշտի հասանելիք
գումարն ստանալու: Զուլֆա հասնելուց հետո հեռագրով հայտնվում
է Մարանդ. «Անաստասը առավոտյան դուրս եկավ վաշտի փողե-
րով»¹: Մյուսը ձեռագիր դիմում է՝ «զինվորական դատարանին»: Զինվորները
զինված էին իմել: Խմբապետը նրանց ծեծել է: Հիսնապետը
պահանջում է «քննության առնել երրորդ վաշտի երկրորդ հիսնյակի
4 զինվորների, բողոքը խմբապետի դեմ՝ զինի խմբելու պատճառով
նրանց ծեծելու առիթով: Ա. Սիկոյան»²: Պարզ է, խմբավոր հեղափո-
խականը շարքային զինվորների շահերն է պաշտպանում, պահան-
ջում է ռազմական կարգապահություն:

Սի պատմություն էլ Սեպուին է անում իր հուշերի գրքում:
Հիսնապետ Անաստասը թղթակցություններ է հղել թիֆլիսյան թեր-
թին, որոնցում նա «առարկայորեն» (այսինքն՝ նույնությամբ) նկա-
րագրել է ջոկատի մարտը: Անդրանիկին դա չի գոհացրել: Կանչել է
Անաստասին, «խիստ հանդիմանել» եւ որպես պատժի ետ է վերցրել
նրա ձին ու ասել, «Հիմա գնա ոտքով պտտե՛, որ սորվիս թե
այստեհետե ինչպես նկարագրելու է կոիվները»: Սեպուիի սրտով է:
Գովում է Անաստասի համարձակությունը, նա այն տիպարներից չէր,
որ նման սպառնալիքներից վախենալով շեղվեր ճշմարտությունից:
Սիկոյանը բուլշեիկներին ոչ մեկից պակաս չատող Սեպուիի համար

1. Լ. ա. ք. 2300, ց. 1, գ. 828, ք. 140. 2. Լ. ա. 3. Լ. ա. ք. 276.

1. ՀՀ ԴՊԱ ք. 121, ց. 2, գ. 151, ք. 3. 2. Լ. ա. ք. 169.



Ներսիսյան դպրոցի կամավորագրված աշակերտներ. Կենտրոնում՝ Ա. Միկոյան:

ա՛յս դեպքում «մտավորական, հայրենասեր ու պարտաճանաչ ուսանող է»¹:

Միկոյանի թղթակցությունները տպված են եղել Դաշնակցության «Հորիզոն» թերթում: Դրանք վերաբերում են Սալմաստից առաջ շարժվելու դեպքերին եւ Դիլմանի ճակատամարտին: Երեւում է հեղինակը հուշատետր է պահել, որովհետեւ հոդվածներից մեկը վերնագրված է. «Հուշատետրից» եւ նրանում նշված է դեպքի վայրն ու օրը. «Եզդիքեան, 15-ը մարտի»²: Իմաստն այս է. հարձակվող թուրքերը նախապես տարածել են, թե խաղաղ բնակչությանը ձեռք չեն տա, բայց թալանել են նրանց եւ կոտորել, չհասցնելով փախչելիս իրենց հետ տանել կապած պարկերը: Դիլմանի կռվին նվիրված հոդվածը մի քանի սպիտակ բացատներով է, երեւում է գրաքննիչը գիշերը տպարանային շարվածքը կրճատել է: Վանից ստացված ծանր լուրերը սպաներին եւ զինվորներին շտապեցնում էին առաջ ու առաջ, գրում է հեղինակը: Դիլմանի ճակատամարտը սկսվել է «լույսը դեռ չբացված», փոսվոտյան ժամը 4-ն անց: Թշնամին շղթա կազմած սկսել է հարձակումը: Ապա նկարագրությունն է: Կռվի ձախ թելում մինչեւ կեսօր հաջողությունը հակառակորդի կողմն է եղել, «կեսօրից հետո... հրամանատարը եւ վաշտապետ Ս. —ն, սրերը մերկացրած՝ առյուծաբար իրենց քաջերի գլուխն ընկած թողին դիրքերը եւ «ուռա» աղաղակելով առաջ վազեցին դեպի թշնամին եւ գրավեցին բլուրը»³: Ըստ Սեպուհի, ըստ երեւույթին, այս է, որ Անդրանիկին դուր չի եկել: Ասել կուզե, թե՛ հրամանատարն ո՞վ է, անուն չունի, ինչ է: Իսկ վաշտապետ Սեպուհի անվան առաջին տառն էլ դեռ կա: Այսուհանդերձ նկարագրությունը ճիշտ նույնն է, ինչ որ տվյալ ճակատամարտի մյուս տպված ու անտիպ նկարագրություններում, բոլորում էլ հատուկ ընդգծվում է Անդրանիկի սվինամարտի մեկնելու հրամանն ու անձնական քաջության օրինակը, որի վրա շեշտում է նաեւ Միկոյան զինվորն ու թղթակիցը:

¹ Սեպուհի... հ. Ա., էջ 223-224: ² «Հորիզոն», 10. 04. 1915թ. ³ Լ. Ա., 29. 04. 1915թ.:

Ը Աբացիեւ եւ Անդրանիկ կամ ինչօ՛ւ

Անդրանիկը վերադարձավ

ռազմաճակատից

1916-ի մարտի 6-ի ցերեկը, ժամը 12-ն անց 50 րոպեին գեներալ Օբրագովը Բիթլիսից Մուշ, Լազարբեկովին վերահայտնել է իր անունով Անդրանիկի հղած հեռագիրը. «Քանի անգամ ուր ասես դիմել եմ ու խնդրել, որ ջոկատիս հանգիստ տրվի: Ջոկատը սուկալի վիճակում է: Թախանձագին խնդրում եմ Ձեզ՝ հարց բարձրացրեք իմ ենթակայության ներքո գտնվող ջոկատին հանգիստ տալու մասին»¹:

Հարկավոր է եղել ընդամենը 15 րոպե, որպեսզի նույն Օբրագովը Լազարբեկովին երկրորդ, բայց այս անգամ շտապ, հեռագիրը հղի. «Մարտի 6-ին հայկական 9-ին ջոկատի հրամանատար Անդրանիկը հայտնում է, որ այդ օրից հրաժարվում է ջոկատի հրամանատար լինելուց եւ խնդրում է նշել, թե՛ ում հանձնի ջոկատը: Խնդրում եմ համապատասխան կարգավորություն անել»²:

Օբրագովը, պարզ է, մեղք չունի, Անդրանիկն է այդպես վարվել՝ մեկ հանգիստ ջոկատով, մեկ էլ՝ հրաժարական:

Ինչո՞ւ:

Առիթ տվողը գեներալ Աբացիեւն է, իսկ բուն պատմությունը՝ ժամանակն ու հանգամանքները:

Աբացիեւի շուրջը թե՛ շարքային զինվորների մեջ եւ թե՛ հրամանատարության կազմում կարծիքներ էին շրջում, որ նա կապեր ունի թուրքական բանակում ծառայող գործիչների հետ: Հրամանատարության փաստաթղթերում նշվել է, օրինակ, որ թուրքական բանակում ծառայող Ռատուլ բեկ Շամշադինովը կամովին ներկայացել է գեներալ Աբացիեւին եւ ուղարկվել Կովկասյան 4-րդ կորպուսի շտաբ, թեեւ ասվում է նաեւ, որ այդ ամենը բարենպաստ են անդրադարձել ուսական բանակի այդ օրերի մարտական գործողությունների վերաբերյալ: Համենայն դեպս, դրանք կասկածելի գործեր էին, որոնք չէին կարող Աբացիեւի նկատմամբ հայ կամավորների, մեղմ ասած, պետտահությունը չհարուցել:

Լազարբեկովը պատմում է: 1915-ի մայիսի 25-ին կազակային զորամասի սպան իրեն ասում է, թե իր զինվորներից մեկը տրոշնջացել է, թե ինչ միտք ուներ գալ ռազմի դաշտ, կռվել եւ արյուն թափել հանուն իրենց համար բոլորովին արժեք չներկայացնող Հայաստանի ու հայերի: Լազարբեկովը իմանում է այդ զինվորի

¹ ԿՊՊԱ, ք. 2300, ց. 1, գ. 828, ք. 507: ² Լ. Ա., ք. 508: ³ ԿՊՊԱ, ք. 2100, ց. 1, գ. 646, ք. 69:

անունն ու զորամասը եւ հրամանատարից պահանջում հարցաքննել եւ վարվել ինչպէս օրենքն է պահանջում¹: Նման դեպքը միակը չէր: Նազարբեկովն էլ մի անգամ չէ, որ զինվորին պատժի հրաման տալու այդպիսի առիթ է ունեցել:

Աբացիելը հակառակ կերպ էր վարվում: Բավական է թեթեւ մի խոսք լսեր հայ կամավորների մասին, կիտապնդեր, չէր հանգստանա մինչեւ որ չպատժեր ու հետն էլ վարկաբեկիչ աղմուկ չբարձրացներ կամավորների հասցեին:

Պարբերաբար հայ կամավորների շրջանում տարակուսական ու զայրացուցիչ լուրեր էին տարածվում: Այդպէս եղել է, օրինակ, Վանի նահանգից հետո Անդրանիկի եւ Դրոյի ջոկատներում: Այդ հիման վրա երեւանի նահանգային ժանդարմական վարչությունը բանակային չորրորդ կորպուսի հրամանատարին հաղորդում է, թէ կամավորների մեջ առաջացած տագնապալից տրամադրության պատճառն այն է, որ կառավարչությունը փոխել է իր վերաբերմունքը կամավորական ջոկատների նկատմամբ, որի պատճառով էլ նրանց ուղարկում են մարտերի առաջին գիծ, մինչդեռ կանոնավոր զորամասերն ընթանում են նրանց հետեւից: Ուրեմն, եզրակացնում են կամավորները, նպատակն այն է, որ նսեմացվեն ու վերացվեն իրենց ջոկատները եւ այդ ձեռով հայ ժողովրդին զրկեն պատերազմն ավարտվելուց հետո Արեւմտյան Հայաստանի ինքնավարության պահանջ ներկայացնելու բարոյական իրավունքից²:

Վանի գրավումից հետո, չնայած սոսկալի կոտորածին, այնուամենայնիվ ոգեւորված էր հայությունը: Բայց նույն այդ ոգեւորությանը զուգահեռ հայության մեջ մտայն մի տրամադրություն է թափանցում: Լուրեր են տարածվում, թէ իշխանություններն ու ռազմական հրամանատարությունը արհամարհական են դեպի կամավորական ջոկատները: Այդ փաստի վրա հակադրված են լինում Կովկասի փոխարքայի ուշադրությունը բեւեռել կամավորական ջոկատների ձեւավորման գործում իրենց հայտնի ավանդը ներդրած մարդիկ՝ Թիֆլիսի հայկական թեմի առաջնորդ Մետրոպոլի Թիֆլիսի ջաղաքագուլիս Ալեքսանդր Խաչիսյանը, երդվյալ հավատարմատար Սամսոն Հարությունյանը: Փոխարքային հղած փաստաթղթում նրանք նշում են, որ դեռ պատերազմի սկզբում է նկատվել, որ առանձին բանակային հրամանատարներ, նրանց թվում հատկապէս ոչ ուս ազգի պատկանողները, կամավորների նկատմամբ թշնամաբար են վերաբերվել: Կովկասյան բանակային հրամանատարությունը չի ժխտել այդ փաստը, այլ ավելի վատ, բացատրել է, որ դա եղել է կամավորների կողմից

1 ՀՀ ԴԿՊԱ, ք. 45, ց. 1, գ. 4, էջ 38-40: 2 ՀՀ ԴԿՊԱ, ք. 45, ց. 1, գ. 6, ք. 2:

զինվորական պարտքի դրժման, զինվորական կարգապահության խախտման ուղղակի արդյունք¹: Փոխարքային հասցեագրված բողոքի փաստաթղթերում պարզ երեւում է, որ հայ մարդիկ հասկանում էին, թէ ինչ կարող էր սպասվել արյան գնով ազատագրված հայերին, եթե ցարն ու նրա ռազմական հրամանատարությունը շարունակեին իրենց սկսած ջաղաքականությունը: Եվ ընդգծվում է, որ հատկապէս գեներալ Աբացիելի զորամասեից անուշադիր են ու անվայելուչ գրավված հայաբնակ վայրերի նկատմամբ, ոչ միայն պաշտպանության չեն արժանանում, այլեւ արհամարհվում են հայոց խնդրանքները: Մինչդեռ թուրքերի եւ ջրդերի նկատմամբ հրամանատարի վերաբերմունքը ակնհայտորեն, հակառակն է²:

Ի պատասխան, Վորոնցով-Դաշկովը հայտնել է, թէ իր հարցմանը բանակի շտաբի պետ Յուզենիչը պատասխանել է, որ նրան նման փաստեր հայտնի չեն, միաժամանակ անհնար գտնելով ազատված ամեն մի գյուղում նման գործողությունների դեմ զորամասեր կանգնեցնելը³: Պատրվակներ էին հորինվում եւ վերելից հրամանագրեր էին առաջվում, որ այլեւս դադարեցվեն կամավորների հավաքագրումն ու հին ջոկատների համալրումը, ուր մնաց՝ թույլատրվեր նորերի ստեղծումը: Այստեղ է, որ կոկին բացահայտվել է իսկական Անդրանիկը: Նա բռնկվել է տարածված լուրերի եւ նշված գործունեների դեմ: Բայցեւ ըմբռնումով է մտնեցել: Ինչպէս վկայում է Նազարբեկովը, նա գտել է, որ անհրաժեշտ է դեռ շարունակել «ոուսների հետ համատեղ մարտնչել»⁴, անկախ այն բանից, թէ ինչ լուրեր են տարածվում, առիթ չտալ, որ ոուսական կառավարությունը փորձ անի ձերբակալելու հայության պարագլուխներին եւ վրեժխնդիր լինի հայ ժողովրդից: Հենց այդ ժամանակ է, որ թե՛ Իզդիր եւ թե՛ Երեւան տարբեր տեղերից գալիս են շատ երիտասարդներ եւ ցանկագրվում են հայտնում կամավոր գրվել⁵:

Աբացիելը ոուսախոս մահմեդական էր, ազգությամբ Հյուսիսային Կովկասի օսեթներից: Նա Կովկասյան 2-րդ կազակային դիվիզիայի հրամանատարն էր, եւ կոիվների անհրաժեշտության բերումով երբեմն-երբեմն նրա գլխավորած զորախմբին կցվում էին նաեւ հայ կամավորների ջոկատներից:

Եղավ մի ժամանակ, երբ կորպուսի կոիվները գոհացուցիչ չէին, որ զինվորների եւ սպաների մեջ լուր տարածվեց, թէ մեղավորն Աբացիելն է, որը դավաճանում է: Աբացիելի հետ մեղավոր էին

1 ՀՀ ԴԿՊԱ, ք. 2100, ց. 1, գ. 646, ք. 76: 2 ՀՀ ԴԿՊԱ, ք. 57, ց. 5, գ. 102, ք. 13:
3 Լ. տ., ք. 15: 4 Լ. տ., ք. 45, ց. 1, գ. 6, ք. 2: 5 Լ. տ., գ. 6, ք. 2-3:

համարում նաեւ նույն այդ դիվիզիայի գնդապետ Մամեդին, որը նույնպէս մահմեդական էր եւ կասկածվում էր որպէս թուրքերին համակրողի, մարտը նրանց օգտին ձախողման հանգեցնողի¹: Կամավորները այդ օրերին հարմար առիթ էին որոնում թէ Աբացիւհին, թէ նրա հետ նաեւ Մամեդին ու բոլոր մամեդներին կռուի ժամին իրենց տեղը ցույց տալու համար: Լազարբեկովը հիշում է, որ Անդրանիկը տվալ պահին մեծահոգի է գտնվել եւ, Լազարբեկովի բառերով ասած, մինչեւ իսկ ըմբոստացել է կամավորների նման վճռի ու մտադրության դեմ: Աբացիւհին իմացել է իր նկատմամբ այդ անվճար տահուրյան մասին եւ ասել է, թէ ինքը այդ ասելուսներին ուշադրություն չի դարձնում, քանի որ բոլորովին էլ Թուրքիայի նկատմամբ բարյացակամ չէ²: Ուրիշ ի՞նչ պետք է ասեր:

Մեծահոգի Լազարբեկովը փորձում է մեղմացնել կամավորների զայրույթը՝ իր գործընկերոջ նկատմամբ: Նա ընդհանուր առմամբ ասում է, թէ առհասարակ ասիացիները սովորություն ունեն իրենց անհաջողությունների համար միշտ մի ուրիշ մեղավոր գտնել: Եվ ահա այստեղ մեղքը տեսնում է նրանում, որ Անդրանիկն ու Դրոն առանձին մի ձգտում ունեին, որ միշտ իրենց ջոկատները առջեւից գնան, որից եւ կարող էին անհաջողություններ լինել: Ինչեւէ, կասկածը չէր փարատվում: Եվ դա առավել էւս այն բանից հետո, երբ գնալով ուժգնանում էին Արեւմտյան Հայաստանի գրաված հողերում կազակային մարզ ստեղծելու լուրերը³:

Տարակուսանք էին հարուցում նաեւ քրդերի նկատմամբ գործադրվող առանձին ջանքերը: 1915-ի դեկտեմբերի 19-ին Կովկասյան բանակի նորընծա գլխավոր հրամանատար Նիկոլայ Նիկոլաւիչ Ռոմանովը հատուկ հրաման է արձակում քրդերի մասին, որի նպատակը, ինչպէս բացատրվում էր, նրանց ոռուների կողմը գրավելն էր եւ հայերի, քրդերի ու պարսիկների հարաբերությունների բարելավումը: Ինչ խոսք, որ հայերը, եւ նշված ազգերից ամեն մեկը, պետք է ողջունեին նման քայլը: Բայց դա այն դեպքում, երբ փաստերն իրենց դեմ չլսուսեին եւ չնշափվեին մեկի կամ մյուսի զգացմունքները: Առանց այն էլ ձերբակալված քուրդ ցեղապետերին ազատ արձակելու վերջը նշված առեղծվածը մնում էր չլուծված:

Այնուամենայնիվ Լազարբեկովն ինքն էլ ցանկալի է համարել հայերի ու՝ քրդերի մերձեցման համար ջանքերի՝ գործադրումը: Ես ինքս էլ, գրել է նա, պատերազմի ժամանակ դրան քիչ չեմ ձգտել, համոզված լինելով, որ դա հեշտ ու կարճատեւ ժամանակի գործ չէ: Նա բացատրում է, քրդերի կուլտուրան դեռեւս այն չէ եւ առայժմ մինչեւ այն աստիճան ցածր է, որ ամեն մի քրդի համար մեծ

հպարտություն է քրիստոնյային թալանելն ու սպանելը: Թուրքերը քրդերի մեջ պատվաստել են խոր ատելություն հայերի նկատմամբ: Նազարբեկովը բերում է օրինակներ, թէ ինչպէս քրդերը հանկարծակի հարձակումներ էին գործում թէ տեղի քրիստոնյա բնակչության եւ թէ հենց ոռուական զորքերի վրա, մեծ վնասներ ու զոհեր պատճառելով նրանց: Եվ ոռուական զորամասերի հրամանատարներն իրենք, ցանկալիին հակառակ, առանձին գործողություններ են կատարել քրդերին սաստելու, նրանց հարձակումները ետ մղելու նպատակով: Քիչ չի պատահել, որ դրա համար հարկ է եղել փոփոխություններ մտցնել ուղղակի գործողությունների պլաններում, զորքեր տեղաշարժել: Լազարբեկովը գրում է, որ 1915-ի դեկտեմբերի 29-ին Արճեշի գորախումբը Սինաք գյուղի մոտ ամբողջ օրը թե՛ կռուի մեջ է եղել քրդերի հետ, «Գեներալ Չեռնոզուբովը խնդրել է անհապաղ օգնության հասնել Արճեշի գորախումբին, հակառակ դեպքում քրդերը կարող էին նրան ծանր վիճակի մեջ դնել»: Հրամանատարությունը մեկ անգամ չէ, որ հարկադրված է եղել նախ միջոց ձեռք առնել քրդերին կարգի հրավիրելու եւ աջտրելու համար, հետո միայն թուրքական կանոնավոր զորամասերի դեմ կռուի մեջ մտնել¹: Այսուհանդերձ չմոռանանք, որ քրդերը երբեմն-երբեմն նաեւ օգտակար ու բարյացակամ են գտնվել հայերի, նույնպէս եւ ոռու զորքի ու հրամանատարության հանդեպ, որի մասին վերելում խոսք եղավ:

Լազարբեկովը հիշում է, որ քուրդ առաջնորդ Սմկոն ոռուաց բանակին դավաճանելուց հետո, ի վերջո, համոզվելով, որ ուժը նրա կողմն է, նամակ է գրել իրեն: Ներողություն է խնդրել եւ աջակցելու խոստում տվել: Դա այն բանից հետո, երբ Թավրիզի տակ կռիվներում ոռուները պարտության են մատնել թուրքական բանակին: Սմկոյի նամակը ուղարկվել է Չեռնոզուբովի հայեցողությանը՝ կից Լազարբեկովի կարծիքն այն մասին, որ «այդ ավազակ խաբբային ետ չպետք է ընդունել եւ նրա կեղծ խոստումներին հավատ ընծայել»: Բայց, մեկ է, նրա խոսքը նորից ուշադրության չի արժանացել: Սմկոյին ընդունել է Չեռնոզուբովը եւ այս անգամ նրան առավել, քան առաջ, պատվի արժանացրել²: Դրանից հետո Սմկոն նորից է գործակցել թուրքերի հետ եւ նորից ոռուական զորքերի դեմ իր գործը լտեսել: Եվ նորից է Լազարբեկովն իր բողոքը հայտնել Չեռնոզուբովին: Իսկ Սմկոն դարձյալ պատվի դափնիների վրա է, որը հարուցել է շատերի զայրույթը³:

Այս բոլորը շատ լավ տեսնում էր Անդրանիկը եւ գուցե թէ բոլորից շատ էլ նա էր տարակուսում ու զայրանում: Այս կետում նրա այքը բոլորից սուր էր, սիրտը՝ զգայուն: Նույն ժամանակների ընթացքում

1 Լ. ա. գ. Բ. Բ. 2 Լ. ա. Բ. Գ. Գ. 3 Լ. ա. Բ. 3:

1 Լ. ա. Գ. 7. Բ. 23-26 (45-52): 2 Լ. ա. Գ. 2. Բ. Գ. 3 Լ. ա. Գ. 2. Բ. 12:

Անդրանիկը հրաման է հղել իր զինվորներին՝ ասելով, որ իրենցից ամեն մեկը քաջ գիտի, թե ով է իրենց թշնամին եւ ով բարեկամը, եւ պահանջ է դրել ամեն մեկի առջեւ՝ լինել ազնիվ, անբիծ պահել այն դրոշմը, որի ներքո իրենք եկել են այս սրբազան կռվին: Խորհուրդ է տվել ու պահանջել՝ խոհեմ լինել ու անթերի կատարել կորպուսի հրամանատար Չեռնոզուբովի ու մյուս հրամանատարների հրամանները¹:

Անդրանիկը շեշտը դնում էր կամավորների բարոյական պարտքի վրա: Որովհետեւ նկատում էր, որ աննշան խոտորումն անգամ կտրուկ եզրակացությունների պատրվակ է դարձվում: Բնորոշ են 1915-ի ամռանը կամավորական ջոկատների կազմակերպական ձեւի վերաբերյալ նրանց հրամանատարների միջեւ ծագած բնական տարաձայնությունները: Եվ երբ հնչեց հասարակական կյանքում այդ ժամանակ կամավորների տրամադրության անկումը բացատրվում էր ռուսական արքունիքում «Հայաստանն առանց հայերի» կամ թե ազատագրված հայկական հողերը այլազգիներով բնակեցնելու ծրագրեր առաջ քաշելով, բանակային հրամանատարությունը փորձում էր դրան որպես պատճառաբանություն հակադրել նրանց տարաձայնությունը: Եվ Կոզկասյան բանակի շտաբային փաստաթղթում արձանագրվում էր, որ ջոկատների հրամանատարների միջեւ համերաշխություն չի եղել: Ըստ որում նշվում է, թե այդ տարաձայնությունը սուր բնույթ է կրել Վանը եվակուացնելու հարցի կապակցությամբ: Այդ քաղաք մտնելուց կարճ ժամանակ անց հապճեպորեն զորքերն այնտեղից դուրս բերելու առեղծվածը խորապես զայրացրել է բոլորին: Մի կողմ թողնելով նահանջի համար քիչ թե շատ լուրջ պատճառի բացակայությունը, մոռացության տալով, որ դրա հետեւանքով Ջեղեթը նորից մտել է քաղաքի բնակչության կոտորածը շարունակելու իր հրեշային դերի մեջ, բանակային փաստաթղթում նշվում է, թե Անդրանիկն այդ տազնապալից ժամին կամավորական ջոկատների այսուհետեւ լինել-չլինելու անհրաժեշտության հարցն է դրել: Ապա ինչպե՞ս: Ինչո՞ւ մերժվեց կամավորներին միատեղ դեպի Վան ընթանալու մասին Անդրանիկի առաջարկը: Ինչո՞ւ զորքերը դուրս բերվեցին Վանից եւ վերստին բերվեցին Վան, երբ այդ միջոցին ռազմաճակատում ուժերի դասավորության եւ փոխհարաբերության մեջ ըստ էության ոչ մի քանակական փոփոխություն չկատարվեց: Եվ այստեղ, այդ՝ բախվել են կամավորական շարժման ռահվիրաները՝ Անդրանիկը, Դրոն, Համազասպն ու Սեպուհը: Բայց դա եղել է կարծիքների բախում, եղել է հարցի լուծումը որոնելու ճանապարհից հեռանալու եւ խաչմերուկում դեմ հանդիման դուրս

1 Լ. տ. ք. 121, ց. 2, գ. 149, ք. 2-3:

գալու իրողություն: Եվ որքա՞ն պետք է այս դեպքում Անդրանիկի զայրույթն ուժգին լիներ, որ նա ասեր, թե անհրաժեշտ է այլեւս ցրել ջոկատները, գտնելով, որ նրանք այսուհետ անիմաստ են ու անօգտակար, որն էլ հասել է մինչեւ բանակային զեկուցագրերը, որոնք առ այսօր պահվում են արխիվադարաններում ու պահվելու են¹:

Սա բավական չէր, դեռ Աբաղիեւի էլ հոխորտանքներն ու հալածանքները: Տեսնում է նա մեկ անգամ Դրոյին հիվանդության օրերին փոխարինող Արմեն Գարոյին: Ջոկատը կռիվներից հետո տեղի քրդերից մի քանի ձի է խլած լինում: Աբաղիեւին էլ զայրանալ էր պետք եւ ջոկատին ու նրա հրամանատարին սխալում բռնելու պատրվակ: Տեղն ու տեղը կարգադրում է ձիերը վերադարձնել տերերին: Եվ սպանում է ջոկատը անհապաղ մարտի առաջավոր գիծ ուղարկել: Հավանաբար անկոտրում Արմեն Գարոն մինչեւ վերջ գրոշի նշանակություն չտար զենեռալի հոխորտանքին, եթե ի վերջո նա չսպանար ջոկատը ցրել²:

Եվ սա այն դեպքում, երբ կամավորները մարտական պարտքը կատարելիս եւ խելահեղ հերոսություն էին ցուցաբերում, եւ կարգապահական պարտաճանաչություն: Ուրիշ էլ ինչի՞ համար պետք է կորպուսի շտաբային փաստաթղթում գրվեր, «Հարձակման ժամանակ վիրավոր կամավորները շարունակում էին առաջ գնալ եւ միայն տաք հազուստ չունենալն էր, որը նրանց երբեմն զրկում էր պահակային ծառայություն կատարելու հնարավորությունից»: Հենց դրա համար էլ Համազասպի ջոկատի հրամանատարին ու զինվորներին կորպուսի հրամանատարությունը հատուկ կերպով «շնորհակալություն է հայտնել իրենց պարտքը ազնվորեն ու փառահեղ կերպով կատարելու համար»³:

Ամեն տեղ Աբաղիեւը բացասական մի-բան տեսել է: Եվ չի զլացել թուրքի եւ քրդի ձեռքից փախչող հայությանը կամավորների ցուցաբերած օգնությունը մինչեւ իսկ հարցականի տակ առնել: Ամեն առիթով աշխատում էր կամավորներին վարկաբեկել, պարզապես հասնել նրան, որ ջոկատները ոչ միայն չավելանային, այլեւ դուրս մղվեին ռազմի դաշտից: Հավանաբար նրան տանջում էր այն ցավը, որ կամավորները առանձին եռանդով էին մարտնչում թուրքական բանակի ու նրա բարբարոսությունների դեմ: Իր այդ ներքին անհանգստությունը նա հանդգնեց գրավոր արտահայտել հենց այն ժամանակ, երբ հայ համարակալությունը հարց էր դնում թե՛ ջոկատների, թե՛ նրանցում կամավորների թիվը ավելացնելու մասին: Նա դա արեց, այսպես ասած, հենց այնպես, հարեւանցիորեն: Երբ հայությունն ասում էր, թե կամավորները պետք են կոտորվող

1 Կողով. ք. 2100, ց. 1, գ. 646, ք. 62: 2 Լ. տ., ք. 63-64: 3 Լ. տ., ք. 64, 65:

հայրությանը օգնություն ցույց տալու համար, նա փորձում էր ժխտել իրական փաստը: 1915-ի դեկտեմբերի 20-ին, երբ ռուսական կորպուսի զորքերը ստիպված են եղել Դիադին ջաղաքի եւ մոտակայքի սուրբ Հովհաննես եկեղեցու միջեւ ընկած հատվածում նահանջի ճամփան բռնել, Աբացիեւը գրավոր տեղեկություն է տվել, թե ընդամենը երեք կամավոր զինվոր է տեսել, որոնք օգնել են իրենց ազգակիցներին, իսկ մնացածները, իբր, վաղուց արդեն շտապել, հասել են իգգիրյան զորակայանը: Մինչդեռ Աբացիեւի կարծիքին հակառակ՝ Չեռնոգուրովը, այլ ոչ թե հայազգի Նազարբեկովը, վկայել է, որ ջոկատներից առաջինը «եական ծառայություն է մատուցել Դիլմանի հայ բնակչությանը, որը փրկություն էր որոնում ռուսաց զորքի մոտ»: Իսկ եթե Նազարբեկովին հարցնեին, ապա նա էս ոչ մեկից պակաս ուժով չէր հաստատի դա:

Աբացիեւը եզակի չէր: Հենց այն ժամանակ, երբ Հայոց ազգային բյուրոն չորս նոր ջոկատների հարցն էր դնում, բանակային հրամանատարության ուղորտներում ինչը փսփսուկով ու շշուկով էր, դառնում է անսքող, ընդունելով նաեւ գրավոր արտահայտության ձեւեր: Կովկասյան բանակային շտաբի փաստաթղթում ասվում է, որ անբարյացակամ, մինչեւ իսկ թշնամական վերաբերմունքը բացահայտ է դառնում ոչ միայն դեպի կամավորական շարժումը, այլեւ հայությունը: Նույն տեղում նշվում է, որ դեռ պատերազմի սկզբից էր առանձին սպաների կողմից այդ բացասական տրամադրությունը ծլարձակում, ընդգծելով գերազանցապես ոչ ռուս ծագում ունեցողների: Բառացի այս նախադասությունից հետո պաշտոնական փաստաթղթում կարդում ենք. «Զբաղարարվելով ջոկատների նկատմամբ անբարյացակամ վերաբերմունքով, հիշյալ անձինք իրենց ատելությունն սկսեցին հասցեագրել առանց այն էլ թուրքերի հալածանքներից խոշտանգված ժողովրդին»: Հրամանատարությունն էլ, իրեն ապահովագրելու համար, հարկ է համարում տալ բացատրություն, թե ջոկատներն էլ իրենց հերթին թույլ են տվել անկարգապահության, մահմեդական բնակչության նկատմամբ թալանի եւ բռնության քայլեր²:

Այս տարակարծություններն են, ահա, ջրի երես դուրս եկել: Ցարական պաշտոնական իշխանություններն ու բանակային՝ հրամանատարությունը հրապարակ են հանում իրենց խորացող անհանգստությունը կամավորական ջոկատների հանդեպ, որը զուգակցվում էր ամեն տեսակի մտացածին մեղադրանքներ նրանց հասցեագրելով: Հենց այս կապակցությամբ է, որ կամավորական ջոկատների կազմակերպիչ բյուրոն հատուկ լիազորություններով Վան է առաքել Թիֆլիսի քաղաքային դումայի ձայնավոր երգվյալ հավատարմատար

1 Լ. տ., ք. 65: 2 Լ. տ., ք. 74, մ. է.:

Ի. Ն. Նունուսեցին եւ բանաստեղծ Հովհաննես Թումանյանին: Նրանց արտագամվել է տեղում ծանոթանալ կամավորական ջոկատների հետ կապված հանգամանքներին: Նրանք ժամանել են: Ընդունել է գեներալ Նիկոլաեւը: Նա էլ բավական լուրջ կերպով կամավորական ջոկատների մասին կամենաշոյիչ խոսքերն է ասել: Նաեւ հերքել է նրանց դեմ տարածված մեղադրական, գլխավոր, մտացածին ամբաստանանքները:

Կամավորական ջոկատները, այդ թվում նաեւ Անդրանիկը եւ իր ջոկատի սպաներն ու զինվորները, լուր ու մունջ չեն տարել հայ բնակչության նկատմամբ թուրքական իշխանությունների եւ նրանց քցակցող բնակչության կիրառած անարգանքները, համբերատար չեն գտնվել հազարավոր, տասնյակ ու հարյուր հազարավոր հայության գլխաջարդի նկատմամբ: Հայությունը վաղ ժամանակներից ի վեր ոչ մի ժողովրդի վրա սուր չի բարձրացրել, առավել էս նրա ազգային արժանապատվության, բնավորության ու բարոյականության սահմանից դուրս են եղել որեւէ ժողովրդի նկատմամբ անարգանքն ու հալածանքը, ուր մնաց թե բռնաբարությունն՝ ու զանգվածային մարդաջնջումը: Ինչ արած, որ նրա բախտի ու ճակատագրի տնօրինումը ստանձնած մարդկանց մեջ նաեւ կույրեր են եղել եւ ականջները՝ խուլ, մեկի ջորոցն են տեսել, այլ ոչ թե մյուսի մախաթը: Չեն կամեցել... ու դեռ ժողովուրդների միջեւ հաշտարար միջնորդի, պատմության արդարադատ դատավորի դերն են ստանձնել՝ որովհետեւ երկրով մեծ են, թվաքանակով՝ շատ, զենքով՝ զորավոր:

1915-ի հուլիսի սկզբին, երբ կամավորների առաջին եւ երկրորդ ջոկատները կազակային մեկ գնդի հետ միասին շարժվում էին դեպի Մշո դաշտի Վարդենիս գյուղը, այնտեղ մոտ երեսուն հազար հայություն էր ապաստանել բարձունքներում, ուր նրանց պաշտպանում էին սասունցի զինյալ քաջերը: Եվ հանկարծ, ինչպես արդեն ասվել է, հուլիսի 11-ին ստացվում է Մանազկերտի շրջանից նահանջի բանակային հրամանը: Սա թե տվյալ շրջանի, թե առհասարակ Թուրքիայի հայաբնակ վայրերի հայ բնակչության համար ստեղծում է անսովոր վիճակ: Նահանջի ճամփան պետք է բռնեին թե Վան քաղաքի, թե դրա շրջակայքի հայ բնակչությունն ու ռուսական զորքերը, որոնց հետ նաեւ կամավորական ջոկատները: Դեպքերի այս շղթայում է, որ նախապատրաստվեց եւ ոտքի կանգնեց Վանի նահանգապետ Արամ Մանուկյանը, որին միացան նաեւ քաղաքում գտնվող կամավորական ջոկատների հրամանատարները: Վերհիշենք, երբ հրամանատար Նիկոլաեւի առջեւ նրանք խնդիր դրեցին թույլ տալ, որ կամավորական ջոկատները մնան իրենց տեղում՝ որպես

1 Լ. տ., ք. 77-80:

բնակչությանը ապավեն, եւ իրենց թողնեն լեռնային հրետանին, հե-
ռախոսային կապի միջոցներն ու գենքի պաշարը, կտրական մերժում
ստացան: Բնակչությանը մնում էր լքել ջաղաքը եւ ճանապարհվել
Բերկրի Կայա: Նրանց հետ էին կամավորների 1-ին եւ 2-րդ
ջոկատները: Այդ ժամանակ միայն, ավաղ, շատ ուշացումով, ծերուկ
Տրուխինը գտնում է հարցի պատասխանը, բանավոր առաջարկում է
ջոկատներին, թե եթե ուզում են մնալ, կարող են: Երբ ընկնում էր
թանկ, նրանք ժամերով էին հետաձգում պատասխանը: Էլ ինչու՞
մնային, երբ բոլորը տեղաշարժվել էին: Անդրանիկի եւ Դրոյի ջոկատ-
ները աճապարում էին Վանա լճի հյուսիսային ափով, Համազասպի
եւ Զեռու ջոկատները՝ հարավային: Վերջինները հուլիսի 22-ին
ժամանում են Վան, որտեղից ուղեւորվում են Բերկրի եւ Խոյ:
Առաջին եւ երկրորդ ջոկատները Ախլաթի ճանապարհով հասնում են
Արճեշ, որտեղից գնում են Բերկրի, այստեղից էլ՝ Իգդիր: Միթե՞
տեսանելի էին կամավորների ջանքերը, նրանց հետքով, նրանցից
առաջ այժմ էլ արեւմուտքից դեպի արեւելք ձգվող հող ու քար
ճամփաներով քայլում էր մարդկանց երկու հարյուր հազարանոց
հսկայական զանգվածը: Անկարագրելի, գուցե եւ աննախդեպ երբ:
Որքան կարողանում էին օգնում էին կամավորները: Բայց, այո՞,
պակաս հուսալի եւ պակաս հուզիչ չէր նաեւ ուղեկցող ռուս զորա-
մասերից գեներալ Տրուխինի կազակների սրտառուչ վերաբերմունքը,
փրկում էին երեխաներին, ամեն՝ մեկն իր ձիու թամբին նստեցնելով
ոչ թե մեկ, այլ երկու եւ երեք հոգու՞: Սրբության պես եւ հավերժորեն
թանկ են պատմության այս էջերը:

Տառապանքները, որոնք բնական էին, տանելի էին զինվորի հա-
մար: Անտանելին շինծուն էր, թերագնահատումն ու արհամարհանքը:
Շարքային զինվորը տարբերում էր մեկը մյուսից ու այդ պատճառով
զայրանում: «Կամավորական շարժման վերջին փուլն էր Բիթլիսի
գրավումը, — հիշել է շարքայիններից Հովհաննես Մանգասարյանը:
— Անդրանիկ այս անգամ կը գտնվեր ռուս զորավար Աբացիեւի
հրամանատարության ներքե: Այս հրամանատարը ռուսական բանակի
հայատյաց զինվորականներից մեկն էր»: Հայի կամար ամենից ավելի
զայրացուցիչ ու սրտամաշ «հայատյաց» բառն է ընտրել զինվորը
որպես չարի բնութագիր: Կլինե՞ր ուրիշ ավելի զայրացուցիչ եւ թունդ
անարգող բառ, որը այնպես խոր խոցեր կամավորի սիրտը, երբ իր
տառապանքի ճանապարհին գնահատման եւ պատմական արժեքա-
վորման ժամն էր մոտենում: «Սաստիկ ձմեռ էր, ամեն կողմ ձյուն:
Բիթլիսի գրավումը անկարելի կհամարվի: Ռուս զորավարը դժվարու-
թյուններ կհարուցանե, չուզեր գրավել Բիթլիսը»: Անդրանիկը իր

1 Լ. Ա. Բ. 83-85:

անձնական պատասխանատվության տակ գիշերը սկսում է հարձա-
կումը եւ գրավում ջաղաքը փայլուն հաջողությամբ: Աբացիեւը սկսում
է ինտրիգները, հեռագրելով Թիֆլիս Կովկասյան բանակի հրամանա-
տարությանը, — շարունակում է իր խոսքը Հովհաննես Մանգասարյա-
նը՝: Մենք չգիտենք, թե ով է այս Հովհաննես Մանգասարյանը,
որտեղից է եկել կամավոր գրվել, ինչպես է կռվել եւ որն է եղել նրա
կյանքի հետագա ընթացքը: Բայց որ նա, ո՞չ քայլալ լեզվաբանը, ո՞չ
մասնագետ պատմաբանը, գտել է այդ «հայատյաց» բառը, դրանով
էլ լուծել է թե՛ զգվաբանի եւ թե՛ պատմաբանի խնդիրը, բանակային
հրամանատարությունը ապերախտ է գտնվել, ցարը՝ խաբեա, եւ
զինվորն է միայն անկախ ազգությունից, որ իր բարոյականությամբ
վեր է բուրդից: Նա չէր կարող չգալ կռվելու, նրան ոչ ոք ուժով չի
բերել, նա եկել է սրտի թելադրանքով, եկել է գուցե թե՛ զոհվելու,
երիտասարդի իր ծաղիկ, կյանքը նվեր բերելու, որ սերունդն ապրի եւ
նորանոր սերունդներ լինեն: Բայց, ահա, սերնդապահականության
նրա կռիվ ճանապարհին մի Աբացիեւ անուն՝ որպես խանգարման
բնորոշ խորհրդանիշ, մի «հայատյաց» բառ՝ որպես դառնության
համապարփակ ընդհանրացում: Մի յուրատեսակ հայտնագործություն
է կատարում զինվորը՝ մարդու չարանենգության գլուխգործոցը իր
երկրի համար մարտնչող զինվորի կռիվն խանգարելն է:

Աբացիեւը կամավոր զինվորներին թալանի մեջ է մեղադրել: Եվ
ջորոցը մախաթ է շինել ու գուցե թե՛ մի երկու անգամ էլ մախաթն
է տեսել ու աշխարհով մեկ արել: Միթե՞ նա չգիտեր, որ Անդրանիկի
ջոկատում եւ հայ կամավորների ամեն մի ջոկատում կար նաեւ
զինվորական դատարան, որի վճիռն ավելի խիստ էր ու սաստիչ,
քան աբացիեւյան խարդավանքը: Մեր ձեռքին է Անդրանիկի ջոկատի
զինվորական դատարանի 1915թ. մարտի 7-ի արձանագրությունը:
Զննվել է «կամավոր Մովսես Հարությունյանի գործը»: Մեղադրանքն
այն է, որ զինվոր Մովսեսը «առանց օրինավոր թույլտվության
գնացել է թուրքաբնակ գյուղերը եւ այնտեղ մի թուրքից խլել մի
հավ», «վերոհիշյալ զանցառության համար Մ. Հարությունյանը եւ՝
թարկվում է երկօրյա բանտարկության»: Վճիռը հաստատում է Անդ-
րանիկը, գրելով այս բառերը եւ իր ձեռքով ստորագրելով: Զննվում
է նաեւ մի խումբ զինվորների գործ, որոնք կանոնադրության հակա-
ռակ հեռացել են զորանոցից եւ կրակ բացել: Դատավճռով նրանցից
ժամանակավորապես խլվում են հրացանները, եւ նրանք ենթարկվում
են 24 ժամյա բանտարկության: Անդրանիկն իր ձեռքով գրել է՝ «տալ
հրացանները հիսունապետերին»: Մի ուրիշ անգամ երկու կամավոր
զինվոր գնացել են Թագաքենդ թուրքական գյուղը եւ «բռնի կերպով

1 ՀՀ ԴԱՍ. ք. 370, գ. 1, գ. 92, բ. 9:

ուտելիք են պահանջել: Ձևնությանը պարզվել է, որ զինվորները բռնություն չեն գործադրել, այլ պարզապես պահանջել են, որը նրանց հանձնարարել է վաշտապետը, միայն թե առանց վերադաս, հրամանատարի հետ համաձայնեցնելու: Ջինվորներն արդար են ճանաչվել: Անդրանիկը դատաբնության արձանագրության թերթիկում իր ձեռքով գրել է. «Արդարացումը ճշգրիտ է: Վճիռը, նկատողություն, որ վաշտի վաշտապետը լուր չէ տված ըշտապին թույլտվության մասին: Անդրանիկ»¹:

Այս չի նշանակում, իհարկե, թե ե՛լ նշված կարգի, ե՛լ ավելի սուր արարքներ չեն կատարել կամավորները: Պատերազմ էր, հայ զինվորը՝ բոլոր զինվորներից առավել տառապած ու զայրացած: Նրա ոչ մի արարքը անուշադրության չի մատնել հոգատա՛ր բանակային հրամանատարությունը: 1915-ի հունիսի 5-ին հետաքրքրվել եւ հարցում է արել Կովկասի փոխարքան, Նույն ինքը երկրամասի ռազմական ուժերի գլխավոր հրամանատար Ալեքսանդր Իվանի Վորոնցով-Ղաշկովը, որին բարեբախտաբար ուղղամիտ գեներալ Նիկոլաեւն է պատասխանել. «...վերջին երկու ամիսների ընթացքում իմ ենթակայության ներքո ունենալով երեք հայկական ջոկատ եւ հետեւելով նրանց ընդհանուր մարտական ծառայությանը, ինձ իրավունք եմ վերապահում վճռականապես հայտարարելու, որ կրանց ծառայության մեջ չեմ տեսել մասսայական բացասական երեւոյթներ, եղել են սոսկ կարգի խանգարման եզակի անցանկալի դեպքեր, որպիսիք արդարացի չեմ գտնում որպէս որպէս հայկական ջոկատների գործունեությանը բնորոշ»²:

Միմոն Վրացյանը, որ ջոկատների նախաձեռնողներից մեկն էր, Նույնիսկ դրանց ստեղծումից մեկ տարի անց նկատում էր, որ դրանցում «բացակայում է գաղափարական ոգին եւ կարգապահությունը»: Նայած՝ որ տեսանկյունից: Եթե դա միայն ձեւն է, ապա հարյուր տոկոսով ճշմարիտ է Վրացյանը, ոչ թե լոկ Արեւմտյան ու Արեւելյան Հայաստանի տարբեր գավառներից հավաքված, տարբեր տարիքների, տարբեր բարբառներով խոսող՝ իրար հասկացող ու չհասկացող, տարբեր հետաքրքրությունների ու շահագրգռությունների տեր, գեւքին տիրապետող ու առաջին անգամ ձեռքները գեւք վերցնող, կրթական տարբեր մակարդակներ ունեցող ու մինչեւ իսկ բոլորովին անուս մարդիկ, որոնք եկել էին հայրենիքի ու հայրենակիցների փրկության ձգողականով, մյուսները՝ բացառապես հայրենի տունն ու հարազատներին անհապաղ փրկելու շտապողականությամբ... Չեւի տեսակետից այս խառնիճաղանջ կոնգլոմերատը կամքի այնպիսի մի ներդաշնակություն էր, որպիսին հազիվ թե լինէր

1 Լ. տ., գ. 270, ք. 2, գ. 147:

2 ՈւՍԱ, գ. Զարգացման, 1915թ., գ. 3490, ք. 47:

աշխարհամարտի մյուս ճամբարներում կովող զորամասերից որեւէ մեկում: Կամավորական ջոկատներին լավը կամեցող, բայցեւ Նույն-ջան խստապահանջ Վրացյանն է գրում, թե՛ «չնայած բազմաքանակ թերություններին, դեռեւս հսկայական է մեր ջոկատների նշանակությունը, ուստի մենք պետք է պահպանենք այն գործը, որի հետ կապված են մեր բաղձանքները»: Վերջին հաշվով նա լավատես է, եւ ուրախ էմ, որ այս քառուսում մեր ջոկատները եւ պահպանվել են, եւ կոփվել որպէս մարտական ուժ¹: Արժեք, որ այստեղ Վրացյանը ընդարձակեր իր տեսադաշտը: Այդ դեպքում ուզեք-չուզեք պիտի գտնէր այն մարդկանց, որոնք այդ «քառուսից» իրենց անվամբ ու անձնական օրինակով կամքի ու ներդաշնակության ձուլարան էին ստեղծել: Անդրանիկն այն Անդրանիկն էր, Դրոն այն Դրոն, Համագասպ ու Խեչոն այն Համագասպն ու՝ այն Խեչոն, որոնք մարտիկների առջեւից էին գնում եւ միայն չէին հրամայում, այլեւ նրանց հետ կողք կողքի մարտնչում էին, իսկ թե ինչպէս՝ կամավորները նոր չէին իմանալու, ուստի եկել էին նրանց ղեկավարությանը արժանի լինելու: Արժեք, որ սա եւս ասեր անձամբ Միմոն Վրացյանը, որին վիճակված էր ոչ շատ հեռու ապագայում, 1920 թվականին, լինելու հայոց վերածնված պետականության...վերջին վարչապետը:

Իհարկե, այն պակաս-պատությունները, որ նկատում էր Վրացյանը, տհաճ ու ցավալի էին: Գլխավոր ցավն այն էր, որ ջոկատների կովի արդյունքը չէր նկատվում, եւ կարծես թե նրանք որքան ավելի քաջաբար էին մարտնչում, այնքան զուգահեռաբար նրանց վերաբերյալ խեղաթյուրվում էր պետական-պաշտոնական կարծիքը: Կամավորները առաջանում էին դեպի Հայոց բնօրրան աշխարհի խորքերը, իսկ նրանց արյունը շարունակում էր հոսել ու հոսել: Զահանա Հովհաննես Տեր-Ավետիսյանցը Մանազկերտից Ամենայն հայոց կաթողիկոսին, Վանը գրավելու հենց հաջորդ օրը, մայիսի 7-ին գրություն է հղել: Եվ դարձյալ զարնվում ենք Աբացիե կոչվածի անզուգական կերպարին: Արյան ծարավ օսմանները արյամբ հեղեղել են Վասպուրականն ու Տարոնը, կոտորած ու մահ է Արճեշում, Արծկեւում, քրդերը աջ ու ձախ սրի են քաշում անզեն հայերին, եւ այդ բոլորը՝ ոռուս հրամանատարների այքերի առաջ: Չէ՛ որ հայերը նրանց սպասում էին, նրանք էլ, ահա, եկել, մինչեւ ո՛ւր էին հասել, բայց դեռ վիճակը չէր փոխվում: Հայերը ոռուս սպաներին խանդաղատանքով հարցրել են՝ ինչո՞ւ չեն նրանք կանգնեցնում իրենց կոտորողին, ինչո՞ւ չեն պատժում, իսկ նրանք պատասխանում են, թե իրենց հրաման է տրված զալ մինչեւ այսինչ կետը եւ այլեւս առանց հրաժանի՝ ոչ մի քայլ: Իսկ սպաներից ոմանք էլ պատասխանում են.

1 ԿՊՊԱ, գ. 2100, ք. 1, գ. 646, ք. 11-13:

«Հետո ինչ որ սպանում են, մենք Կովկասից նոր մարդիկ կբերենք եւ կբնակեցնենք գրաված հողերում», եւ ատելությամբ հայերին վանում էրենցից: Պարզվում է, որ այդպես պատասխանողները զինված մահմեդական չերքեզներ են, որոնց զորախմբի հրամանատարը՝ Նույն այն օւրը, որը Նույն ինքը Աբաղիէն է: Եվ քահանան օգնություն է խնդրում ու արդարություն¹, երբ է՛լ օգնություն հասնողների, է՛լ արդարություն հաստատողների գլուխ կարգված էր Նա, որի դեմ մյուսների զայրույթին քահանան ակամայից Նաեւ իրենն է ավելացնում:

Ուս զինվորը չէր չարամիտ վճիռներ կայացնողը: Նա օգնության եր պատրաստակամ: Զանի՝ անգամ զաղթի ճամփաներին Նա իր ձիու թամբին հայ մանկանն է նստեցրել, քանի՝ անգամ ձնախառը ցեխին ու ցրտին ֆուրգոնն է հայ գերդաստաններին տրամադրել: Եղբայրության օրենքը շարքայիսների համար մեկ էր, վերելիսների համար էր տարբեր եւ խոնակիչների ու դավաճանների:

Պողոթնում է քաղաքակիրթ մարդկության արդարացի զայրույթը:

1915 թ. հոկտեմբերի 13-ին Բեռնի ռուսական հյուպատոսությունը իր արտաքին գործերի մինիստր Ս. Դ. Սազոնովին հայտնել է, թե ինչպես շվեյցարական հասարակական կարծիքն ու մամուլը դատապարտում են հայերի նկատմամբ թուրքերի բարբարոսությունը: Այդ ժամանակ Շվեյցարիայի գերմանական մամուլում լույս էին տեսնում հողվածներ հայերի անհուսալի դրության մասին, ականատեսների բերած բազմաթիվ փաստեր, որոնք ըստ էության այդ ցասումնալից բողոքի արտահայտությունն էին: Շվեյցարիայում ստեղծվել է Հայերի պաշտպանության կոմիտե, որի կազմում մտել են երկրի ականավոր գործիչներ: Այդ Նույն ժամանակ երկրի բարձրագույն դպրոցներում սովորող բազմաթիվ հայ երիտասարդներ դիմել են հյուպատոսին եւ ռուսաց բանակ կամովին ծառայության մտնելու ցանկություն հայտնել: Նրանց Նույնպես, անշուշտ, ոգեւորում էր եւ ձգում հայ կամավորների, Անդրանիկի եւ մյուս ջոկատների հրամանատարների անձնական օրինակը²:

Օրագրողը վկայում է, որ 1915-ի ամառային Նահանջի օրերին Անդրանիկն ընդհարվել է զորքերին ուղեկցող ռուս զենեարալի հետ:

«Այս Նահանջը կատարյալ կեղծիք մըն է, — ասել է Անդրանիկը, — դուք կուզեք, որ Հայաստանը միա առանց հայու, ահա ձեր մտապատկերը»:

¹ ՈՍԿՄ ՀՀՍԵՎՊԱ, ֆ. 579, ց. 1, գ. 1007, ք. 1-2: ² ՈՍԶԱ, ֆ. Զաղարիկի, 1915թ., գ. 3492, ք. 14:

Ուր ե՞ք փախչում, ի՞նչ Նպատակով, շարունակել է Անդրանիկը: Ավելի լավ չէ՞ կանգնել ճակատ ճակատի: Բայց ու՛մ հետ, երբ հակառակորդը կանոնավոր զորք անգամ չէր դուրս բերում ոչ միայն հարձակման, այլ մինչեւ իսկ Նահանջին հետեւելու համար: «Հոս դավադրություն մը եւ խաղ մը կա»¹: Այս անգամ ռուս զենեարալը Անդրանիկին դավաճանության մեջ է մեղադրել եւ զինվորական դատին հանձնելու սպառնալիք կարդացել: Անդրանիկը համառու է եւ հենց Նահանջը գլխավորողին է դավաճան որակել, ավելացնելով, որ ինքը զենեարալի հոխորտանքներից վախեցողներից չէ:

Աբաղիէը, Նախքան Անդրանիկի ջոկատը իր զորախմբի մեջ մըտցնելը, լսել էր, գիտեր Նրա մասին: Վարդգես Ահարոնյանը հիշում է, որ 1916-ի փետրվարին, երբ Նոր միայն Նա հասցրել էր շփվել իր ենթակայության զորքի հետ, անհապաղ ձերբակալել է տվել երեք կամավորների, որպես թե Նրանք անգե՛ն թուրք ու քուրդ են- սպանել: Անդրանիկը միջամտել է, փորձել իր կարծիքն հայտնել: Լսող չի եղել: Չէ՞ որ բոլորը պետք է տեսնեին, որ Աբաղիէն իր խոսքի տերն է: Հայ տղաները առանց հարցաքննության հանձնվում են զինվորական դատարանին:

Կարճ ժամանակ անց Նորից Աբաղիէի կամքը դրսեւորելու առիթ է լինում: Ջոկատն անցնում էր Գրգուռի եւ Խուրթի լեռնալանջերով: Չյունաբուլը փակում էր զինվորների այքերը, սառեցնում քիթն ու ականջները, շնչահեղձ՝ անում: Դիրքերում ոչ կանգնել էր լինում տեղում, ոչ դուրս գալ, քայլ անել, ոչ էլ՝ ձյունաշաղախ սառը հողին պառկել: Անդրանիկը մտել էր մի թոնրատուն, որտեղից ոչ մարտերը դիտել էր լինում, ոչ էլ ղեկավարել: Ցրտից ճարահատյալ մի զինվոր գալիս բացատրում է, որ այլեւս դիմանալ չի լինի, որ ոչ իրենք, ոչ էլ թուրք զինվորները դիմացի կողմում կռվել չեն կարողանում, ուստի ճիշտ կլինի, եթե Նահանջի հրաման տրվի, եւ զինվորները ետ քաշվեն մի ապահով տեղ, մինչեւ բուքը դադարի: Անդրանիկը Վարդգեսին զինվորի հետ ուղարկել է Աբաղիէի մոտ ետ քաշվելու խնդիր դնելու համար: Չարմանալի բան է պատահել: Աբաղիէը սիրալիոր ընդունել է, համաձայնել Անդրանիկի կարծիքի հետ, դադարեցրել է կռիվն ու զինվորներին թույլ տվել ետ քաշվել: Հաջորդ օրը Աբաղիէն իր մոտ է հրավիրել Անդրանիկին: Դարձյալ սիրալիոր է: Նստեցրել է կողքը, սուրճ է հյուրասիրել: Վերջն էլ Անդրանիկին հարցուփորձ է արել, թե որ ճամփաներով ավելի ճիշտ կլինի վաղվա երթը: Անդրանիկը Աբաղիէի վերջին միտքը չի կռահել: Հոժարությամբ բացատրել է ու մատնացույց արել քարտեզի վրա: Ամեն ինչ պարզ է դարձել հաջորդ օրը: Աբաղիէը Անդրանիկի նշածով զորքին

¹ «...օրագրութիւն», էջ 34-35:

առաջ շարժվելու հրաման է տվել, առջետում՝ հենց իրեն Անդրանիկի ջոկատը: Ռուսներին ու կազակներին խղճացել է, բացատրում է Վարդգես Ահարոնյանը, հայերին է առաջ մղել, միզուցե նրանց արյունը կարմիր չէ: Այստեղ Սեպուհը ճիշտ կլիներ առաջամարտիկի դժվարին դերից խուսափելու իր տեսությամբ: Բարեբախտաբար, առանց Սեպուհի բացատրության էլ Անդրանիկը կոահել է, բայց առայժմ հարմար չի գտել հրամանը չկատարել: Այսպես էլ, մինչեւ Բիթլիսի դարպասները, առաջապահի մեջ են եղել Անդրանիկն ու նրա զինվորները եւ երեւոյցները խփել են հակառակորդին, առաջինն էլ իրենց վրա են վերցրել նրա հարվածը¹:

Բիթլիսի ճանապարհին Աբաղիեղ Անդրանիկին թուրք լեզուներ բռնելու հանձնարարական է տվել: Անդրանիկը կատարում է հանձնարարությունը: Զննելով գերեվարած թուրքերին, Աբաղիեղ բարձր հրամանատարությանը զեկուցում է, որ անհնար է դեպի Բիթլիս առաջանալ եւ, առավել եւս, քաղաքը վերցնել: Մինչդեռ Անդրանիկը հակառակ կարծիքի է. «զվխովս կերաշխավորեմ, որ կարելի է Բիթլիսը գրավել անմիջապես»: Ահա, ուրեմն, վրիժառության պատրվակ: Հենց որ Ղատվան են մտնում, պատմում է օրագրողը, Աբաղիեղ շտապում է Անդրանիկի զինվորների վրա օգել այնտեղ մի քանի կանանց եւ երեխաների սպանության մեղքը: Ըստ որում առանց ստուգելու, քառանգ պարզելու: Մինչդեռ սպանված երեխաների մեջ չթափափվածներ կային: Առանց այդ էլ հայտնի բան էր, որ քրդերի ու թուրքերի տներում եղած հայ կանայք էլ քրդական ու թուրքական տարազ էին կրում, ուստի հեշտ չէր հապճեպով որոշել, թե որն ինչ ազգի է: Մինչդեռ սին մեղադրանքը բարոյական ապտակ էր, որ ուզում էր հասցնել Աբաղիեղը: Սրանով չբավարարվելով, մի քանի օր անց կռիվների ժամին հայտնվում է նա եւ հանդիմանում կռիվ մեջ գտնվող զորամասերի հրամանատար զեկուցելու Ֆիլիպովին, թե ինչու են հայ կամավորները անգործ մնացել ու կռվին անմասնակից: Ֆիլիպովը չի ընկրկում. «Հակառակի պես, — ասում է նա, — առավոտյան ժամը 4-ից մինչեւ հիմա հայ կամավորն է, որ կռվում է, եւ մենք մեր հաղթանակի համար նրանց ենք պարտական»: Չի զլանում Ֆիլիպովը նաեւ մատնացույց անել, որ այնտեղ, հեռվում «պառկած զինվորները ուս զինվորներ են»²: Ղրանից հետո, ճիշտ է, Աբաղիեղը կարծես թե մեղմանում է, բայց, մեկ է, նա արդեն իր ասածն ասել էր, ու իր դեմքն էլ պարզել էր: Չէին ուզենա Անդրանիկն ու հայ կամավորները կողմնակալ հրամանատար ունենալ: Բայց սա էլ դեռ ոչինչ:

1 Վ. Ահարոնյան..., էջ 86-89, 95-96: 2 «...օրագրություն», էջ 40-43:

Բիթլիսը շեն քաղաք էր, լքված ու չլքված տներում՝ բազում տեսակի գորգեր, կերպասներ ու հնամենի կահկարասիք: Բացառված չէր, որ մեկնումների ախորժակը գրգռվեր եւ նա ձեռքը երկարեր: Խորամանկ Աբաղիեղը հասկանում է, որ Անդրանիկն ու նրա զինվորները դա չպետք է տեսնեին: Ուստի քաղաք մտնելուց հետո նա որոշում է նրանցից ազատվելու համար ջոկատը շտապով այլ ուղղությամբ ուղարկել: Անդրանիկը հասկանում է բանի էությունը: Անմիջապես Վարդգեսին թելադրում է իր մերժողական խոսքը.

«— Գրե, ...ըստ, որ վաղը չեմ երթար»: Աբաղիեղին նորից ներկայանում է իր կամքը թելադրելու հարմար առիթը: Պետք է կոտրել Անդրանիկին: Ռուսերենի մեջ վարժ Վարդգեսը Անդրանիկի զայրալից պահանջով գրիչ է վերցնում ձեռքը: Եվ դեպի Կովկասյան ռազմա-ճակատի հրամանատարին է սլանում Անդրանիկի բողոքն ու զայրույթը Աբաղիեղի դեմ:

Ըստ երեւույթին շտապ սաստող պատասխան է եկել: Աբաղիեղը, հարգալից ու սիրալից, Անդրանիկին ու վաշտապետ Սմբատին իր մոտ է հրավիրել: Վարդգեսը թարգմանել է: Միտքն այս է. ինքը, Աբաղիեղը, հարգում եւ զնահատում է Անդրանիկին: Ինչու՞ է իր դեմ զուր տեղը բողոք հղել:

Անդրանիկն էլ, երեւում է, կարող էր այդպես խոսել: Ուստի սկսել է, թե ինքն էլ գեներալի դեմ «բան չունի», բայց եւ այնպես, ինչքան էլ ուզենա, լռել չի լինում, որովհետեւ հայ զինվորների հետ նա արդարամիտ չէ: Սկսելով այս փափուկ բառերով, վերջը սրում է Անդրանիկը, դիմելով Վարդգեսին. «ըստ՝ գեներալին, որ ես չեմ ուզեր այլեւս իր հրամանին տակ մնալ»:

Ինքնասիրությունը վիրավորված Աբաղիեղը ոտքի է կանգնել: Անդրանիկն էլ տեղում նստած չի մնացել:

Սա վերջին հանդիպումը չէր, եւ այստեղ չէ, որ Անդրանիկն ասել է ամենից ավելի խիստ ու ընթացքին թերեւս ամենից ավելի արժանի բառերը: Դեպքից մի քանի օր անց պարենն սպառվել է, եւ օրեր շարունակ Անդրանիկի ջոկատը մնացել է առանց սննդի: Դա այն ժամանակ էր, երբ ջոկատն այնուամենայնիվ Բիթլիսից ելել էր, Աբաղիեղի աչքից հեռու էր, բայց ոչ տեսադաշտից դուրս: Ուստի նա գիտեր, որ երրորդ օրն է, ինչ ջոկատը, ինչպես ասում է Վարդգես Ահարոնյանը, մի պտղունց անգամ հաց չուներ: Եվ նորից Անդրանիկը գրիչը ռուսագետ Վարդգեսի ձեռքն է տալիս: Այս անգամ այլեւս Վարդգեսը ի վիճակի չէր Անդրանիկի ուզած մտքերը ուրիշ բառերով գրելու:

Գուցե թե ուրիշ ոչ մի անգամ Աբաղիեղն այսքան պարտաճանաչ չէր եղել իր ստորադասին պատասխանելու հարցում: Երկու ժամ

չանցած եկել է հեռագիրը, որով Անդրանիկի ջարտուղարի դեր կատարող Վարդգես Ահարոնյանին, անպատշաճ բառերի համար, ձերբակալելու եւ անհապաղ Բիթլիս ուղարկելու ցուցում է տրվել: Այդ պահին պետք չէր, որ որեւէ մեկն Անդրանիկին ասեր, թե ով է ինքը: Պիտի թողնե՞ր, որ Աբացիեը համարձակություն չունենալու պատճառով իրեն պատժելու փոխարեն Վարդեսին, իր ջարտուղարին, իր հարգած հայ գրագետ Ավետիս Ահարոնյանի որդուն պատժեր: Անդրանիկի պահանջով Վարդգեսն այս անգամ գրեց, Վարդգեսն իր հրամանն է կատարել, բարի եղեք ինձ պատժել: Այս անգամ Աբացիեը գերադասել է խուսափել անախորժություններից, Անդրանիկին է հանձնել ու վերապահել Վարդգեսին պատժելու պարտականությունը¹: Միայն թե այնպես պետք էր պատժել, որ չխանգարեր նրա պարտականությունների կատարմանը: Այս փափկությունը անդրանիկյան կոշտության արձագանքն է:

Օրեր անց, երբ Բիթլիսը գրավված էր, քաղաքում Աբացիեը երեսուրեք օրեր անընդմեջ էր գալիս մի հայ կամավորի դիմաց, որն, իրոք, մի գորգ շալակն առած գնալիս է լինում: Սրանից էլ լավ առիթ: Որտեղի՞ց թե՛ այդ գորգը հարցին կամավորը պատասխանել է, թե մի կազակից է գնել: Հարցը ձեռակալ եր, պատասխանի մեջ խորամուկ լինելու ցանկություն սկզբից էլ չկար: Կամավոր զինվորը անմիջապես ձերբակալվում է: Իսկ Աբացիեը զորամասի համար արձակված իր հրամանի մեջ հատուկ ընդգծում է, թե հայ կամավորները Բիթլիսը թալանում են, եւ ինքն էլ անձամբ նրանց տեղում բռնել է: Եվ, այսպես, հայերին աբացիեյան ամբաստանությունների մի ամբողջ շարան²:

Մի օր էլ Անդրանիկն է կանգնում Աբացիեին դեմ հանդիման: Եվ այս է եղել նրա խոսքի իմաստը.

— Առանց լռելու պարգելու, շտապեցիր եզրակացնել, թե սպանված կանայք ու երեխաները թուրք ու ջուրը են, երբ չորս կողմը հազարավոր սպանված ու մորթոտված հայերի դիակներ էին.

— շտապեցիր եզրակացնել, թե եթե ռազմի դաշտում մի չկովոր զինվոր է, դա էլ անպայման հայն է եւ ուրիշ ոչ ոք.

— մի գորգ մի հայի մեջքին տեսել ու անմիջապես գտել ես, թե այս է որ կա՞ հայերն են Բիթլիսը թալանողը եւ դարձյալ ուրիշ ոչ մեկը:

Այսպես պատմում է օրագրողը եւ վկայակոչում Անդրանիկի նաեւ հետեւյալ համառոտագիր խոսքը Աբացիեին, թույլ տուր խուզարկեմ ռուս պաշտոնյաների տները եւ այնտեղ մեկից տասը, քսան գորգ կհանեմ: Այս մեկ: Զաղաքի 16 հազար հայությունից հազիվ երեք

1 Ա. Ահարոնյան... էջ 111-114, 118-119: 2 «...օրագրությունը», էջ 40-43:

հարյուրն է մնացել, իսկ թե՛ ցավ է պատճառում միայն մի երկու մահմեդականի, ընդունեք, սպանությունը: Միթե՞ այդքանը բավական չեղավ, ուզում ես մի քանի հայի էլ ինքդ անձամբ սպանել տալ...:

Բարեբախտաբար, Լազարբեկովը ուղղակի հենց Բիթլիսի վերաբերյալ թողել է այնպիսի նկարագրություններ, որ վերացնում են ամեն մի տարակուսանք. «Ականատեսների պատմածով այդ բռնությունները, թալանն ու զազանությունները սուկալի էին: Մեղքը, իհարկե, ընկնում է գլխավորապես վերին հրամանատարության վրա: Նա պետք է դա նախատեսեր: Զնած կանանց քարջ էին տալիս անկողնուց, վերցնում էին կամ, ավելի ճիշտ, նրանց վրայից պոկում էին թանկագին զարդերը եւ բռնաբարում էին: Մի խոսքով, քաղաք մտածներից շատերի նպատակը, ինչպես դա միշտ լինում է, որքան հնարավոր է թանկարժեք իրեր եւ փող հափշտակելն է»: Եվ անմիջապես գրում է, որ «բուրդից շատ հափշտակել են, իհարկե, կազակները», ավելացնելով, որ, այո՞, հափշտակել են նաեւ մյուս հրաձիգ զինվորներն ու հայկական ջոկատների զինվորները: Եվ տեղն ու տեղը զարմանք է հայտնում, որ ինչ-ինչ պատճառներով կովկասի փոխարքային հայտնվել է միայն հայերի կատարած բռնությունների մասին: Եվ եզրակացնում է. «Այդ կշտամբանքը (հայերի հասցեն)՝ 4, 4.) արդարացի չէ, քանի որ հափշտակումներն ու սանձարձակությունները եղել են ընդհանրապես Բիթլիս մտած բոլոր զորամասերի կողմից»²: Ապա Լազարբեկովը պատմում է այն, ինչ տեսել է ինքը երեսուրեք օրեր եւ ինչի մասին, որ նրան զեկուցել են իր ենթակա սպաներն ու զինվորները:

Եղել է մարտի առաջին օրերին: Մուշից պարկերով, կազակ զինվորների հսկողությամբ, դուրս են բերել մեծ քանակությամբ հարստություններ: Պարզվել է, որ դա ռուսական զնդերից մեկի յասավուլ Բաբիեի՝ Բիթլիսում զավթած իրերն են եղել:

Լազարբեկովը հիշում է, որ ռուսական հրաձիգ զնդերից մեկը Բիթլիսը գրոհելու ժամանակ զուխը չի կորցրել եւ բազմատեսակ ու մեծ քանակությամբ հարստություններ է հափշտակել, այդ թվում նաեւ թանկարժեք կահույք, որոնք հապճեպորեն ուղարկվել են թիկունք: «Ճավոք սրտի, ինքը՝ հրամկազմը, իր գործողություններով կամա թե ակամա խրախուսում էր այդ դիակապտությունը», — գրում է Լազարբեկովը եւ անմիջապես օրինակ է բերում, անձամբ կորպուսի հրամանատարը, իր թիկնապահի միջոցով դիմել է կազակներին, նրանց, որոնք բուրդից ավելի եռանդուն էին հափշտակումների մեջ, թե՛ չե՞ն կարող արդյոք իր համար լավ գորգ ձեռք բերել: Ինչու չէ, բերել են մի քանիսը, որոնք նա գնել է³: Իրականում, օրինակներ

1 Ա. Ա.: 2 «Հուլիսի 45, գ. 11, ք. 20-21»: 3 Ա. Ա., ք. 21:

րով բացատրում է Լազարբեկովը, որ եղած ամեն մի սողկալի բան ուռճացվելով վերագրվում է հայերին, եւ նրանց բոլոր դրականը մոռացության է տրվում: Որ կազակներն են անում, գրում է Լազարբեկովը, ոչինչ: Բայց հենց որ հայ կամավորներն են անում, անմիջապես՝ դաշտային դատի են տրվում, գնդակահարվում: «Ամբողջ թուրքիան հափշտակված է, բոլոր գորգերը տեղափոխված են Կովկաս, մետաքսյա շորերը հազնում են ծախու կանայք: Պա չի երեւում: Բայց հենց որ հայերը մի կազակից կամ զինվորից մի կով անեն, կբռնան՝ դիակապտություն է, եւ կաճապարեն հասցնել փոխարքային»¹:

Եվ դեռ այս ամենից հետո էլ բոլորին քաջատեղյակ Աբաղիւն Անդրանիկի դեմ բողոք էր ուղարկել կորպուսի հրամանատարին²:

Սրանից հետո է, որ Անդրանիկը հղել է իր մարտյան հրաժարականը: Անկախ նրանից, թե Անդրանիկը ինչ նկատողություններով էր գրել, բանակային հրամանատարությանը դա եւ ձեռնատու էր, եւ հենց լավ ժամանակին: Հրամանատարությունը մտածված կարգով կամավորներին համբերությունից հանում էր, զայրացնում այն աստիճան, որ նրանք իրենց դնեին իրենց տուն վերադարձնելու ջոկատները ցրելու պահանջը: Վերելում ասվեց, որ 1915-ի դեկտեմբերին Պանդուխտի (ինչակյան, վեցերորդ) ջոկատի երկու հարյուր կամավորներն էին հրաժարվել կատարել իրենց ռազմի դաշտից ետ քաշելու, հանգիստ տալու հրամանը, գիտակցելով, որ դա ոչ թե հանգստի, այլ իրենց մեկուսացնելու նպատակն է հետապնդում: Ինչպես տեսանք, 1916-ի հունվարից դեռ շատ առաջ էր հրամանատարության գրություններում պարզ ու որոշակի խոսվում այն մասին, որ պետք է ջոկատների նկատմամբ զգույշ լինել եւ ձեռնպահ մնալ նոր ջոկատներ կազմելու հարցում³:

Գրգռող մանրուքներ են եղել: Այդպիսիք հարկ է համարել, ճշմարտությունը գալիքին հանձնելու համար, իր հուշերում գրի առնել վերելում քանիցս հիշատակված գեներալ Կուլեբյակինը: Եւ տեղյակ է եղել Անդրանիկի հրաժարականին եւ հենց այդ նկատողումով էլ պատմել է հետեւյալը.

«Անդրանիկը գեներալ Աբաղիւնի հայտնում էր, որ ջոկատի զինվորները չափազանց հոգնած էին, որովհետեւ անդադար արշավով մասնակցել էին Արձեշից սկսած Վանա լճի երկայնքով տեղի ունեցած ծանր մարտերին, որոնք եղել էին ձմռան ցրտին ու բքին, երբ նրանց կոշիկներն ու շորերը մաշված էին, իրենք էլ սոված էին եւ լոջորեն ցանկանում էին, որ իրենց թեկուզ մի կարճատեւ հանգիստ տրվի»: Սա, այսպես ասած, շարային բնույթի, մարտակարգի հետ կապված հարց է: Բայց եղել է նաեւ բարոյական, հոգեբանական

1 Լ. տ., ք. 26: 2 Լ. տ., ք. 44: 3 ԿՊՊԱ, ք. 2100, ց. 1, գ. 646, քք. 20-21:

բնույթի մի պատճառաբանություն, որը դարձյալ հիշում է Կուլեբյակինը: 1916 թվականի փետրվարի 18-ի եւ 19-ի մարտերի մասին հենց անմիջապես, ամսի 19-ին, Աբաղիւնը իր 636-րդ հրամանում տվել է մարտերի հետեւյալ նկարագրությունն ու արժեքավորումը. «Երեկ գիշերը հրաձիգները կազակների հետ միասին համարձակ սվինամարտով ետ են մղել Բիթլիսը պաշտպանող թուրքերին, գրավել են քաղաքը եւ նրանց հետապնդել Սդերո տանող մեծ ճանապարհին: Շրջանցող շարասյուները, հաղթահարելով ձյունը, թշնամունքում են Բիթլիսի մերձակայքի բարձունքներից: Գիշերային մարտում գերի են վերցվել մոտ 90 սպա, 500 զինվոր եւ 20 հրանոթ: Մեր կորուստները աննշան են»:

Ասես թե ոչ կամավորներ են եղել, ոչ էլ՝ հայկական ջոկատ: Կուլեբյակինը շարունակում է. «Այսպիսով, հրամանը լուրջան է մատնում Անդրանիկի ջոկատի այնքի ընկնող մարտական գործը»: Կուլեբյակինը, համոզիչ լինելու համար, փաստ է բերում. «Բացի դրանից, նույն ժամանակ էլ հայտնի է դարձել, որ երկու լեռնային հրանոթները վերցնելու պատիվը վերագրվել է 6-րդ հրաձգային զնդի 13-րդ վաշտին, այն դեպքում, երբ դրանք խփվել-լուծվել են 1-ին ջոկատի մարտիկների կողմից, ըստ որում անձամբ դասակապտ Ալեքսանդր Հարությունյանցն է գնդակահարել հրանոթը պաշտպանող թուրք սպային եւ նրանից վերցրած ատրճանակն ու հեռադիտակը հանձնել ջոկատի հրամանատարին», այսինքն՝ Անդրանիկին:

Նկատենք, որ այս մեջբերումը գեներալը քաղել է Անդրանիկի բողոքագրի տեքստից, որը նա հասցեագրել է Աբաղիւնին փետրվարի 20-ին, այսինքն նրա հրամանին ծանոթանալու նույն կամ հաջորդ օրը:

Կուլեբյակինը Աբաղիւնի այս «վրիպումները» կամ շրջանցումները խիստ բացասաբար է գնահատում. «Այս բոլորը, որոնք ժամանակին հանգամանքների բերումով համընկել են ուրիշ դեպքերի հետ, ուժգին կերպով ազդել են առանց այն էլ հոգնած ու ջրային հայերի վրա, որոնք խոր հիասթափություն էին ապրում»:

Կուլեբյակինը պարզ ու որոշակի նկատել է, որ այդ ամենից կամավորները եզրակացրել են, որ իրենց ծառայությունները ոչ միայն չեն գնահատվում, այլեւ «վերագրվում են ուրիշների, որ իրենց հանձնարարվում են գործեր, որոնք կարող էին հանձնարարվել ավելի քիչ հոգնած զորամասերին, որ իրենց նկատմամբ, որպես հայերի, ուսմների համեմատ ավելի վատ են վարվում...»: Մեղմացնելու նպատակով, Կուլեբյակինը ենթադրում է, թե՛ կոնվերտի թոհուրոն էր, հնարավոր է, որ դրանք վրիպումներ լինեին, այլ ոչ մտացածին: Անդրանիկը համենայն դեպս բողոք է գրել Աբաղիւնին, որը ըննարկում

է նշանակել, պարզելով Անդրանիկի պատմածի ճշմարիտ լինելը¹: Պայելու ուշ էր, երբ հնարավոր էլ չէր սխալի վրա համարել: Կամավորները արդեն տեսել էին եւ իրենց եզրակացություններն արել:

Բայց ընդունենք, որ պատմածը, իրոք, մանրուք էր: Իսկ ինչպես բնութագրենք հետեւյալը, որին դարձյալ տեղյակ է եղել Կուլեբյակին, թե՛ փաստը վերաբերում է Չեռնոզուբովին:

Անդրանիկը 1915-ի դեկտեմբերին ռազմաճակատ վերադարձի ճանապարհին խոյուն այցելել է Չեռնոզուբովին: Եվ հենց այդ ժամանակ էլ նրան ասել է, որ հրամանատարությունը առհասարակ ուշադիր ու հոգատար չէ կամավորների նկատմամբ: Չեռնոզուբովը ձեւացնում է, թե դժգոհությունը նրա համար է, որ Դիմանի կոպի համար կամավորներին դեռեւս շքանշաններ չէին տրվել, խոստանում է հարցն առաջիկայում հեշտությամբ լուծել: Ասելով, թե բանը միայն շքանշանը չէ, Անդրանիկը չի թաքցրել, որ կամավորներն անզամ նկատում են ինչ-որ անբացատրելի անբարյացակամ վերաբերմունք իրենց նկատմամբ եւ որ հրամանատարության կազմի նման շուկները զալիս հասնում են իրենց: Չեռնոզուբովը, պարզ չէ՞, հերքել է դրանք եւ ընդգծել իր բարյացակամությունը դեպի հայերը: Այդ դեպքում, առանց չակերտները բացելու, Անդրանիկը հարցրել է, թե իսկ ինչպես պետք է վարվել քրդերի զինված ուժերի հետ, որոնք մշտապես հետեւում են ռուսական զորամասերին եւ անհանգստացնում նրանց: Նորից պատասխանը համաձայնությունն է, պարզ չէ՞, որ դրանց էլ «պետք է ուղղակի ջարդել, եւ ես խնդրում եմ Արճեշ հասնելուն պես անմիջապես միջոցներ ձեռք առնել դրանց դեմ, մանավանդ որ շուտով ձեր զորագունդը թնդանոթներ էլ կտանա»:

Հոյակապ խոստումներ:

Չեռնոզուբովը պարտավորվում է անհապաղ համապատասխան կարգադրություն անել զորախմբի հրամանատար գեներալ Կուլեբյակինին: Վան հասնելուց հետո Անդրանիկը հանդիպում է Կուլեբյակինին: Պարզվում է, որ նա ոչ մի բանից տեղյակ չէ, եւ Չեռնոզուբովը իրեն ոչինչ էլ չի կարգադրել ո'չ շքանշանների, ո'չ քրդերի, ո'չ էլ հրանոթների մասին: Կուլեբյակինը պարզելու համար հարցնում է՝ իսկ Չեռնոզուբովը, որեւէ գրություն չի՞ տվել իր հասցեով: Ոչ մի նման բան: Կուլեբյակինը ստիպված է լինում անկեղծ լինել, ասելով՝ «Պա նրան նման է»: Եվ նա կատարում է Անդրանիկի համար անսպասելի, հայտնելով, որ գերագույն հրամանատարը հեռագիր է հղել քրդերի հետ մերձենալու, նրանց եւ հայերին հաշտեցնելու մասին: Ինչ խոսք, Անդրանիկն ինքն էլ դեմ չէր հաշտությանն ու մերձեցմանը: Բայց նրա խոսքը գնում էր ուղղակի այն քրդերի

¹ ՀՀ ԴԿԱ, 3. 121, գ. 1, գ. 8, թթ. 54-56 (310-317):

մասին, որոնք զինված, ամեն քայլափոխի հանգիստ չէին տալիս, ռուսական զորամասերին, խափանում էին նրանց ծրագրերն ու վնաս հասցնում: Տարբեր բաներ էին: Անդրանիկն ասել է, թե՛ «Ա՜նք, հայերս, քսան-քսանհինգ տարի եղբայրություն ենք առաջարկում նրանց, բայց իզուր»: Եվ բերում է օրինակներ, թե ինչպես քրդերը կոտորել են ոչ միայն հայերին, այլեւ հարձակվել են կազակների ու ռուս զինվորների վրա: Կոպի ժամ էր՝:

Տհաճություններն ու անախորժությունները զանազան բնույթի էին, իմաստն էր նույնը: Բնականաբար, հայկական մամուլը խանդավառված էր եւ զուևագեղ նկարագրում էր կամավոր ջոկատների կոիվները ռազմի դաշտում: Պարզվում է, որ սա էլ վիրավորում է Կովկասյան բանակի հրամանատարության ինքնասիրությունը: 1915-ի մարտի 4-ին ռազմական այդ հաստատությունը պաշտոնական գրություն է ուղարկել Թիֆլիսի ջաղաքագույն եւ հայ հասարակության ղեկավար դեմբերից Ալեքսանդր Խատիսյանին, մամուլում ուռճացվում է կամավորների դերը ռազմի դաշտում, որը «մթազմում է բանակային զորամասերի դերը»²: Խնդրվում էր, որ թերթերի էջերում ճշմարտություն հաստատվի: Մինչդեռ անճշտության հարց չկար, պարզապես ոմանց ինքնասիրությունն էր շոշափվում: Եվ այսպիսի գրություն մի անգամ չի ուղարկվել հայ հասարակայնության ղեկավարներին:

Վանում, ռուս բանակի մտնելուց հետո, ով ինչ եւ ինչքան թալաներ, մեղավորը միշտ էլ հայերն էին: Կովկասյան բանակի շտաբի պետ Յուդենիչի գիտությամբ Վանում հատուկ դաշտային դատարան է հիմնվում, որի ուշադրությունը բեւեռվում է հենց միայն հայության գործողությունների վրա, դե, քպնի որ մնացած բոլորը անմեղ էին ու արդար:

Հեշտությամբ չեն տարել հայերը սաստումները: Նույն Վանում կամավորները զայրույթից կրակ են բացել իրենց սաստող զինվորների դեմ³: Չկարծենք, թե Անդրանիկն էլ շատ համբերատար է եղել եւ լուռ ու մունջ սպասել մինչեւ 1916-ի մարտի բիթլիսյան օրերը: Դեռեւս 1915 թվականի սեպտեմբերի 26-ին էր նա երեւանից բողոք հղել Կովկասյան բանակի հրամանատարի հասցեով եւ հրաժարականի հարց դրել: Պա կարեւոր փաստաթուղթ է, մեջ բերենք անփոփոխ.

«Նկատի ունենալով, որ 1914 թվականի նոյեմբերի 5-ից մինչեւ 1915-ի հուլիսի 23-ը իմ ղեկավարած 1-ին հայկական ջոկատը մասնակցել է Արաուի, Աշխարհի, Բուրուշ Խորանի, Բելաջուկի, Դիմանի, Ջուլամերիկի, Ուրթաբի, Դատվանի, Բիթլիսի տակ եւ այլուր մղված 21 մարտերի, արժանանալով զորախմբի բոլոր պետերի եւ

¹ Ըստ Վ Ահարոնյանի, «Հայաստան» №48, 49, հունիս, 1917թ.: ² ԿՊԴԱ, 3. 2100, գ. 1, գ. 558, թ. 229: ³ Լ. տ., թ. 332:

գործառնների հրամանատարների ամենալավագույն զովետներին, բայց պաշտոնապես չզնահատվելով ինչպես զինվորներին մարտերում այքի ընկնելու եւ այլ պարզատրումներով, այնպես էլ... ջոկատի ամբողջ մարտական գործունեությունը թողնելով անհայտ ինչպես հասարակությանը, այնպես էլ գուցե թե նաեւ Չերոք բարձր պայծառափայլությանը: Մշտապես գտնվելով բոլոր ջոկատների եւ բոլոր մարտերի ավանգարդում եւ, օրինակի համար, միայն Ղիմանի տակ մղված մարտում, ունենալով 25 սպանված եւ 51 վիրավոր, այնուամենայնիվ իմ ջոկատի մարտիկները մնացել են առանց պարզատրման: Նկատի ունենալով այդ բոլորը, ես ստիպված եմ խնդրելու Չերոք պայծառափայլությանը ինձ ազատել 1-ին հայկական ջոկատի հրամանատար լինելուց: Անդրանիկ»¹:

Բանակի հրամանատարը այս կապակցությամբ հոկտեմբերի 3-ին համապատասխան պաշտոնատար անձանց միջոցով հայտնել է, որ՝ «1) ինքը ոչնչով դեմ չէ Անդրանիկին ջոկատի հրամանատարությունից ազատելուն, դա նրա բարի կամքն է: 2) Ջոկատի արժանավոր մարտիկներին՝ ոչ ոք դեմ չի եղել եւ դեմ չէ պարզատրման ներկայացնելուն: 3) Բանակի հրամանատարության ունեցած տվյալներով Անդրանիկի ջոկատը հուլիս ամսին ինքնակամ կերպով ցրվել է»²:

Տարեթվերից երեւաց, որ օրագրությունը եղել է Վանի խայտառակ նահանջից եւ այնտեղ բնակչության արյունահեղ ջարդից հետո: Անդրանիկի զայրալից հեռագիրը հայ ժողովրդի բացարկի խոսքն է իր նվիրյալ որդիների նկատմամբ արջունիքի եւ նրա բանակային հրամանատարության խաբուսիկ, երկդիմի վարքագծի դեմ:

Անդրանիկի հրաժարական խոսքի պատճառը միայն պարզատրելու-չպարզատրելը չէր: Նույն օրը, սեպտեմբերի 26-ին, Անդրանիկը նույն հասցեով հղած իր հեռագրում փաստորեն տարրական այնպիսի բաների դեմ էր բողոքում, որոնք նույնպես անհանդուրժելի էին դարձնում հանգիստ սրտով Վանի կրկնակի ահավոր նահանջից հետո նորից ոտք դնել դեպի Վան տանող ճանապարհը, զոհված ձիերի դիմաց համալրում չի ստացել, որի պատճառով իր տեղակալ Սմբատը, որն առաջիկայում պետք է միառժամանակ փոխարիներ իրեն, չի կարող ջոկատը մարտի դուրս բերել: Եվ ապա՝ «ջոկատն իր ամբողջ ցանկությամբ հանդերձ չի կարող արշավի ելնել» նաեւ այն պատճառով, որ... չէր ստացել անհրաժեշտ պիտույքներ ձեռք բերելու համար սահմանված գումարը³:

Իմացանք հրաժարականի երկու դիմում: Եղել է նաեւ երրորդը: Այն Անդրանիկը հասցեագրել է Չեռնոզուբովին, որը 1916-ի մարտի

1 ԿՈՂԱ, Տ. 2100, ց. 1, գ. 557, ք. 140: 2 Լ. Ս., ք. 141: 3 Լ. Ս., ք. 142:

17-ին հղել է Թիֆլիս՝ Կովկասյան բանակի գեներալ կվարտիրմյուտերին: Ահա այն.

«1-ին հայկական ջոկատը պատերազմի սկզբից մինչեւ օրս ազնվորեն եւ անձնագոհ կերպով կատարել է իր պարտքը հայրենիքի հանդեպ, բայց ջոկատի նկատմամբ գեներալ Աբացիեւի բացահայտ անբարյացակամ վերաբերմունքը ստեղծում է անցանկալի քաջքուն եւ անհնար է դարձնում ջոկատի համատեղ աշխատանքը գեներալ Աբացիեւի զորախմբի կազմում: Ջոկատի նկատմամբ նրա անբարյացակամ վերաբերմունքը նկատվել է սկզբում մանրուքներում, իսկ հետո նաեւ եական հարցերում»: Այնուհետեւ ասվում է այն հրամանի մասին, որը վերելում վկայակոչեցինք գեներալ Կուլբեյակիսի պատմածի միջոցով. «Ջորախմբի N636 հրամանում բոլորովին լուրջան է մատնվում ջոկատի մասնակցությունը մարտերին, երբ որ փետրվարի 8-ից 19-ը ջոկատն ունեցել է 19 սպանված եւ 67 վիրավոր, 32 հոգի՝ ձեռք ու ոտքը սառած: Բիթլիսը գրոհելու ժամանակ 1-ին հայկական ջոկատը թշնամուց խլել է երկու լեռնային հրանոթ եւ 77 հրացան: Ջորախմբի 636 հրամանում ասվում է, որ 1-ին հայկական ջոկատի շարքային զինվորները թալանում են Բիթլիսը: Այդ մեղադրանքը չի համապատասխանում ճշմարտությանը: Եթե հայկական ջոկատի զինվորները մասնակցել են [ընդամենը] անասնակերի եւ պարենամթերքների հայթայթմանը, ապա մյուս զորամասերը գերազանցել են հայերին: Գեներալ-լեյտենանտ Աբացիեւը հենվում է այն բանի վրա, որ անձամբ քաղաքում շրջելիս բռնել է 10 հայի, բայց եթե նա ցանկանար, կարող էր բռնել մի քանի տասնյակ զինվորների մյուս զորամասերից, որը հաստատելու համար համարձակվում եմ հրավիրել Չերոք բարյացակամ վերաբերմունքը Բիթլիսից դուրս բերված ժողովրդական ունեցվածքի վրա: Վերը շարադրվածի հիման վրա պատիվ ունեմ խոնարհաբար խնդրելու Չերոք գերազանցությանը՝ իմ դեկավարած ջոկատն անջատել գեներալ-լեյտենանտ Աբացիեւի զորախմբից եւ միացնել որեւէ այլ զորամիավորման: 1-ին հայկական ջոկատի հրամանատար Անդրանիկ»¹:

Ինչպես տեսանք, այս երրորդը տառացի-բառացի հրաժարական չէր: Այն մասնավորապես նախորդ, մարտի 6-ի, դիմումի հետ ըննարկելիս է որակվել դարձյալ որպես հրաժարական: Իրականում հրաժարականի վերջնական հարցը պոռթկումով ժայթքել է այն ժամանակ, երբ ընդամենը մի քանի օր առաջ նա իր եւ ջոկատի առաջիկա գործունեության պլաններ էր հուշում վերադասին: Մարտի 4-ին, Խասըլոյից, գեներալ Աբացիեւին եւ պատճենը՝ Նազարբեկովին նա առաջարկ էր անում. «Եթե դուք ինձ թույլ կտաք, իմ

1 Լ. Ս. Տ. 2100, ց. 1, գ. 1036, ք. 141:

ջուր և մի որեւէ այլ գումարտակի հետ միասին կգրաւեմ սուրբ Ախաբերիկը եւ կստիպեմ, որ քրդերը մաքրուեն Հոյրից»¹: Նույն օրն ու նույն ժամին Անդրանիկը Աբացիեւին ու Նազարբեկովին հեռագիր է հղել, նշելով, որ Բիթլիսի եւ Մուշի շրջանները, որտեղ նրանք կանգ էին առել իրենց զորքով, «իրեն լավ հայտնի են ինչպես իր անցյալ ծանոթության, այնպես էլ տվյալ պահին ստացած լրացուցիչ տեղեկությունների հիման վրա»²: Այնպես որ մինչեւ վերջին պահն էլ նա գրում էր, որ ինքը կարող է օգտակար լինել, եւ առաջարկում էր իր լրացուցիչ ծառայությունը: Իսկ երբ այդ ժամանակամիջոցում Նազարբեկովից հրաման է ստացել իր ջոկատով արշավի ելնել՝ դեպի Ադերդ, նա հեռագրել է նրան եւ հայտնել, ես հիվանդ եմ, չեմ կարող գլխավորել ջոկատի երթը, որը «երկամսյա անընդմեջ ծանր արշավներից հետո, առանց սապոգի եւ առանց հանգստի, կատարյալ քայքայման է հասել»: Խնդրում էր, որ իրեն տեղակալ նշանակվի եւ նրան հանձնարարվի ջոկատի առաջիկա գործողությունների ղեկավարումը³: Նույն այս միջոցին, մարտի 11-ին, կորպուսի շտաբից հրաման էր տրվում Նազարբեկովին խոր կերպով հետախուզել Ադերդ տանող ճանապարհը, դրա համար առանձնացված ուժերի մեջ մտնելով նաեւ 1-ին հայկական ջոկատը, պահանջելով, որ ձեւավորված զորախումբը հաջորդ օրը եւեթ երթի ելներ եւ անցներ առաջադրանքի կատարմանը⁴: Նույն մարտի 12-ին Անդրանիկը զեկուցագիր է գրել եւ խնդրել, որ թույլատրվի իր ջոկատի անդամներին արձակուրդ տալ, որպեսզի կարողանան զբաղվել իրենց ընտանեկան հոգսերով: Ջորախմբի հրամանատար Նազարբեկովը հաջորդ օրը այն ուղարկել է կորպուսի հրամանատարին⁵: Այսպիսին են, ահա, ռազմի դաշտում Անդրանիկի գտնվելու վերջին օրերի գրագրությունները: Պարզ ու որոշ է նրա ճամպուրակային տրամադրությունը: Մարտի 12-ին գրված ու ստորագրված էր թիկունք մեկնելու վկայական-անցաթուղթը: Ստորագրել էր Նազարբեկովը, հաստատելով, որ 1-ին ջոկատի հրամանատար Անդրանիկը գնում է թիկունք բուժվելու⁶: Ճանապարհը տանում էր Թիֆլիս: Այդ ճանապարհով պետք է վերադառնար խանդավառ գաղափարներով ռազմաճակատ եկած ռազմիկը: Ինչպիսի՞ն էր լինելու վերագարձի՞ նրա տրամադրությունը՝ թողնում ենք ընթերցողի հայեցողությանը:

Վերջում կրկին անդրադառնանք բանաստեղծին:

Աբացիեւին տեսել, նրա հետ հանդիպել է Հովհաննես Թումանյանը: Եղել է դա նախ 1914-ի նոյեմբերին, ռազմաճակատի այն հատվա-

1 Լ. ս., Տ. 2300, ց. 1, գ. 828, թթ. 409, 410: 2 Լ. ս., թթ. 411-413: 3 Լ. ս., թ. 638: 4 Լ. ս., թ. 640: 5 Լ. ս., թ. 689: 6 Լ. ս., թ. 638:

ծում, որում կոիվներին մասնակցում էր հայ կամավորների երկրորդ ջոկատը, երբ հրամանատար Դրաստամատ Կանայանի վիրավորվելուց հետո ղեկավարը Արմեն Գարոն էր: Ճանապարհվել էր էջմիածին-Իգդիրով նոյեմբերի 17-ին⁷: Տեսածն ու լսածը սեղմ գրի է առել ճամպուրդական պստիկ ծոցատետրում: Աբացիեւը օգտվել է առիթից: Կամավորների թալանից է պատմել ու դժգոհել: Թումանյանը գրի է առել, «Եղանք գեներալ Աբացիեւի մոտ: Խոսք եղավ թալանի մասին: Ինքն էլ, Լեբեդիսկին էլ միաձայն պնդում են, որ հայերը թալանով են զբաղված ու թալանել են բոլոր քրդերի ու բոլոր թուրքերի տները»: Երեւում է, Թումանյանը համբերատար ունկնդրել է, իսկ Աբացիեւը, օգտվելով առիթից, երկար ու բարակ պատմել է, տպավորություն ստեղծելու համար, թե եւ ինքը, եւ մյուս բանակային հրամանատարները ներողամիտ են հայերի նկատմամբ: Ճիշտ եւ ճիշտ գտել էր ում ասել հայերի նկատմամբ իր առանձնահատուկ վերաբերմունքի մասին, որ նրա միջոցով, եթե համոզեր, մշուշի մեջ հավերժորեն թաքցներ իրողությունը. «Մենք քրդերին զնդակահար անել ենք տալիս թալանի համար, իսկ հայերին ոչ մեկին չենք պատժել, ձեռքս չի գնում, որ զնդակահար անել տամ եւ մենք հրաման ունենք, որ հայերին առանձնապես հովանավորենք ու զենք տանք»: Շինծու խոսքեր են: Բանաստեղծին հենց այն է պատմել, ինչը արվել է, բայց շուտ տված ձեւով, իբրեւ թե չի արվել: Այդ ինչպե՞ս պիտի ռազմաճակատում տարբերակիչ մոտեցման հրամաններ տրվեին եւ որտե՞ղ են, ապա, դրանք, որ կոիվների օրերի խնամքով պահպանված հրամանագրերում նման բանի չենք հանդիպում ոչ մի էջում: Ցավում է Աբացիեւը, որ հայերը, այդպես վարվելով, քրդերին վանում են ոռոսաց բանակին գերի հանձնվելու մտքից: «Եսպես զնալով, — գրի է առել Թումանյանը Աբացիեւի միտքը, — եթե բոլոր քրդական ցեղերը բարձրանան մեր դեմ, մենք ուժ չունենք — չենք կարող կանգնել, ստիպված պետք է հեռանանք եւ հայերին թողնենք քրդերին ի կեր»: Սա եղել է Էրզրումի նահանգի Բայազետ գավառի Դութախ գյուղում: Նույն տեղում Թումանյանը տեսել է, որ Արմեն Գարոն թալանի դեմ հրաման է արձակել: Թեւե դա էլ պատշաճ արդյունք չի տվել¹: Երեւում է, այդ օրը Աբացիեւը այցի է եկել Թումանյանին եւ դարձյալ թալանից է խոսել²: Այսպես, միակողմանի, պատմել է Աբացիեւը որպես քաղաքավարություն Թումանյանին կա-

* 1914-ի նոյեմբերի 17-ին որոս գալով էջմիածին, դեկտեմբերի 12-ին եղել է Սարիղամիշում, որտեղ գրքերը Թիֆլիսից հանկարծակի հայտնվել է, թե թուրքերը հարձակվելու են Սարիղամիշի վրա, եւ նա հապճեպ վերադարձել է: Տե՛ս Հայաստանի գրականության եւ արվեստի թանգարան (ԳԱԹ), Տ. Հ. Թումանյան, գ. 258, էջ 137:

1 Լ. ս., էջ 63-67, 70-71: 2 Լ. ս., էջ 75:

տարած այցերի ժամանակ, գուցե հաստատ իմանալով, որ, մեկ է, ինչ էլ ինքը պատմի, նրան կհասնեն նաեւ հակառակ լուրերը: Դրանցից մեկը, ըստ Թումանյանի գրառման, այն է, որ Աբացիեը մտերմություն է ունեցել քրդերի հետ, որոնց նա վստահության թղթեր (записка-ներ) է տվել երթերի ժամանակ իրենց առաջնորդելու հանձնարարականով: «Կազակները, — գրում է Թումանյանը, — ման են գալիս, սպանված ու վիրավոր քրդերի գրպաններից հանում են նույն записка-ները»: Արանից հետո Թումանյանի եզրակացությունն է, Աբացիեը հայատյաց է:

Նոյեմբերի 28-ին Թումանյանը եղել է Ալաշկերտում, 29-ին՝ Խուստուփում, 30-ին՝ Ջեյդեկանում, հաջորդ օրը նույն՝ Բայազետի, գավառի Ղարաքիլիսա գյուղում, որտեղ հանդիպել, զրուցել է կորպուսի հրամանատար Օզանովսկու հետ: Նրա հետ են եղել նաեւ վերելում, Անդրանիկի Սասնո հայդուկային կոիվների կապակցությամբ, հիշատակված Լյախովը, որն այժմ կորպուսի շտաբի պետն էր, եւ կորպուսի հրամանատարի օգնական հայ սպա Ա. Շախաթունին¹: Պարզվում է, որ Օզանովսկին հայ կամավորներին ուղղված կոչ է շարադրել եւ մտադիր է եղել հռչակել մինչեւ իսկ կաթողիկոսի հետ միատեղ:

Կորպուսի հրամանատար Օզանովսկուն Թումանյանը հանդիպել էր այս ճանապարհորդության արդեն երկրորդ օրը՝ նոյեմբերի 18-ի առավոտյան ժամը 10-ին: Ղարաձյալ նրա հետ է եղել շտաբի պետ Լյախովը: Եթե ուրիշներին հրամանատարը սովորություն չի ունեցել խոստովանելու, ապա բանաստեղծին, ինչպես նա գրի է առել, ասել է, որ ինքը ծագումով հայ է եւ լավ է տրամադրված դեպի հայերը: Թումանյանը Լյախովի մասին տեղյակ էր, գիտեր, որ արքունիքի հանձնարարությամբ տարիներ առաջ հատուկ ծառայության մեջ է եղել Թեհրանում: Այս դեպքում էլ նրան է ծոցատետրերի ներկայացրել բնութագրում «խիստ հայատյաց» բառերով, ավելացնելով, որ հավանաբար ի տարբերություն Աբացիեի, նա դա չի թաքցնում²: Աբացիեը Թումանյանի ծոցատետրում երելում է նաեւ 1915 թվականին, երբ Ազգային խորհուրդը բանաստեղծին Թիֆլիսի հայոց թեմի առաջնորդ եպիսկոպոս Մեսրոպի հետ գործուղել էր Վան, որի առիթը Վանի գրավումն էր եւ միաժամանակ կամավորական ջոկատների նկատմամբ բանակային հրամանատարության մեջ հակառակ վերաբերմունքի խմորումը, որը հրապարակային արձագանք էր ստացել:

Բանաստեղծն ու եպիսկոպոսը Թիֆլիսից դուրս են եկել հունիսին: Ամսի 8-ին Իզդիրում են: Ծոցատետրում այդ օրվա գրառում կա: Ապա նկարագրություն է: Վանում նորից թալան է: Անախորժ դեպք

¹ Լ. տ. էջ 80-82, 127: ² Լ. տ., էջ 6-8:

է եղել: Թյուրիմացաբար, այլ ոչ մտածված, հայ կամավորները կրակ են բացել մարդկանց վրա, չնկատելով, որ դրանք կազակներ են. «...զինվորները կազակներին չեն նկատել, դիրք են մտել եւ կրակ են բաց արել: Երբ կազակներին նկատել են, դուրս են եկել ու դադարեցրել կրակը», — բառ առ բառ գրում է Թումանյանը: Փաստը ուռճացվել է: Կարծես թե չի պատահում, որ եղբայրները գտնվեն ու հետո գրկախառնվեն, ինչպես որ եղել է այս ընդհարումը: Եվ հրամանատարությունը, շուրջ պղտորելու սիրահար գործիչները շտապով նենգափոխել են եւ հայ կամավորներին «զինվորական դաշտային դատարանով պատժել», ցավով գրում է Թումանյանը փաստը: Ո՞ր ընտանեկան հարկի տակ է, որ վեճ ու կոիվ չի եղել: Սա չէ խորթն ու օտարը, այլ ուռճացումն ու նենգափոխումը: Թումանյանը ցանկացել է փաստացին ու ճիշտը իմանալ, հարցուփորձ է արել. «Մի ուրիշ գեներալի հետ խոսեցիք, զարմանք հայտնեց, թե ինչու եսպես հանկարծ վերելից վերաբերմունքը դեպի հայերը փոխվեց», — գրել է ծոցատետրում ու շարունակել՝ «Աբացիեւն ավելի ուժեղացավ»: Այդ ի՞նչ ասել է ուժեղացավ եւ ինչպե՞ս ուժեղացավ: Պատասխանել է՝ նրանով, որ բացարձակ ու անսքող հրապարակ է հանել իր հայատյացությունը եւ գործողությունների դասավորման վրա այնպես է ազդել, որ հայության կոիվը անսպաստ լինի նրանց համար, կարգադրել է, որ «հայերի գյուղերն իրար հետ հարաբերություն չունենան», որ մի տեղից մյուսը ցորեն չտանեն, եւ՝ «ես բոլորը առանց Օզանովսկու գիտությամբ»: Թումանյանն ավելացնում է նաեւ, որ Օզանովսկին, իմանալով, միջոցներ է ձեռք առնում Աբացիեին կանխելու, սահմանափակելու համար, «...ուզում է շտաբը փոխադրի Արձեշ, որ Աբացիեի զորամասն էլ իր տրամադրության եւ իրավունքի տակ անցնի...»:

Ազգի զավակների կյանքի եւ սիրո երգիչը նրանց նկատմամբ ճնշում ու արհամարհանք է տեսել: Ավելի շատ վշտացել, քան զայրացել է ու գուցե թե մտքում ինքն իրեն մտածել, բայց մի՞թե Աբացիեւն է ամենից բնորոշը այս կովի համար եւ այս կովում՝ հայ-ոռու հարաբերությունների համար, մի՞թե Աբացիեւն ու արացիեւյան վարվելակերպն են բնորոշը: Հանդիպումներ է ունեցել մարդկանց հետ, հարցուփորձ է արել, թե չէ՞ ինչո՞ւ էր եկել ուղամաճակատ: «Օֆիցերներ կան, որ ասում են՝ ուղղակի ամաչում ենք: Տեղական ամբողջ ազգաբնակչությունը կարոտով է հիշում 1877-78-ի պատերազմի գործն ու գեներալները»², — գրում է Թումանյանը, նկատի ունենալով ներկայիս ե՛ւ թալանը, ե՛ւ նման դեպքերի ուռճացումն ու շահարկումը՝ ի վնաս ժողովուրդների զավակների ուղամաճակատա-

¹ Լ. տ., գ. 256, էջ 3: ² Լ. տ., գ. 256, թթ. 3, 9, 10:

յին եղբայրության: Փաստերը ջննելով իրենց բարոյությունների ու հակասությունների մեջ, դարձյալ մնում է լավատես. Ռուսաստանն ու ռուս ժողովրդին է տեսնում որպես հայոց ապավեն: Եվ իր հոգու խռովքը, նույն ճամփորդական ծոցատետրում վերը բերված բառերից ներքե տեղնուտեղը ձուլում է որպես հույսի եւ լավատեսության չափածո փիլիսոփայություն.

Շուռ է գալիս ծանր ջարդ
Մեր մոր կրծքից տենչավառ,
վեր է կենում մեր աշխարհը
Ավերներից անհամար:
Հեյ, ջան տղերք, ուս տվեք, ո՛ւս,
Միահամուռ, միաջան,
Հեյ, ջան տղերք, ուժ տվեք, ո՛ւժ,
Զարը մոտ է գլորման...¹:

Բանաստեղծի երեսակայություն է: Իրականում եւ շատ մոտ էր, կիպ-կպած, եւ հեռո՛ւ-հեռո՛ւ: Սոտը փաստն էր, հեռուն՝ ջաղաքականությունը:

Թ Ջոկատը հրամանատարի վերադարձից հետո

Հրամանատարի պաշտոնում թողնվում է Սմբատ Բորոյանցը՝ 1-ին վաշտի հրամանատարը²: Թե որքան էր Անդրանիկը ճիշտ, եւ հրամանատարությունը՝ շահագրգռված նրա ջոկատի վիճակը բարելավելու, ռազմի դաշտում նրան այսուհետեւ թողնելու հարցով, երեսում է նրանից, թե ինչ հոգատարություն ցուցաբերվեց ջոկատի նկատմամբ Անդրանիկի հրամանատարականից հետո: Բացարձակապես ոչ մի:

Հրաման հրամանի հետեւից էր տրվում ջոկատին, եւ վերջինս մարտյան ցրտի ու լարված կռվի յուրաքանչյուր հաջորդ օրը նախորդ օրվանից պվելի դժվարին մարտերի մեջ էր ուղարկվում:

Մարտի 5-ին տրված հրամանում պարզապես նշվում է, որ ջոկատը գտնվել է Թիֆլիս-Մուշ գծի վրա: Մարտի 11-ին կորպուսի հրամանատարին Լազարբեկովը տեղեկացնում է, որ մի վաշտ Բիթլիսից գնացել է Մարնիկ՝ ջոկատին փոխարինելու, բայց չի հանդիպել: Ով գիտի, վաշտն է ալարել ցրտին տեղ հասնել, գտնել, թե ջոկատն է շատ հեռացած եղել եւ հետքը կորցրած: Մարտի 11-ին

¹ Լ. տ., ք. 11: ² ԿՐՈՂԱ, Ֆ. 2300, ց. 1, գ. 1191, քք. 199-204 (փաստաթղթերում եւ Բորոյանց է եւ Բորոյան):

Խնուս, կորպուսի հրամանատարին Լազարբեկովը հեռագրել է. «Առաջին հայկական ջոկատի հրամանատար Անդրանիկը հիվանդացել է: Նրա տեղակալն է օգնական Բորոյանը»: Մարտի 14-ի երեկոյան ժամը 10-ն անց 50 ռուս զինվորներ Բիթլիսից Մուշ տրված հեռագրով գնդապետ Օբրազցովը հայտնում էր, որ ջոկատը ցերեկվա ժամը 2-ից մինչեւ մութն ընկնելը 300 զինված ջոկատի հետ հրացանային կրակի մեջ է եղել: Զոկատը համառորեն պաշտպանվել են¹:

Ոչ մի դադար, ոչ մի հանգիստ: Կամավորները պետք է որ ավելի գրգռվեին եւ վերադարձի տրամադրություն արտահայտեին: Շահագրգռված լինելու դեպքում Անդրանիկի հրամանատարական բաժանակն պետք է լիներ, որ անհապաղ միջոցներ ձեռք առնվեին ե՛ւ հանգստի, ե՛ւ հանդերձավորման համար: Մինչդեռ 1916-ի մարտի 24-ին Չեռնոգուբուրն ինքն է Բիթլիսի՝ Կովկասյան բանակի կվարտիրմեստրին հեռագիր հղել, բիթլիսյան զորախմբում գտնվող հայ կամավորների առաջին ջոկատի հրամանատարը, այսինքն Սմբատը, հայտնում է, որ ջոկատը ծայրահեղ ծանր վիճակում է եւ հասել է քայքայման եզրին: Խնդրում էր՝ «արդյոք հնարավոր չի՞ գտնվի, որ ջոկատը վերադարձվի Վան, որտեղ եւ հնարավորություն կունենամ ձեռնամուխ լինելու [ջոկատի] վերակազմմանը»²:

Խորամանկություն է: Իրեն գրում են ջոկատի ծանր վիճակը բարելավելու մասին, իսկ նա վերակազմելու պահանջն է դնում: Որքան հեռու են ու տարբեր բարելավում եւ վերակազմում բառերը: Բայց դա էլ գործնական նշանակություն չի ունեցել: Հավանաբար, այդ քայլին դիմելու համար պետք էր թողնել, որ սպառովեր կամավորների համբերությունը, որպեսզի ջոկատների ցրումը կամ վերակազմումը ամբողջությամբ նրանց մեղքը համարվեր: Դրա միջոցը կամավորներին դարձյալ ռազմի դաշտ ուղարկելն էր:

Ռազմական հրամանի համաձայն, առաջին ջոկատը Բիթլիսը պաշտպանելու առաջադրանքով 1916-ի մարտի 24-ի առավոտյան գտնվում էր հանձնարարված տեղանքում, որը Կարպից Խոշտար՝ գյուղից գյուղ տանող ճանապարհին էր:

Կամավորները ե՛ւ հետախույզի դեր պետք է կատարեին, եւ պարտադրյալ լինեին հարկ եղած դեպքում անհապաղ կռվի մեջ մտնելու: Փաստաթղթում պատմվում է, որ քարքարոտ բարձունքի թևուկներից հանկարծակի հարձակման են անցնում թուրքերը: Նրանք խնդիր ունեին Բիթլիսը վերստին գրավել քաղաքի երկու թեւերից ճնշում գործադրելու միջոցով: Ջոկատի հրամանատար Սմբատ Բորոյանցը, ստացած հրամանի համաձայն, հետախուզական ուժեր է ուղարկում

¹ ԿՐՈՂԱ, Ֆ. 551, ց. 2, գ. 162, քք. 112-118, 281-282, 314-315, 481: ² Լ. տ., Ֆ. 2100, ց. 1, գ. 648, ք. 91:

թշնամու ընթացքն ու նպատակը պարզելու: Հետախուզությունը պարզում է, որ «թուրքերն իրոք հարձակում են սկսել», առայժմ գործի դնելով իրենց առաջապահ զորամասերը: Ենթադրվում է, որ թշնամու ընդհանուր հարձակումը կայանալու է ամսի 24-ի լույս 25-ի գիշերը: Առավոտյան, ամսի 25-ին, թուրքերն իրենց նախընտրած գլխավոր ուղղությամբ արդեն առաջ էին շարժվում: Նրանց դեմ ուղարկվում է հայկական ջոկատի վաշտերից մեկը, հանձնարարություն ունենալով՝ «Ինչ գնով ուզում է լինի՝ պահել լեռնանցքը», որով զայիս էր հակառակորդը: Վաշտին որպես օժանդակություն, հետախուզության են ուղարկվում հինգ տասնյակ կազակներ: Դեպքերը նկարագրող փաստաթուղթը շարադրված է կամավորների ցուցաբերած տոկունությանը վայել ոճով: Կոհվն սկսվել է մարտի 26-ի առավոտյան: Թուրքերի ճնշման տակ ռուսական բանակային այն զորամասը, որը կանգնած էր հայկական վաշտի ձախ թելում, առանց տեղեկացնելու, իր դիրքից նահանջում է: «Հայերը լեռնանցքում մնում են միայնակ, առանց աջակցի: Մինչդեռ թուրքերը նոր-նոր ուժեր են դուրս բերում, երկու թեւերից շղթայի մեջ վերցնելով վաշտին: Այդ շղթայման տակ վաշտը դիմանում է մինչև վերջին հնարավորությունը...»: Սակայն ուժերը, որ սկզբից էլ անհավասար էին, գնալով ավելի են անհավասար դառնում՝ հոգուտ թուրքերի: Հայկական վաշտին կարող էր սպառնալ թուրքերի ուժգին հարձակումը թիկունքից, որը կարող էր նրան կտրել Բիթլիսից, այսինքն՝ հիմնական ուժերից, ուստի նա աստիճանաբար հեռանում է:

Նույն այդ ժամերին հայկական ջոկատի մյուս երկու վաշտերը պաշտպան էին կանգնած Բիթլիսի հյուսիս-արեւմտյան կողմում: Ճիշտ է, վկայում է փաստաթուղթը, նրանք հակառակորդի ուժերի ճնշման տակ ստիպված են եղել քայլ առ քայլ ետ քաշվել դեպի քաղաքը, դրանով միաժամանակ ուշացնելով թշնամու մոտեցումը: Դա՝ մարտի 26-ին եւ 27-ին: Ամսի 27-ին թուրքերը մինչև իսկ ստիպված են եղել դադարեցնել իրենց առաջացումը եւ ետ քաշվել, որից հետո հայկական ջոկատը նորից զետեղվել է լեռնանցքի այն մասում, որտեղից նրանք նահանջել էին: Դա արդեն ամսի 28-ին, երբ գիշերն սպասվում էր թուրքերի հարձակում¹: Այսպիսով, քանի օր անցուն զինվորներն անդադար կոհվներ էին մղում, իսկ առջեւում դարձյալ սպասվում էին նոր մարտեր: Ո՛վ էր մտածողը, որ կամավորները կոպում էին, գործադրելով իրենց տառացիորեն վերջին ճիգերը: Այժմ էլ ջոկատի նոր հրամանատար դարձած երեկվա վաշտապետ Սմբատ Բորոյանցն էր անհազանգում: Չեռնոզուրովի

1 ՀՀ ԴԿՄ. 3. 121. ց. 1. գ. 8. ք. 60-61:

վերջ մեջ բերված հեռագրից 13 օր անց, ապրիլի 6-ին, Թիֆլիս «Անդրանիկին եւ Հայոց ազգային բյուրոյին» հասցեով նա փաստորեն նույնն էր գրում ու անհազանգում, ինչ որ երեկ Անդրանիկը, միայն թե ավելի տխուր գույներով.

«Ջոկատի հրամկազմը գրեթե լրիվ շարքից դուրս է եկել, չկա բժիշկ, չկա դեղորայք, մարդ չկա, որ վարի գրասենյակային գործերը...: Վերջին մարտի ժամանակ ջոկատը գործում էր ամենածանր պայմաններում: Ջոկատը հասել է լիովին քայքայման, եւ դուրս է եկել հնազանդության վիճակից: ... Հանգիստ չի տրվել եւ չի տրվում, չնայած բարձր հրամանատարությանը քանիցս ներկայացված դիմումներին: ... Ապառնում է զենքը դեռ նետելը, պահանջվում է կամ անհապաղ հանգիստ, կամ ցրում: Ես այլեւս ի վիճակի չեմ դեկավարելու ջոկատին: Միջոցներ ձեռք առեք: Բարձրագույն հրամանատարությանը ես հրաժարական եմ ներկայացրել¹»:

Պարզ է. Չեռնոզուրովը գրել է՝ անուշադրության է մատնվել, մնում էր գրեր Սմբատը՝ իր վերջին խոսքով:

Հուսակտուր այս օրերին, ապրիլի 1-ին, Կովկասյան բանակի շտաբի պետ Բոլխովիտսովը գերագույն հրամանատարությանն է վերուղարկել Աբացիեից ստացած հետոյա հեռագիրը, որում նա իրեն իրավունք էր վերապահում « հերքելու թուրք բնակչության նկատմամբ վայրագություններին կազակների մասնակցությունը» եւ ամբողջը վերագրելու հայ կամավորներին²: Կրակը մարելուց հետո անգամ յուր էր լցվում: Բարեբախտաբար, շտաբային եզրակացության մեջ ասվում է. «Դաժանության համար նախատինքներ կարող են լինել երկու կողմից էլ՝ ե՛ւ հայերի, ե՛ւ թուրքերի»³: Իսկ թե այս հավասարակշռումը որքանով էր ճիշտ, այդ էլ, հավանաբար, թողնվում էր պատմության վճռին:

Ականջը ռազմի դաշտի լուրերին, Անդրանիկը Սմբատի ապրիլի 6-ի հեռագրին պատասխանել է ապրիլի 18-ին: Այդ ժամանակ արդեն անսքող եւ գործնական քայլեր էին կատարվում ազգային զորամիավորումները, այդ թվում՝ կամավորական ջոկատները, ցրելու, դրանք ռուսական բանակի կազմում որպես սովորական հրաձգային զումարտակներ տարրալուծելու կամ կամավորներին որպես սովորական բանակային զինվորներ գրանցելու համար: Անդրանիկը մտահոգված էր կամավորների ճակատագրով. «Հարցրեք բոլոր կամավորականներին, թե ով է ուզում մնալ ձեւավորվող հրաձգային զումարտակներում եւ ցուցակներ ներկայացրեք զենեւալ Չեռնոզուրովին: ... Ես հիվանդ եմ եւ առայժմ չեմ կարող զայ: Ուղարկեցեք վերջին

1 Լ. տ., ք. 93: 2 Լ. տ.: 3 Լ. տ., ք. 101:

մարտերում սպանվածների եւ վիրավորների ցուցակը: Միջոց մի խնայեք վիրավորների նկատմամբ լավ հոգ տանելու համար»: Գիտեր Անդրանիկը, որ եթե ջոկատը ցրվի ու տարրալուծվի, նրա ունեցածն էլ կարող է ցաք ու ցրիվ լինել: Ուստի հեռագրով պահանջում էր, որ մինչ այդ լավ հաշվեն, թե, օրինակ, քանի ձի է գնված ազգային միջոցներով, եւ ըստ այդմ էլ պահանջ ներկայացվի Չեռնոգուբուրովին¹:

Հիմա, Անդրանիկի մեկնելուց անմիջապես հետո, առավել եւս պարզ է դառնում, թե այլեւս ինչ իմաստ պետք է ունենար նրա ռազմաճակատում մնալը, երբ ջոկատը ցրելու պլանն արդեն կազմված էր եւ ուր որ է՝ պետք է իրագործվեր: Զինվորներին արդեն հարցում էր արվում, թե ով է ուզում այսուհետեւ ծառայել որպես բանակային զորամասերի սովորական զինվոր: Համենայն դեպս կամավորներից ոչ մեկը սովորական զինվոր դառնալու համար չէր ռազմի դաշտ եկել: Անդրանիկ Օզանյանը՝ Նույնպես: Այդ մասին Օզանյանը վաղօրոք գիտեր: Արդեն փետրվարին գործը հաստատ հիմքերի վրա էր դրվում: Խոսք էր գնում ջոկատների ոչ միայն հաշվետվությունները կազմելու, այլեւ դրանք ստուգող հանձնաժողովներ ստեղծելու մասին²: Մշակվում էին մինչեւ իսկ ջոկատների հրամկազմին թոշակավորելու կանոնները³: Իսկ Անդրանիկի ջոկատի հիթիս մտնելուց հետո Չեռնոգուբուրն իր շտաբի պետ Մոզիվանու միջոցով հեռագրում էր, թե եթե Բիթլիսում ջոկատի կարիքը չի զգացվում, ապա թող այն ուղարկվի Վան: Պարզ չէ, թե ինչու Բիթլիսում անելիք չպետք է լիներ եւ ինչ կարիք կար Վան վերադարձնելու⁴: Սա պարզվում է 1916-ի ապրիլյան գրագրություններից: Մինչ դրանք վկայակոչելը ասենք, որ 1916-ի հունվարից սկսելով որոշակի խոսակցությունն ու գործը հայկական ջոկատների վերակազմության մասին, մարտ, առավել եւս ապրիլ ամիսներին ջոկատների հետ կապված գրագրություններում պատերազմական գործողությունների հարցերը սկսում են ետ մղվել, նվազել եւ հիմնական խնդիրն ու հոգսը դառնում է վերակազմությունը, որը, փաստորեն, լուծարքն էր: Ոչ միայն զինվորներն էին սովորականի պես տուն վերադառնալու ցանկություն հայտնում, այլեւ բանակային հրամանատարությունն էր ընդառաջ գնում, մինչեւ իսկ հատուկ գումար սահմանելով վերադարձի համար⁵: Ապրիլի 19-ից հետո, երբ արդեն, ըստ նախատեսվածի, կորպուսի զորամասերը պետք է վերակազմված

1 Լ. տ., ք. 111: 2 Լ. տ., ք. 115: 3 Լ. տ., ք. 118: 4 Լ. տ., Ֆ. 2100, ք. 1, գ. 909, ք. 4: 5 Հրապարակված կրթությունը նշվում է, որ առաջին ջոկատից սուս է վերադարձվել 732 կամավոր, ստացել է 31, 482ռ., երկրորդ ջոկատից՝ 752 եւ 33630ռ., երրորդից՝ 7537 եւ 34, 837ռ., չորրորդից՝ 728 եւ 43, 769ռ., հինգերորդից՝ 77 եւ 5, 108ռ. 25կուպ, յոթերորդից՝ 385 եւ 18925ռ.: Տե՛ս համառոտ տեղեկագիր Հ. Կ. ազգային բյուրոյի գործունեության, 1915-1917թթ., Թ., էջ 9:

լինեին, 1-ին ջոկատը, ահա այդ ժամանակ էլ գալու էր Վան՝ կամավորների ապագա տեղն ու դերը պարզելու համար: Մայիսի 2-ին 2-րդ ջոկատը պետք է ետ քաշվեր Խնուս՝ վերակազմության համար: Ինչ էր մնացել ջոկատից, ընդամենը երկու հարյուր ուսահպատակ տղաներ, որոնք ջոկատի կազմում էին պարտադիր ծառայության կարգով, այլ ոչ որպես կամավորներ: Մնացածները, ամենայն հավանականությամբ՝ հիմնականում արեւմտահայեր, հեռացել էին ջոկատից²:

Ջոկատների լուծարքի տարբեր հարցեր էին ծագում եւ տարբեր վճիռներ էին կայացվում: 1916-ի հունվարի 3-ին Երեւանում, 5-րդ ջոկատի զորակայանում որոշակի կարծիք է արտահայտվում ուսական զորամասերի կազմում ջոկատների մտնելու դեմ: Մյուս կարծիքն էլ մինչեւ իսկ եղել է Անզլիա մեկնելն ու այնտեղ զորամասերի մեջ մտնելը՝ դարձյալ որպես կամավորներ³: Ծիշտ է, հոգնած էին զինվորները, բայց ոչ հայրենիքին ծառայելու գործից ու գաղափարից: Նրանք միջոց էին որոնում վերստին իրենց ուխտին ծառայելու համար, ուրիշ ինչ կարող էին նրանք անել դրանից սուրբ ու երանելի:

Ինչ վերաբերվում է վերը նշված ապրիլյան փաստաթղթերին, ապա ասենք, որ 4-րդ կորպուսի շտաբ ուղարկված պաշտոնական փաստաթղթում տեղեկացվում է՝ «1-ին եւ 3-րդ հայկական ջոկատները կազմացրված են»⁴: Նույն տարվա օգոստոսի 25-ին Կովկասյան բանակի շտաբ հասցեագրված համառոտ պաշտոնական մի զեկույցում լուծարքի ենթարկված 1-ին եւ 3-րդ ջոկատների մասին ասվում է, որ դրանց ցրումից հետո կամավորները մնացել են գեներալ Նազարբեկովի բիթլիսյան զորախմբում⁵:

1917 թվականի մարտի 11-ին բանակի գլխավոր շտաբին տեղեկացվում էր, որ տվյալ պահին այլեւս հայ կամավորների ջոկատներ չկան, կան միայն հայկական հրաձգային գումարտակներ, որոնք ձեւավորվում էին ընդհանուր սկզբունքներով, այսինքն արդեն ոչ թե կամավորներից, այլ միայն հայ զինապարտներից⁶:

Այս պատմությունն էլ ավարտվեց:
Ոչ ռազմի դաշտ գալը հույսերն իրականացրեց, ոչ էլ կարելի էր ռազմի դաշտ չգալ:

1 ԿՊՊԱ, Ֆ. 2300, ք. 1 գ. 909, ք. 10: 2 Լ. տ., ք. 11, 24, 27: 3 ԿՊՊԱ, Ֆ. 2100, ք. 1, գ. 646, ք. 16, 17: 4 Լ. տ., Ֆ. 551, ք. 2, գ. 335, ք. 5: 5 Լ. տ., ք. 11-13: 6 Լ. տ., Ֆ. 2168, ք. 1, գ. 273, ք. 1 եւ 18:

7 ԲԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՊԱՐԵՁՈՒՄ

(Մարտ 1916թ. — դեկտեմբեր 1917թ.)

Ռազմաճակատից ուղիղ եկավ Թիֆլիս: Հոգևած էր: Խաղաղության մեջ հանգիստ էր առնում ընկերներին այցի գնալով եւ հասարակության հետ հանդիպելով: Ընդունելությունները բազմաթիվ էին ու բազմապիսի: Լսում էր իր հասցեին ասված մեծարանքի խոսքերը: Լսում էր, երբեմն էլ ոչ այնքան շոյվում, որքան զայրանում: Կարծես երբեք թիկունքում չէր եղել, խորթացել էր խաղաղ կյանքից: Ուզում էր, որ միշտ նույնը ասվեր՝ ինչպե՛ս օգնել ռազմի դաշտում մարտիկներին, ինչպե՛ս շտկել ճակատի վիճակը, պահպանել հայության վերջին բեկորները: Զգալով, որ ռազմաճակատն այլևս հույս ներշնչող չէ, շրջվեց դեպի թիկունքի այն հատվածը, որը ռազմաճակատի արդյունքն էր եւ որտեղ դարձյալ հոգսերը ծանր էին ու խնդիրները դժվար: Խոսքը Անդրկովկասում եւ Հյուսիսային Կովկասում Երկրից գաղթած զանգվածներին օթեանելու, նրանց կյանքն ապահովելու մասին էր, որը շուտով ձուլվելու էր դատարկված Արեւմտյան Հայաստանը վերաբնակեցնելու գաղափարի եւ դրա իրականացման ջանքերի հետ:

Լծվելով արեւմտահայության առջեւ ծանոցած հենց այդ խնդիրների լուծմանը, Անդրանիկը հոգաց Մաւել իր առողջության մասին: Հոդացավ զնալով ավելի էր սրվում եւ իրեն զգացնել տալիս: Բուժման համար նախընտրում է Հյուսիսային Կովկասի հանքային ջրերը, լինում է Կիսլովոդսկում, գաղթականության հոգսերով շրջագայում մյուս քաղաքներում եւ վերադառնալով նորից Կիսլովոդսկ, հանձնվում է ցեխաջրերով բուժմանը¹: Կիսլովոդսկից հրավիրվեց Վլադիկավկազ: Ընդառաջ եկավ քաղաքի ամբողջ հայության ստվար բազմությունը: Հրապարակային ընդունելությունը հազվագյուտ բարձր ոգեւորության ցույց էր: Վլադիկավկազցիները հպարտ էին, հիշելով, որ իրենց քաղաքը հիմնադրել է հայոց ուրիշ մի անվանի հերոս ու զորավար՝ 1877—1878թթ. ռուս-թուրքական կռիվների Կովկասյան ճակատի հրամանատար Լոռիս-Մելիքովը, որի հետ մտովի ընդհանուր շատ գծեր էին տեսնում Անդրանիկի մեջ:

Տոնախմբություն եղավ, որից հետո՝ կենտրոնական պողոտայով զանգվածային երթ եւ հանդիսավոր ճաշկերույթ քաղաքի ամենամեծ ճաշարահում: Հազիվ համբերեց լսելու իրեն մեծարող ճառերը եւ,

¹ «Անդրանիկի կենցաղը, պատերազմները եւ յուշերը», Գ., 1932, էջ 243: Լաւել՝ Անդրանիկի Լամակը Հովի, Թրանսկային (ԳԱԹ):

խոսք վերցնելով, նորից հիշեց կովի տեսարանները, չկարողանալով չնկատել տոնախմբության մասնակիցների թվի նշմարելի գերակշռությունը կամավորական ջոկատներին քաղաքի տված զինվորների չնչին թվի համեմատ: Գուցե թե հարմար չէր ոգեւորության այդ պահին նման խոսքը, բայց ինչ արած, այդպիսին էր Անդրանիկը, ճաշկերույթի ժամին անգամ հիշում էր զոհերին ու որբությունը, սովն ու գաղթը եւ հայի պարտավորությունը իր հերոսներին ճաշկերույթներում մեծարելը չէր համարում, որքա՞ն հեշտ էր դա ճակատային կովին մասնակցելու համեմատ: Պատմելով այս ամենը, ականատեսը՝ Դաշնակցության տեսաբան ու պատմաբան Միքայել Վարանդյանը, որ բախտ էր ունեցել նաեւ այդ կուսակցության հիմնադիրներից լինելու, դա բնորոշում է որպէս «ներքին վշտի ու ցասման անդիմադրելի բռնկում», չթաքցնելով իր այն տպավորությունը, թե «ծափերն ու օմսաննաները այնքան էին պտտացրել [Անդրանիկի] գլուխը, որ ինքզինքը կերելար բարոյախոս եւ խարազան հայոց ազգի...»¹: Հեղինակը, ինչպես տարբովից է երեւում, իր հուշերը գրել է տարիներ անց ա՛յն բանից հետո, երբ Անդրանիկը վերստին լքել էր Դաշնակցության շարքերը, եւ կուսակցական գործիչները նրան այլևս մեծարանքի դափնեպսակներ չէին մատուցում:

Եղել է նաեւ Պյատիգորսկում, եւ ահա թե ինչ երկնաքեր բառեր է գրել «Կավկասկի կրայ» թերթը, որն էլ արտատպել է մտկոլյան հայերի «Արմյանսկի վեստնիկ» հանդեսը.

«Հայ ժողովրդի համար Անդրանիկն առասպելական, անվեհեր հերոս է: Նրա մասին ժողովուրդը երգ է հյուսում, նրա սխրանքները հիացմունքի եւ պատկառանքի զգացմունքներ են առաջ բերում:

Նրա ժողովրդականությունը անսովոր է...»:

Եվ հետեւում են նրա կյանքի համառոտ տվյալները, գունագեղ խոսքերի պսակով երիզված:

Պյատիգորսկյան թերթերից մեկը Անդրանիկի հետ զրույցի է ուղարկել իր թղթակցին եւ հրապարակել հերոսի համառոտագիր խոսքը, Արեւմտյան Հայաստանը ամայացված է: Եվ եթե այնտեղ դեռ հայի շունչ կա, ապա դրանով նա պարտական է փրկարար ռուսաց զորքին²:

Շատ անգամ եւ տարբեր առիթներով է Անդրանիկը ռուսաց զենքը փառաբանել եւ Ռուսաստանի հետ կապել հայոց փրկության հույսը:

Պյատիգորսկյան ճաշկերույթում բանաստեղծ Ալեքսանդր Մատուրյանն ընթերցել է Անդրանիկին նվիրած իր պոետական խոսքը: Ի պատասխան, Անդրանիկն ասել է, թե ինքը մեծ կրթություն չունի, որ

¹ Միք. Վարանդյան, Մուրատ, Պոսթըն, 1931, էջ 89—93: ² «Արմյանսկի վեստնիկ», N39—40 էջ 21, 1916թ.:

բանաստեղծի պես գեղեցիկ բառեր ասի, բայց ի՞նչ օգուտ դրանից, երբ ազգը տառապանքի մեջ է: Եւ ավելի լավ է համարում, որ ամեն մեկն ինքն իրեն հարց տա, թե ինչ է արել, որ թուրքական լծի տակ ապրող հայ մարդու վիճակը գեթ փոքր չափով բարելավվի: Այնպես որ որքան էլ իրեն հասցեագրած խոսքերը գեղեցիկ լինեն, մեկ է, դա չէ, որ իրեն շոյում է: Եվ դիմում է հայ կանանց, հայ մայրեր, ասում է, դուք եք իմ հույսը: Չէ՞ որ դուք պետք է մանուկներին հայրենիքի սերը ներարկեք եւ նրանց հերոսության կոչեք: Պետք չէ, որ դուք ոսկե զարդեր կրեք եւ աղամանդյա ապարանջաններ: Բոլորն, ինչ ունի ազգը, պետք է նվեր բերի նրանց, ովքեր այնտեղ, հեռվում, հայոց ավերակ լեռնաշխարհում մեռնում են աղքատության եւ սովի ճիրաններում: Փոքրիկ մի գործը վեր է ամեն տեսակի գեղեցիկ բառերից¹:

Երկրամասի ոռոսաց թերթերի էջերում Անդրանիկին մեծարող խոսքի իսկական մրցույթ էր: Նրա Արմավիր այցի մասին ասվում էր, թե ջաղաք է եկել «հազվագյուտ մի առաջնորդ ու հերոս, որը բացառիկ ժողովրդականություն է վայելում հայության մեջ», որ նա հայ Գարիբալդին է, որը Իտալիայի զավակի նման պատանեկան օրերից իրեն նվիրել է ազգի փրկության սուրբ գործին: Եվ վկայակոչվում է նրա հիացմունքի եւ երախտագիտության խոսքը ոռոս զինվորի նըկատմամբ. «Ես ամբողջ հոգով ասում եմ՝ կեցցե՛ ոռոսաց գործը, կեցցե՛ ոռոս կազակությունը, կեցցե՛ն Կուբանի կազակները»²:

Հարմար չէր գտնում մեծարգո Միջայել Վարանդյանը, որ Անդրանիկը ճառեր ասի, վերհիշի ու եզրակացնի, հանդիմանի ու զայրանա: Որովհետեւ նա միայն ու միայն Անդրանիկի մեջ զինվորին էր տեսնում, այ՛ո, մեն-միայն զինվորին, կովող շարքային մարտիկին, այլ ոչ թե ֆիդայապետին ու կամավորական ջոկատի հրամանատարին, որը ի պաշտոնե զնդի հրամանատարի էր հավասար: Ջինվորի ի՞նչ գործն է դատողություններ անելն ու վերլուծելը: Այդ դեպքում ի՞նչ պետք է ասեր Միջայել Վարանդյանը, եթե իմանար, որ մամուլը Անդրանիկին, նրա Նոր Նախիջեւան այցի կապակցությամբ, բնութագրել է «հայ հասարակական եւ ջաղաքական գործիչ» բառերով: Այնտեղ էլ, Նոր Նախիջեւանում, դարձյալ մեծարանքի հանդիպում է եղել³:

Ողջույնի խոսքով ընդառաջ է եկել ճեմարանի ուսուցիչ Հրաչյա Աճառյանը: Արեւմտյան Հայաստանի մեծամեծ ծնունդներից մեկն էր Աճառյանը, որը հայերեն լեզուն քննում էր եւ վերլուծում աշխարհի մյուս լեզուների հետ համադրելով ու մատնանշելով հայերեն բառար-

¹ «Արմանակի վեստիկ», N30, 21. 08. 1916թ.: Նաեւ «Ռեչ», N224 1916թ.: ² «Օտկիկի կավկազ», N225, 17. 10. 1917թ.: ³ «Արմանակի վեստիկ», 10. 09. 1917թ.:

ժպտներից ամեն մեկի ակունքները, հնարավոր կապերն ու թեքումները: Եթե Անդրանիկը ջաջության մեջ իր նմանը չուներ, ապա Աճառյանն էլ անմրցակից էր լեզվագիտության ասպարեզում եւ շատ տեղին էր ու պատշաճ, որ Անդրանիկին ողջույնի խոսք ասելու պատիվը հանձարեղ լեզվաբանին էր շնորհվել:

1917-ի հոկտեմբերի 17-ին Արմավիր այցելության ժամանակ Անդրանիկը հետաքրքրվում է այնտեղ գաղթած հայերի դպրոցի վիճակով: Խոստանում է երեխաներին կոշիկ եւ հագուստ ուղարկել: Ամենից ուրախալին այն է եղել, որ տեղացիք հարկ են համարել նշել, որ դպրոցում Անդրանիկ անունով երեք մանչուկներ կան եւ նույնքան էլ Հայաստան անունով գեղանի աղջիկներ¹:

Արժեք, որ Միջայել Վարանդյանն Անդրանիկի հետ լինելու է լսել նրան նաեւ Մայկոպում, ուր նա ոչ միայն չի հրահրել, որ իրեն մեծարեն, այլեւ մերժել է հույսը իր անձի հետ կապելը. «Եթե միայն իմ կամ իմ նմաններու ներկայությունն է, որ պիտի ոգետորե ձեզ՝ այդ չարժեր, ամեն հայ, երբ միմիայն իրեն համար ապրելու մասին չի մտածեր, մեր աղետներու մեծ մասը պակասած կըլլար»²:

Լսել է ճառերը Անդրանիկը եւ դարձյալ մտածել հոգսը թեթեւացնելու մասին: Ռուս-թուրքական կովում գերի ընկած հայ զինվորներին եւս ոռուսական հրամանատարությունը ընդհանուր կարգով բանտարկում էր կամ Սիբիր աքսորում, առանց որեւէ այլեւայլության: Բռնության այդ լծից ազատվելու համար հայ զինվորները նամակներ էին հղում եւ ազատվելու օգնություն հայցում: Շատ նամակներ հասցեագրում էին Անդրանիկին եւ դիմում անձամբ նրան: Եվ Անդրանիկը խնդիր է դնում հարց հարուցել ցարի կառավարության առջեւ, որ ոռուսաց զորքին գերի ընկած հայերին երկրում ազատ ապրելու հնարավորություն տրվի³: Ցարը եւ նրա բանակային հրամանատարությունը մերժում էին նաեւ գերիներին կամավորների ջոկատները մտցնելու եւ թուրքերի դեմ ռազմաճակատ ուղարկելու նրանց խնդրանքները: Իսկ թուրքական կողմում թե՛ ժամանակին եւ թե՛ հետագայում միշտ էլ կարծել են, թե հայերը կամովին գերի էին ընկնում եւ ապա ուղարկվում թուրքերի դեմ կռվի դաշտ: Դա էլ է սուտ: Պերմի նահանգից 16 հայ գերիների 1917-ի աշնանը գրած նամակի կապակցությամբ մամուլում ետմահու հանդիմանության խոսքեր էին ասվում Վորոնցով-Դաշկովի հասցեին, թե էլ ինչն'ու էր, ապա, նա մի կողմից իր մոտ կանչում եւ կամավորների խմբեր կազմակերպելու հանձնարարական տալիս Անդրանիկին, Զեռուն, Հա-

¹ «Հայաստան», N145, 31. 10. 1917թ.: ² Ն. տ. N147, 2. 11. 1917թ.: ³ «Արմանակի վեստիկ» N35-36, էջ 22, 1917թ.:

մագաստին եւ մյուսներին, երբ մյուս կողմից նրանց եղբայրակից գերիներին պահելու էր կապանքի տակ¹:

Ահա մի նամակ հեռավոր Եիկուսկից Անդրանիկին: Մարդիկ ամեն տեղ գրել են, բազմիցս ահազանգել: Վերջին հույսը մնացել է Անդրանիկը. «Զեռոյ մեծությանը կընկնողները, որ ակնարկ մը դարձնեք մեզ, թշվառներու վրա եւ կարելի եղածին չափ մեզ օգնություն հասցնեք... մենք 25 թշվառներս...»: եւ հետեւում է դժոխքի նկարագրությունը՝ սով, ծեծ, անդադար չարաչար աշխատանք, հիվանդություն ու մահ՝ այս պարտադիր պայմաններն են, որ վաստակել են ռուսական բանակին գերի ընկած թուրքական բանակի հայ զինվորները²:

Այ թեզ բա՛ն, պատերազմն առիթ եղավ, որ Սիբիրը հիմա էլ արեւմտահայության զավակների համար «կարգապահական» դժոխք դառնա: «Սիբիրի պես տեղը, որ ամենահասարակ մարդիկ տարեկան պետքերուն համար անվազն 1000 մանեթ կը ծախսեն, իսկ մեր հայ խեղճ 20 գերիները 20 կոպեկեն պետք է հոգան այդ պահանջները, որ ինքնզինքնին պատսպարեն 40—են ավելի աստիճան ցուրտին դիմաց...»³:

1917—ի Փետրվարյան հեղափոխությունից հետո, ինքնակալության խորտակմանը հաջորդած ժամանակավոր կառավարության համակարգում (Պետրոգրադում) ստեղծված էին Կովկասի գործերի կոմիսարի⁴, ինչպես նաեւ Տաճկահայաստանի եւ պատերազմի ընթացքում թուրքիայից գրաված մյուս տարածքների գլխավոր կոմիսարի⁵ պաշտոնները, որոնց երկրի հեռավոր վայրերից դիմումներ էին հղում աջսորյալ հայ գերիներն ու շահագրգիռ հասարակական գործիչները՝ գերությունից ազատելու պահանջով: Այդ հաստատություններում եղած փաստաթղթերում ասվում էր, որ աջսորյալ հայերի մի մասը ոչ զինվոր է եղել, ոչ էլ ռազմաճակատում, այլ պարզապես ձերբակալվել էւ աջսորվել է թիկունքային իրավիճակում: Մյուս մասն է միայն, որ գերի է ընկել մարտերի ընթացքում: Ապրիլի 28—ին երկրի ռազմական նախարարը կառավարության նախագահի առջեւ հարց է բարձրացրել Կովկասյան ճակատի հայ գերիներին աջսորից ազատելու մասին, որը, սակայն ձգձգվել է⁶:

Ժողովուրդը հանգամանքների բերումով Անդրանիկին դիմում էր գերազանցապես քաղաքացիական հարցերով, որովհետեւ ի դեմս նրա տվյալ պահին տեսնում էր ոչ թե զինակիր հրամանատարին, այլ իր

* Որն էր սեւասոր նարկովը: ** Այդ պաշտոնը վարում էր Ավետիսյանը: Հ Ջավրյանը՝ կրթական էր քաղաքացիական հարցերի գծով: ՏՆՍ Վ. Փափագեան...h առաջին էջ 441—442:

1 Լ. տ., նաեւ «Հայաստան», N143, 28. 10. 1917թ. «Հեղափոխական Ռուսաստանը եւ բուրժուազայ գերիները»: 2 «Հայաստան», N105, 27. 08. 1917թ.: 3 Լ. տ., N132, 14. 10. 1917թ.:

4 ՀՀ ՄԵԿՊԱՆ ռազմական միևնույնի գրությունը, թ.թ. 1—10: Նաեւ՝ ՌԱԶԱ, ք. քաղաքի, 1917թ., գ. 3518, թ.թ. 4—5:

հոգսերի մեջ մխրճված հասարակական, ասենք նաեւ քաղաքական գործչին: Հակառակ դեպքում ինչո՞ւ պետք է նրան ուղարկված մի նամակով հանձնարարվեր իր վրա վերցնել Ալեքսանդրապոլի շրջանի գաղթականների նկատմամբ հոգատարության գործը¹, իսկ մի ուրիշ անգամ մամուլում հայտնվեր, որ «Անդրանիկը տասը հազար ռուբլի է դրկել Սասունի, Փսանքի եւ Խուրթի շրջանների փախստականների համար...»: Դիմում էին շատերը, մասնավորապես Արեւմտյան Հայաստանի տուժած վայրերի ներկայացուցիչները: Սասունի փախստականները միայն Անդրանիկին էին տեսնում, Ազգային բյուրոյի հետ միացյալ, իրենց զորավիճ, եւ նրանց են դիմում: Համոզված էին, որ նրանք միայն ճշգրիտ գիտեն իրենց վիճակը եւ քանք չեն խնայի «բարեհաճելու կարելի եղածի չափ ուշի—ուշով մտածելու այդ շատ կարելու խնդրի վրա», եւ լիովին կնվիրվեն այդ գործին: Սասունցիք կորցրել են իրենց «կրթյալ եւ ավելի փորձառու դասակարգը...», գրում են նրանք եւ ավելացնում. «Այսօր մեր լեզուն դուք եք, ... բարձրացրեք ուրեմն մեր աղաղակը ուր որ պետք է, լսելի ըրեք հանուր մարդկության...»²:

Դիմումներն ու հանձնարարականները ամեն տեղից են, այդ թվում նաեւ Խարկովից: Այնտեղի հայ գաղութը գումար է ուղարկում, որը դրվում է Անդրանիկի տրամադրության տակ՝ «հոգուտ հայ փախստականներու»³:

Անթրի չի եղել գործը: Գումարները՝ սուղ, դրանց բաշխումը՝ բարդ: Անդրանիկը հարկադրված է եղել մամուլում հանդես գալ, վերլուծել եւ ուղիներ նշել: «Մեր գաղթականական գործը սիստեմատիկ կերպով չտարվեր», գրել է նա եւ եզրակացրել, որ դրա արդյունքը թշվառության չտեսնված պատկերն է: Որոշ դեպքերում, խոստացված, հրապարակված գումարները չէին ստացվում, ուրիշ անգամ էլ տեղ հասածը նշանակված հասցեով չէր ուղարկված լինում: Այդուհանդերձ, Անդրանիկը գոհունակության բարձր խոսքեր է հղում կովկասահայ «գյուղացիության եւ պատվավոր քաղաքացիության հասցեին», ընդգծելով, որ եթե նրանց «անհատական օգնությունը» չլիներ, ապա կորած էր «ազատված հայության մեծ մասը», «Այդ գաղթականությունը չէր կըրնար ապրել, եթե հարյուր հազարներ չպատսպարվեին կովկասահայ գյուղացիության տաքուկ եւ հյուրընկալ ծոցը»: Սա անդրանիկյան երախտագիտության խոսքն է աշխատասեր եւ դիմացկուն բազմաժողովրդային հայ գյուղացիությանը: Բայց պակաս ռեզուրվության եւ շնորհակալության խոսք չի հղել նա նաեւ արեւելահայ աշխատավորների մյուս խավերի հասցեին. «Նա, կովկասահայ

1 «Հայաստան» 21. 10. 1917թ.: 2 Լ. տ., 13. 10. 1917թ.: 3 «Հայաստան», N39, 6. 06. 17թ.: 4 Լ. տ., 29. 06. 1917թ.:

շինականը, հարազատ եղբայրն է այդ տանջանքի ժողովրդին, երբայրը, որ մորկով էր բաժանված եւ մորկով կը միանա»:

Իր խոսքով ջերմացնում է նա մարդկանց սրտերը, որովհետեւ նրանց իրարից տարբերող, անջատող հատկանիշները չի մատնանշում, այլ միավորող, մի բունցը դարձնող պայմանները, գարունը ուր որ է պիտի բացվի, ժամն է վարի ու ցանքսի: Ռազմիկն ու հրամանատարը մի կողմ է դրել գեները: Հիմա նրա հույսը հողն է, հացը, մարդկանց սրտերի ջերմությունն ու մերձեցումը: Նրա մտքում ուրիշ գաղափարներ են ծնվում եւ ակնկալություններ խմորվում: Դրանցից ոչ մեկը նա գրքերից չի ջաղում: Գործի մեջ չէ միայն, այլեւ գործի կենտրոնում՝ իր երեկվա հեղինակության ուժով, որին պետք էր արժանի լինել նաեւ տվյալ օրվա բուն, անմիջական եւությամբ, իր առօրյա գործով, համոզմունքով, կարծիքով: Եվ բուրբ սեփականով, այլ ոչ փոխառությամբ: Ուրիշները դասակարգերից մեկին առաջնություն տալու, մյուսին ետ մղելու, էլքը նրանց բախման մեջ տեսելու մտքերն էին սրում եւ դա կատարում էին այնպիսի ազդեցիկ ձեւերով ու համոզմունքով, հուսադրմամբ, որ դրանից այն կողմ թվում է, իրոք շատ քիչ տեղ ու հնարավորություն էր մնում ուրիշ մտքեր հղանալու, ուրիշ մտքեր արտահայտելու համար: Հայոց ազգային կուսակցության թերթում Անդրանիկի ջերմ խոսքն է, հայ գյուղացու մասին. «Մենք երախտապարտության ւճարտք ունենք վճարելու այդ արի գյուղացիությանն»: Ինչո՞ւ, ով գիտեր, ո՞վ կարող էր ճշտիվ կռահել, պատասխանել՝ ինչո՞ւ էր Անդրանիկն հարցն այդպես դնում: Դժվար հարց չէր սա: Սով էր, մարդիկ սովահար մեռնում էին կախ եւ առաջ հաց չլինելու պատճառով: Հացի գլխավոր արտադրող տղամարդիկ ռազմի դաշտ էին գնացել եւ առայժմ ոչ միայն չէին վերադարձել, այլեւ նրանց զգալի մասն այլեւս մեկընդմիջտ չէր վերադառնալու: Եվ տանը մնացել էին կանայք, երեխաները, ծերունիները: Եթե վաղ գարնան հետ նրանք չսկսեին վարն ու ցանքը, այլեւս ուշ կլիներ: Անդրանիկը հույս էր հայտնում, որ «տաճկահայ գաղթականը վար ու ցանքի եւ առհասարակ դաշտային աշխատանքի մեջ իր քրտինքը պիտի խառնե, գոցելով կովոզ տղամարդու պակասը եւ ապրելով իր իսկ աշխատանքով»:

Անդրանիկը նաեւ խոր ցավ է հայտնում, որ կատարելապես ներդաշնակ չեն հայ մտավորականն ու հայ գյուղացին, որ գրասենյակային մտավորականն իր ներփակ աշխատանքի համար գումարներ է ստանում, որից զեղջուկը պատկերացում անգամ չունի: Եվ նորից հայոց աշխարհի արեւմուտքից արեւելք գաղթած հային կոչ է անում՝ ոչ ոքի եւ ոչնչի չսպասել, եւ իմանալ, որ գարնան բացվելու հետ դարձյալ ինքը պիտի պատրաստ լինի «բահն ու բրիչն առնել իր

ուսը, իջնի Արարատյան դաշտը» եւ տեղաբնիկ ոչ մեկին հոգս չպատճառելով՝ սկսի հողի հետ իր սովոր գործը:

Մի ամբողջ աշխատանքային ծրագիր է շարահյուսել Անդրանիկը, գրի առնել ստացած նպաստները, մարդկանց աշխատանքի տեղաբաշխել, իր հասցեով դրամ ուղարկելու փոխարեն ուղարկել ուր ուղղակիորեն այն բաշխվելու է կարիքավորներին, իսկ արտասահմանի հայությունից ստեղծել համաքաղաքացիական միություններ՝ երկրի վերագինման գործը ավելի հաստատ հիմքերի վրա դնելու համար¹:

Սա նոր փիլիսոփայություն էր՝ մարտի դաշտում հացն ուշացումով ստացած գինվորի անհանգստությունն ապրած ռազմիկի ու հրամանատարի, որն հիմա դատարկված երկիրը լցնելու եւ մեռնող մարդկանց կյանք պարգեւելու հոգսերով է տառապում: Երեկվա համեմատ բուրբովին տարբեր իրավիճակ էր: Երեկ, տարիներ ի վեր, նրա ասպարեզը Արեւմտյան Հայաստանն էր, թշնանությունը՝ սուլթանի գահն ու երիտթուրքերի կառավարությունը, այսօր Արեւելյան Հայաստանն էր ու հայաբնակ Կովկասը, իշխանությունը՝ ցարը, ապա՝ բուրժուական ժամանակավոր կառավարությունը նախ իշխան Լվովի, ապա՝ սոցիալիստ-հեղափոխական Կերենսկու գլխավորությամբ, հետագայում, 1917-ի հոկտեմբերի 25-ից, բանվորագյուղացիական, բուլշեւիկյան խորհուրդները, ձեւավորված նոր կառավարություն՝ ժողկոմխորհը, նախագահ Լենինի ղեկավարությամբ: Ցարի, ժամանակավոր կառավարության եւ ժողկոմխորհի դեմ պայքարի խնդիր նա իր առջեւ չի դրել, ռուս ժողովրդի եւ Ռուսաստանի հետ կապն ու բարեկամությունը համարելով հայ ժողովրդի գոյատեւման պատվար: Դատերազմի օրերի ապրած դառը հիասթափությունը եւ ըմբոստանող ցասումը բավարար չէղան, որ նա մոռացության տար իր հին խոսքը, «Ռուսին ալ թշնամի մի՛ ընեք մեզի»: Ուրիշ անգամ նա առիթ է ունեցել ասելու, որ ինքը «մեկ իդեալ ու մեկ նպատակ» է ունեցել, այն է՝ թուրքական ջարդարար պետությանը հարվածելը, որից դուրս, շարունակել է նա, « որեւէ պետության եւ կամ կառավարության դեմ շարժումի մը հակառակ պիտի մնայի մինչեւ վերջ»²:

Նա փորձել էր եւ փորձվել սիրալի՛ր հավաստիացումներից ու տուժումներից, Վորոնցով-Դաշկովի սիրալի՛ր հավաստիացումներից ու վանի գրավմանը հաջորդած նահանջի գեներալական հրամաններից հետո... Ոչ ոք փաստին այդպես չէր զարնվել եւ իրողությունն հետո... Ոչ ոք փաստին այդպես չէր վերապրել ու հիասթափվել: Եվ այնուամենայնիվ չէր վերանայում իր ժողովրդի սուրբանուն նախնիների եւ ժամանակավոր

1 «Հորիզոն» 26-ը հունվարի 1917թ.: 2 Արսեն ժամկոչեան, Ջորավար Անդրապիկ և պատասխան իր հակառակորդներուն, Թ., 1945թ. էջ 23:

կիցների նախընտրածը... միայն դաս էր քաղում եւ եզրակացությունն էր համարում:

Ջաղաքականության մեջ խորացող եւ Ջաղաքական ասպարեզում բարձրացող Անդրանիկը ողջամտորեն է նայում Պետրոգրադի փետրվարյան հեղափոխությանը, որը հանգեցրեց անձամբ իրեն եւս այնքան հոգս պատճառած ցարի եւ ցարիզմի խորտակմանը եւ երկրում բուրժուական դեմոկրատիայի առաջին ծիլերի արձակմանը: Որպես այդ դեմոկրատիայի ընձեռած հնարավորության իրականացում էր նա ցարի անկումից մեկուկես ամիս անց՝ ապրիլի 16-ին, սկսել լույս ընծայել «Հայաստան» խոսուն վերնագիրը կրող թերթը: Առաջին իսկ օրերից, որքան էլ խոսուն խորագրով, թերթը բերնբերան անցավ ավելի շատ որպես Անդրանիկի կամ անդրանիկյան թերթ, որի առաջին իսկ համարի առաջին էջում «Ողջույն Ռուսաստանի ազատ իրավակարգին», բառերն էին: Դրանցում թերթը նախաձեռնողներն իրենց այն համոզմունքն էին խտացնում, որ ազատ Ռուսաստանը երկրի բոլոր ճնշված ազգերի ազատության կամքն է: Եվ առանձին, հայկական, մի շեշտադրում, «**Թերեւս չկա Ռուսաստանի փոքր ազգությունների մեջ որեւէ ուրիշ մի ազգ**», որը հոգեկան այնպիսի խորությամբ ողջունի «**Ռուսաստանի ազատության շարժումները, որքան հայ ժողովուրդը**»: Հենց նա, ազատ Ռուսաստանն էր, թերթի համոզմունքով, կառուցելու հայոց «**ազգային բաղձանքների կոթողը**»:

Բայց մի՞թե երեկվա տարակուսանքներով տառապած Անդրանիկը հիմա, վերջապես, այն մտքին էր, որ Ռուսաստանը քանի որ այլեւս առաջվանը չէ, հեղափոխական է ու նոր, պետք է գա եւ ազատագրված Հայաստանը փրկության ափսեի վրա մատուցի հայ ժողովրդին: Բոլորովին: Առ առավելը՝ նա կկարծեր, թե քանի որ նոր Ռուսաստանն այլեւս ցարականը չէ, գուցե իշխանության գլուխ անցած հեղափոխական դեմոկրատները հրաժարվեն բռնազավթման նենգ ու խաբուսիկ մեթոդներից եւ գնան քիչ թե շատ բարոյական ճամփաներով: Գուցե թե: Թերեւս երեկվա փորձի ու ստեղծված նոր իրավիճակի վերլուծությունն է, ահա, որ նրան բերում է ուրույն այն եզրահանգմանը, որն այս անգամ արդեն ոչ թե զինվորի ու զորավարի, այլ Ջաղաքական մտածողի եւ գործունեության Ջաղաքական եղանակներին առաջնություն տվող գործչի ներդրումն է իր ժողովրդի ազատագրական պայքարի պատմության մեջ: Այդ մտքերի հակիրճ շարադրանքը Անդրանիկը վերնագրել է «**Իմ խոսքը**» եւ հունիսի 27-ին մամուլի միջոցով ներկայացրել ժողովրդին ի գիտություն: Ելակետն այս է, այլեւս անսքող ճշմարտություն է, որ դրված է արեւմտահայության գլխովին բնաջնջման հարցը: Պատերազմից առաջ

ըմբռնումն այլ է եղել, ուստի այն ժամանակ տարբեր կարծիքներ են եղել եւ ըստ այդմ էլ՝ տարբեր դիրքորոշումներ, դրանց վրա կառուցված տարբեր հասարակական-Ջաղաքական հոսանքներ, քաղաքական կուսակցություններ: Դա պատերազմից առաջ էր, պատերազմը մեր աչքերը բացեց. «**Ըլլանք իմաստուն գեթ ասկե հետո**»: Վճիռը Արեւմտյան Հայաստանի ժողովրդի համար պետք է լինի՝ «**առանց կուսակցական խորության եւ կուսակցական մտահոգությունների**» միավորել ուժերը, ուժեղացնել ըստ տարբեր շրջանների ստեղծված հայրենակցական միությունները եւ ազգովին, որպես միաձույլ, ամրակուր միամբողջություն կանգնել թշնամուն դեմ հանդիման:

Այնուամենայնիվ, Անդրանիկը այնքան միամիտ չէր, որ հարց դներ կուսակցությունները վերացնելու մասին եւ առհասարակ բացասեր դրանց անհրաժեշտությունը: Բոլորովին: Բայց եւ նա դեմ է, որ նրանք ավելորդ հարցերի վրա ժամանակ վատնեն, տուրք տան ուժերը ջլատելուն, փոխանակ եղած ամեն հնարավորը մի կետի նպատակամղելու, որը ազգի գոյատևությունն է: Եվ լակոնիկ պերճախոսությամբ է խտացրել իր միտքը.

«**Ֆիզիկական գոյությունը վերապրող ժողովրդին՝ ահա բարձրագույն հայրենասիրությունը գոր հիմա մենք ի հայտ կրկանք բերել**»:

Եվ առաջինն անդրադառնում է իր կուսակցականությանը: Չէ՞ որ նա պատերազմի սկզբին, կամավորական շարժման ընդհանուր գալու ընթացքում, վերականգնել էր Դաշնակցություն կուսակցության իր անդամությունը: Ուստի հարկ է համարում բոլորին զգուշացնելու, որ որեւէ մեկը դրանում փորձ չանի տեսնելու ինչ-որ «**միտումներ կամ հեռավոր նպատակներ**»: Նման դիրքորոշման օրինակ պետք է ծանոյանի, վկայում է Անդրանիկը, «**Հայաստան**» թերթը, որում «**ավելորդ է կուսակցական նկատումներ տեսնել**»: Տվյալ պահին, երբ հարցը լինել-չլինելն էր, առաջնայինը Հայաստանի վաղվա ուղղության մասին խոսելը չէր համարում: Դա վաղը կպարզվի, «**...նախ մարդասիրական եւ հետո ուրիշ մտահոգություններ**»¹:

Ահա, այսպես, երեկվա ուղղված այսօր Ջաղաքագետ է, նրա գործելակերպը՝ խաղաղ միջոցների կուտակումն ու գործադրումը, որպես օրվա եւ վաղվա բնական եւ անակնկալ խնդիրների հաղթական լուծման նախապայման:

Բնականաբար, նրա առջեւ, ծագում է երկմիասնական խնդիր՝ արեւմտահայերի պահպանված, ցրիվ եկած խմբերի ի մի բերումը, նրանց ապրուստի եւ աշխատանքի, երեխաների ուսման, ապա՝ ճակատի պաշտպանության եւ առհասարակ բնակչության ինքնապաշտպանության հոգսերը:

¹ Լ. Կ., №58, 27. 06. 1917թ.:

Անդրանիկը, իր շուրջը խմբված գաղափարական ընկերները առանձին ջանք են գործադրում ազգային միասնությանը խանգարիչ հանգամանքները բացահայտելու և արմատախիլ անելու համար: Այդպիսիք են դիտվում սերնդի անբավարար լքողաքական հասունությունը, մերթ «հայի մեջ լեռնացած ենք», մերթ հավակնոտ լինելն ու հավաքական կամքի բացակայությունը: Այս բոլորն էլ երեւոյթներ են, որոնք եւ անցյալին էին վերաբերում, եւ ներկային: Նույն տեղում եզրակացությունն այս է. «Արյունաքամ, ջարդված ու փշրված ժողովուրդ մըն ենք, իսկ այս վիճակին մեջ գտնվող ժողովրդի մը վերածնունդին համար պետք է հավաքական անխոնջ ջանքեր, հավաքական կամք, փոխադարձ վստահություն եւ անկեղծություն»¹:

Անդրանիկը դարձել էր ճառասաց-քարոզիչ: Թերթերի էջերում տպվում էին խոշորատառ հայտարարություններ, փողոցներում պատերին փակցվում պաստառներ՝ «Հրավեր: Վաղը, կիրակի, ժամը 12-ին մեծ վանքի եկեղեցու բակին մեջ պիտի խոսին ներկա մոմենտի մասին Անդրանիկ եւ ուրիշներ: Կը հրավիրվին թիֆլիսաբնակ հայաստանցի բոլոր հայերն, ինչպես նաեւ ռուսահայեր»²:

Մինչդեռ գրականությունն ու բանահյուսությունը, անգամ պատմագրությունը, Անդրանիկին միշտ թուրը ձեռքին, ատրճանակը գոտկատեղին, փամփշտակալներով մարմինը պատած եւ հրացանն ուսին մարտիկ են պատկերել: Բոլորովին ուրիշ բան են ասում 1916-ի մարտից 1918-ի փետրվարի երկրորդ կեսի միջեւ ընկած շուրջ երկու տարիները, ժողովներ ու համագումարներ, որբերի խնամք, լրագրի ստեղծում եւ բանավոր ու գրավոր քարոզչություն, շրջագայություն արեւելահայության, մասնավորապես Հյուսիսային Կովկասի գաղթավայրերում, այց գաղթական ընտանիքներին ու նորաստեղծ մանկատղները, արեւմտահայության պահպանված բեկորների համախմբում, նրանց բնակեցման ու վերաբնակեցման գործի կազմակերպում եւ հանգանակություն... Տարատեսակ գործեր, բայց դարձյալ բոլորը հանուն նույն նպատակի, որն է ազգապահպանությունը:

Գաղտնիք չէր, եթե ոչ այդ օրը, ապա հաջորդ օրը թուրքական զորքերը արշավելու էին դեպի Անդրկովկասի խորքերը: Եվ Անդրանիկը խաղաղ օրերին, չիմանալով թե՛ որպես ինչ է վերսկսվելիք կովին մասնակցելու, մտահոգված էր ու անհանգիստ նրանով, որ միայն հայկական ուժերը բավարար չէին լինելու արշավը կանգնեցնելու համար: Բայց երբ խոսք էր բացվում անգլիական կամ ամերիկյան օգնության հնարավորության մասին, նա այլևս ջմծիծաղ էր տալիս. —Նրանք զորք բերող չեն: Վահան Թոթովենցը, այդ փուլում Անդրանիկի փաստական օգնականն ու քարտուղարը, նույն այդ

կարծիքին լինելով, համենայն դեպս գտնում էր, որ չի խանգարի, եթե այդ ուղղությամբ ջանք գործադրվի, միգուցե նրանք հանձն առնեն բանակի ձեւավորմանը, զինմանն ու հանդերձավորմանը օգնելու գործը: Եվ ահա 1917-ի մայիսի 29-ի առավոտյան Անդրանիկը Թոթովենցի հետ միասին գնացել է Թիֆլիսի ամերիկյան հյուպատոս Սմիթի հետ բանակցելու: Վերջինս անկեղծորեն թե դիվանագիտորեն, ցուցադրաբար հետաքրքրվում է, թե հայերն, իսկապես, ինչով կարող են օգնել իրենց դաշնակից Անգլիայի զործերին, որպեսզի նրանք հաջողությամբ վարեն կռիվները Թուրքիայի դեմ Միջագետքում: Եթե իրոք այսպես է եղել, ինչպես պատմում է Վահան Թոթովենցը, շատ լավ է, առաջին իսկ խոսքից է սկսվել առետուրը, Անդրանիկն իր արյունաքամ ժողովրդին օգնելու, փրկելու հարցն է դնում, իսկ Սմիթը, դեռ ոչինչ չասած, դարձյալ արյան պահանջ է առաջ քաշում: Խեղճ հայ ժողովուրդ, որ այսպիսի բարեկամներով ու այսպիսի հույսերով պետք է ջո ազատությունն ակնկալես:

Եվ Անդրանիկն ինքն էլ ճարահատյալ, թե անկեղծորեն, ըստ Վահան Թոթովենցի, ոգետրված պատմում է մի ծրագիր, ըստ որի հայերը կկարողանային զորքեր շարժել դեպի Բիթլիս ու Տիգրանակերտ եւ հարկադրել Թուրքիային, որ թուլացնի իր ճնշումը անգլիական զորքերի վրա՝ կռիվների այդ կողմում: Սմիթը քարտեզ է բերում, տեղնուտեղը գծումներ անում եւ նշումներ կատարում ու խոստանում, որ անմիջապես կմեկնի Պետրոգրադ եւ ջանք կգործադրի, որ Անդրանիկը կարողանա իրականացնել իր ծրագիրը:

Փաստաթղթեր չկան, եղածը այս տողերն են: Վահան Թոթովենցին, Անդրանիկի գաղափարակից գործակցին, կասկածի տակ չդնենք: Բայց չենք կարող ասել, թե Անտանտի տերությունների վերաբերմունքի հարցում այդքանն է, որ կա Անդրանիկը: Նա ոչ հեշտ հավատացողն էր, ոչ էլ ստրկամիտը: Նա կարող էր պահանջ ունենալ, կարող էր միջոցներ որոնել, բայց դիվանագետների պարապ խոստումներին հավատ չընծայելը նրա էության մեջ ձուլվել էր դեռեւս Առաքելոց Վանքի իր օրհասական, բայց եւ առասպելական կովի օրերից: Մենք ստորեւ դեռ առիթ կունենանք է՛լ ավելի մանրամասն ճանաչելու Անդրանիկին եւ իմանալու նրա իսկական կարծիքը հայ ժողովրդին ուրիշի օգնելու խոստումների եւ այդ հարցում մանավանդ ԱՄՆ-ի եւ Անգլիայի ու Ֆրանսիայի դիրքի մասին: Դա առաջիկայում նրա Զանգեզուր-Ղարաբաղյան օրերին եւ հետագայում է լինելու: Համբերենք: Իսկ հիմա ասենք, որ Սմիթը որպես դիվանագետ միամիտ մարդ չէր: Նա խնդրել է, որ Անդրանիկը խիստ գաղտնի պահի իր տված խոստումները: Բայց նույն պահին էլ առաջարկել է եթե ոչ Անդրկովկասի բոլոր ազգերի, ապա գոնե հայ եւ վրաց ժողովուրդների

¹ «Ուժերու կեորակցում», Լ. տ., N69, 14. 07. 1917թ.: ² Լ. տ., N178, 17. 12. 1917թ.:

բարեկամություն հաստատելու մի ծրագիր եւ խոստացել է Պետրոզրադում այդ բոլորը ըննել եւ համաձայնեցնել Կերենսկու հետ եւս: Չերկարացնեք, անցել են օրերը, եւ Սմիթը վերադարձել է ձեռնուսայն: Կերենսկին համաձայնել է միայն, որ հայերը առաջվա պես զումարեն կամավորական խմբեր, որոնք այսուհետ ոուսաց բանակի կազմում կարող էին ազգային զորամիավորումներ լինել եւ այդ ձեռով օժանդակել Մերձավոր Արեւելքում դաշնակիցների հաղթանակին: Բոլորն էլ մնացել են խոսքի շրջանակներում¹:

Նախապես էլ իմանալով, որ բանը նաեւ այսպես կարող էր ավարտվել, Անդրանիկը ձգտում էր հասնել նրան, որ տուժվածներն իրենց իրենց հոգսերով զբաղվեին, արեւմտահայերն հանուն արեւմտահայերի: Այս հողի վրա էլ քաղաքական ասպարեզում ձեւավորվում էր անդրանիկյան մի նոր հոսանք: Դրա ակունքում ապրիլի 16-ից լույս տեսնող «Հայաստան» թերթն էր: Պետք էր հոսանքն ընդլայնել եւ խորացնել: Այդ գործին ձեռնամուխ եղան Վանի հերոսամարտի օրերի նահանգապետ Արամ Մանուկյանը, որն այդ միջոցին Թիֆլիսում էր, Անդրանիկն ու ժամանակի կուսակցական ականավորներից Արտակ Դարբինյանը: Մտքեր են փոխանակում, հանգում միասնության եւ մամուլում իրենց երեքի ստորագրությամբ հանդես են գալիս հայտարարությամբ: Միտքն այն էր, որ Կովկասում ապաստան գտած 250 հազար արեւմտահայերը ի մի գային, ընտրեին մի կոմիտե եւ արեւելահայերի հետ հաստատուն կապերի միջոցով ծավալեին իրենց ազգապահպան եւ երկրապահ գործունեությունը: «Արամ, Անդրանիկ, Արտակ Դարբինյան» ստորագրության վերելում հավատն էր, որ գաղթականները ի մի կրթեն իրենց ջանքերը, եւ հույսը, որ կործանման եզրին հասցված հայ ժողովուրդը կհառնի նոր կյանքով եւ կապույտ երկնքի տակ նա էլ ընդառաջ կգնա հավերժող գալիքին²:

Փետրվարյան հեղափոխությունից հետո սկսել էր հայ իրականության մեջ կարծիք շրջել, թե ժամանակավոր կառավարությունը երկրի դեմոկրատական բարեփոխումների իր ծրագրի մեջ նաեւ Արեւմտյան Հայաստանի բարեկարգման միջոցներ է նախատեսում: Հավատը նման հեռանկարի նկատմամբ ամրապնդվում էր մանավանդ նրանով, որ ժամանակավոր կառավարության ասպարեզ գալով Արեւմտյան Հայաստանից փախած հայերի վերադարձ էր սկսված դեպի երկրի այն վայրերը, որոնք զրավել էր ոուսական բանակը եւ որոնցում բանակը դեռ հաստատ կանգնած էր: Ավելին, ինչպես ասվեց արդեն՝ գրավված այդ վայրերի համար ստեղծված էր կոմի-

սարի պաշտոն, որում նշանակված գեներալ Ավերյանովը վստահությամբ է ընդունվում հատկապես նրանով, որ նա իրեն տեղակալ էր նախընտրել Հակոբ Զավոյանին, արեւմտահայության ազատության գործի անխնջ, անդադար նվիրյալին, մի փաստ, որը ինքնին հուսադրող էր եւ ոգեվորիչ: Եվ սկսվում են ոչ միայն փախստականների վերադարձը, այլեւ նրանց նկատմամբ տեղում խնամատարության աշխատանքներ: Կարճ ժամանակում վերադարձողների թիվը, ըստ հիշատակման, Վանից մինչեւ Տրապիզոն եւ Երզնկա անցնում է 140 հազարից¹: Ահա աշխատանքի մի բնագավառ, որը «Հայաստան» թերթը ստեղծելու, ասպարեզ բերելու միտքն է հուշում Անդրանիկին եւ նրա գործընկերներին, որոնք իրենցով կազմում են թերթի գաղափարական եւ կազմակերպչական գործունեության հիմնասյունը: Այդ գործի համար թերթը շատ կարելու էր, բայց պահանջվում էր նաեւ այլ մի հիմնադրում: Վերջինիս ձեռնարկողներ եղան Արամ Մանուկյանը եւ Արտակ Դարբինյանը, որոնք ներգրավեցին նաեւ Անդրանիկին, բայց ասեց, որ սկզբում՝ տարակուսանքով ու զգուշավորությամբ: Որովհետեւ փաստորեն ինքնանկախ «Հայաստան» թերթի հրապարակ գալը խոսում էր կուսակցական ընկերներից Անդրանիկի առանձնանալու մասին եւ տարակուսանքների տեղիք էր տալիս: Համեմայն դեպս, առանց Անդրանիկի չէր լինի: Իսկ Անդրանիկին գործի քաշելը դժվար էր թվում, թեւ տվյալ դեպքում եւ տվյալ գործի համար՝ բոլորովին իզուր: Գործին օգնության է գալիս Հովհաննես Թումանյանը: Այդպես էր, երբ կարելու էր գործի համար Անդրանիկին համոզելը դժվար էր լինում, դիմում էին բանաստեղծի անվիճելի, անառարկելի հեղինակությանը: Մինչդեռ Անդրանիկն ինքն էր արեւմտահայությամբ զբաղվող մի առանձին մարմնի ստեղծման գաղափարը հղացել եւ այդ մասին պատմել, մինչեւ իսկ գործի հրավիրել Թումանյանին: Արտակ Դարբինյանը վկայում է. «Բանաստեղծ Հովհ. Թումանյան շատ կսիրեր Անդրանիկը եւ հաճախ իր բնակարանին մեջ կը հյուրընկալեր»: Եվ մի օր էլ, իրոք, բանաստեղծը ինքն է Արտակ Դարբինյանին այդ հարցին նվիրված մտքերի փոխանակության հրավիրում իր հարկի տակ, ուր արդեն գտնվում էր Անդրանիկը: Անդրանիկն ինքն էր ցանկացել զուրցել եւ խորհրդակցել: Նրա միտքն այն էր, որ արեւմտահայությանը օժանդակող, նրա համար կուտակվող նպաստները բաշխող մի մարմին ստեղծվեր, որը հենց կազմված լիներ իրենց իսկ փախստականներից եւ որոնք էլ այդ գործը վերցնեին իրենց ձեռքը: Այդպես ուզում էր Անդրանիկը, բայց նաեւ մի պայմանով, որ կովկասահայ դաշնակցականները եւ, ըստ երեւույթին, առհասարակ արեւելահայ միությունները հեռու մնան այդ

1 Ա. Դարբինյան, ԼՂՎ. գիրք, էջ 345:

1 «Անդրանիկի կենսը, պատերազմները եւ յուշերը», 1932թ., Գ., էջ 234-243: Նաեւ՝ «Շորավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրությունը», 1914-1917թթ., Ե., Գ., 1924թ., էջ 57-59:

2 «Արմյանսկի վեստիկ», N2, 1917թ., էջ 20-21: Նաեւ՝ Արտակ Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերն, էջ 345-347:

գործից եւ նախատեսվող բաշխող մարմինը գտնվի միայն եւ միայն արեւմտահայ մարդկանց ձեռքում:

Հովհաննէս Թումանյանի հարկի տակ խոսակցության ժամանակ Անդրանիկը պարզել է իր միտքը, առարկել դաշնակցականների մասնակցությանը նրանում, որին հակառակ Արտակն իր պատճառաբանություններն է բերել: Թումանյանն էլ իր հերթին Անդրանիկին համոզելու ջանքեր է գործադրել, չնայած տպավորությունն այնուամենայնիվ այնպիսին է եղել, թէ տվյալ զրույցն ապարդյուն է. «Թումանյանն ալ ներկա էր մեր խոսակցության, — գրում է Դարբինյանը, — հաճախ կը փորձեր համոզել Անդրանիկը, բայց իզուր»¹: Գուցէ իզուր տվյալ զրույցի պահին, բայց ոչ ընդհանրապես: Որովհետեւ Անդրանիկն ի վերջո համոզվել է ու համաձայնել: Զէ՞ որ այդ հենց նրա կամքն էր ու ցանկությունը:

Նշված գործը զուով բերելու համար Անդրանիկը համախոհների հետ միասին նախապատրաստական աշխատանքի է լծվում: Մայիսի 15-ին (նոր տոմարով) Երեւանը դառնում է արեւմտահայերի առաջին համագումարի նստավայրը: Անդրանիկն է առաջինը մոտենում ամբիոնին եւ համագումարը հռչակում բացված: Թվարկում է հայոց գլխին ջարդված դժբախտությունները: Խոսքի փոխարեն գործի է կոչում: Պահանջում է. «Գործի ձեռնարկել, հավաքել մեր ուժերը, խտացնել անխառն սիրով, իրարու ձեռք երկարել...»²: Թարմ տպավորությունների ներքո, նա ուշադրությունը դահլիճում նստածներից ու նրանց ներկայացրած ժողովրդից ուրիշ կողմ չի թեցում: Եվ հիշում է ու հիշեցնում, թէ ով է ինքը, եւ նրանցից մեկն էմ, ովքեր ապավինում են համերաշխության եւ համագործակցության ուժին եւ հավատում են, որ մենք միայն այն ժամանակ կկարողանանք փրկել ու պաշտպանել մեր ժողովրդին, վառել մեր հանգած օջախների կրակը եւ չկորցնել ապագայի հույսը, երբ իրար կհասկանանք եւ կգործենք համերաշխ: Այս բառերը դեռ բանաստեղծություն պիտի դառնային եւ որպէս մնայուն մի էջ զետեղվեին ձեւավորվող հանձարեղ բանաստեղծի հատորակում: Անդրանիկն ընտրվում է ստեղծված Արեւմտահայ խորհրդի կազմում, որն իր զանազան հանձնախմբերով ըստ նախատեսության, պետք է զբաղվեր արեւմտահայության կենսահույզ հարցերով: Խորհրդի նախագահ է ընտրվում Վահան Փափազյանը, անդամների թվում՝ նաեւ Սմբատն ու Սեպուհը: Հետագայում Արեւմտահայ խորհրդի նախաձեռնությամբ Թիֆլիսում

* Եւսկ իմաստն է եղի՞ց Զարեկի «Պատգամ» բանաստեղծության արքայականության տառերում, երկ հայ ժողովուրդը, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է: Երկերի ժողովածու, հ. 4, է. 1908թ.:

1 Ե. տ., էջ 346-347: 2 «Հայաստան», N18, 7. 05. 1917թ.:

գումարված արեւմտահայոց ներկայացուցիչների խորհրդածողովը ձեւավորում է Ապահովության խորհուրդ, որը պետք է զբաղվեր արեւմտահայության ինքնապաշտպանության գործով: Առաջիկայում նրա առջեւ ծառանալու է հատուկ զորամասի ստեղծման ու նրա հրամանատարի նշանակման հարց, որը սերտորեն կապված է Անդրանիկի անվան հետ եւ որի մասին խոսք կլինի ստորեւ: Նույն տարվա աշնանը դարձյալ Թիֆլիսում ձեւավորված Հայոց ազգային խորհրդի կազմը զբաղվելու է առավելապէս արեւելահայոց հարցերով, անշուշտ, համագործակցելով Արեւմտահայ խորհրդի հետ¹:

Արեւմտահայոց համագումարի դահլիճում բուռն վեճեր են ընթացել, անպատշաճ խոսքերն էլ կույ չեն տրվել: Դաշնակցության պարագլուխներից Ռոստոմը անձնական վիրավորանք է հղում Անդրանիկին: Ջայրացած Անդրանիկը ոտքի է ելնում... Իսկ Արամը, որ մինչ այդ էլ համբերատար չէր Անդրանիկի նկատմամբ, ձեռքը մինչեւ իսկ դեպի ատրճանակն է տանում եւ գրոհով մղվում առաջ, երբ Անդրանիկի թիկնապահներն էլ լուռ ու հեզ դիտողի դերում չէին: Ի՞նչ կլինէր, եթէ չլինէին նրանց սաստող ու զատող ներկաները²:

Բորբոքված կրքերը մարել են, եւ համագումարի նիստերից հետո Անդրանիկն ու համագումարում պատվավոր դեր խաղացած հայ գրող Լեւոն Շանթը միատեղ ստորագրությամբ ողջույնի հեռագիր են հղել նախ եւ առաջ Պետրոգրադի բանվորների եւ զինվորների խորհրդին, ապա ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնին: Վերջինիս հասցեագրված հեռագրում ասվում էր, ողջույն է շնորհակալություն Ամերիկայի ժողովրդին՝ հայությանը ցույց տված օգնության համար, ապա՝ չենք տարակուսում, որ «Ղուբ եւ Ձեր ազգը պիտի շարունակեք... բարոյական աջակցությունը մեր ժողովրդի վերականգնմանն ու բարգաձաճմանը»: Ողջույնի հեռագրեր են ուղարկվել նաեւ ֆրանսիայի պրեզիդենտին, Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջին, Ամերիկայի ազգային պաշտպանության միությանը, եւ բազմաթիվ այլ հասցեներով... բոլորի տակ՝ «Անդրանիկ, Լ. Շանթ» ստորագրությունը³:

Ընդունված վճիռներն ու հանձնարարված գործերը բազմազան էին, նախ՝ բանակցություններ բարեգործական եւ նպաստամատույց ընկերությունների եւ Արեւմտյան Հայաստանի վերաշինության հանձնաժողովի ու Հայոց գյուղատնտեսական ընկերության հետ: Պետք էր նրանց հետ պայմանագրեր կնքել եւ համաձայնեցնել գործողություններ Եղբայրական օգնության հանձնաժողովի, Սոսկվայի հայկական կոմիտեի ու Հայ փախստականական գլխավոր կոմիտեի հետ: Խոր-

1 Վ. Փափազեան, Իմ յուշերը, հ. Բ, էջ 439-445: 2 Սա պատմվում է իրեն իսկ Արտակ Դարբինյանի գրում, «Հայ ազատագրական շարժման օրերի», Փարիզ, թթ. 344-350: 3 «Հայաստան», NN27, 29, 21-ը եւ 24-ը մայիսի 1917թ.:

հուրդը դիմել է ժամանակավոր կառավարության ռազմական մի-
նիստը Կերենսկուն՝ Սիբիրի հեռավոր վայրեր արջուրված թուրքահայ
գերիներին ազատելու համար: Կապ է հաստատել թիֆլիսի, Երևանի
և Բաքվի հայկական գաղթատների հետ, նրանցում փախստականնե-
րի երեխաների ուսումը շարունակելու հնարավորություն ստեղծելու
համար: Հետեւել է հանգանակության կարգով հատկացված գումար-
ների բաշխմանը: Ինչպես ցույց են տալիս մամուլի հրապարակում-
ները, ամենից շատ հատկացումներ արվում են «Հայաստան» թերթի
խմբագրության հասցեով¹: Այս ամենի մասին նամակներ ու դիմում-
ներ էին առաքվում Անդրանիկին եւ խնդիրներ հարուցվում, ինչպես
նաե տեղեկություններ հայտնվում կատարվածի արդյունքների մասին:
Գործ շատ կար անելու:

Առանց գծողության չէր լինում: Գծողությունը ներքին անհամաձայ-
նությունն էր ու անհամերաշխությունը, որոնք դառնում էին երկպա-
ռակություն՝ այն լուրջ պատճառներից մեկը, որոնք հեռավոր դարերի
խորքերում խարխլեցին հայոց պետականության հիմքերը եւ ուղեկ-
ցեցին նրան որպես ազգային դժբախտություն, թեւ ոչ որպես ազգա-
յին բնավորություն: Տարակարծությունները, որոնք անհամերաշխու-
թյուն էին դառնում, թելադրվում էին տեւական ծանր իրավիճակով,
խմորվում, հասունանում էին դրության անելանելիությամբ պայմա-
նավորված խնդիրների ոչ միայն բարդությամբ, այլ հաճախ ուժերից
վեր լինելով ու անլուծելիությամբ: Նման պայմաններում ծագում,
սրվում ու բացահայտվում էին մարդկանց ինչպես հայացքների,
նույնպեսեւ անձնական, գերդաստանային ու տոհմային (ժամանակին
նաե դինաստիական) շահագրգռությունների հակասությունները, եւ
գերիշխող մի հեղինակության, առավել եւս անտերունչ իրավիճակում
պետական, քաղաքական ազդեցիկ ուժի բացակայության պայմաննե-
րում տանում էին դեպի ուժերի ջլատումն ու տարանջատումը, որից
տուժում էր, վերջին հաշվով, ժողովուրդն իր ամբողջությամբ: Այդ-
պես էլ հիմա, 1917 թվականին:

Ստեղծված իրավիճակի արտահայտություններից մեկը եղավ այն,
որ եթե 1914-ին սկսված պատերազմին Անդրանիկն ընդառաջ եկավ
վերստին Դաշնակցության շարքերը մտնելով, այժմ՝ 1918-ին սկսվե-
լիք թուրքական սրարշավի նախաշեմին, նա հարմար գտավ դարձյալ
բացարկ հայտարարել Դաշնակցությանը եւ դուրս գալ նրա շարքե-
րից, անշուշտ, քաջ գիտակցելով ու կանխազգալով վերահաս պատե-
րազմի վտանգը, եւ միայն ու միայն այդ վտանգը կասեցնելու խոր
մտահոգությամբ: Արդեն այժմ, քանի դեռ ճակատում խաղաղ էր, նա

¹ «Հայաստան», №5, 25. 06. 1917թ.:

լավ բան չէր սպասում: Անհանգիստ էր, լարված ու ջղային: Դեպքե-
րից երեք տարի անց հրապարակված պարզաբանման մեջ առաջ է
մղվում հեռանալու բարոյական պատճառը: Նրանում դաշնակցական-
ները դաժանորեն «շահամուլ շրջմուլիկների եւ հեղափոխական առե-
տրականների» միացյալ ամբոխ են անվանված: Կուսակցության ներ-
սում, մեկը մյուսին *աղտոտված* անվանելով, միմյանց հասարակա-
կան դատաստանի կոչ էին անում¹: Դաշնակցությունն ապրում էր
ներքին իրարամերժ բախումների մի փուլ, ուր չարաբաստիկ դեր էին
խաղում կամավորական շարժման վերաբերյալ շրջող հակասական
կարծիքները: Ցարի տապալումից հետո, երբ Դաշնակցությունն ա-
զատ ասպարեզ ելավ, համադրվում էին եւ հակադրվում նրա անցած
ճանապարհի տարբեր երանգները՝ մի տեղ ընկերավարական, մի այլ
տեղ ազգայնական, երրորդում՝ բուրժուական, այլ դեպքերում՝ դասա-
կարգային, ապադասակարգային, եւ մի քանի ծրագրեր՝ անցյալ,
ներկա եւ ապագա, ինչպես որ վերլուծում է դեպքերից հետո գրիչ
վերցրած հեղինակը²: Մինչդեռ Անդրանիկն առաջվա պես դարձյալ
մի հոգս ուներ եւ գործելու մի ասպարեզ՝ արեւմտահայության
խնամքն ու ապաստանումը, նրա կյանքն ու աշխատանքը: Ջանի դեռ
պատերազմ չէր, ամբողջ ուժով ձգտում էր, որ նպաստները շուտ
տեղ հասնեին, որ վերջ տրվեր արեւմտահայության նկատմամբ
անտարբեր վերաբերմունքին, կասեցվեր իբրեւ նպաստ ուղարկված
ապրանքների գողությունը³:

Արեւմտյան խորհրդի կազմում Անդրանիկն ընտրվեց ո՛չ որպես
զուտ դաշնակցական լինելու եւ ո՛չ էլ հատկապես Դաշնակցությանը
մատուցած իր ծառայությունների համար, կար ժողովուրդը՝ որպես
նրա պաշտամունք, եւ նրա ծառայությունը ժողովրդին: Բնորոշ է եւ
այն, որ երբ 1917-ին բացված արեւելահայերի համագումարին
Անդրանիկի հետ միասին մասնակցած Արեւմտահայ խորհրդի ան-
դամները միացան համագումարի դաշնակցական թեւին, Անդրանիկը
դրա դեմ եւս վրդովվեց: Նա չէր ցանկանա, որ կուսակցական
պատկանելության պատրվակով Արեւմտահայ խորհուրդը կրճատեր
իր համակիրների թիվը, նեղացներ նրա շահերի պաշտպանությամբ
հանդես եկողների շրջանակը: Եվ արդեն այդտեղ Անդրանիկը ու-
սահայոց ազգային համախորհրդի մեջ մտավ ոչ թե որպես դաշնակ-
ցական, այլ՝ կուսակցություններից անկախ⁴:

Ուրեմն կար խմորում: Պետք էր լուծումը գտնել եւ դուրս բերել ի
լուր ամենքի: Անդրանիկի շուրջը հյուսվում են որոգայթները: Դաշ-

¹ Գառնիկ Սուրենյան, Ինչու Չոր, Անդրանիկը հեռացավ Հ. Ց. դաշնակցությունէն, Կ. պոլիս, 1920թ., էջ 3, 4: ² Ն. Ս., էջ5: ³ Տե՛ս «Հորիզոն» թերթի համարները:
⁴ Գ. Սուրենյան, ... էջ 6-11:

նակցության վերնախավը բացահայտ ըմբոստանում է նրա դեմ: Ակսվում է մի պայքար, որտեղ չուսյալ՝ զորականը ուսյալների՝ եւ ճարտասան գործիչների բազմության դեմ պիտի մարտնչեր իր ուժերից վեր մի բնագավառում ու ասպարեզ պիտի հաներ իր մտքում լուռ ու մունջ պահված գիտելիքների պաշարն ու կողմնորոշման իր բնական ուժը եւ այն էլ այնպիսի հռետորական պողոթկումով, որը հնարավոր է, որ ուրիշ մի դեպքում պաճուճավոր խոսքարվեստի նմուշ համարվեր:

Իսկ այժմ ասենք, որ դա եղել է 1917 թվականի սեպտեմբերի 29-ին Թիֆլիսում բացված եւ հաջորդ ամսին շարունակված ազգային համախորհրդակցության վեցերորդ նիստում: Ինչպես երեսաց համախորհրդակցություն բառից, նրան պետք է մասնակցեին ըստ էության ազգային քաղաքական բոլոր ուժերը, բոլոր կուսակցությունները: Եվ գրեթե այդպես էլ եղել է. մասնակցել են Ղաշնակցության, Սոցիալիստ-հեղափոխական, Սոցիալ-դեմոկրատական (մենշեյնկյան) եւ Հնչակյան (այս երկուսը որպես մի բլոկ), Ժողովրդական կուսակցությունների, ինչպես նաեւ Արեւմտահայ խորհրդի ներկայացուցիչները: Բոլշեւիկները չեն մասնակցել եւ նախագահություն ուղարկած գրությամբ բացարկ են հայտարարել համագումարին: Զըննարկվել են պարենավորմանը եւ գաղթականությանը, տեղական իշխանությունների դեր կատարող զեմստվոներին, դպրոցական գործին, ազգային հարաբերություններին վերաբերող եւ այլ հարցեր: Առանձին հարց է եղել «Ճակատի պաշտպանության եւ ինքնապաշտպանության» մասին: Համախորհրդակցությունում, ի թիվս այլոց, եռանդուն դեր է խաղացել Փարիզից Անդրանիկին ծանոթ Ալ. Շիրվանզադեն¹:

Համախորհրդակցության երկրորդ նիստում Անդրանիկը հակիրճ հայտարարել է, որ թեւեւ իրենք, Արեւմտահայ խորհրդի 15 անդամներ, ներկայացված են համախորհրդակցությանը, բայց իրավասու չեն մասնակցելու Կովկասին վերաբերող հարցերի ըննարկմանը²: Ըստ երեւույթին Անդրանիկի հայտարարությունը թե խորհրդակցությունում, թե դրսում տարակուսանքների տեղիք է տվել: Եվ պետք է այդ եղած լինի պատճառը, որ «Հայաստանի» խմբագիր Վահան Թոթովենցը հաջորդ օրը հարկ է համարել հանդես գալ հատուկ բացատրությամբ. Արեւմտահայ խորհրդի անդամները նախապես ընտրվել են միայն «հրոշակի խնդիրների շուրջը» արտահայտվելու, «որոշ ձգտումներ իրականացնելու համար»: Ինչ վերաբերում է սոսկ արեւելահայ կյանքի հարցերի ըննարկումներին, ապա բացատրվում

1 «Հայաստան», N121, 1. 10. 1917թ.: 2 Ե. տ., N122, 3. 10. 1917թ.:

է, որ նրանք դրանց «մասնակցելու իրավունք չունեն»¹: Պարզ է, Անդրանիկն ու իր ընկերները, մարդկանց որոշակի խմբավորման ներկայացուցիչներ են եւ ունեն միայն որոշակի խնդիրներ ու հանձնարարականներ: Արեւմտահայ խորհրդի անդամներ են եւ՝ վերջ, այդ խորհրդի հոգսերը այնքան շատ են, որ լիուլի բավական են համարում միայն դրանցով զբաղվելու:

Ազգային համախորհրդակցության վեցերորդ նիստն է: Պատգամավորներից ամեն մեկը հայտնի է դարձնում, թե որ կուսակցությունն է իրեն առաքել: Անդրանիկին, ըստ իր հայտարարության, կուսակցություն չէ որ ուղարկել է, այլ Ռոստոմի եւ Լախիջեւանի հայ համայնքը: Այս մի քայլով նահանջ էր կուսակցությունից, բայց բազում քայլերով ընդառաջ էր ժողովրդին: Համայնքը ժողովուրդ էր, նրա բոլոր խավերից կազմված երփներանգ մի փունջ, այլ ոչ միայն բանվորներ, միայն գյուղացիներ կամ ուսուցիչներ եւ ոչ էլ միայն չունեւորներ կամ միայն ունեւորներ: Երբ ազգի գլխին լինել-չլինելու սուրն է կախված, Անդրանիկն ամբողջով ի մի ձուլվելու, բոլորով զենքի դիմելու եւ լրիվ կազմով մահու եւ կենաց կովի ելնելու կոչն է արձակում՝ առանց դասակարգային եւ կուսակցական խտրության: Եվ այդ է որ կա Անդրանիկը, նախ եւ առաջ, որպես ոչ միայն անցյալ, այլեւ ներկա ու ապագա: Եվ եթե մեկն էլ անկոտորում դեմ է դասակարգային տարբեր ու հակոտնյա շերտերի միավորմանը առհասարակ եւ դրանում չի ուզում տեսնել բացառություն եւ լսել բացառության մասին, թող նա էլ այդպես ասի, բայց հանուն նրա մենք չենք կարող ասել, թե չէ, Անդրանիկը դասակարգերից մեկին հրավիրում է, մյուսին վանում: Երբ ամբողջ ազգի դեմ է վտանգն ուղղված, ինչու պետք է մեկին զենքի կոչեր, իսկ մյուսին ասեր, թե դու գնա հեռու, նստիր տանդ, այս կոիվը քո խելքի ու սրտի բանը չէ: Եւ նաեւ կանանց էր հրավիրում գործի եւ ծեր ու քահեւներին, նա բոլորին էր զենքի կոչ անում, անկախ այն բանից, թե պահեստում ինչ էր նախատեսվում նրանց համար՝ հրացան, մուրճ, թե բրիչ, կացին կամ մահակ: Եթե ուրիշ զենք չկար, ինչու պետք է ասեր, թե՛ չէ, կացնով բան չի դուրս գա կամ դազանակն ինչ է, որ իջեցնես քեզ հարվածողի գլխին: Այս մեկ:

Մյուսը: Հայտարարելով, թե ինքն իրեն իրավունք չի վերապահում խոսել Անդրկովկասին, այսինքն որոշակիորեն Արեւելյան Հայաստանին, վերաբերող հարցերի մասին, Անդրանիկն ասում է՝ ես եկել եմ համախորհրդակցության ճակատի պահպանության մասին խոսելու եւ այդ հարցի լուծմանը «իմ պարտականությանս բաժինը բերելու»²: Եվ անմիջապես նկատում է այն, ինչն այս պատմության մուտքի,

1 Ե. տ., N124, 4. 10. 1917թ.: 2 «Հայաստան», N126, 7. 10. 1917թ.:



ՄՄԲԱՏԸ
ԶԻՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ

խոսքում՝ ասվեց. «Բայց ցավով պիտի հայտնեմ, որ ժողովը չի զբաղվում հայ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող հարցերով, այլ կուսակցական հաշիվներով ու կրքերով կառաջնորդվի»: Կուսակցական հաշիվները, որպիսիք նա նկատի ուներ, ըստ իրեն՝ ժողովրդի հոգսերը չէին, ավելին՝ դրանցով զբաղվելը ոչ միայն գործին օգնել չէր նշանակում, այլև ուժերի զուր սպառումով նրան մեծ վնաս էր տալիս: «...Մեր վիճակն ու կացությունը իսկապես վտանգավոր դրության մեջ կը գտնվի. մեր առջեւ ցցված է հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը պահպանելու հարցը»: Եվ եթե հարցն այս է, ուրեմն խոսքն էլ

դրան պետք է վերաբերի: Բայց ի՞նչ է նկատում Անդրանիկը. «Դուք այս մասին կարծես չեք մտախոհվիր եւ տարված եք միմիայն սոցիալիստական գաղափարներով»: Ա՛յ թե որտեղից որտեղ դուրս եկավ: Ի՞նչ գործ ունի այստեղ սոցիալիստական գաղափարները ընկալաբար ակնարկելը, եւ մի՞թե ներկա գտնվող մյուս կուսակցական գործիչները ճակատը պահելու անհետաձգելի, կենսահույզ, ճակատագրական հարցը ընենելու փոխարեն տեսական ու քաղաքական այլեայլ խնդիրների վրա են իրենց ժամանակը վատնել: Ուրեմն, այդ էլ է եղել, որ Անդրանիկն իր խոսքի շարունակության մեջ ներկաներին հարկ է համարում հիշեցնել ու ըթափեցնել. «Դուք հավաքված եք այստեղ, իբրեւ մի ժողովրդի ներկայացուցիչներ, անոր իղձերուն եւ ակնկալություններուն թարգման հանդիսանալու համար, բայց անոր ցավերով չէ որ կառաջնորդվիք, այլ զուտ կուսակցական հայեցողությամբ եւ մտախոհությամբ»: Բայց Անդրանիկը ոչ տարբեր դասակարգերի գոյությանն է դեմ, ոչ էլ կուսակցությունների: Նա պարզ հայացքով է դիտում եւ տեսնում ու ընդգծում է այնպես, ինչպես որ կա: Եվ այստեղ է, որ հարկադրված բացել է իր մտքի ծալքերը եւ ասել իր իմացածը սոցիալիզմի մասին եւ իր վերաբերմունքն արտահայտել դրա նկատմամբ: Նրա կարծիքով դեռ վաղ է խոսել սոցիալիզմի մասին, վաղ եւ զուցե թե ապարդյուն:

* Տե՛ս սույն գրքի 5-7 էջերը:

Աշխարհն ինչպես որ կա դեռ հաստատ է ու կայուն, նա դեռ այնպես խարխուլ չէ, որ ուր որ է փլվի եւ իր տեղը զիջի. «Դուք կը ճանաչեք սոցիալիստության մասին, բայց որ չափ որ աշխարհի վրա դրամ գոյություն ունի, գոյություն պիտի ունենա նաեւ գործարանատեր, բանվոր եւ այլն դասակարգ»: Դրամը կապիտալն է, ինչպես որ դրամատիրական կարգերը, համընդհանուր ընդունելությունն գտած բառով ասած, կապիտալիստական կարգերն են: Որտեղի՞ց է լսել եւ ումի՞ց է սովորել Անդրանիկը այս բոլորը: Մութ հարց չէ սա: Հնչակյան ու Դաշնակցություն կուսակցությունների շարքերում եր եղել: Իսկ նրանց ծրագրերում հանգամանակից, որքան էլ յուրովի, խոսք կար սոցիալիզմի՝ որպես տեսության եւ հասարակարգի մասին: Նյութեր եր հղել նրանց «Հնչակ» եւ «Դրոշակ» թերթերին, որոնց էջերում դարձյալ՝ սոցիալիզմն էր պարզաբանվում եւ ընկարկվում: Դետք է որ կարդացած լինեիր: Իսկ մի՞թե քիչ բան ասվեց ու վերլուծվեց Դաշնակցության վիեննական համագումարում, երբ այնտեղ կուսակցությունը դեպի սոցիալիզմ կողմնորոշող «Կովկասյան ծրագրի» բուն ընկարկումներն էին ընթանում: Վերջապես, հենց թիֆլիսյան այս օրերին Թիֆլիսում թերթ կա՞ր, որում սոցիալիզմի մասին խոսք չլինեիր՝ թեր թե դեմ: Այդ թերթերից շատերից հետ չէր մնում իրեն իսկ հովանավորած «Հայաստանը», որի հազվադեպ համարներում է միայն, որ սոցիալիզմը այս կամ այն կերպ չէր պարզաբանվում եւ վերլուծվում: Եվ ահա համախորհրդակցության հոռետորական իր խոսքում նա կտրականապես ժխտում է սոցիալիստական այն դրույթը, թե ձեւավորվելու է անդասակարգ հասարակություն եւ երկրի վրա հաստատվելու է համընդհանուր բարօրություն: Ո՛չ, հայտարարում է նա, «Զի պիտի չքանան ոչ դասակարգերը եւ ոչ ալ աշխարհի չարիքը»¹:

Ելույթի լրագրական գրառում է: Բառացի՞, թե՛ ոչ բառացի: Առհասարակ, հավերժորեն՝ չպիտի չքանան դասակարգերը, թե՛ պարզապես դեռ վաղաժամ է նման հարցադրումը: Կամ, զուցե, այսօր ժամը չէ այդ մասին խոսելու, քանի որ ժամն է ազգի գոյատեւումը ապահովելու, նրա բնաջնջումը կասեցնելու: Եթե առաջինը հարցական է, ապա երկրորդը հաստատ է:

Հաստատ է եւ այն, որ Անդրանիկը բանավեճ ուներ Դաշնակցության հետ, բայց ոչ նրա ամբողջի, այլ վերնախափի հետ: Այն նյութը, որը ընկալաբար եր նա, կուսակցության *ամեն մի* անդամի մեղքը չէր համարում: Այդքան ներդաշնակ չէր Դաշնակցությունը: Անդրանիկը լավ գիտեր նրա ներքին մեքենան: Ինքն էլ այնքան միամիտ չէր, որ մեկի ու մյուսի ասածը բոլորին վերագրեր. «Իմ կարծիքով

¹ Ն. տ.:

դաշնակցության ճառախոսներու արտահայտած գաղափարները ամբողջ դաշնակցության արտահայտություններն ու տեսակետները չեն, այլ մոնոփոլիստ խմբակի մը»։ Կուսակցությունն ունի կենտրոն ու վերնախավ, որն էլ իր կամքն է թելադրում եւ ճնշում։ Եվ նկատում է, որ նրանք որոշակիորեն ազգի հոգսերից խոսելու եւ նրա վերջերին բուժման միջոց գտնելու փոխարեն ինտերնացիոնալի մասին են խոսում եւ նրա անուկից հանդես գալիս։ Սոցերի այս կապակցության մեջ է, որ հիշում է իր նահատակված ընկերներին՝ Գուրգենին, Աղբյուր Սերոբին, Գեուրգ Չավուշին, «Անոնք եւ նմանները, հազարավոր մարտիկներ, չինկան հանուկ էնթերնասիոնալի, այլ՝ ազգի ու հայրենիքի ազատության նվիրական գաղափարին»։ Ասում է եւ ոտքի կանգնում։ Ահա սրանից հետո է, որ ոտքի է կանգնում ամբողջ դահլիճը։

Որքան էլ ասեին, թե Անդրանիկն անուս մի հայդուկ է, գիեւոր, փաստ էր, որ նա իր խոսքի հոետորական համոզությամբ, իր մտքի տրամաբանական ուժով նվաճել էր բազմակուսակցական դահլիճը, որում ազգի ղեկավար գանգվածն էր հավաքված եւ ազդեցիկ ուժը։ Դրանից հետո արդեն նա տեղին է համարում ասել, որ նրանք, այդ ներկաները, որ մեծ-մեծ գաղափարների եւ հեղինակությունների անուններից են հանդես գալիս, բոլորովին էլ այն չեն, այսինքն այն սոցիալիստները չեն, ինչպիսին իրենց հռչակում են։ Նրա պատկերացմամբ սոցիալիստական գաղափարախոսությունն ու սոցիալիստները միանգամայն ուրիշ արժեքներ էին։ Իսկ դաշնակցականներն էլ ներքնապես միաձուլվել էին, չկար նրանց մեջ ցանկալի այն միաբանությունը, որը մեծաքանակ ուժի դեմ փոքրաքանակ ուժի հաղթանակի տարրական պահանջն է։ Չկար տարրական պահանջը։

«Հայաստան» թերթի էջերում նրա աշխատակից Արշակ Սաֆրաստյանը որոշակիորեն գրում էր Հայաստան աշխարհին սոցիալիզմի անհարիր լինելու մասին։ Նա այդ հիմնավորում էր տնտեսական զարգացման աստիճանի անհամապատասխանությամբ, գտնելով, որ նման մակարդակի դեպքում «սոցիալիստական իրավակարգի մասին մտածելը համահավասար է ազգային ինքնասպանության», որ այն կլինի ոչ թե կառուցող, այլ «քանդիչ»։

Սոցիալիզմի ժխտման մյուս պատճառը դիտվում էր հայկական «ազգ-պետության» դեռեւս ձեւավորված չլինելը, «Մենք քաղաքական կազմակերպությամբ դեռ ազգ-պետություն չեղած կը փորձենք մեր սերունդը դաստիարակել սոցիալիստական աշխարհայացքով»¹։ Այս նշանակում է, որ սոցիալիզմը զարգացման ոչ թե նախնական, այլ անհամեմատ բարձր փուլ է։ Ուստի տվյալ դեպքում ոչ թե սոցիալիզմն է ժխտվում, ոչ թե այն դասակարգային տեսակետից,

պատմականորեն անընդունելի է համարվում, այլ ընդգծվում է նրա հաստատման համար նախապայմանների բացակայությունը։

«Հայաստան» թերթն ասես պարտք էր ստանձնել սոցիալիզմի գաղափարախոսությունը քարոզելու կամ, ավելի ճիշտ, հատկապես հայ իրականությունում նրա կիրառելիությունը պարզաբանելու համար։ Հենց դրան էլ մի ամբողջ ձիգ հողվածաշար է նվիրվել «Ընկերավարությունը եւ Տաճկահայաստանը» վերնագրի տակ։ Իմաստը հետեւյալն է։

Արեւմտահայ հեղինակը իր պատանության տարիներին, մի տասնամյակ առաջ, հիացմունքով ու ոգետրությամբ է լսել աղքատի եւ հարուստի տարանջատման, կապիտալիստի եւ բանվորի միջեւ եղած հակամարտության մասին ուսմունքը։ Եվ սուզվել է հույսի ու երազների ծովի խորքը։ Ժամանակի ընթացքում գիտակցության է եկել, չէ՞ որ մարդկային հասարակությունը վաղնջական օրերից պարփակել է իր մեջ ուժեղին ու թույլին, աղքատին ու հարուստին։ Թե՛ եգիպտական փարավոնների օրոք, թե՛ հունական ու հռոմեական քաղաքակրթության ժամանակներում, եւ այդպես՝ դարեդար։ Սակայն հեղինակը քսաներորդ դարի շահագործող բուրժուազիային եւ ընչազուրկ պրոլետարիատին չի նույնացնում նախընթաց դարաշրջանների ճնշողի ու ճնշվողի հետ։ Եական տարբերություններ է տեսնում։ Ամբողջության մեջ կապիտալիզմն իր դասակարգային կազմով, շահագործման մեքենայով նա համարում է միանգամայն ուրույն հասարակարգ, որն ունի ոչ միայն բացասական, այլեւ դրական գծեր նախորդների համեմատ եւ առհասարակ։ Եվ ծագում է հարցը, ի՞նչ են Տաճկահայաստանի հարուստն ու աղքատը եւ միթե՞ դրանք են այն դասակարգերը, որոնցով կազմված է կապիտալիզմը։ Պատասխանը մերժողական է։ Այսինքն՝ ամեն մի աղքատ ու հարուստ չէ որ պրոլետար է ու բուրժուա, ամեն մի ճնշում չէ, որ դասակարգային շահագործում է։ Տաճկահայաստանը ոչ թե դրամատիկական (կապիտալիստական) երկիր է, այլ ֆեոդալական, ուր կան մինչեւ իսկ «մինչֆեոդալական կարգեր ու սովորույթներ»¹։ Եվ ժխտվում է կապիտալիստական տնտեսակարգի առկայությունը Տաճկահայաստանում։ Արիեստավորները, սեփականատերերն ու սեփականազուրկները դեռեւս կապիտալիստական չեն, ոչ բառիս բոլորն իմաստով բուրժուազիա են, ոչ էլ պրոլետարիատ։ Գյուղացու եւ սեւագործի ուսերին իջած հարկերն էլ վաղնջական ժամանակներինն են, այլ ոչ բուրժուականն ու կապիտալիստականը։ Սասնավորապես հայության ճնշումն ու շահագործումը բացատրվում է ոչ թե կապիտալիզմով, այլ երկրի սուլթանական կարգերով, բոնատիրության արեւելյան այդ մեքենայով։

¹ Լ. տ. № 8, 13. 07. 1917թ.:

¹ «Հայաստան», 2. 11. 1917թ.:

Իսկ վերջում գլխավոր այն հարցն է, որին հետամտել է անդրանիկյան թերթի հեղինակը. Տաճկահայաստանի պես աղքատիկ ու խղճուկ մի երկրում արդյո՞ք հող կա ընկերավարության եւ ընկերավարական կարգի համար: Պատասխանը մի բան է՝ Ո՛չ¹:

Բայց նպատակը միայն այդ բանը չէ:

Հաջորդում է հեղինակի հետապնդած գլխավոր հարցը՝ որքանո՞վ ընկերավարական է Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը եւ ընկերավարակա՞ն է արդյոք: Եվ պատասխանը՝ ընկերավարությունը իր բուն բովանդակությամբ երբեք Ղաշնակցության գործնական ծրագիր եւ գործունեություն չի եղել, որքան էլ նա, իրապես միշտ, օգտագործել է դրույթներ ու ընդհանուր ֆրազներ, քաղվածքներ է բերել սկզբնաղբյուրներից, երբեմն էլ այն հռչակելով օրվա խնդիրն ու նպատակը: Մեկ է, նրա համար «Կարլ Մարքսը մնացել է այնպիսի մի ուտոպիստ, ինչպես Թոմաս Մորը»²: Այնպես որ, դարձյալ ընդգծում է թերթը, ընկերավարական բնույթի հողվածների արտատպումն ու գրականության հրատարակումը չի խոսում այն մասին, թե Ղաշնակցությունը եղել է ստուգապես ընկերավարական կուսակցություն: Հողվածի հեղինակը, որն իր խոստովանությամբ դաշնակցական է, վերջում անդրադառնալով Ղաշնակցության դերին ռուսական բուրժուական հեղափոխության հաղթանակից հետո, այնուամենայնիվ գտնում է, որ նա պետք է շարունակի իր գործունեությունը՝ ղեկավար սկզբունք ունենալով ընկերավարությունը, պետք է ամեն կերպ աջակցի քաղաքական ազատ կարգերի ստեղծմանը, ժողովրդապետության հաղթանակին, պայքարելով «ազգային իրարամերժ ստեղծության» դեմ³:

Սիւսայսպես, թե երես առ երես գործի ժամին, թե մամուլի էջերում կատարվող տեսական վերլուծություններով, քննարկվում եւ քննադատվում էին Ղաշնակցության թե ծրագրային փաստաթղթերը, թե նրա անցյալ պատմության էջերը, թե առօրյա քաղաքական գիծն ու գործունեությունը: Միանշանակ չէին կարծիքները: Մի դեպքում տարակուսանքներն էին գերիշխում, մի այլ դեպքում՝ ուղղակի մերժումը, իսկ երրորդում բացառված չէր, որ Ղաշնակցությունը, որպես պատմական ուղի անցած եւ ծառայություն մատուցած կուսակցություն, հույսերով ներշնչվեր եւ ներկայի ու ապագայի գործունեության ուղերձներ ստանար: Անդրանիկը, որ այդ ամենը վատ չգիտեր, 1917-ի հոկտեմբերի 7-ին հրապարակ հանեց իր վճիռը: Այդ օրը «Հայաստան» թերթում լույս տեսավ խմբագրությանը հոկտեմբերի 5-ին հասցեագրված նամակ. «Պատճառները ինձ վերապահելով կը հայտարարեմ դաշնակցական ընկերներուս, որ ես կը հեռա-

նամ դաշնակցության շարքերէ: Անդրանիկ»: Ըստ էության սա լինելով ազգային համախորհրդակցության երկարաշունչ ճառի կարճառոտ եզրահանգում, այդ ճառի բովանդակության բաղադրյալ մաս է եւ կազմվել է փաստորեն ճառին նախորդած մտորումների հենց ընթացքում: (Նույն հոկտեմբերի 7-ին էլ «Հայաստանը» հրապարակել է ճառի համառոտացված տեքստը): Լինելով բացարկ կուսակցությանը, նամակը ոչ միայն բացարկ չէր գործին, այլ, ընդհակառակը, գործի մի նոր ինքնապարտավորեցում էր: Հենց նույն տեղում, որպես նամակի հետագրություն, կարդում ենք. «Ազգային համախորհրդի ուշադրության: Ազգային համախորհրդակցությունեն կազմված մարմինը եթե կը հրամայե իմ վրա ինկած պարտականության եւ գործի բաժինը կատարել, ամենայն ուրախությամբ պատրաստ եմ ընդառաջ երթալ անոր կարգադրություններուս: Անդրանիկ»:

Անդրանիկը մնում է նույն ինքը: Հայրենիքը եւ ազգը վերին սրբությունն են, նրանց ծառայելը՝ պարտականություններից զերգույնը: Բացահայտվում էր դարձյալ կուսակցականության մասին անդրանիկյան նույն փիլիսոփայությունը, այս կամ այն կուսակցության անդամ լինելը՝ չի որոշում մարդու կամքն ու նրա դերը, քանի որ կան հայրենիքն ու ժողովուրդը, որոնց հոգսն ու պատգամը յուրաքանչյուր առանձին դեպքերում վեր են ամենից: Հեռանալով կուսակցությունից, մնաց նույն հայրենիքի որդին ու նրա հյուսիս-հայտակ կամակատարը: Եվ զուր էր Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության պարագլուխ Բախշի Իշխանյանը հռչակում, թե «Հայաստան» թերթը ուրիշ մի հոսանք է: Ղաշնակցություն կուսակցության մեջ, այն անվանելով «անդրանիկյան հոսանք»¹: Կուսակցության շարքերից հեռանալու հայտարարությունը առավել քան պարզ է դարձնում, որ ժխտելով մեկին, Անդրանիկը նոր արահետ է բացում, ուրիշ ճանապարհ է մատնանշում, ազգովին համախմբվել, միաձուլվել գլխավոր վտանգի դեմ՝ թե մտքով ու հոգով, թե աշխատասիրությամբ, թե ամբողջ ֆիզիկական կարողություններով: Տվյալ պատմական պահը կուսակցություններից մեկի հարցը չէ, որ դնում էր, այլ բոլորի՝ ներդաշնակի թե մերժողի ուժերի լիակատար ձուլումը: Սա, ի միջի այլոց, չէր էլ նշանակում, թե նա կուսակցությունների գոյության ու գործունեության անհրաժեշտությունն է ժխտում: Ո՛չ: Նա տվյալ պահին նրանց հակամարտությունն ու առճակատումն է բացասում եւ գլխավոր խնդրի լուծմանը բոլորի՝ ուժերն է հրավիրում: Եզվածը Ղաշնակցությունից հեռանալու դիրքորոշիչ պատճառաբանությունն էր ու որոշակի առիթը: Բայց կային

1 Լ. տ. N. 68, 13. 07. 1917թ.: 2 Լ. տ. N. 69, 1917թ.: 3 Լ. տ. N. 72, 18. 07. 1917թ.:

1 Լ. տ. N. 58, 29. 07. 1917թ.:

նաե տարիների խմորումը եւ դրա վերաբերյալ նույնպէս անդրանիկ-
յան բացատրությունը, անհատը նրա կարծիքով ապրանք չէ. որ
կուսակցությունը ուզածին պէս առուծախի առարկա դարձնի:

Հեռանալու պատճառների մեջ նա չի մոռացել հատուկ ընդգծել
Դաշնակցության 1907թ. հեռացումը սկզբնափուլի դիրքորոշումից
(Արեւմտահայաստանից Ռուսահայաստան), երիտթուրքերին, նրանց
զլխավորած հեղափոխությանը եւ հռչակած կեղծ սահմանադրական
լոզունգներին տուրք տալը, ավելին, հետագայում էլ Դաշնակցության
եւ երիտթուրքերի միջեւ համաձայնության կնքումը...¹:

Ընթերցե՛ք «Հայաստանի» էջերում գետեղված մի «Բաց նամակ»:
Հեղինակը իրեն անվանում է «տաճկահայ սոցիալիստ» եւ դիմում է
որպէս ընկերոջ դարձյալ մի հայ սոցիալիստի, որը հայ մարք-
սիստ-լենինյանների պարագլուխ բոլշեւիկ Ստեփան Ծահումյանն է:
Օրը 1918 թվականի հունվարի 11-ն է: Նամակի իմաստը, որը
զարմանք է ու զայրույթ, հետեւյալն է: Ծահումյանական սոցիալիստ-
ները հայտարարում են ազգերի ինքնորոշման իրավունք, բայց իրա-
կանում, երբ գալիս է պահը, խանգարում են ազգերից մեկի կամ
մյուսի այդ իրավունքի իրականացմանը, դիմելով միևնույն իսկ ռազ-
մական ուժի օգտագործմանը: Բերված օրինակը Կովկասն է, որտեղ
հայերը, վրացիներն ու ադրբեջանցիները «ապրելու նոր պայմաններ
են ստեղծում», մինչդեռ դրա դեմ ծառանում են սոցիալ-դեմոկրատ-
ները՝ «հեծկած ռուս բանակի վրա»: Եվ դրանից բացի, հեղինակը
նկատում է, որ բոլշեւիկները տվյալ օրերի փաստաթղթում մահմեդա-
կաններին կոչում են ուղղակի մահմեդականներ, առանց սոցիալա-
կան խտրականության, իսկ քրիստոնյա ժողովուրդները նրանց հա-
մար շերտավորված են՝ բանվոր, գյուղացի, հողատեր, հողագուրկ...
Սա ի՞նչ արտոնություն է եւ հանուն ինչի՞:

Նամակը խտրականության դեմ է, բայց այն խտրականության,
որին հայ ժողովրդի քիչ թվով զավակներ չեն զոհ գնացել եւ դեռ
կգոհվեն, եթե ազգերի ինքնորոշման իրավունքը հռչակվի ձեւի հա-
մար, իսկ մնացած լոզունգներն էլ իրապարակվեն, ասես ուղիղ
հակառակը կատարելու համար²:

Չայն տանք Սեպուհին: Դաշնակցությունից հեռանալը կարելու
հարց է, նա, անշուշտ, չի կարող կարծիք չունենալ:

Թվում է, թե հարցի մեջ չի խորացել: Կարծես թե հենց այնպէս,
ի միջի այլոց, Դարեւանցիորեն ակնարկում է՝ «Անդրանիկ ինքզինքը
հեռացած կը համարեր կուսակցութենէն եւ կը մերժեր ենթարկվի

¹ «Չոր. Անդրանիկ կղիսի», օ., 1921թ.: ² «Բաց նամակ Ս. Ծահումյանին», «Հայաս-
տան», 11. 01. 1918թ.:

կուսակցական կարգապահութան»¹: Սա պարզապէս ձեւ է: Իբրեւ
թե Անդրանիկը մի քանի հողված է հանձնել Դաշնակցության, այդ
օրերի գլխավոր, «Հորիզոն», թերթին, նա էլ մեկ-երկուսը տպել է,
մյուսները՝ ոչ, եւ դրանից էլ Անդրանիկը որոշել է անկախ լինելու
համար իր թերթն ունենալ ու այլեւս ոչ ոքի չխնդրել: Անմիջապէս
գտել է արեւմտահայ մի քանի երիտասարդների, շարունակում է
Սեպուհը, որոնցից ձեւավորել է խմբագրության կազմը, եւ նրանք էլ
ասպարեզ են հանել «Հայաստանը»: Բնականաբար, դրանից հետո
խմբագրությունն էլ չի զլացել զովասանքի մեջ շլացնել իրեն ծնունդ
տվող Անդրանիկ բարերարին: Այստեղից էլ Անդրանիկի այնքան
շոայլ գովքն ու մեծարումը: Եվ կարծես թե ուրիշ ոչինչ:

Դրանից հետո «Հայաստանը» օր առ օր ու համար առ համար
քայքայել է «Հորիզոնի» տիրակալ կողմնակիցների ջղերը, որոնք էլ
տեսնելով անդրանիկյան թերթի ձգողական ուժն ու հարաճուն ծա-
վալումը, փորձում են խելքի բերել Անդրանիկին եւ պահանջել, որ
վերջ տա «Հայաստանին», իբրեւ «Հորիզոնին» ավելորդ զուգահեռա-
կանության, որը վայել չէ միեւնոյն կուսակցության ներքում: Այդ
առաքելությամբ՝ Սեպուհը, Ռոստոմն ու Անդրանիկի վաղեմի մարտըն-
կեր Սեբաստացի Մուրադը այցելում են Անդրանիկին:

Այցելում են ու սկսում հենց նրանից, որ Անդրանիկին պատիվ չի
բերում, որպէս կուսակցականի, «Հայաստանի» զուգահեռ հրատարա-
կումը, որն էլ իր հերթին անհարմար վիճակ է ստեղծում «Հորիզոնի»
համար: Անդրանիկն անմիջապէս հիշեցնում է ոչ թե ձեւը, այլ թե
ինչպէս *ըստ էության*, այլ ոչ պատահամբ իր առջեւ փակվեցին
«Հորիզոնի» դռները:

Ջրույցը ապարդյուն ընթացք է ստացել եւ այցելուները դատար-
կաձեռն վերադարձել են: Մանավանդ որ Սեպուհն էլ Անդրանիկին
հիշեցնել է նրա զենքի, այլ ոչ գրչի մարդ լինելը, զուր ու ավելորդ
համարելով նրա լրագրական հավակնությունները: Խոսելն այլեւս
դառնում է անհնար եւ անիմաստ:

Սեպուհը կարելու միտք է արտահայտել, մի բան, որը Անդրանիկն
ինքը որեւէ անգամ հարկ չի համարել հրապարակել: Միտքն այն է,
որ «Հայաստան» թերթի հրատարակումով է սկսվում Դաշնակցությու-
նից Անդրանիկի վերստին հեռանալը²: Եվ դա ճշմարտություն է:
Անդրանիկը Դաշնակցությունից գաղափարապէս ու քաղաքականա-
պէս հեռացել էր 1917-ի ապրիլյան օրերից, երբ Թիֆլիսի փողոցնե-
րում մանուկները զոռում էին ու իրավիրում, «Գնեցե՛ք «Հայաստան»
թերթը», «Գնեցե՛ք Անդրանիկի թերթը»... Եվ հենց այդ օրերից էլ
Անդրանիկն անկախ էր ու անջատ, ուներ իր գաղափարախոսությունն

¹ Սեպուհ..., հատոր Ա, էջ 304: ² Ա. Կ., հ. Ա, էջ 301-310:

ու իր թերթը, ընթերցողների մեջ ստեղծվում էր նրա համախոհների ու հետետևորդների մի նոր հոսանք, եւ այլեւս խզված էր գործնական կապը կուսակցության հետ: Մենք արդէն տեսանք, որ նա համախորհրդակցությանը ներկայացել էր բոլորովին էլ ոչ Դաշնակցության կողմից կամ նրա անուկից, եւ որ այդ մասին հարկ համարեց հռչակել նաեւ մամուլում:

8 ԴԻՎԻԶԻԱԹ ԿՐԱՄԱՆԱՏԱՐ ՆՇԱՆԱԿՎԵՆ

ՈՒ ԳԵՆԵՐԱԼԻ ԿՈՉՈՒՄԸ

(Դեկտեմբեր 1917թ. — հունվար 1918թ.)

Բարդ քաղաքական իրավիճակ է ստեղծվում Անդրկովկասում 1917-ի հոկտեմբերի 25-ին Կերենսկու ժամանակավոր կառավարության անկումից եւ Լենինի գլխավորած ժողկոմխորհի իշխանության գլուխ անցնելուց հետո: Ազգերի ինքնորոշման եւ նրանց քաղաքացիական իրավահավասարության մասին ի սկզբանէ բոլշեւիկների եւ մանավանդ տվյալ պահին ժողկոմխորհի հռչակումները երկրամասի ժողովուրդները ընդունում են անկեղծ ըմբռնումով եւ էլնում են ցարիզմի լծից ազատության եւ անկախության իրենց վաղեմի ձգտումներն իրականացնելու, որը զանազան ձեւեր է ընդունում: Նոյեմբերի 11-ին Թիֆլիսում իրեն համերկրային փաստացի իշխանություն է հայտարարում Անդրկովկասյան կոմիսարիատը: Կերջինս կազմված էր հիմնականում երկրամասի գլխավոր ազգային քաղաքական կուսակցությունների՝ վրաց մենշեւիկների, մուսավաթականների եւ Դաշնակցության ներկայացուցիչներից: Հաջորդ տարվա փետրվարի 10-ին նրան փոխարինում է ըստ էության նույն քաղաքական կազմով, Անդրկովկասյան սեյմը եւ երկրամասն էլ հռչակվում է որպէս միացյալ ֆեդերատիվ հանրապետություն: Հոկտեմբերի 25-ից հետո Բաքվի բանվորական խորհուրդը անհապաղ կանգնում է ժողկոմխորհի կողմը: Երկրամասի միանգամայն հակադարձ կողմում, Թուրքիայի զավթած հայկական հողերի շարունակություն կազմող Սարիղամիշ քաղաքի զորակայանը ապստամբում է եւ նույնպէս ճանաչում խորհուրդների իշխանությունը: Աբխազիայի աշխատավոր ժողովուրդը 1918-ի փետրվարին է ապստամբում եւ Աբխազիան հռչակում խորհրդային: 1918-ի ապրիլի 25-ին Բաքվի պրոլետարիատն է ձեւավորում իր խորհրդային կառավարությունը, հանձնի ժողկոմխորհի, որի նախագահն էր Ստեփան Շահումյանը: Ի վերջո,

մայիսի 26-ին, Սեյմը իրեն ցրված է հռչակում, տեղի տալով նույն օրը Վրաստանի հանրապետության, ամսի 27-ին՝ Ադրբեջանի եւ 28-ին Հայաստանի հանրապետությունների, որպէս ինքնանկախ պետական միավորների, հռչակմանը: Հայության համար այս նշանակում էր, որ դարերի ընդմիջումից հետո վերականգնվում էր իր ազգային պետականությունը, որը գոյատեւեց մինչեւ 1920 թվականի դեկտեմբերի 2-ը: 1917-ի հոկտեմբերից մինչեւ 1918-ի մայիսյան վերածննդի օրը եւ ոչ պակաս նաեւ հետագայում, հայ ժողովուրդն իր արեւելյան ու արեւմտյան հատվածներով նորից ապրեց ծանր փորձությունների եւ սխրագործությունների մի աննախադեպ պատմություն, որի անբաժան մասն է կազմում նաեւ Անդրանիկի այդ օրերի կյանքն ու գործը: Երեք ազգային հանրապետությունների ձեւավորումը նոր էջ բացեց երկրամասի ժողովուրդների դարավոր պատմության մեջ: Սակայն դա եղավ այդ հանրապետությունների նոր-նոր խմորման ու ինքնաճանաչման, Ֆերջին կյանքի ձեւի ու բովանդակության դեռեւս ոչ լրիվ պարզորոշման ու կառուցման, միջհանրապետական հարաբերություններում հնուց ժառանգված եւ նորածագ բարդությունների հարթման ու սրման թեւէ հարուստ պատմության, բայց սոսկ կարճատեւ մի ժամանակաշրջան: Այդ ընթացքում հանրապետությունների ներազգային եւ միջազգային երկպառակությունները չվերացան, ներքին սոցիալ-քաղաքական հակամարտությունը շարունակվեց: Ամեն ինչ վարպետորեն օգտագործեցին ու չարաշահեցին դոսաշխարհի կեղծ բարեկամները, թաքնված ու բացահայտ թշնամիները, որոնք ոչ միայն հենց դրան էին սպասում, այլեւ հրահրում էին: Նման պայմաններում հայոց ազգային պետականությունը 1920 թվականի դեկտեմբերի 2-ին, արտաքին անդիմադրելի ճնշման իրավիճակում ուժասպառ, իր տեղը զիջեց խորհրդային Ռուսաստանի հետ կապված բոլշեւիկյան ուժերին, ճանաչելով 1920թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի խորհրդային սոցիալիստական հանրապետության ստեղծման մասին նրանց հռչակած հրովարտակը:

Դարձյալ պետք է որոշվեր Անդրանիկի տեղը: Դա պետք է անեին կամ ինքը, կամ նորաստեղծ իշխանությունները: Տե՛ղը: Ավելին պետք էր: Գլխավորը դերն էր, որը ինքը գիտեր:

Հոկտեմբերյան օրերից առաջ Դոնի Ռոստովում գտնված ժամանակ աճապարելով Թիֆլիս վերադառնալ, բախվում է մի անակնկալի: Ռուսաստանի օգտին արտասանած խանդավառ ճառերից կարծելով, թէ բոլշեւիկ է, տեղի սպիտակ կազակները շրջապատում են նրա տունը եւ այդպէս երեք օր պահում պաշարված դրության մեջ: Երեսից, իր հետ գտնվող մի քանի զինված ընկերների հետ, դիմադ-

րում են. մինչեւ որ լուրը հասնում է տեղի՝ Անդրանիկին 1914—1915թթ. կոմիսիաների օրերից իմացող կազակներին. որոնք պաշարումից նրան ազատում եւ անգամ ուղեկցում են մինչեւ Գանձակ¹:

Թիֆլիս է հասնում այն պահին. երբ Կովկասյան ճակատի ռուս զինվորները հապճեպ վերադառնում էին իրենց ընտանեկան օջախները:

Արեւմտահայ խորհուրդը, հոգսերի մեջ ընկղմված, լարված օրեր էր ապրում: Նիստերն ու բանավեճերը անընդմեջ էին, ամեն մեկն ուներ իր առաջարկն ու վճիռը: Բայց, անկախ դրանից, բոլորն էլ ցանկանում էին ու ձգտում, որ շուտափույթ ձեւավորվի մի երկրապահ զորամաս, որպեսզի անհապաղ պահապան կանգնի ռուսական բանակի լքած հայկական գավառների գյուղերին ու քաղաքներին: Նախապես էր հայտնի դիվիզիայի երկրապահ արտահայտիչ անունը, որի հրամանատար նշանակելու հարցը սկզբից էլ շատերի համար պարզ ու անվիճելի էր. մյուսների համար՝ մեծ վեճերի առարկա: Մյուսները Դաշնակցության մի քանի պարագույններն էին: Հայցը ծագեց նրանց հետ Անդրանիկի սուր գծության եւ մանավանդ կուսակցության շարքերից նրա հեռանալուն անմիջապես հաջորդած լարված մթնոլորտում: Մարդիկ կատարվածը որպես անձնական վիրավորանք ընդունելով, երեւութապես երկու պատճառ բռնեցին. պետք չէ Անդրանիկին մեջտեղ բերելով, այն էլ դիվիզիայի հրամանատարի պոստում, թուրքերի ժանիքները սրել, եւ ապա՝ Անդրանիկն այնքան ուսյալ չէ, որ դիվիզիայի հրամանատար կարգվի: Երկուսն էլ, որքան հակաճանողների համար հարմար էին թվում, նույնքան խորն էին խոցում Անդրանիկի սիրտը: Վեճը երկարում էր, իսկ Անդրանիկը օրերն ու ժամերն էր հաշվում: Եվ որքան երկարում էր, այնքան ավելի էր Երկիրը դատարկվում ռուսական զորքերից եւ այնքան ավելի թշնամին խնամքով էր նախապատրաստվում Անատոլիականի խորքերից մի հարվածով մինչեւ արեւելահայոց սահմանը հասնելու եւ դեպի Բաքու տանող հեռուները մխրձվելու համար:

Չհամբերեց մինչեւ վեճերի հանդարտումն ու հարցի լուծումը: Հրացանն ուն առավ եւ ուղիղ գնաց բանակային հրամանատարություն, որպեսզի վաղը եւեթ ռազմի դաշտ մեկներ որպես շարքային զինվոր, քանի դեռ թուրքերի զորքերը շարվեշարան դեպի կովկասյան սահմանները չէին շարժվել²: Գուցե նաեւ սրանից ցնցվեց Հայոց ազգային խորհուրդը, որը ի վերջո համաձայնեց Անդրանիկին Հայաստանի երկրապահ դիվիզիայի հրամանատար նշանակելու մղտքի հետ եւ նրան այդ պոստում նշանակելու վճիռ կայացրեց³:

1 «Անդրանիկի կեանքը, պատերազմները եւ յուշերը», 1932թ. էջ 244—246: 2 Սեպուհ... հ. Ա. էջ 329—330: 3 «Արեւ», 3. 09. 1927թ.:

Կովկասյան ճակատի զորքերի գլխավոր հրամանատարի 1917—ի զվարճանքների 22—ի գաղտնի հրամանով էր ձեւավորվել երկրապահ դիվիզիան, որը բանակային պաշտոնական փաստաթղթերում նաեւ Հայկական առանձին հրաձգային դիվիզիա անվամբ էր, եւ նույն ժամանակից էլ Անդրանիկը նշանակվել է նրա հրամանատար¹: Այդ ժամանակ Կովկասյան ճակատի զորքեր կոչվածը նրանք էին, որոնք պատերազմի ժամանակ գտնվում էին Թուրքահայաստանի եւ Թուրքիայի՝ նվաճված այլ մարզերի գլխավոր կոմիսարի ենթակայության ներքո:

Այնուամենայնիվ, դիվիզիան դեռ ավարտուն կերպով ձեւավորված չէր, այն դեռ ստեղծման, համալրման ընթացքում էր: Դեռ գործ կար անելու, որին շարունակեց իր ջանքերը նվիրել Հայաստանի ապահովության խորհուրդը, որի անմիջական հովանավորության ներքո էր գտնվում երկրապահ դիվիզիան, միաժամանակ, որպես հայկական կորպուսի զորական ստորաբաժանումներից մեկը:

Նորից ճակատագրի բերումով, միասին ասպարեզ ելան Նազարբեկովն ու Անդրանիկը, առաջինը ձեւավորվող հայկական կորպուսի, երկրորդը՝ նրա կազմի մեջ մտնող դիվիզիայի հրամանատար²: Ամեն մեկը յուրովի առաջադրվեց: Նազարբեկովն իր զորավարական բարձր արվեստի, զորավարների անառարկելի հարգանքը վայելելու, իր կյանքի ընթացքում երեք տարբեր ժամանակների պատերազմներում զբաղեցրած պաշտոններում ցուցաբերած զինվորական արիության եւ հրամանատարական բարձր ձիրքի համար: Անդրանիկը՝ լայն ժողովրդականության եւ բացառիկ հերոսականության համար, նրա՝ համար, որ այդ պաշտոնի համար հարմար թվացող թեկնածությունների մեջ ուրիշ մեկը չկար, որը դրան այնպես արժանի լիներ, ընդունելի ու անմրցակից: Դա թելադրվում էր միաժամանակ այն նպատակներով, որոնց համար ստեղծվել էին կորպուսն ու դիվիզիան: Առաջինը պետք է կազմավորեին արեւելահայերը, երկրորդը՝ արեւմտահայերը: Երբ Թիֆլիսի առաջնորդարանում ընտրվելիս Ապահովության խորհրդի կազմում անցան երեք ռամկավար, երեք դաշնակցական եւ երկու հնչակյան, դրանից հետո ամեն մեկն իր հերթին, ձգտելով հեռու մնալ ժողովրդի գայլույթից եւ նրա ծափերին արժանանալ, արդեն ձեւավորվող երկրապահ դիվիզիայի հրամանատարի համար բարձր հնչեցնում էր Անդրանիկի անունը³: Որովհետեւ առաջնորդարանի բակում լեվի—լեցուկ կուտակված ժողովուրդը թույլ առ թույլ սպասում էր, որ իր վճիռը հաստատվի:

1 «Հ. Պ. Ա. Ֆ. 370, ց. 1, գ. 72, ք. 3: 2 «Անդրանիկի կեանքը...», էջ 247—250: 3 «Արեւ», 3. 09. 1927թ. «Հ. Պ. Ա. Ֆ. 370, ց. 1, գ. 94:

Բայց դա առայժմ Արեւմտահայ խորհրդի վճիռն էր: Պետք է, որ լինէր նաեւ արեւելահայոց Ազգային խորհրդի համաձայնությունը: Իսկ այնտեղ բոլորովին թարմ էր Ղաշնակցության շարքերից Անդրանիկի հեռանալու հայտարարության ճնշիչ տպավորությունը: Ինչպէ՛ս պետք է այնտեղ նստած Ղաշնակցության պարագլուխների ձեռքերը վեր բարձրանային նրա օգտին քվեարկելու պահին: Եվ ծնվեց հակոտնյա մի վճիռ, որի համար եւ բառը, եւ բովանդակությունը փոխառնվեցին Հին Հռոմի պատմության գրքերից, դիվիզիայի հրամանատարությունը հանձնել ոչ թե մի հոգու, այլ երեք հոգուց բաղկացած մի խմբի, ինչպես որ եղել էր Հին Հռոմում, մեր թվարկությունից առաջ՝ 60 կամ 59 թվականին: Այն ժամանակ երկրի պետական գործերը վարելու համար որոշվեց ստեղծել եռապետություն (տրիումվիրատ), կազմում ժամանակի երեք ականավոր քաղաքական ու ռազմական գործիչներ՝ Հուլիոս Կեսար, Գնեսու Պոմպեոս ու Մարկոս Կրասոս: Իսկ հիմա առաջարկվում էին Ղաշնակցության երեք թեկնածուների անուններ՝ Սեպուհ, Ռուբեն եւ Վահան Փափազյան:

Եվ, դարձյալ կրճերի բորբոքում եւ բանավիճելու շլացուցիչ տաղանդի պոռթկում: Ազգային խորհրդի այդ հարցին նվիրված առաջին նիստը սկսվեց վաղ առավոտից եւ տեւեց գրեթե ամբողջ օրն ու գիշերը: Նախագահողն էր պերճախոս Ավետիս Ահարոնյանը: Եվ, մեկ է, ոչ մի արդյունք: Խորհրդի կազմում մեծամասնություն ունեցող դաշնակցականների միտքը չէր հաշտվում Անդրանիկի թեկնածության հետ, ինչպէ՛ս կարելի էր, իրենք լինեն մեծամասնություն, իսկ ընտրվողը իրենց ընդամենը երեկ բացարկ հայտարարած մեկը... Էլ ի՞նչ միտք ունի մեծամասնություն կազմելը, երբ նրա կամքը չի գերիշխելու: Այս մթնոլորտում անցել է առաջին նիստը, որին բացակայել է Անդրանիկը:

Երկրորդ օրը դահլիճ է մտել Անդրանիկը: Եվ ուղիղ գնացել, բազմել է նախագահող Ահարոնյանի հետ կողք կողքի: Նշանակում է՝ նա պետք է տեսներ ովքեր են իրեն դիմադիր եւ լսեր նրանց պատճառաբանությունները, իմանար, թե ինչպես են իրեն, անուսի՛ն, մերժում ու հիմնավորում ուսյա՛լ մարդիկ, որոնց երազանքը դիվիզիայի գլուխ իրեն տեսնելը չէր: Կարծես թե Սեպուհը, Ռուբենն ու Փափազյանը հենց հատուկ ռազմական դպրոց էին անցել եւ ամբողջ կյանքում բանակներ վարժեցնելն էր նրանց գործը եղել: Հակադրության նպատակով առաջադրվողներից ու հավակնորդներից ոչ մեկը չէր կարող երես առ երես համարձակորեն առարկել Անդրանիկին եւ իրեն նրանից վեր դասել: Ջուր կլինեին նաեւ համարձակ Սեպուհի ջանքերը: Նրա հետ ռազմի դաշտից խույս տալու օրերից էր հարցը պարզ: Այնպես որ ամեն մեկին առանձին-առանձին, եւ բոլոր

երեքին միասին Անդրանիկը կարող էր հարց տալ, թե այդ ե՛րբ եւ որտե՛ղ էին նրանք իրենից լավ ռազմիկ եւ հրամանատար եղել, մի բան, որը նույնպես զարմանքով ու զայրույթով հարցնում եւ որի մասին խոսում էր դրսում խմբված ամբոխը: Համենայն դեպս: Այդ օրը եւս վեճը երկար է տեւել: Թվում է, թե աթոռակին նստած նա հազիվ է գսպել իրեն: Ի վերջո, ելել է տեղից, ելել է ու գուցե թե բոլորին էլ թվացել է, թե սովորական վեր կենալ չէ դա, այլ զայրույթի անսովոր պոռթկում: Կարող էր թվալ բոլորին միատեղ ու գուցե նաեւ ամեն մեկին առանձին-առանձին, որովհետեւ ասելուս ներքին պատշաճ հակահարված տվողները ոչ թե այդ դահլիճում էին, այլ դրսում, այնտեղ, ուր ժողովրդի զանգվածային կարծիքն էր խմորվում:

Բանավեճին ներկան ու մասնակիցը իր հուշերը թերթին հանձնելով Անդրանիկի մահից ընդամենը մի քանի օր անց, նկատել է, որ Ահարոնյանն էլ, Անդրանիկին զայրացած կարծելով, փորձել է հանգստացնել նրան, խոսքը մի ուրիշին տալ, բայց Անդրանիկն արդեն սկսել էր իր ճառը: Եվ մեր բոլոր սպասելիքներին հակառակ է խոսել: Չի ասել մեր հենց նոր, վերելում, կարծածներից եւ ոչ մեկը: Գուցե նաեւ զայրացած է եղել, բայց միայն ներքուստ: Համենայն դեպս արտաքուստ ե՛լ բառերն ու միտքն են մեղմ ու հանգիստ եղել, ե՛լ արտահայտության շեշտերը: Հայրենիքի սերը ճնց չէ, ցուցանակ չէ եւ ոչ էլ բառերի կույտ՝ լեզվի ծայրին ամեն րոպե պատրաստ: Դարձյալ Անդրանիկն ինքն է իր հետ եղել, որը ոչ թե ռզեւորության ու քաջքուրակից բորբոքված զայրույթի վերին բարձունքներից է իջել իր խոսքից առաջ, այլ կարծես թե հենց նոր ատաղձագործի ուրազն է ձեռքից վար դրել եւ ազգի ղեկավարներից իր խոսքն ասելու իրավունք խնդրել:

«— Ես հասարակ գյուղացի մըն եմ, իսկ դուք համալսարանական մարդիկ: Դուք կարդացած եք այս մատյանները, — ասել է ու պատի տակ շարված պահարանները մատնացույց արել, — ես չեմ կարդացած, բայց կը ճանչնամ հայ ժողովուրդը, կը զգամ անոր ցավերը, թշնամին երզնկա հասած է...»¹:

Ականատեսը չի մոռացել: Որովհետեւ նրան էլ թվացել է, թե գեղջկական անպաճույճ խոսքի վրա դահլիճում փոթորիկ է բռնկել եւ ցասումնալից Անդրանիկը խոսքեր չէ, այլ շանթեր է հղել ներկաների կողմը, ձեռքը թրի բռնակին, աչքերը կայծակնային, խոսքերն ասես ներկաների ահասարսուռ գլխներին իջնող ռումբերի պայթյուն...²:

Իրականում ոչ ումք, ոչ էլ պայթյուն: Այդպես միայն կարող էր թվալ, որովհետեւ պատերազմը դեռ չէր ավարտվել, այլ ընդհատվել

1 «Արեւ», 3. 09. 1927թ.: 2 Լ. տ.:

եր եւ ընդհատվել էր այն պահին, երբ կոպող, դիմադրող հիմնական ու վճռական ուժը՝ ոռուսաց բանակը, ոչ թե ճամպրուկային տրամադրության մեջ էր, այլ արդեն տունդարձի ճանապարհին: Անդրանիկը ոչ ոքի չէր սպառնում, Անդրանիկը գործի էլնելու կոչ էր անում եւ ոչ թե մի ամբողջ օր, այլ նույնիսկ մի ժամ եւ անգամ րոպե ուշանալու ահավորության գիտակցմանն էր մարդկանց բերում: Իսկ ինքն արդեն վճռել էր վաղն եւեթ ուղի դաշտ գնալ՝ մեկ է, շարքային թե հրամանատար: Եվ դահլիճը մի պահ վերապրում է զինվորին մարտից ետ չպահելու, նրան կոպի ժամին մենակ չթողնելու կարեւորությունը եւ ոչ միայն մարտիկի դերում, այլեւ պատշաճ տեղում տեսնելու անհրաժեշտությունը: Մարտիկը Անդրանիկն էր: Նրան չպետք էր մենակ թողնել: Նրան չպետք էր գործից ետ պահել: Նրան չպետք էր ուժերի կիսով ու քառորդով օգտագործել: Եվ այստեղ մարում են առարկության կրքերը: Դրսում լսվում են հավանության եւ շնորհավորանքի ծափերն ու բացականչությունները: Երկրապահ դիվիզիայի նորապսակ հրամանատարը էլնում է պատշգամբ՝ ժողովրդին իր շնորհակալության խոսքն ասելու եւ անորոշության մշուշից դուրս բերելու համար:

Մի դիվիզիա եւ մի կորպուս, ուսմանտիկներին կարող էր թվալ, թե այդքանը բավական էր հարձակվող բանակի դիմաց: Շուտ ոգետրվողները կարող էին կարծել, թե ահա, արդեն, թշնամին ետ է մղված, հաղթանակը պատրաստ է, եւ հայերն արդեն իրենց պապենական տներում հանգած օջախների կրակն են բոցավառում: Քիչ չէին հայերի մեջ ուսմանտիկները: Եվ առհասարակ հայության խոսքը քանի հազար տարի ի վեր ոգեշունչ էր եղել ու պատկերավոր: Այդ ամբողջի ակունքը իր իսկ ծննդյան մասին ժողովրդի երեւակայած հրաշք պատկերն է.

- Երկներ երկին, երկներ երկիր,*
- Երկներ եւ ծովն ծիրանի,*
- Երկն ի ծովուն ուներ եւ զկարմրիկն եղեգնիկ,*
- Ընդ եղեգան փող ծուխ ելաներ,*
- Ընդ եղեգան փող բոց ելաներ,*
- Եվ ի բոցոյն վազեր խարտեաշ պատանեկիկ,*
- Նա հուր հեր ուներ,*
- Ապա թե բոց ուներ մօրուս,*
- Եվ աչքունքն էին արեգակունք:*

Քանի դար հետո մի Եզնիկ Կողպացի փիլիսոփա նորընծա մաշտոցյան այբուբենով հայոց երկունքի ու գոյատեւման իմաստասիրության գրավոր հեւասյունը դրեց, եւ նույն այդ օրերին ու տարիներին

րին մի Եղիշե վարդապետ հայոց ազատագրության կոպի իրական պատմության քաղցրալեզու դասագիրքը հանձնեց սերունդներին՝ որպէս որ կարող էր հայապահպանության իր խորհուրդն ու պատգամը թողնել զալիքին թշնամու հետ մենամարտի ժամին զոհված սպարապետ Վարդան Մամիկոնյանը: Եվ խոսքն այդ իր շլացուցիչ պատկերներով դարեդար շարունակեց բարգավաճել ու մի օր էլ պողոթկալ որպէս կյանքի ու բանականության հավերժության մասին խոսքարվեստի այնպիսի մի վեհապանծ կոթող, որպիսին եղավ Անդրանիկից հազար տարի առաջ, ծնված Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» ստվարածավալ ասքը: Եվ պատկերների նույն ուժով հողեղեն մարդու սրտի թրթիռը եւ ներքին զգացմունքի ուժը քառյակ տողերի վերածեց սիրո մեծ երգիչ Նահապետ Զուչակը... Ու այդպէս, մինչ այն պահը, երբ Անդրանիկի սերնդակից Հովհաննես Թումանյանն իր հազարամյա նախնիների բարդ ու խրթին թվացող տողերի խորին իմաստությունը եւ իր հանճարի պողոթկումը աշխարհ բերեց որպէս մի նոր պաճուճավոր պատկերավորություն, որի բնորոշը խոսքի զարմանալի պարզությունն է:

Գիտեր, թե՛ չգիտեր այս ամենը Անդրանիկը: Մի՞թե դա է կարեւորը: Նա էլ մարդ էր եւ կարող էր այդ ծանր օրերին զենքի տակ մարդկանց հավաքելու այդ անհնարինության չափ դժվարին պայմաններում մի դիվիզիայի եւ մի կորպուսի ստեղծմամբ անկեղծորեն ուրախանալ, ինչ—որ մի տեղ հուսադրվել, բայց դա առ առավել չափավոր ոգետրությունը պետք է լինէր, բայց ոչ անչափը: Նա ռազմի դաշտ գնալուց առաջ, առանց հարձակվող թուրք բանակների զինվորների ու նրանց հրանոթների թիվը հաշվելու էլ գիտեր, որ սոսկ մի դիվիզիայով ու մի կորպուսով հեշտ չի լինի թուրքական զորքին կանգնեցնելը: Նորից նրա մտքում հույսը ոռուսաց բանակն էր, բանակ, որը հակառակի նման այս անգամ դարձյալ նահանջող էր, նահանջի ճանապարհին եւ այն էլ ծայրեծայր, ամբողջ Կովկասյան ճակատի երկայնքով: Հայ մարդը Անդրանիկի աչքի առաջ արդեն քանի՜ անգամ ճաշակել էր ոռուսաց բանակի նահանջի դառնությունը: Սալմաստը քիչ էր, Վանն էլ եղավ, իսկ հիմա նահանջը ամբողջ Կովկասյան ճակատով էր:

Պետք էր պահել ոռուսաց բանակը, պետք էր չթողնել, որ նա լքի, հեռանա իր զբաղեցրած հայկական հողերից: Պետք էր խոսքով, համոզելով, իրենց իսկ՝ ոռուս զինվորի ու հրամանատարի պարտքը, հին—հին կոնվերտի նրանց հայապաշտպան փորձը հիշեցնելով ետ պահել նահանջի զաղափարից, կանգնեցնել տողարձից: Ամբողջ հայ ժողովուրդն էր այսպէս մտածում, այսպէս ցանկանում: Եվ առանձնապէս երկու մարդ ամբողջ երկրամասով մեկ այդ մասին

բարձր ու խրոխտ արտահայտվում էին ու կոչ անում: Անդրանիկ Օզանյան եւ Ստեփան Շահումյան: Գաղափարապետ ներդաշնակ չէին նրանք, ավելին, հակառակ էին ու հակառակորդ, բայց հայրենիքի փրկության հարցում միատեսակ էր նրանց միտքն ու կարծիքը: Շահումյանը Բաքվում ու Թիֆլիսում՝ որպես հոկտեմբերին Պետրոգրադում ստեղծված Ժողովխորհի արտակարգ կոմիսար Կովկասում, Անդրանիկը՝ որպես ժողովրդի զավակ եւ երկրապահ դիվիզիայի հրամանատար: Նրանք երկուսն էլ այն կարծիքին էին, որ ռուս զինվորն ու հրամանատարը պետք է կանգ առնեն, որ նրանք ձեռքին մնա իրենց զենքը եւ շարունակեն պատերազմի կարգով սահմանված պարտքը Կովկասյան ճակատում եւ պատնեշ լինեն առաջխաղացող թուրքական բանակի առջեւ:

Ուրիշ կարծիքներ էլ կային: Ադրբեջանի ազգային գործիչները որոշեցին զինաթափ անել ռուսաց բանակը եւ Շամխորում, վերագարձի ճանապարհին, զնացքը կանգնեցրին ու կրակ բացեցին զինվորների վրա: Դա վայրենություն էր, եւ Ռուսաստանի ու ռուս ժողովրդի նկատմամբ թաքնված ատելության բարբարոսական դրսեվորում: Նրանց զենքն էր պետք եւ զենքը գերադասեցին զինվորի կյանքից:

Չենք հայերին էլ էր պետք, ոչ պակաս, քան ադրբեջանցիներին: Եղավ մի պահ, որ որոշ հայ մարդկանց մեջ եւս ռուս զինվորից ուժով զենքը խլելու միտք հղացավ: Դա արդեն հետո է եղել, 1918-ի ապրիլի սկզբներին: Դեպքերն օրագրողը այսպես է պատմում: Դաշնակցության պարագլուխներից Ալեքսանդր Խատիսյանն Ալեքսանդրապոլում Դաշնակցության, տեղի սոցիալ-դեմոկրատական եւ էսէռական կազմակերպությունների երկուական ներկայացուցիչների խորհրդակցություն է հրավիրել: Այն պահն էր, երբ նահանջող ռուս բանակն ուր որ է, տունդարձի ճանապարհին, մտնելու էր Ալեքաոլ: Խորհրդակցությունը, նկատի առնելով հայ զորաբանակի զենքի սուղ վիճակը, որոշում է կամովին, իսկ եթե դա չլինի՝ ուժով, նահանջող ռուսական զորամասերից զենքը խլել, այսինքն «բռնի զինաթափ անել»: Եվ այս վճիռը պետք է լսեր ու ընդուներ նաեւ Անդրանիկը, որը նույնպես ներկա է գտնվել. «Չէ՛, ասիկա ինձի համար անհանդուրժելի եւ անտանելի է»¹: Այս է եղել նրա պոռթկումը:

Որքան էլ կամավորության օրերի առիթների բերումով նա խոսվա-հույզ էր, բայց ուխտադրուժ չէր: Թեեւ Աբացիելի դառը հուշն ապրում էր նրա մեջ, բայց չէր մեռել նրանում ռուս զինվորի ու կազակի հետ եղբայրության սուրբ դաշինքի հիշատակը: Ո՛վ եք դուք եւ ինչո՞ւ եք ուզում զինաթափել ռուս զինվորին, ասել է նա, ատելության թույնով

1 «Օրագրություն», էջ 187:

հիշելով Շամխորում տեղի ունեցած վայրենությունը: Օրագրողը մղտ-քում պահել է Անդրանիկի խոսքը. «...այդպիսի քայլ մը մեր ցեղին, մեր անունին, մեր ասպետական ոգին, ազգային առաքինություններուն հակառակ արտահայտություն մը պիտի ըլլա... *Մեր միակ բարեկամը Ռուսիան է*, եւ դուք ձեր աղետաբեր ձեռնարկով զանոնք ալ կուզիք հեռացնել մեզմե»¹: Եվ սա այն դեպքում, երբ զենքի կարիքը բուրդից շատ ինքը, դիվիզիայի հրամանատար Անդրանիկն է զգում:

Կորպուսի հրամանատարի ըստրուքյան հարցը անհամեմատ հեշտ է լուծվել եւ դրանում առհասարակ դժվարություն չի եղել: Ճիշտ է, նախապես մի կարծիք եղավ՝ ռազմի դաշտից այդ պաշտոնի համար հրավիրել այնքան ընկած հայ հրամանատարներից Սիխայի Արեշովին, որն այդ ժամանակ կանչվել էր Եվրոպական ռազմադաշտից, բայց երբ տրվեց Նազարբեկովի անունը, վերջինս դարձավ ոչ միայն անմրցակից, այլեւ անստարկելի: Նոր պաշտոնում Նազարբեկովն իր առաջին գործը համարել է բանակային կադրերի ըստրուքությունը: Լայն ծանոթություն ունենալով թե՛ հայ, թե՛ Ռուս սպայակազմի հետ, նա զործի է հրավիրել զնդապետ Զումարովին՝ որպես կորպուսի ինտենդանտական ծառայության ղեկավարի, Պուշնովին՝ կորպուսի բժշկական ծառայության պետի, գեներալ մայոր Պոզոնիկին՝ հրետանու ընդհանուր հրամանատարի, նրա ստորաբաժանումներում՝ զնդապետներ Կոստանյանին եւ Համազյանին, զնդապետ Բիշմիշյանին՝ կորպուսի դատարանի նախագահ, պրապորշչիկ Ստեփան Եղիազարյանին՝ կորպուսի դատախազ, դիվիզիաների հրամանատարներ՝ Սիլիկյանին եւ Նույն Արեշյանին²:

Կորպուսի, արդեն որպես կազմավորված միավորի, ձեւավորման եւ Նազարբեկովին հրամանատար նշանակելու հրամանը տրվել է 1917թ. նոյեմբերի 19-ին²: Պատկառելի զորավարը Ազգային խորհուրդ այցելելուց եւ շնորհակալության իր խոսքն ասելուց հետո, Անդրանիկի թերթում նույնպես հարկ է համարում հրապարակել շնորհակալության իր խոսքը այս անգամ թե՛ Ազգային խորհրդին եւ թե՛ հայ զինվորական միությանը: Ռուսական բանակի կազմում Ռուսաստանի համար կոիվների մասնակից զորավարը երկու խնդիր է տեսնում իր առջեւ ծառայած, ապահովել Ռուսաստանի սահմանները թշնամու ներխուժումից եւ «պաշտպանել Հայաստանի սիրտը՝ հայի հարազատ արյունաներկ երկիրը, որ հյուծվել է դարավոր թշնամիներից...»: Բազմաշխատ եւ բազմատանջ զորավարը լավատես

¹ Նազարբեկովը գրեթե բոլոր ազգանունները «ով» վերջավորությամբ է կոչում: Տե՛ս ՀՀ ՊԿԱԱ Ֆ. 45, ց. 1, գ. 13, ք. 40, 41 (20, 21):

1 Լ. տ., էջ 187-188: 2 Լ. տ.:

է. նրա հույսը՝ անկողորում. նա խոստովանում է, որ տեսնում է հայոց «ջերմորեն սպասած արշալույսը». եւ որ իր միակ կամքն է՝ «Աստ-ծուն ասպովինած համարձակ հառաջ դեպ մեր արդար սրբազան գործը:

Կատարենք մինչեւ վերջ մեր պարտքը հայրենիքի եւ հայ ժողովրդի առաջ...¹: Ծանրախոհ, բարեկիրթ ու պարտաճանաչ զորավարի խոսքը ջնջողուն նուրբ է. որը վկայում է ռազմի գործի մեջ հմտացած զինվորականի անկեղծ մարդասիրությունը:

Միեւնույն իրավիճակում հայոց առաջնորդներին, եւ նրանց ժողովրդին ամբողջությամբ, ե՛ւ ոգետորոզ փաստեր կային, ե՛ւ խոր անկումային տրամադրություն ստեղծող: Երկուսն էլ իրականություն էին: Ուրեմն, ընթացքը եւ աջ կարող էր լինել, եւ ձախ, եւ դեպի առաջ ու վեր, եւ դեպի ետ ու անկում: Ամբողջ խնդիրը կողմնորոշվել էր. որ ճամփան բռնեին, նրանով էին գնալու: Առաջնորդների սխալը կարող էր ժողովրդի սխալ դառնալ: Ահա մի նամակ՝ գրված 1917-ի դեկտեմբերի 25-ին Հայոց ազգային խորհրդի երկու նշանավոր դեմքերի կողմից, Թիֆլիսից արտասահման, ոչ պակաս նշանավոր Պողոս Նուբար փաշային: Ռուսական բանակը լքում է Կովկասյան ճակատը, առաջին փաստը, որ հաղորդվում էր, դա էր: Սոսկալի վտանգներով հղի այս փաստը մյուս կողմից թվում է, թե հույսի դռներ էր բացում, այն, ինչ խոստացավ ու չարեց ցարը, կաներ հիմա հայ ժողովուրդը, տիրելով ազատագրված հողերին, որը կհանգեցներ Արեւելյան եւ Արեւմտյան կտորների տրոհված Հայաստանի միավորման, միասնական պետականության վերականգնման: Այս հույսով ներշնչված, Ազգային խորհուրդը, շտապում են հայտնել նամակի հեղինակները, դիմում է բոլոր միջոցներին՝ պահպանելու եւ պաշտպանելու համար Արեւմտյան Հայաստանի ազատագրված թրեք նահանգները: Որպես դրա կարելու միջոց, հայտնվում է, որ գետնալ Նազարբեկյանի հրամանատարությամբ ազգային, զորաբանակ է ձեւավորվում, իսկ արեւմտահայերն էլ իրենց զորամասն են ատեղծում, նշելով, որ դա էլ Անդրանիկի հրամանատարությանը հանձնված դիվիզիան է: Ուրիշ տեղեկություններ էլ կային, Հայաստանում ինքնապաշտպանական միլիցիա է կազմավորվում, բանակցություններ են գնում Վրաստանի հետ միատեղ հանդես գալու նպատակով: Ահա հույսերի մի ամբողջ շարք, լույսի առկայծումներ՝ ընդհանուր առմամբ տխուր տեսարանի վրա, խավարի թագավորության մեջ: Խավարը ճեղքող լույսը, որպես օրվա ու ժամանակի կարելուր վճիռ, համարվում էր Ռուսաստանում խորհրդային իշխանության հաստատմամբ ազգերի ինքնորոշման իրավունքի ճանաչումը: Այդ իրավիճա-

¹ «Հայաստան» N185, 29. 12. 1917թ.:

կում հայերի կարելուր ջայռը դիտվում է դիվանագիտական այնպիսի միջոցների կիրառումը, որոնք Հայաստանի լիակատար ինքնավարության հնարավորությունը իրականություն կդարձնեին: Հեղինակներն են՝ Ավետիս Ահարոնյան եւ Նիկոլ Աղբալյան¹:

Նամակը գրելու ժամանակամիջոցում, Նազարբեկովի տվյալներով, հայերն արդեն հասցրել էին կազմավորել վեց հրաձգային գունդ, յուրաքանչյուրում երկուական զումարտակ եւ մի հեծելագունդ: Տվյալ պահին, 1917-ի վերջին, հրաձգային զնդերը տեղավորված էին Զանաքեռում, Խնուսում, Դիլիջանում, Էջմիածնում եւ Վանում, հեծյալ գունդը՝ Թիֆլիսում: Նշվածներից բացի, Նազարբեկովը հիշատակում է, որ եղել են նաեւ չորսական հրանոթ ունեցող մի ջանի մարտկոց: Սակայն հրաման է տրվել կազմավորելու նաեւ 7-րդ եւ 8-րդ հրաձգային զնդեր, որոնցից մեկը՝ Սարիղամիշում, մյուսը՝ Ալեքսպոլում²: Հայ ժողովրդի ռազմական ուժը լրիվ ներկայացնելու համար Նազարբեկովը ձգտում է պատկերի ամբողջականության: Թիֆլիսում եւ Ալեքսպոլում անցյալում եղած ռուսական պահեստային զումարտակները վերակազմվում են հայկականի, ըստ որում Ալեքսպոլինը վեր է ածվում սակրավոր զումարտակի, իսկ 2-րդ ռուսական սահմանապահ հեծյալ գունդը վերակազմվում է պարզապես որպես 2-րդ հեծյալ գունդ: Ռազմական գործին մոտ կանգնած մարդիկ այդքանը համարել են քիչ եւ կամովին նախաձեռնել նոր զորամասերի կազմավորման: Այդ հարցի շուրջը ծագում են տարաձայնություններ, պատմում է Նազարբեկովը, բայց եւ այնպես սկսվում է Լոռու, Դազախի զնդերի, առավել ակտիվ՝ դարաբաղյան զիրախմբի, ինչպես նաեւ կորպուսի շտաբին կից մի հարյուրյակի կազմավորման գործը: Շտաբը ձեւավորվում է հիմնականում Թիֆլիսի հայերից: Այս ամենից բացի, անձամբ Նազարբեկովը կարգադրություն է արել առկա զնդերի կազմը համարելու եւս երեք զումարտակով: Ինչպես երեւում է, զինվորներ գտնելու գործը անհամեմատ հեշտ է եղել, քան թե փորձված հրամանատար սպաներ: Ոմանք պարզապես հրաժարվել են նորից բանակային ծառայության ամցնելու, մյուսները անցյալից անհամեմատ բարձր վարձատրություն են պահանջել, թեւ առհասարակ ցանկացողներ քիչ չեն եղել: Այդ պատճառով երկար ժամանակ չի իջողվել Սարիղամիշում գետեղված 7-րդ զնդի հրամանատար գտնելու, մինչեւ որ այդ պաշտոնը ստանձնել է գեղապետ Բեկ-Սամիկոնյանը³: Այս ընթացքում հայտնվում է Դրոն, խիզախ հրամանատար Դրաստամատ Կանայանը, որը Հայոց ազգային խորհրդի կողմից նշանակվում է կորպուսի կոմիսար: Երկպառակության իսկական ժամ էր: Կլինե՞ր որ գոնե մի անգամ կատարելապես հաշտ լինեին

¹ ՀՀ ԳԿՊԱ, Ծ, 57, ց, 5, գ, 158: ² Ն. տ., ք, 43-46: ³ Ն. տ., ք, 24(47)-25(49):

եւ միաբան: Տեսնե՞ք ինչ է պատմում Լազարբեկովը հուշերի իր տետրում:

Կորպուսի առաջին դիվիզիայի հրամանատար Արեշյանը գործի բերումով դժգոհություն է հայտնում մարտկոցներից մեկի հրամանատար Մովսեսովից եւ Լազարբեկովի առջեւ խնդիր է դնում, որ նա անհապաղ հանվի այդ պոստից, հայտարարելով, որ հակառակ դեպքում ինքը կիրաժարվի դիվիզիայի հրամանատարի պաշտոնից: Դրան հակառակ, գործին միջամտում է Դրոն եւ իր հերթին սպառնալից տոնով ներկայանում է Լազարբեկովին, որ եթե Մովսեսովը ազատվի իր պաշտոնից, այս անգամ էլ ինքը կիրաժարվի կորպուսի կոմիսարի պաշտոնից: Լազարբեկովը թե՛ Արեշյանին, թե՛ Դրոյին նույնն է ասում՝ կուսումնասիրվի գործը, ըստ այդմ էլ լուծում կտրվի: Արեշյանն ըստ երեւոյթին համբերատար է գտնվել եւ սպասել, իսկ Դրոն, փառաբանված կամավորական ջոկատի պանծալի հրամանատարը, չի գոհացել Լազարբեկովի պատասխանից եւ հեռացել է դժգոհ:

Բարեբախտաբար թե դժբախտաբար, Լազարբեկովն ուսումնասիրելով գործը, գտել է, որ Մովսեսովի հետ ինչ—որ եղել է՝ պարզապես միամտություն է կամ անփորձություն, եւ հարցը փակել է նրան նկատողություն հայտարարելով: Ապա Լազարբեկովը պատմել է այդ մասին իրեն այցի եկած Դրոյին եւ միաժամանակ պարտք է համարել ասել, որ կարիք չկա նման մանր պատճառներով սպայակազմի հարաբերությունները փչացնել, որ առանց հրամանատարների համերաշխ աշխատանքի դժվար կլինի:

Եվ ահա այդ դեպքից մի երկու օր հետո գումարվում է Հայոց ազգային խորհրդի ռազմական բաժնի նիստ, որին հրավիրվում են նաեւ Լազարբեկովն ու Դրոն: Զննարկվելու էր կորպուսի բարձր հրամկազմի հաստատման հարցը: Առաջին դիվիզիայի հրամանատարի պաշտոնում Արեշյանի թեկնածությունը առարկություն չի հարուցում: Սակայն երկրորդ դիվիզիայի հրամանատարի համար ներկայացված Սիլիկովի թեկնածության դեմ լրջորեն ըմբոստանում է Դրոն: Լազարբեկովը Սիլիկովի մասին լավ կարծիքի է եղել, «Նրան ես լավ գիտեի», գրել է նա իր հուշերի վերլուծական այս հատվածում: Գիտեր նրան 1914—ին սկսված կովի թուրքական ռազմաճակատից, որտեղ, ինչպես ասվեց վերելում, Սիլիկով զնդապետը հաճախ էր կամ իր ղեկավարած, կամ աջակից զորամասերի կազմում հրամանատարի պոստ զբաղեցրել եւ մարտեր վարել: Ուստի Լազարբեկովը խնդրել է, որ Դրոն, կորպուսի կոմիսարը, որն ի պաշտոնե երկրորդ դեմքն էր կորպուսի հրամկազմում, բացատրի, թե բանն ինչն է: Եվ Դրոն վերհիշում է անցյալը, երբ 1916—ին

Սիլիկովը եղել է Մուշի զորախմբի հրամանատար եւ հանդիպել է Դրոյին՝ կամավորների իր ջոկատի հետ, իբրեւ թե խույս է տվել եւ ջոկատին չի բարեւել:

Լազարբեկովը չի համաձայնել Դրոյի մերժմանը, նշանակում է՝ նրա պատմությունն իրեն չի համոզել նման մերժման համար: Սիլիկովի փոխարեն Դրոն առաջարկել է մի զնդապետի, որն իր հատկանիշներով լրջորեն զիջել է Սիլիկովին: Բայց նա պնդել է իր կարծիքը: Անկախ դրանից, Սիլիկովը հաստատվել է դիվիզիայի հրամանատարի պաշտոնում¹:

Գեներալ Սիլիկովին Լազարբեկովը ճիշտ էր գնահատում եւ չէր սխալվում: Եվ դա հաստատելու է ոչ այլ ոք, այլ ինքը Սիլիկովը, ինչպես ակնարկվեց վերելում, հաջորդ տարվա մայիսի վերջին Սարդարաբադի դաշտում թուրքերի սրարշավը կանգնեցնելու հերոսամարտում, որը փրկելով Երեւանը, փրկություն բերեց հայ ժողովրդի հսկայական մի զանգվածին:

Սիլիկովի դեմ դրոյական առարկությունը մերժվելուց հետո դիվիզիայի հրամանատարի տեղակալ նշանակվեց Դանիել Բեկ Փիրումով զնդապետը, դարձյալ ուսյալ մի զորական, դարձյալ իր գեներալի հետ միասին վաղվա Սարդարաբադյան ճակատամարտի հերոսների մեկը²:

Նաեւ այս էր Լազարբեկովը, ըստում էր ուսյալ մարդկանց, զենքարվեստի եւ զորքարվեստի գործի մեջ ոչ միայն մարտերի բովում աչքի ընկած, այլեւ ուսումնառության երկար ու ձիգ տարիներին հետազոտական կամք ու համառություն ցուցաբերած անձանց:

Լազարբեկյանց, Սիլիկյանց, Դանիել Բեկ—Փիրումյանց՝ կյանքում բոլորն էլ ռուսականացված «ով» վերջավորությամբ եւ Անդրանիկ Օզանյան, Դրաստամատ Կանայան, ապա Համազասպ, Սեպուհ եւ Զեռի... հայրենասիրության միելնույն դպրոցի զինվորներ, որ ռազմարվեստին տիրապետելու տարբեր ճամփաներով էին անցել եւ ոչ միատեսակ արդյունքների հասել: Լազարբեկովը թվարկում է հայկական կորպուսից հրամանատարների ազգանուններ... Ու նրանց մեջ նաեւ՝ մեզ ծանոթ Արտեմ Հովսեփյանցն է՝ համեստ, աշխատասեր, ռազմի գործից չխուսափող, չնահանջող, դժվարությամբ ընդառաջ եկող ուսյալ հրամանատարի բնութագրությամբ, որն արդեն զնդապետ է, զնդի հրամանատար:

Նույն այդ ժամանակամիջոցում ձեւավորվել են նաեւ վրացական եւ ադրբեջանական կորպուսները: Լազարբեկովը հիշատակում է վրացականի հրամանատար Ամեդեյով, ադրբեջանականի՝ Շիխլինսկի ազգանունները: Վրացականում, ըստ նրա, գոնե աննշան քանա-

¹ Լ. ս., pp. 50-51: ² Լ. ս., pp. 51-54:

կությամբ զորամասեր են եղել. իսկ աղբրեջանականում «կորպուսի 2տարից բացի ուրիշ բան չի եղել»: Ինչո՞ւ պետք է լիներ: Ումի՞ց վախենային. ազգակից, լեզվակից, կրոնակից թուրքերը ոչ մի վտանգ չէին բերում նրանց: Վտանգը ուղղված էր քրիստոնյա հայերի դեմ. նրանք էլ տազնապի մեջ էին եւ վերջին ուժերն էին գումարում: Բայց նշենք, որ երկրամասի ոռու բնակչությունը եւս անհանգիստ էր եւ նա էլ է ձեռնամուխ եղել իր՝ ոռուական, կորպուսի ստեղծման:

Լազարբեկովը վկայում է, որ հայերի զինման գործի զույն կանգնած մարդիկ միջոցներ են ձեռք առել Կովկասում գտնվող այլ երկրների ներկայացուցիչների հետ կապեր հաստատելու, նրանց հայ ժողովրդի ինքնապաշտպանական գործին ներգրավելու համար: Վերելում ասացինք Անդրանիկի ջանքերի մասին: Լազարբեկովը հիշում է, որ այցելություններ են եղել նաեւ Թիֆլիսում անգլիական հյուպատոս գեներալ Շորին եւ ֆրանսիական հյուպատոս գեներալ Շարդե-նիէին: Նրանք չեն զուգել բարի ցանկություններ հայտնել եւ խոստումներ տալ: Լազարբեկովին մի քանի հայ զորականների հետ ճաշկերույթի են հրավիրել, եւ դրանում ամենից ավելի եռանդուն է գտնվել. ֆրանսիացի Շարդենիէն: Բաժակներ են բարձրացվել ի պատիվ հայ ժողովրդի եւ հաղթանակի մաղթանքներ տրվել հայոց նորաստեղծ բանակին... Ի՞նչ խոսք, վատ չեն լավ ցանկությունները¹:

Վահան Թորոպենցը պատմում է, որ դրսաշխարհի, այն է՝ դաշնակից տերությունների, ներկայացուցիչների հետ բանակցությունները արդյունավետ հիմքի վրա դնելու համար Անդրանիկը կազմել է նրանք է ներկայացրել հանգամանալից մի հիշատակագիր: Օգտվելով դրա՝ իր ձեռքում պահվող ձեռագիր օրինակից, Թորոպենցը վկայում է, որ նրանում Արեւմտյան Հայաստանի հայությանը օգնություն ցույց տալու որոշակի միջոցներ էին թվարկվում, զինվորական ուժ ստեղծելու համար տալ պատերազմական փորձառություն ունեցող 100 սպա, նաեւ ինժեներներ, որոնք կամուրջներ կառուցեին եւ օժանդակեին ավերված երկրի վերականգնմանը, երկաթուղային պաշտոնյաներ, որ ճանապարհն անխափան լիներ, նաեւ վագոններ, հայոց լեռնամցքներում կուտակվող ձյունը մաքրող մեքենաներ... «Պուրջ պետք է օգնեք մեզ», - եղել է պահանջը: «Պատրաստ ենք կովի եւ արյուն թափելու, տեսնեք ի՞նչ պիտի լինի - այդ դժբախտ երկրի վախճանը», - այս էլ՝ պատասխանը: »

Մի խոսքով, Անդրանիկի գրությունը համակողմանի օգնության պահանջն է, հայ զինվորներին ու զորավարներին սատար կանգնելու

1 Լ. տ. ք. 55-58.

պահանջը, որպեսզի նրանք կարողանային դժվարին պայմաններում իրենց զորավոր ծառայությունը բերել երկրի ապահովությանը¹: Մնում էր՞ որ Անդրանիկը համոզվեր, որ ընդամենը մի թուրք էլ է ավելացել, եւ ուրիշ ոչինչ:

Վերջին հաշվով հայության համար կովողն էլ, արյուն թափողն էլ հայերն էին լինելու: Այդպես եղել էր, այդպես լինելու էր: Իսկ խոստումներն էլ, որոնք միշտ շոայլ էին, դարձյալ խաբուսիկ եղել էին, այդպիսին էլ մնում էին: Խոստումների չափի տակ թաքնված էր խոստացողի՝ բուն շահագրգռությունը, ըստ որի նույնպես բխում էր, վերջին հաշվով, հայության արյունահեղությունը:

Երկրապահ զորամասը նախապես ենթադրվում էր, որ պետք է կանգներ Վանից խնուս տանող զծի վրա: Իսկ հայկական կորպուսի խնդիրն էր լինելու Էրզրումի պաշտպանությունը եւ այդտեղից դեպի Արեւելք բերող զինք թշնամու առջեւ փակելը: Սակայն դեպքերի բերումով Լազարբեկովը խնդիր է դնում, որ Անդրանիկն իր տրամադրության տակ եկող զինվորներին ուղարկի Էրզրում, որտեղ զնալու էր նաեւ ինքը՝ Անդրանիկը, բերդաքաղաքի պաշտպանությունը կազմակերպելու համար²:

Ընդդիմախոսին տեսանք գործի ժամին: Նրա վերհուշը հետեւյալն է: Ներքուստ թերահավատ լինելով, Անդրանիկին երկրապահ դիվիզիայի հրամանատար նշանակելու հարցում միջին դիրք է բռնել, պահանջելով, որ նշանակվի հրամանատար տրիումփրատի պայմանով, իր բառով ասած, «սպայակույտի» մեջ, որում Վահան Փափագյանի եւ Ռուբենի հետ նաեւ ինքն է նախատեսվել գործը միատեղ կատարելու համար³:

Երբ արդեն Անդրանիկին դիվիզիայի հրամանատար նշանակելու մասին որոշումը եղել է, համառ ու հետեւողական Սեպուհը պարտք է ստանձնել այցելել Անդրանիկին եւ պնդել, որ նա հրաժարվի այդ գործին ձեռնարկելուց:

«Ինչո՞ւ, ի՞նչ կա», - զարմացական հարցրել է Անդրանիկը, որպես թե չկոտակելով Սեպուհի միտքը:

Սեպուհը բացատրել է այսպես. եթե Անդրանիկը հրաժարական տա, աճա ինքը՝ Սեպուհը, նաեւ Սմբատը, Մուրադը, Ղրոն ու Անդրանիկն էլ միատեղ կզնան Կովկասի ու Ռուսաստանի հայաբնակ ջաղաքները, միտինգներ կսարքեն, գումար կկուտակեն, երիտասարդ-

1 « Անդրանիկի կենսը. պատերազմները եւ յուշերը », Պ., 1932թ., էջ 255-259: Նույլի մասին հրապարակվել է նաեւ ավելի վաղ, տե՛ս « Անդրանիկ, Մուրատ եւ Ղուղոս Լուբար », Կ. պոլիս, 1920: Թուրք-հայկական պատերազմը, Ա մաս: Էրզրումի կողմերը, էջ 97-99: 2 « Անդրանիկի կենսը... », էջ 255-262: 3 Սեպուհ... Կ. Ա. էջ 314-315:

ներ կհավաքագրեն, ժողովրդին լիովին ոտքի կհանեն եւ կազմ ու պատրաստ, երեք ամիս հետո ճակատին պաշտպան կկանգնեն: Ասել է Սեպուհը եւ միտքը եզրափակել, սա կլինի որպէս բացառիկ մի դեպք պատմության մեջ, որը Անդրանիկին (գուցե նաեւ մյուսներին էլ) եւ անուն կբերի, եւ փառք: Լսել է Անդրանիկը լուռ եւ անսպասելի պատասխան տվել:

«— Ես ալ կարծեցի, թէ մի գյուտ պիտի ընես»: Ասել է ու բացատրել, որ կարիք չկա այդքան շրջագայության, երբ Թիֆլիսից էլ բոլոր տեղերին կարելի է ոտքի հանել:

Հաջորդ օրն Անդրանիկը մեկնել է Ալեքսանդրապոլ¹: Հետքով գնացել է նաեւ Սեպուհը:

Սեպուհը շահագրգիռ զորավար էր: Նրա համար թերեւս հեշտ չէր խոստովանել Անդրանիկին որեւէ զորամասի հրամանատար նշանակելուն դեմ լինողների նաեւ մի ուրիշ պատճառաբանությունը, որին ինքը եւս տուրք է տվել, բայց որն ինքը եւս չէր ցանկանա բանավոր կամ գրավոր ձեւով թողնել գալիք սերունդներին: Դա առարկություն էր, որը ներկայացնում էր ուսուսահայ ազգային խորհուրդը, այդ մասին գրավոր հետք թողնելով Հայաստանի Ապահովության խորհրդի անդամներից մեկի՝ Անդրանիկին հղած նամակում, ուր ուղղակի ասվում էր, որ ովքեր Անդրանիկին որեւէ զորամասի հրամանատար նշանակելուն դեմ են, «դեմ են այն պատճառաբանությամբ», որ նրա «առանձին զորամաս ունենալը կքայքայի մնացած բոլոր տաճկական՝ զորամասերը», քանի որ... բոլորը կուզենան գնալ Անդրանիկի մոտ, երբ առանց դրա էլ «այդ զորամասերը քայքայված են»²:

Կար նաեւ ոչ շահագրգիռ տեսակետ, որը սոսկ մեկինը չէր, այլ հազարներինը: Մեկը Հովհաննէս Թումանյանն էր: Դիվիզիայի հրամանատարի նշանակման հաջորդ օրն եւեթ՝ նրա խոսքն է հրապարակվել «Հայաստան» թերթում.

«Սիրելի Անդրանիկ:

Ահավոր մոմենտի առջեւ ամեն մարդ պետք է ընդհանուրի սեղանին բերի ինչ որ ունի եւ կարող է՝ թէ վերահաս վտանգը կանխելու եւ թէ բաղձալի խաղաղությանը հասնելու համար:

Ես չորս տղա ունեմ, չորսն էլ երկրի կառավարության, Ազգային խորհրդի եւ քո տրամադրության տակ են, իսկ չորս աղջիկս էլ պատրաստակամ գնում են թիկունքի աշխատանքներին, ինչի որ ընդունակ կը լինեն: Ես էլ, անշուշտ, սրանից թանկ ոչինչ չունեմ.

* Այսինքն՝ տաճկական ճակատի հայկական զորամասերը: ** ճիշտ է, նշանակման հրամանը տրվել է որպէս զարտի գիւղորական փաստաթուղթ, բայց հազիվ թէ այդ մասին չիմանային Անդրանիկի մտերիմները:

1 Լ. տ., էջ 330-334: 2 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 2, ք. 3:

հետեւաբար ոչինչ չեմ խնայիր, միայն թէ կարողանանք բոլոր ազնիվ ժողովուրդների եւ ազատասեր հոգիների հետ միասին ետ մղել վերահաս վտանգը եւ պաշտպանել ամենքիս սրբազան իրավունքներն ու ազատությունը: Ես անսասան հավատարիմ քո՝ շատ փոթորիկների մեջ ձեռք բերած փորձառությանը, վառ հայրենասիրությանն ու ազատասիրությանը, այլեւ բնական մարդասիրությանը ու զինվորական բարձր տաղանդին եւ՝ պատրաստ գալու, երբ եւ ուր կը կոչէ քո եղբայրական ձայնը՝ համբուրում եմ հերոսական ճակատդ, միշտ քո՝ Հովհաննէս Թումանյան:

3. 9.: Պարտավորվում եմ ամսական 200ռ. տալ եւ նպատակով մեր ընդհանուր գանձարանին»¹:

Ճակատագրական ժամին Անդրանիկը կոչեր էր հղում ժողովրդին: Բանաստեղծի խոսքը պատասխան էր: Վեց օր անց հրապարակում զորավարի «Բաց նամակն» է.

«Սիրելի Հովհաննէս:

Ես հրճվանքով կարդացի նամակդ: Հասած է ժամը, որ բոլորը նվանին քեզի, տրամադրելի ընելով իրենց զավակները եւ դրամը հայրենիքի պաշտպանության գործին: Պետք է մոռնանք պահ մը, գրիչը փոխարինելով սուրին, ստեղծելու համար հայրենիքը, որուն խաղաղ ծոցին մեջ միայն կը ծաղկի գեղարվեստի կյանքը:

Ես շատ զգացված եմ քու բարձր տրամադրությունեդ եւ կը հուսամ, որ մեր բովանդակ մտավորականությունը կը հետեւի քու օրինակին եւ այսպիսով կը դարբենեք մեր սրբազան ազատությունը: Զոյր Անդրանիկ»²:

Դեկտեմբերի վերջին օրերին քաղաքացիական կյանքով ապրող զորավարի՝ մարտականչի կոչեր հղելու կիրքն էր վերստին բորբոքվել:

Հոգեբանի համար անգամ հեշտ չէր լինի պատկերացնել Անդրանիկի հուզմունքը, ոուսական զորքը հեռանում է Արեւմտյան Հայաստանից, գրում էր թերթը, հեռանում է անպաշտպան, անտերունջ թողնելով մեր հայրենիքի սահմանները, որից հակառակորդը շտապում է օգտվել³: Ո՞վ պետք է օգներ եւ ինչպե՞ս: Ռուսաստանը այրվում էր իր վառած խարույկի վրա: Հեղափոխությունը խառնել էր նրա խաղաթղթերը: Երեկ Ֆրանսիայի, Անգլիայի հետ համատեղ հաղթական մարտեր մղող ոուսական բանակը այսօր խուճապի մատնված, նահանջի ճամփան բռնած, իջել էր պարտվողի աստիճանին: Էլ ո՞վ էր հայի ու Հայաստանի մասին մտածողը: Անդրանիկին մնում էր կոչեր հղել, ցնցել ժողովրդի կենսունակ ուժերին, դիմել հնարավոր ու անհնարին միջոցների: Նրա համար Նույնպես հեշտ

1 «Հայաստան», N183, 23. 12. 1917թ.: 2 Լ. տ., N185, 29. 12. 1917թ.: 3 Լ. տ.:

չէր միջոց գտնել, վիճակը փոխել: Դեկտեմբերի 29-ին հրապարակ է գալիս նրա «Կոչ թուրքահայ եղբայրներուն» ահագանգը. «Մեր հայրենիքի համար ստեղծված է օրհասական վիճակ», «Հայությունը ապրում է ճգնաժամային ռուպէներ»: Նրան գայրացնում է, որ այդ ժամին անգամ կուսակցությունները միջոց են գտնում իրենց փոխադարձ հաշիվները մաքրելու ու դատարկ վեճերի մեջ մխրձվելու համար: Անդրանիկն ուզում է ասել, թե ամոթ է ու խայտառակություն, ի՞նչ մարդիկ եք դուք եւ ի՞նչ կուսակցություններ, որ չեք մտածում ձեր ժողովրդի գլխին կախված վտանգի մասին, ինչպե՞ս պետք է դուք վաղը մարդկանց առջեւ դուրս գաք եւ ինչպե՞ս ձեր դեմքից սրբեք այդ աստիճան անմիտ լինելու ամոթն ու խայտառակությունը: Բայց նա, այնուամենայնիվ, ըստ երեւույթին զսպել է իրեն, չի իջել մյուսների աստիճանին եւ գրել է քաղաքակրթությանը վայել այն բառապաշարով, որով ուզվի դաշտից դուրս գալու անցած ավելի քան մեկ տարում հարստացել էր նրա բանավոր ու գրավոր խոսքը.

«2եզ կը դիմենք բոլոր կուսակցություններ անխտիր, դադար տվեք ձեր վեճերուն...»

2եզ կը դիմենք հայրենակցական միություններ...
2եզ կը դիմենք երիտասարդ մտավորականություն... ուսուցիչներ, բժիշկներ, իրավաբաններ եւ այլ տեսակի մասնագետներ...
Արիեստավոր, գյուղացի եւ բանվոր...
Արձագանք տվեք մեր զորակոչին»:
Ստորագրությունն է՝ «Հայաստանի ապահովության խորհուրդ: Հայաստանի երկրապահ զորամասի հրամանատար՝ Անդրանիկ»:
Լարվածության նույն այդ օրերին «Հայաստան» թերթի կենտրոնական գաղափարներից մեկը այս էր. «Հայ ժողովուրդը մի է»: Եվ ոչ թե տարօրինակ է, այլ լիովին բնական, որ բացատրությունն սկսում է ժողովրդի ներքին տարբերությունները, նույնիսկ հակասությունները թվարկելով. ժողովուրդը տարբեր պետությունների ներքո է, որից՝ տարբեր պետական օրենքներ, քաղաքական խնդիրներ, տարբեր երազի հորիզոններ, տարբեր վերքեր... Դրանց հակառակ վկայակոչում է միավորող, միաձուլող, միեւնույն դրոշի ներքո եւ նույն խնդիրների համար պայքարի եւ գոյատեւման կովանները, ինչպիսիք են՝ համահայկական մշակույթը, լեզուն, դավանանքը, վերջում պընդելով, որ ազգի ամեն մի հատվածը «իր մարտնչումի մեջ պետք է ըլլա ինքնուրույն եւ անկախ»²:

Բոլորի թվում նաեւ այսպիսի մի կոչ, որը խոշոր տառերով վերնագրված է՝ «Անդրանիկի կոչը: Խոսքս դավաճաններուն ու հուզաններուն չէ, այլ մարդասեր բոլոր ժողովուրդին»: Սրա առիթն այն

1 Լ. տ., N185, 29. 12. 1917թ.: 2 «Հայաստան», N7, 12. 01. 1918թ.:

է, որ Եվրոպայի մեծ տերությունների առջեւ հայկական դատը պաշտպանելու համար գործունեություն սկսած հայ պատվիրակներն Անդրանիկին, նրա զինակիցներին ու հայ հասարակական կազմակերպություններին դիմել էին ուսական բանակի գրաված արեւմտահայ հողերը ամեն կերպ պաշտպանելու, այնտեղ հայության կյանքը վերարթնացնելու կոչով: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո կնքվել էր զինադադար, սպասվում էր, որ վաղը նաեւ հաշտություն էր ստորագրվելու: Եվ Անդրանիկը պարզ ու որոշակի տեսնում է գրավված այդ վայրերը վերստին թուրքական զորքերին տրամադրելու վտանգավոր հեռանկարը. նորից նոր եղեռն, այս անգամ՝ պահանջված ընդամենը հարյուր հազար հայության: Վտանգին դիմագրավելու, հայոց օջախների կրակը վառելու, ժողովրդի կյանքը հարատւելու մի միջոց է մնացել, այն է՝ ժողովրդի վերջին ուժերի գործադրումը: Թվում է, թե բոլորին դիմել է հայ ժողովուրդը, եւ դրսաշինարից անխտիր պարզել է իր երեսը, այլեւս սեփական բազուկներից բացի ուրիշ միջոց չի մնացել: Ժողովրդի որդին դարձյալ նույն համոզմունքին է՝ այսօր է, որ պետք է որոշվի, ապրելու է, թե՛ մեռնելու մեր ժողովուրդը. «Վայրկյանը, ներկա օրերը մեզ չեն ցուցներ միջին ճանապարհ...»: Եվ նորից կոչն է ազգի հասուն տարիքի բոլոր մարդկանց՝ տղամարդ թե կին, քահել, թե ծեր՝ անխտիր բոլորին, ով խելահաս է ու ողջամիտ, ով դավաճան չէ եւ ծախու, բոլորը պետք է կանգնեն հայրենիքի պաշտպանության ու պահպանության դիրքերում՝

«Գալիք ազատությունը կը պատկանե բոլորիս...»,
«Կոչ կընեմ բոլոր գենքի ընդունակ տղամարդկանց առանց դասակարգերու խտրության, գյուղացիեն, արիեստավորեն մինչեւ բարձր դասու մտավորականությունն ու հարուստը...»,
«... բոլոր չափահաս դպրոցականներուն...»,
«... մեր բոլոր մայրերուն եւ քույրերուն՝ կը հորդորեմ, որ չընդունին իրենց սրբազան հարկի տակ հուզաններն ու դավաճանները, թող թքեն անոնց երեսին եւ դրկեն անոնց դեպի գորանոց»:
Զի զլանում Անդրանիկը դիմել նաեւ «մարդասիրական սիրտ ունեցող»՝ «ամեն ազգի, ըլլան անոնք հույն, եգիպտացի, ասորի, քուրդ, իսլամ կամ ոչ իսլամ, որոնք ենթակա եղած են օսմանյան բռնակալ կառավարության անմարդասեր սարսափներուն»:
Եվ կարո՞ղ էր արդյոք մոռանալ հազարավոր տարիներ ի վեր միեւնույն ակունքից ջուր խմած եղբորը.
«Իմ խոսքս կուղղեմ նաեւ վրացի մեծ ժողովուրդին, որուն ազգային-քահերը դարեր ի վեր համընթաց քայած են եւ համընթաց պիտի

քալեն մանավանդ ասկե հետո. իբրև երկու տառապած եւ ազատագրված ժողովուրդներ»¹:

Խոսքը այս մի կոչով չի սպառված: Նույն թերթի նույն առաջին էջում Անդրանիկը պարտք է համարում երկու կոչ եւս հղել «Հայ հարուստ» եւ «Զինակից օֆիցերներ» խորագրերի տակ:

Բոլորն էլ ըստ էության վերջին ճիգերը գործադրելու եւ զորահավաքի. դեպի վերջին մարտ հրավիրելու կոչ էին: Կոչողը ստեղծված տվյալ իրավիճակում եղել է ոչ թե որեւէ կուսակցություն կամ բոլորը՝ միատեղ. ոչ թե հայ բանաստեղծը կամ մտքի ու գրչի մեջ գրավոր մեկ ուրիշը: Դա ոչ այնքան մեկի ու մյուսի կամքի հարց էր. որքան ազգի անունից հանդես գալու եւ ազգին դիմելու բարոյական իրավունքի: Այստեղ Անդրանիկը եզակի էր: Եվ սա է առաջին հերթին ու գերազանցապես Անդրանիկը. ոչ միայն այն Անդրանիկը, որն ապրում էր. այլեւ այն, որը ապրելու էր:

Խոստովանենք: Հավանաբար քիչ առաջ «հայ բանաստեղծ» բառերը տեղին չօգտագործվեցին:

Որովհետեւ հայ բանաստեղծներին, առհասարակ գրչի մարդկանց այն է բնորոշը, որ երբեք նրանց երազանքը սոսկ գրիչն ու տաքուկ անկողինը չի եղել: Նրանց մեջ բոլորից առավել նա՛ էր այդպիսին, ով ամենից վսեմն ու հմուտն է եղել հենց բանաստեղծական արվեստի մեջ: Մի ժողովրդի համար դա Շեքսպիրն է. մի ուրիշի համար՝ Գյոթեն, երրորդի՝ Պուշկինը: Ամեն մեկը յուրովի իր ժողովրդի գոյապահպանության մարտիկն է. անկախ նրանից, թե ժողովրդին ինչպիսի վտանգ է սպառնում եւ սառնում է. թե ոչ: Հայության համար այդ բանաստեղծը Հովհաննես Թումանյանն էր, որը Անդրանիկի հետ էր ու հայրենիքի բոլոր պաշտպանների հետ՝ իր ամբողջ քաղաքացիական էությամբ. եւ դա նրա հրապարակային դիրքորոշումն էր: Անդրանիկ եւ Թումանյան փոխըմբռնումը բանաստեղծի գրչով հղուչակվել էր «Հայաստան» թերթի լույս աշխարհ գալու առաջին իսկ համարի, առաջին իսկ էջից: Հայը Հայաստան ասելով Տաճկահայաստանն է այդպես անվանել. այսպես էր գրել բանաստեղծը, այդ մի քանի բառով բացահայտելով ոչ թե աշխարհագրական մի փաստ, այլ զորավարի փայփայած երազանքը: Եվ ապա այն մասին, որ ինքը վերջին պատերազմի ժամանակ երկու անգամ եղել է իր նշած այդ Հայաստանում՝ Ալաշկերտի հովտում եւ Վանում: Տեսել է Հայաստան աշխարհը լուռության մեջ: Ասել է՝ թե տեսել է համբերող մի երկիր ու մի ժողովուրդ, որն սպասում է իր խոսքն ասելու օրվան ու ժամին: Եվ լուռության ու համբերության մեջ ընկղմված այդ աշխարհի «ցավն ու ցանկությունը» մնացել են լուռության ծովում ընկղմված, մինչեւ որ

1 Լ. տ. N182, 22. 12. 1917թ.:

ազատության առազաստները նրան էլ մակերես կհանեն իր ամբողջ վեհությամբ: «Հայաստանը պետք է խոսի վերջապես», — եզրակացնում է բանաստեղծը, այդ խոսքի ամբիոն տեսելով զորավարի հիմնադրած թերթը¹:

Սա ապրիլին էր, երբ Անդրանիկն արդեն տասներեքերորդ ամիսն էր,՝ ինչ զինվորական պաշտոնավարության հետ ոչ մի ծառայողական կապ չուներ: Բայց ահա 1917 թվականն ավարտվում էր, եւ նա՛ ուզմի դաշտում մեկուկես տարի գտնված կամավորական ջոկատի պաշտոնաթող հրամանատարը, հաստատված էր որպես դիվիզիայի հրամանատար: Մտերիմների շրջանում հարց է ծագում՝ այդ ի՞նչ դիվիզիայի հրամանատար է, որի զինվորական ուսադիրներին ոչ մի տարբերանշան չի լինելու: Հարց տվողները նաեւ հարց են բարձրացնում: Նրանց մեջ առաջինը դարձյալ հավատարիմ ու անձնուրաց Հակոբ Զավրյանն է, նրա հետ՝ Ապահովության խորհրդի նախագահ Պարույր Լեւոնյանը²: Պաշտոնի եւ ուսադիրների տարբերությունը անհետանում է: Կովկասյան ռազմաճակատի զորքերի շտաբի պետի պաշտոնակատար Լեբեդիևսկին 1918թ. հունվարի 23-ին բանակի բոլոր ստորաբաժանումներին պաշտոնապես տեղեկացրել է, որ ռազմաճակատի զորքերի հրամանատարի պաշտոնակատարի հրամանով Անդրանիկ Օզանյանին նոր կազմավորված Հայկական առանձին դիվիզիայի³ հրամանատարի պաշտոնում հաստատվելու կապակցությամբ շնորհված է գեներալ-մայորի պաշտոնակալի կոչում⁴:

Դիվիզիայի հրամանատարի պաշտոնն ստանձնելուն պես էր նա գործի անցել: Գեներալական ուսադիրները թեւ ոգեւորիչ էին, բայց ինքն անձամբ չէր ակնկալել: Պատմության մեջ գուցե սա բացառիկ դեպքերից մեկն էր, ոչ միայն, այսպես ասած, անուս զինվորականին գեներալի կոչում էր շնորհվում, այլեւ շնորհվում էր, շրջանցելով գրեթե բոլոր նախորդող կոչումները, միանգամից: Ինչո՞ւ:

Գեներալական պաշտոնը տրված էր: Պետք է կոչումն էլ պատշաճ լիներ: Դրան իր արժանի լինելը ոմանք կարող էին հարցականի տակ առնել, բայց ոչ ոք նրա մարտավարական սխրանքն ու հմտությունը չէր կարող հերքել: Այստեղ նա մրցակից չունեցավ:

Առաջին հոգսը, որով նա զբաղվել է նոր ուսադիրները փակցնելուց հետո, զորամասը կազմավորելն է եղել, այն հատկապես մարտական գործի համար ընդունակ, հուսալի զինվորներով համալրելը: Այդպիսիք էին նրա հետ կապը չխզած հին կամավորները, թե շարքային զինվորները, թե ջոկատի երեկվա ստորաբաժանումների

1 «Հայաստան», N1, 16. 04. 1917թ.: 2 Ս. Վրացեան, Հայաստանի հակապետություն, Դ., 1958, էջ 60: 3 Փաստաթուղթ՝ Армянская особая дивизия. «Կա նաեւ՝ Союзный армянский отряд» 4 Зауряд г.-м. տե՛ս. ՊԿՊԱ, ֆ. 2100, ք. 2, գ. 263, ք. 31: Պատճեկ՝ ՎՄԱՀ ՊԿՊԱ, ֆ. 1082, ք. 5, գ. 183, ք. 29:

հրամանատարները: Բայց, ինչպես երեւում է, դա նրան չի գոհացրել: Ուրիշ եր դիվիզիայի ռազմական տեխնիկան եւ նույնական չէր կարող լինել նրա անձնակազմը: Ուստի պատահական չէ, որ նրա, որպէս դիվիզիայի հրամանատարի, առաջին կոչերից մեկը ուղղված էր ուսումնական հայ երիտասարդությանը՝ ուսանողներին: Նրանց զինտներին եւ առհասարակ երիտասարդ մտավորականներին: Անդրանիկը որակում էր որպէս ժողովրդի խիղճ, տեղյակ պահելով, որ ինքը ուժեղ բանակ ստեղծելու մեծ խնդիր ունի: Անդրանիկը ուսյալ եւ կիրթ երիտասարդներին հրավիրում էր բանակ եւ նրանց մատնացույց էր անում հրետանավորի, հետախույզի, հեռախոսավարի, զրազրի մասնագիտությունները, առհասարակ գիտելիքներ պահանջող գործերը, որոնցում նրանք ամենից ավելի օգտակար կլինեին եւ այդպիսի երիտասարդների կարիքը շատ մեծ էր¹:

Առջեւում Անդրանիկի կենսուղու այն էջն էր, որում նա անցյալից ոչնչով պակաս եռանդ ու հմտություն չգործադրեց, բայց որը, անկախ դրանից, եղավ ամենաողբերգականը նրա մղած կռիվների պատմության մեջ:

9 ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԷՐՁՐՈՒՄԸ

«Ղավաճանը նա է, ով թեկուզ մի քայլ կնահանջի իր պոստից»:

Ի վերջո պետք է գնոր ռազմաճակատ մեկնելու ժամը: Եվ եկավ: Ճանապարհ է ընկել Թիֆլիսից, դիվիզիայի հրամանատարի պոստում իր օգնական Ջինկելիչի հետ միասին, դարձյալ անբաժան Հակոբ Ջավրյանի եւ Վահան Թոթովենցի ընկերակցությամբ²: Ճանապարհը երզրում, որը ռուսական բանակի գրաված հին հայկական խոշոր քաղաքներից էր: Այնտեղից ռուսական զորքերը վաղուց արդեն ճամփա էին բռնել դեպի իրենց հայրենական օջախները, թեւ դեռ չէին հասցրել լոկի դուրս գալ քաղաքից եւ մերձակա վայրերի իրենց

* Էրզրում մեկնելուց առաջ դարձյալ հարկ է եղել դիմելու Հովհաննես Թումանյանին: Փակվել էր «Հայաստան» թերթը՝ ռազմաճակատ էին մեկնում եւ թերթի հովանավոր Անդրանիկը, եւ խմբագիր Վահան Թոթովենցը: Անդրանիկը գտնում էր, որ այսուհետ թերթը պիտի լույս տեսնի Էրզրումում: Առայժմ խմբագրության գույքի մեծ մասը հանձնվել է Հովհ. Թումանյանին՝ ի պահպանություն 58 փոքր տպագրական տառ տառերի եւ այլ գույքի 6 արկղ, 15 կլիշե, մի քանի արժու մեծ ու փոքր սեղաններ, թուղթ: Մնացածն էլ թողնվել է Վ. Թոթովենցի եւ խմբագրությանը մտտիկ երկու այլ անձանց տնտրում («Հ ՂԿՂԱ, ք. 370):

1 «Հայաստան», N21, 6. 02. 1918թ.: ՎՊՈՂԱ (Մ), ք. 2168, ք. 2, գ. 31, ք. 130: Նանե՝ «Հ ՂԿՂԱ, ք. 121, ք. 1, գ. 41, ք. 162:

զորակայաններից: Հրաժեշտի խոսքում Ավետիս Ահարոնյանը փառաբանել է զորավարին եւ պանծալի հաղթանակ ցանկացել նրան: Ջորավարը հույսի եւ գովեստի խոսք է ասել իր հետ ուղեւորվող ջախել զինվորներին, երբ ազգը նման պատանիներ է ուղարկում ռազմի դաշտ, ազատությունն անառարկելի է: Ասել է ու մատնացույց արել շարքերում կանգնած իրոք մի պատանյակի, որը 14 տարեկանից էլ պատիկ է եղել:

Դեպի Էրզրում, Ալեքսանդրապոլի կայարանում նույն խանդավառ ճառերն են արտասանվել եւ հենց տեղնուտեղը ոչ ավել, ոչ պակաս՝ երկու հազար հոգի զինվոր է գրվել Անդրանիկի զորամասին: Բայց հազիվ է զորավարը հասցնում նրանց բաշխել ըստ ստորաբաժանումների եւ զորանոցների, երբ պարզվում է, որ մնացել է ընդամենը 25 հոգի, մյուսները փախել են: Սա առաջին լուրջ հիասթափությունն էր ու դառնությունը:

Գնացքով մինչեւ Սարիղամիշ, այնտեղից էլ ավտոմեքենայով, ճանապարհին բազում տխուր ու տրտում տեսարաններ դիտելուց, լուրեր ստանալուց հետո, փետրվարի 16-ի երեկոյան հասնում է Էրզրում³:

Բնակչությունը, իմանալով, որ Անդրանիկը Թիֆլիսից դուրս է եկել, սպասողական վիճակի մեջ էր: Առաջին անգամ էր նա Էրզրում ոտք դնում: Զաղաքի ողջ հայությունը խմբվել էր Կարսից եկող ճանապարհի մուտքի մոտ՝ զորավարին դիմավորելու²:

1918-ի փետրվարի 22-ին ռազմաճակատի հիամանատար Օդեշելիձեն Էրզրում հղած հեռագրում իր ուրախությունն է հայտնում, որ Անդրանիկի մուտքը Էրզրում եւ նրա առաջին քայլերը այնտեղ, «բարձրացրել են զորքերի ոգին եւ փոխել հայ զինվորների հոգեբանությունը»: Եվ մեծ հույսեր է կապում նրա հետ ու վարդավառ օրեր տեսնում առջեւում. «Հոգեպես չենք ընկճվելու եւ հնարավոր է, որ պատմության հանձարը մի օր ձեր տառապյալ հայրենիքին ավելի խոշոր ուրախություններ պարգեւի»³: Գունազեղ էին հրամանատարի պատկերացումները: Մինչդեռ իրականում այդպես չէր:

Հազվադեպ ծանր օրեր էին հայության համար: Եվ թերեւս ամենից ավելի տխուր ու ողբերգական էր թուրք-կովկասյան ճամփեզրի Էրզրում քաղաքում եւ ընդհանրապես այդ ճանապարհով դեպի Անդրկովկաս բերող բոլոր քաղաքներում ու գյուղերում: Թուրքական զորամասերն անհամբեր մոլեգնությամբ մղվում էին դեպի Էրզրում, որից Արեւելք նրանց ընդառաջ կանգնած էին հայության դեմ պատրաստակամ՝ ճամփեզրի զինված ու անզին թուրք բնակչությունը:

1 «Անդրանիկ, Մուրատ եւ Պողոս Նուբար», Ա մաս, Կ պոլիս, 1920թ.: Նանե՝ «Անդրանիկի կենսը, պատերազմները եւ յուշերը», Պ., 1932, էջ 290-291: «Անճառանց» թերթը կրում է փետրվարի 17-ը (երեսն 4. 04. 1918թ.): 2 «Անդրանիկի կենսը...», էջ 290-291: 3 «Հ ՂԿՂԱ, ք. 121, ք. 1, գ. 40, ք. 165:

իսկ ավելի խորքերում՝ մահմեդականներից կազմավորված ազգային զորամասերը: Այս վիճակը անհանգստացնող էր նաեւ Թիֆլիսի ու ընդհանրապէս Վրաստանի համար: Սակայն վրաց ղեկավարները զերմանիայի հետ լեզու էին գտել, նրա միջոցով էլ հույս ունեին հարցերը լուծել Թուրքիայի հետ իրենց համար ընդունելի մի պայմանագրով, դրա մէջ էլ տեսնելով իրենց փրկության ելքը: Հայությունը ինքն էր միայն իր հույսը: Այլեւս Երկրից ջաշվել, գնացել էր ռուսական բանակը: Այժմ նրա դերը պիտի կատարեր երկրպագի դիվիզիան, որի ներքին կազմից անտեղյակ ժողովուրդը նրա մասին դատողություն էր անում անպարտելի Անդրանիկի հրամանատար լինելով: Դեպքերին մասնակցի տվյալներով, դեմ հանդիման կանգնած էր թուրքական կորպուսը Վեհիբ փաշայի հրամանատարությամբ՝ մոտ 10-12 հազար եւ Ալի Իսան փաշայի ղեկավարած դիվիզիան՝ 3-4 հազար զինվորով: Թվերը զորամասերի սովորական կազմի համեմատ այդպէս նվազել էին, որովհետեւ նրանց զինվորների մի զգալի մասը, ռուսական բանակի տունդարձից հետո, ուղարկվել էր Միրիա: Մնացածի վիճակն էլ բարվոք չէր, սննդամթերքը սակավ էր, զինվորների հագուստը մաշված, պատառոտված, հանդերձանքը թերի: Թուրքական զորամասում ծառայած հայ բժիշկը նույնպէս դժգոյն է նկարագրում: Երբ փետրվարի սառնամանիքին հարձակման անցան, գրում է նա, թուրքական այդ զորամասերը շատ «խեղճ պայմանների» մէջ էին, «կիսանոթի եւ կիսամերկ»: Եվ շատ է ցավում, որ հայ զինվորը չկարողացավ մինչեւ իսկ մի շաբաթ դիմադրել հյուժնված թշնամուն: Եվ կատարվածը որակում է «հայության ոսկեղեն իդեալի փլուզում» բառերով: Խայտառակ ու ողբերգական այդ ելքի պատճառն այն է նա համարում, որ ազգի պարագլուխները, մխրճվելով «բյուզանդական» վեճերի մէջ, միաբան չգտնեցին, անճարակ եղան զումարելու բոլոր ուժերը որպէս մի կարգապահ բոլոսցը, իսկ միայն մի մարդը, որ առաջ էր մղվել եւ մեջտեղ էր եկել, բավական չեղավ, իր լեռ կամքով, իր ոգեշունչ հեղինակությամբ հանդերձ հաղթանակի դափնիներ հյուսելու... Եվ, այսպէս, դեպքերի վկան ականատես եղավ, թե ինչպէս «ոսկեգօծ արշալույսը կարմիր ու սեւ վերջալույսի փոխվեց»¹: Համենայն դեպս, այսպէս է հիշում ժամանակակիցն ու դեպքերի մասնակիցը, եւ այդպէս են նրա հիշողության մէջ տպավորվել դեպքերը, որոնք ուղղակիորեն կապված են Էրզրումում Անդրանիկի մղած կռիվների հետ: Իսկ ամբողջ ռազմաճակատում զինադադարը խախտելու պահին թուրքերը կովի դուրս բերեցին իրենց 3-րդ եւ 2-րդ բանակների մնացորդները,

1 Տե՛ս քոթչ Եահնազար Ռոբուսու հոդվածը «Արեւ» թերթում, 1927թ.:

որանք համալրելով երկու այլ դիվիզիաներով, որոնց դարձյալ սովորականի պէս ուղեկցում էին քրդական ջոկատները¹:

Պետրոգրադում ժամանակավոր կառավարության անկումից հետո երկրամասում իշխանության դեր կատարող Անդրկովկասյան կոմիսարիատը Կովկասյան ռազմաճակատի բանակային հրամանատարության հետ մեկտեղ, Աստանտի տերություններից առանձին (սեպարատ), զինադադար էր կնքել Թուրքիայի հետ: Իսկ ղեկտեմբերի 29-ին ժողկոմխորից ընդունել էր Թուրքահայաստանի մասին ղեկրետը, որով Ռուսաստանի նոր կառավարությունը հռչակում էր Արեւմտյան Հայաստանի՝ Ռուսաստանի գրաված վայրերի հայ բնակչության ազատ ինքնորոշման իրավունքը: Այդ ղեկրետով միաժամանակ նախատեսվում էր ռուսական բանակի դուրսբերումը (էվակուացիա) Արեւմտյան Հայաստանի նվաճված տերիտորիաներից: Փաստորեն ճակատը մերկացվում էր: Ետ վերադարձող բանակը, տեղ-տեղ թողնելով զենքի որոշ տեսակներ, իր ունեցած սպառազենը հիմնականում տանում էր իր հետ: Ջենքի այդ մնացուկներն էին, որ Անդրկովկասյան կոմիսարիատն ու նրա իշխանության տեղական մարմիններն իրենց նախաձեռնությամբ դուրս էին բերում պահեստներից եւ օգտագործում ազգային զորամասերի կազմավորման համար: Այդ զորամասերի մէջ ծառայության էին մտնում նաեւ նահանջից ետ մնացած ռուսական բանակի թե՛ հայ, թե՛ ռուս եւ այլ ազգերի սպաներ ու զինվորներ՝ իրենց զենքով ու հանդերձանքով: Բավական թվով ռուս զինվորներ էին բնակություն հաստատել Էրզրում՝ քաղաքում, որոնք բանակի նահանջից հետո էլ հարմար էին գտել մնալ տեղում: Նրանք ընտանիքներով, թե՛ անհատապէս, բազմակողմանի կապեր էին հաստատել տեղի եւ շրջակայքի թուրք ու վրացի բնակչության հետ: Լավ գիտեին զենքի պահեստներն ու այնտեղ մնացած պաշարները: Զաղաքի թուրք երիտասարդությունը, կապ ունենալով մերձակայքի թուրքական բանակային հրամանատարության հետ, թե՛ նրա համար, թե՛ նաեւ իր համար, ռուսական բանակի ետ ընկած սպաներից մատչելի գներով զենք էր ձեռք բերում ու զինվում, որը ոչ ոքի համար, գաղտնիք չէր, թե՛ վաղը ում դեմ է օգտագործվելու: Փաստերին տեղյակ հեղինակը մի օր գրելու է. «Էրզրումի պաշարումի վերջին օրերը, երբ հայերը կը նահանջեին, քաղաքի թուրքերը ռուսական զենքերով եւ զնդացիրներով կրակ բացին հայերուն վրա»:

Կոմիսարիատը ռազմաճակատից վերադարձող զորամասերին բռնի զինաթափելու միջոցներ գործադրեց, որում առանձնապէս աչքի ըն-

1 Ե. Ղ. Սարգսյան, Թուրքիան եւ նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում (1914-1918), Ե., 1964, էջ 345: Այստեղ եւ մնացյալ գրականության մէջ բերված թվերը իրարամերձ են, որովհետեւ հաստատուն չեն մատչելի աղբյուրները:

կան, որպես փորձված բարբարոսներ, աղբբեջանական ռազմամուկները: Ստեղծվում էր իրարամերժ վիճակ. որոշ քաղաքական ուժեր բանակին կոչ էին անում տանել զենքը Հյուսիսային Կովկասում, ապա նաեւ իրենց վերադարձի մյուս վայրերում հեղափոխության դեմ ըմբոստացած ուժերը ձեռնելու համար, իսկ մյուսներն էլ նրանց վրա կրակ արձակելով, վերադարձի գնացքները խափանելով ու ճամփաները փակելով՝ բարբարոսաբար խլում էին զենքերը: Կար նաեւ ազնիվ բարեկամության մի հոսանք, որի ներկայացուցիչները ռուս զինվորին, նրա սպայակազմին կոչ էին անում հապճեպորեն չլքել ճակատը, համբերել, դեռ չհեռանալ, քանի դեռ Կովկասի ժողովուրդներին թուրքական նոր արշավանքի վտանգն է սպառնում: Այս հոսանքի մեջ ազդեցիկ դեր էին կատարում Անդրանիկը, Բաքվի կոմունայի առաջնորդ Ստեփան Շահումյանը եւ տարբեր քաղաքական կուսակցությունների ուրիշ գործիչներ: Բայց դա հեշտ չէր: Հոկտեմբերի 25-ից հետո ստեղծված ռուսաստանյան նոր կառավարությունը Լենինի ղեկավարությամբ ղեկտեմբերից համաձայնության սեպարատ բանակցություններ էր վարում Բրեստում քառյակ դաշինքի երկրների՝ Գերմանիայի, Թուրքիայի, Բուլղարիայի եւ Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչների հետ, զիջումների մեծ գնով ձգտելով պատերազմը դադարեցնելու համաձայնություն կնքել, դրանով նորաստեղծ իշխանության դիրքերը ամրապնդելու, հեղափոխության նվաճումները հաստատուն դարձնելու եւ ավելի լայն տարածելու համար: Ջիջումների այդ քաղաքականության մեջ լենինյան տեսանկյունով կարելու դեր էին խաղալու Կովկասում թուրքիայի պահանջած հողերի հանձնումը՝ Բաթումը, Արդահանը, Կարսն ու Սարիղամիշը, ինչպես նաեւ այդ վայրերից եւ առհասարակ պատերազմի ընթացքում ռուսական բանակի նվաճած տարածքներից բանակային զորամասերի անհապաղ դուրսբերումը, որը արձանագրվեց 1918-ի մարտի 3-ին Բրեստում՝ նշված կողմերի միջեւ կնքված պայմանագրով: Եվ հենց այդտեղ էլ, այդ պայմանագրում, ռուսական կողմը պարտք էր ստանձնում ապահովել ռուսական զորքերի դուրսբերումը Կովկասյան ճակատի նրանց նվաճած վայրերից: Ահա բարդությունների այն շղթան, որը ողբերգական վիճակ էր ստեղծում տուժող վայրերում, որոնց բնակչության հսկայական մասը չար բախտի քմահաճույքին թողնվող հայեր էին:

Նահանջող ռուսական բանակի հետքով կրնկակոխ գալիս էին թուրքական զորամասերը, որպես իրենց հիմնական ուժերը Կովկասյան ռազմաճակատում կուտակելու այն պլանի իրականացում, որը կազմել էին թուրք ռազմական գործիչները՝ ի դեմս Էնվեր փաշայի

եւ այլոց¹: Իսկ նահանջը սկսվել էր ավելի վաղ, քան Բրեստում բանակցությունների սկսվելը: Ի միջի այլոց, թուրքական կողմն իր հարձակումը վերսկսելու համար չսպասեց էլ Բրեստում բանակցությունների ավարտին ու պայմանագրի ստորագրմանը: Նա խախտեց երզնկայի զինադադարի համաձայնագիրը եւ փետրվարի 12-ին իր զորքերը մղեց դեկտեմբերի 5-ի սահմանազատման գծից դեպի առաջ ու Արեւելք, որտեղ որ սպասվում էին Էրզրումի կռիվները:

Էրզրումը համեմատաբար զեռն էր մնացել թուրքերի ջարդերի եւ տեղահանության եղեռնագործությունից: Ջաղաքը մեն-մենակ, ասես հայոց Արեւմտյան բնաշխարհի դեռուս կանգուն լինելու կենդանի վկայությունը լիներ: Սակայն անկումը ամբողջի կորստյան ներշնչումը եղավ: Ներիակ այս պարագայում, այնուամենայնիվ, դարձյալ առկա էր հույսի հազվագյուտ հաջող մի պարագա, թուրքական բանակը թույլ էր, քիչ թե շատ լուրջ դիմադրության դեպքում ուժերը հապճեպ գումարելու, առաջ գնալու անկարող, իսկ Էրզրումը հայերի համար՝ պարենի ու ռազմամթերքի հարուստ շտեմարան, որը տվյալ իրավիճակում կանխապես արդեն մեծ առավելություն էր թշնամու նկատմամբ: Առավելություն, որը դիպուկ որակվել է նաեւ որպես «ոսկե առիթ»²: Այսպես գուժազեղ հայ հասարակական կարծիքը շատ անգամներ է հնուց ի վեր եւ դարեր շարունակ երազանքների իրականացման պահեր բնութագրել եւ մարդկանց ոտքի հանել մոտալուտ հաղթանակի խոր համոզմունքով: Դա Անդրանիկին չի վերաբերում: Նա սկզբից էլ սթափ էր մոտենում Էրզրումի խնդրին: Ջուր չէր հրացանը ունեւ, որ ժամ առաջ Էրզրում հասնի: Նա գնում էր կովելու համար, կովի հարմար պահից չուշանալու համար, անշուշտ, սոսկումով ըմբռնելով, որ որքան հեշտ չի լինելու թշնամուն կանգնեցնելը, նույնքան էլ ողբերգական է լինելու նրան զիջելու հետեւանքը: Սանավանդ, որ չափից ավելի բարդ էր խնդիրը, որ նա դնում էր իր առաջ, ոչ միայն Էրզրումը ետ պահել թուրքերի վերահաս եղեռնագործությունից, այլեւ պահել այն որպես ձեւավորվող Հայաստանի պետականության ծայր արեւմտյան սահման: Մեկ հիմա պահել, ապա՝ մեկընդմիջտ...

Հասարակության ուշադրությունը Անդրանիկի կողմն էր: Թիֆլիսյան թերթը հունվարին հրապարակել է թղթակցի զրույցը Անդրանիկի հետ: Ի թիվս այլ դժվարությունների, նա հատուկ նշել է Էրզրումի կողմում քրդերի հակահայկական զինված դիրքավորումը. «Մեծ դժվարություն է, որ հայ ժողովուրդը ընդհարման մեջ է ջուրդի հետ», — ասել է նա, կարծես ցավելով, որ այսքան երկար ու ձիգ

1 Ե. Ղ. Սարգսյան, նշվ., էջ 326-439: 2 Անդրանիկի Չելեպեան, Զորավար Անդրանիկ եւ հայ յեղափոխական շարժումը, 1988, էջ 399:

տարիների ընթացքում չհաջողվեց երկու դուռ-դրկից, հալածական ժողովուրդների ռազմական դաշինքը: Եվ շեշտը դնում է հայոց ինքնապաշտպանության վրա. բազում ուժեր իր կողմը գրաված թշնամու դեմ հայությունը մեն-մենակ էր մնացել: Թուրք եւ ջուրդ զինված ուժերը կանգնած էին Սուշից մինչեւ կովկասյան սահմանը: Սեփական ուժերը լիովին պետք էր ասպարեզ հանել՝ այս էր պարզորեն ասում Անդրանիկը. «Ես չեմ սիրել խաբել ժողովուրդը: Պետք է պարզել Հայաստանի դրությունը, որպեսզի ժողովուրդը գիտակցի զալիք վտանգը»: Եվ ցավով նշում է, որ ոուս զինվորը թողնում-հեռանում է: Անիմաստ է համարում դա, անժամանակ ու վտանգավոր: Ռուս ժողովուրդը չպետք է մոռանա, որ արյուն է թափել, նա «պետք է կենա եւ պաշտպանի Կովկասը եւ կովկասյան ժողովուրդները»¹:

Դեպքերն օրագրողի տվյալներով, Էրզրումին պաշտպան կանգնելու հարցը Անդրանիկի առջեւ դրել էր Պողոս Լուբար փաշան, Լոնդոնում հայոց հարցը այդ ժամանակ անգլիական կառավարության առջեւ հարուցող անպաշտոն հայ դիվանագետը, հեռվից դեռեւս 1917-ի ամռանը վերը հիշատակված գեներալ Շորին հղած հեռագրով²:

Պողոս Լուբարը միաժամանակ ե՛լ Վանի ու Բիթլիսի, ե՛լ Էրզրումի պաշտպանությանը ձեռնամուխ լինելու խնդիր էր դրել, հանձն առնելով հոգալ նյութական միջոցները: Գործի հետ առնչվել է նաեւ Կերեսկու կառավարությունը: Վերջինս արեւմտահայերի 30 հազարանոց բանակ ստեղծելու հարց դնելով, նախապես տրամադրել է 18 հազարի հանդերձանքը, պարտավորվելով հետագայում նաեւ 12 հազարինը: Արդեն այդ ժամանակ Անդրանիկը քայլեր է կատարել: Ըստ օրագրողի, Սմբատին 600 զինվոր տրամադրելով՝ ուղարկել է Ալաշկերտ, Ախլաթ եւ Մանազկերտ: Խնուսի ճակատն է ուղարկել գնդապետ Սամարյանին³, նրա տրամադրության տակ եւս դնելով մոտ 600 զինվոր: Իսկ ինքը՝ Անդրանիկը, երկրապահ զորամասի հրամանատարությունն ստանձնելով, փաստորեն իր վրա է վերցնում Երզնկայից մինչեւ Վան եւ Էրզրում հայության պահպանության գործը: Ինչ վերաբերում է Էրզրումին, նա նախապես չէր թաքցնում, որ դա հեշտ չէ: Օրագրողը հիշում է նրա խոսքը դիվիզիայի հրամանատարի պաշտոնն ստանձնելուց հետո. «Որ չափ որ ես կստանձնեմ այս գործը, համոզված եմ, թե հաջողություն չունիմ»: Բայց ասել է ոչ միայն ասելու համար: Եւ Լազարբեկովին մատնացույց է արել Բաթումից թուրքերի հարձակումը կանխելու անհրաժեշ-

* Լուսն Սամարյան է:

1 «Մշակ», Թ. N 17, 25, 01, 1918թ.: 2 «Օրավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը, 1914-1917», Դ., 1924, էջ 65-66:

տությունը, որտեղից թուրքերը կարող էին Ախալքալաքով եւ Ախալցճախով գալ դեպի Ալեքսանդրապոլ եւ այնտեղից թիկունքից խփելով՝ ավելի ծանր հարված հասցնել հայ ժողովրդին¹:

Անդրանիկը նախապես առիթ էր ունեցել նաեւ Երզնկայում զբուրվող իր հին ֆիդայական ընկեր Մուրադ Սեբաստացուն հեռագիր տալու, թե «Ներկա հայ ուժերով Երզնկա չենք կրնար պաշտպանել»: Եվ խորհուրդ էր տվել, որ տեղի գաղթականության հետ ետ քաշվի ավելի ապահով Մամախաթուն քաղաքը²: Բայց դրանով էլ վիճակը չթարելավվեց:

Հայոց Արեւմուտքում ամեն տեղ էր դրությունը ծանր ու ողբերգական: Ուզածը զորականը, որ փորձում էր ուժեր գումարել, հայի վերջին բեկորներին տեր կանգնել, դարձյալ անհաջողության էր մատնվում: Նրանց մեջ էր նաեւ պահանջկոտ Սեպուհը: Օրագրողը պատմում է, որ նույն այդ օրերին նա հանձնարարություն է ունեցել Էրզրումի գավառի Բայբուրդ քաղաքը գնալու, այնտեղ, որպես շքանի զինվորական պետ, գաղթական հայությանը տեր կանգնելու համար, եւ այդ ընթացքում զենք ստանալու խնդրով հանդիպել է Անդրանիկին: Անդրանիկը տարակուսում է եւ հաստատ համոզմունք հայտնում, որ այնպիսի ձեռով, ինչպես նա Բայբուրդ է գնում, ոչ մի օգուտ էլ չի ստացվի, եւ դարձյալ թուրքերը կկոտորեն հայերին: Դրանից մի քանի օր հետո «Հորիզոն» թերթը գրել է, որ Սեպուհն իր մտքից հրաժարվել, ընդամենը 17 հոգով կանգնել է դիրքերը պահպանելու, որից հետո էլ, երբ կոտորվել են թե գաղթականները, թե իր զինվորները, մի կերպ հասել, հանգրվանել է Մամախաթունում³:

Այժմ այն մասին, թե ինչ է պատմում օրագրողը Անդրանիկի Էրզրումյան գործունեության մասին:

Տեղ հասնելով, Անդրանիկը կատարյալ անիշխանություն է գտնում քաղաքում: Հագին գեներալական թարմ զգեստն էր, կրծքին՝ Կովկասյան ռազմաճակատի մարտերի համար ստացած շքանշանները: Զաղաք մտնելուց անմիջապես հետո իր ձեռքն է վերցնում բերդամրոցների հրամանատարությունը⁴: Իրեն դիմավորող ժողովրդին կարգապահության, ուժերի միասնության կոչ է անում, հաղթանակի հույսը կապելով զինվորների ու ժողովրդի միաձույլ կռվի հետ⁵: Եւ անմիջապես գործի է կաչում: Իմանալու համար, պարզում է կանգուն զինվորների, դասալիքների, ինչպես նաեւ զենքերի թիվը, զորքերի դասավորությունը ճակատում, պարենի պաշարները, ռազմաբերդերի վիճակը: Պարզում է, որ անիշխանության իրավիճակում ով կարողանում է, որքան կարողանում է, թալանում է պահեստներն ու թանկար-

1 Լեւոն «Օրագրութիւնը», էջ 72, 73: 2 Լ. տ., էջ 73: 3 Լ. տ., էջ 76: 4 Ձեմալ փաշա, Հայկական հարցը, Ե., 1927թ., էջ 71-73: 5 «Աշխատանք», Ե., №2 (192), 4, 04.1918թ.:

ծեք իրերը, ոսկի է կուտակում. այդ բոլորի ժամանակ չզանալով օգտվել մինչև իսկ թուրք լուտեսների վտանգավոր ծառայություններից, որն այլևս ոչ այլ ինչ էր, քան դավադրություն:

Հասնելով որոշ կարգուկանոնի եւ ծանոթանալով, ճանաչելով գործի մարդկանց, Անդրանիկն երզրումում տեսնում է ե՛լ այն, ինչ սպասելի էր, եւ այն, ինչ՝ անսպասելի: Նրա ոչ թե զարմանքը, այլ զայրույթը մեծ եղավ, երբ առատ լուր բերին, թե քաղաքի թուրք բնակիչների տներում ապրող, նահանջից ետ մնացած ուս սպաները, սանձարձակ վայելքի մեջ, նաեւ զենք են վաճառում թուրքերին, հաշիվ չտալով իրենց, թե ում դեմ են զինում նրանց եւ հանուն ինչի:

Թիկունքի անսանձ խաժամութիւն աջակից հայի մի ազգանուն էլ կա, որը դրամամուլ է, ընչաքաղց եւ ոսկի է դիզում: Նա գտել է երբ եւ որտեղ դաշինք կնքել ուս զինվորի հետ, ոչ թե հային նրա թիկունք կանգնելու ճակատային մարտերի օրը, այլ նույն հայի թիկունքը խարխլելու ժամին: Չենք էր վաճառում թուրքերին, գուցե եւ շատ թանկ, հաշիվ չառնելով, որ որքան թանկ էր վաճառում, այնքան ավելի թանկ էր նստելու հայի վզին: Աղամայան Տիգրանն էր դա, երզրումի շրջանի կոմիսարի օգնականը եւ քաղաքների միության համառուսաստանյան կազմակերպության լիազորը: Նրա պարտականություններից մեկը նեղ օրն ընկած քաղաքների բնակչությանը Անդրկովկասի ու Ռուսաստանի տարբեր վայրերից ուղարկված միջոցներով օգնության հասնելն էր, այդ միջոցները ճիշտ բաշխելը: Եվ «ճիշտ այդպէս» էլ վարվում էր, քանի որ նրա գործը նույն քաղաքաբնակ մարդկանց հետ էր: Երբ Անդրանիկը քաղաք մտնելուց հետո հարցրել էր, թե որքան պարեն կա քաղաքում, նա ճիշտ չի ասել շաքարի, նվազեցրել է ալյուրի եւ մանավանդ զենք ու փամփուշտի պաշարների չափերը¹: Մինչդեռ այդ ընթացքում Տիգրան Աղամայան հայազգին 75 արկղ «Մոսին» հրացան է վաճառել եւ հետն էլ 60.000 փամփուշտ²: 10—ը փամփուշտը մեկ կյանքի դիմաց վեց հազար է ստացվում, 100—ը՝ մեկի դիմաց՝ վեց հարյուր, մեկ է, դարձյալ շատ թանկ է վաճառում: Գուցե այդ էր նրան զոհացնում: Ինչո՞վ էր վատ, որ մարդը հմուտ էր առետրի մեջ, այն էլ պարենամթերքի պակասի ծանր ժամին: Ինչո՞վ էր վատ: Մի վասակ Սյունեցի՝ հնում, մի Տիգրան Աղամայան՝ ներկայումս: Մեկը պաշտոնի մոլուցքի, մյուսը՝ դրամամուլ տարերքի մեջ: Երկուսն էլ վարդազույն են ու հրապուրիչ՝ բոլոր ժամանակներում: Նայած ում համար:

Սույն փաստերից բացի, Անդրանիկը բացահայտում է նաեւ ուղղակի թուրքական բանակի հետ զաղտնի հեռախոսային կապի միջոցները, ապա նաեւ՝ սուրհանդակներին, որոնք թե լուր էին տանում

¹ «Պահակ», Ընտան 11. 02. 1919թ.: ² Մ. Վարակոբեան, Մուրաւ, էջ 309—310:

դեպի թուրքական բանակը եւ թե հանձնարարական նամակներ բերում այնտեղից: Թեւ այս ամենի դեմ հնարավոր միջոցների դիմեց, բայց այլևս բոլորի արմատը լիովին կտրելու համար ոչ այդ միջոցները բավարար եղան, ոչ էլ ժամանակը:

Իրարամերժ էին ճակատից եւ ճակատամերձ վայրերից ստացվող լուրերը: Հակառակ նրա, որ Սմբատը Բիթլիսի վրա հարձակվելու թույլտվություն էր խնդրում Անդրանիկից, գնդապետ Թորգոմը, որն ընդամենը 450 զինվոր ուներ, սկզբած կանգնած էր երզրումի արեւելյան կողմում գտնվող Թեքեդերե գյուղում: Գրում է այս ամենը հատիկ—հատիկ օրագրողը եւ հայտնում նաեւ այն մասին, որ գավառի Իլիջա գյուղում Սեպուհն ու Մուրադն էին իրենց կամավորական ինքնապաշտպանական ուժերով կանգնած: Իսկ երզրումում մինչ այդ գտնվող 1—ին եւ 4—րդ գնդերը հրաժարվեցին կռվել եւ դա այն պահին, երբ Անդրանիկը հարձակման պատրաստություն էր տեսնում: Մարդիկ հոգնել էին, կամա թե ակամա ըմբոստանում էին եւ օր առաջ տուն էին ուզում գնալ: Անդրանիկին անգամ: Երբ նա աճապարանքով տեղ հասավ գործը շտկելու, զինվորները նրա երեսին էլ հակաճառեցին, օղում կրակ բացեցին, գրում է օրագրողը, եւ սկսեցին բռռալ, «Չենք կռվել, թող տաճկահայը կռվել»¹: Արեւելյան Հայաստանից էին, նրանց տեղը Արեւմտյանի համեմատ շատ տաք էր, նրանց կռվի մղող պատճառները՝ համեմատաբար տանելի: Չկար այլևս «Կեցցե՛ Անդրանիկը» գոչը:

Շատ լավ է, որ օրագրողն ինքն է գրում, եւ գրածին ոչ միայն տեղյակ, այլև մասնակից է, որպէս հեղինակ, Անդրանիկը: Վատ է եղել վիճակը, շատ վատից էլ վատ: Հաղթող չի եղել Անդրանիկը, թեւ նույն Անդրանիկն է եղել: Երեսում է դա էլ է զայրացրել ոմանց: Հայոց մեծ պատմաբան եւ այս դեպքերին քաջատեղյակ ժամանակակից Լեոն գրել է, թե «Երզրումը պատերազմով չէր վերցված: Անդրանիկը ավտոմոբիլի մեջ կանգնած հանել է թուրը եւ ասել, որ ամենքը գնան իր ետեւից, բայց ոչ ոք չէր գնացել»: Թող այդպէս լինի: Եվ եթե իրոք այդպէս է, պատերազմով չի հանձնված եղել, նշանակում է մինչև Անդրանիկի տեղ հասնելն է հանձնման հողը ստեղծված եղել, եւ նա տեղ է հասել փաստորեն այնպիսի պահի, երբ, ինչպէս միշտ պատերազմների պատմության մեջ, հրամանատարը իր անձնական սխրանքով է փորձել վիճակը շտկել: Այնուամենայնիվ, ոմանց դա հաջողվել է, իսկ Անդրանիկին չի հաջողվել: Ուրեմն վիճակն է որոշել, այլ ոչ անձն ու անձնավորությունը: Իսկ վիճակն

¹ «... օրագրութիւնը», էջ 86: Նաեւ՝ «Արեւ», Կահիրե, 2. 09. 1967թ.:

այն եր. ինչ գրել է դարձյալ Լեոն որպես պատճառաբանություն. «Ակսովել եր նահանջը»¹:

Այս պատմության շատ էջեր պահպանվել են դարձյալ Վահան Թոթովենցի շնորհիվ: Նա ոչ միայն Թիֆլիսից Էրզրում, այլև Էրզրումում եւ այնտեղից Թիֆլիս վերադառնալիս միշտ եղել է Անդրանիկի հետ, անբաժան: Ոչ միայն դիտել է Անդրանիկի գործը, այլև մասնակցել է գործին: Եվ նա էլ վկայում է, որ փետրվարի 26-ի առավոտյան եւ սկսվել հայ-թուրքական կոիվները Էրզրումյան այս հատվածում: Այդ պահին էլ Անդրանիկը գնացել է ճակատ, կոիվների վայրը, որպեսզի ըստ հնարավորին հաջող հիմքերի վրա դնի հայ զինվորների դիմագրավումը Վեհիբ փաշայի զորքերին:

Գնացել է Անդրանիկը, թուրքերն սկսել են հարձակումը: Բայց ո՞վ էր կռվելու: Նախորդ օրն արդեն ռազմաճակատի գլխավոր հատվածում, որ ուղղությամբ որ գալիս էին թուրքերի առաջապահ զևդերը, հայ զորական ուժերը, որոնք ե՛լ գլխավոր, ե՛լ հիմնական ուժերն էին, նահանջել էին: Հայկական 1-ին եւ 2-րդ զևդերի սպայական կազմն անգամ կոիվն անխմաստ էր համարում եւ նահանջի քարոզ էր կարդում: Կռահելով, որ ամեն ինչ վատթարից էլ վատ կարող է լինել, Անդրանիկը հեռագրում է, թե ինքն անձամբ գալու է եւ անձամբ գլխավորելու է մարտը: Սրանից էլ է հակառակն ստացվում: Որպեսզի ոչ ոք չկասեցնի իրենց նահանջը, զինվորներն այդ լուրն ստանալուց հետո աճապարում են եւ նահանջում, մինչեւ Անդրանիկը տեղ կհասներ: Հայրենիքի անունը տալով, հայոց սրբերին հիշելով, մահապատժի սպառնալիքով ոմանց Անդրանիկը ետ է պահում փախուստից, բայց նույն այդ ժամին թիկունքն էր ձեռքից գնում: Տեղի հայոց ղեկավարներն անգամ, որ պիտի օժանդակեին Անդրանիկին, որոնց հետ, որ նա պիտի պատնեջներ թշնամու մուտքը քաղաք, փախուստի վերջին նախապատրաստություններն էին ավարտում, թուրք դրամը ոսկու հետ էին փոխում, տանելիք ապրանքների վերջին կապոցներն էին զամում եւ ճանապարհի սննդի պաշարն էին կուտակում: Պատմում է այս բոլորը այսպես նույնությամբ Վահան Թոթովենցը եւ վշտահար եզրակացնում. «Անդրանիկ մինակ էր, բացարձակապես մինակ...»²:

Իրարանցում էր, խուճապ ու փախուստ³: Ճակատում կանգնած հայոց զորքի կենտրոնի թեւի զինվորներից շատերը հրացանն ունն էին գցել, ոմանք մինչեւ իսկ, բեռ էր, դեն էին շարտել: Չախ թելը, այնտեղ, ուր Թորգոմն էր լինելու, այլևս չէր դիմադրում, հայտնի չէր, թե որտեղ է ինքը՝ Թորգոմը: Միայն Սեպուհի զինվորներն էին, որ

1 Լեոն, Անգալից, Թ., 1925թ., էջ 382: Ավելի հանգամանորեն տես՝ Ա. Հ. Հարությունյան, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. եւ ինքնապաշտպանական կոիվները, Ե., 1984թ.:
2 «Անդրանիկի կեանքը, պատերազմները եւ յուշերը», էջ 328-329: 3 Կ. Ենեոբ, Սարգրապատի ճակատամարտը, Զ., 1967թ.:

կրակում էին, բայց այն էլ ոչ լռիվ կազմով եւ դարձյալ նահանջի ճանապարհը բռնած: Խզվել էր տարբեր զորամասերի միջեւ կապը, շղթան կտրվել է կոտորակվել էր: Այնուամենայնիվ Անդրանիկը գնացել է ճակատ: Իմացել է, թե ինչու է գնում, լավ է իմացել, մի 40 մշեցի, իրեն հնուց ծանոթ ու վստահելի զինվոր է եղել, ցանկացել է նրանց մարտի տանելու օրինակով մյուսներին էլ բարձրացնել: Բայց դա զուր բան էր: Ուրեմն, ճիշտ էր զորավարը իր մյուս վճռի մեջ: Երբ բանակը խուճապի մեջ էր եւ նահանջը համատարած, էլ ո՞ւմ էր պետք զորավարը: Անդրանիկն իր, զորավարի, վախճանին էր ընդառաջ գնացել եւ դա չէր թաքցրել տարակուսող ու հարցասեր զրոյ ու լրագրող Վահան Թոթովենցից. «Եթե իյնամ Կարևո պարիսպների տակ, բոլորին պատմեցե՛ք, որ ես ինկա մինակ եւ ամեն օգնութենե գրկված»¹: Փախչող զինվորի ինչին էր պետք գեներալը:

Այնուամենայնիվ, Վահանի պատմելով, Անդրանիկի ջանքերը ոմանց սթափեցրել են: Մեկն ու մյուսը երեսը շուռ են տվել, երրորդը խրամատից հանած մի ոտքը նորից ետ է քաշել եւ ուղիղ բռնել է հրացանը դեպի եկող թշնամին: Զաջալերվել են նաեւ զորքի կազմում մնացած կազակները: Մի բան ստացվել է, առաջին գծից ելնող զինվորները խրամատավորվել են երկրորդ գծում: Մի քանի վայրկյան Անդրանիկը հանգիստ շունչ է քաշել: Բայց դա էլ հույսը չէր: Այլևս զորավարն ինքն է հաշտվել փաստի հետ, եւ նրա խորհուրդները վերաբերել են կանոնավոր, առանց զենքը շարտելու, դիմադրելով եւ հնարավորին չափ քիչ զոհ տալով նահանջելուն: Հենց որ տեսել է, թե նահանջը հանդարտվում է, սկսել է ուրիշ կերպ մտածել, ոչ մի կերպ չթողնել քաղաքը եւ պատրաստվել վաղվա հարձակման: Հավաքում է իր շրջապատի ղեկավարներին եւ խորհուրդակցում: Սա՛ 1918-ի փետրվարի 25-ի կեսգիշերին: Հենց այդ պահին էլ հայտնվել է Թորգոմը, որ մի կերպ դուրս է պրծել թուրքերի ձեռք գերի ընկնելուց: Եվ այստեղ է, որ Անդրանիկը, կեսգիշերային խավար սենյակի մեջ, ոչ արթուն, ոչ ջուն, միանգամայն ողջախոհ, կայացրել է իր վերջին վճիռը, որը քաղաքը պաշարման վիճակի մեջ գցելն էր:

Սա՛ գիշերային մթի մեջ: Երբ բացվել է իմաստուն առավոտվա լույսը, եւ ցրտից կարկամած արեւն է դեմքը պարզել, բացվել է նաեւ զինվորների լիակատար խուճապային եւ համատարած նահանջի տեսարանը, որում գլխավոր դերը պատկանում էր զինվորներից առաջ անցած, փախստականի բեռներն ուսերն առած բնակիչներին²:

1 «Անդրանիկի կեանքը, պատերազմները եւ յուշերը», Դ., 1932: Եւսե՛՛ «...օրագրութիւնը»:
2 «Անդրանիկի կեանքը, պատերազմները եւ յուշերը», էջ 336-339:



ԱՆՂՐԱՆԻԿ

Չենք զինվորի ձեռքին եր: Անդրանիկը տեսնում է այն, ինչը երբեք չէր տեսել, ճակատում, ուր նա գնացել էր վիճակը պարզելու, իր այքերի առջեւ, իր իսկ կողքին հայ զինվորը լքում էր կոփվելու եւ հրացանն ուսին ու առանց հրացանի խույս տալիս նրանից: Գոռաց, բացատրեց, սպառնաց, հայրենիքի, կաթողիկոսի անուանները տվեց... զինվորը անդրդվելի մնաց: Ազի ժամ էր, բայց զորավարը արտասուք-

ները կուլ տվեց, իր երկիր կոչված սուրբ Հայաստանի արեւելյան հատվածի վերջին հողակտորներն էին ձեռքից գնում: Բոլորի այքի առաջ կատարվողը առաջինը Անդրանիկը տեսավ, առաջինը նա զգաց ու վերապրեց:

Օրհասական, ճարահատյալ այդ ժամին նա մտածում էր՝ ի՞նչ է սա, արդյոք, դավաճանություն չէ՞, որ հայ զինվորը, նրա հետ իր հրամանատարները լքում են ճակատը եւ, մեքքով դեպի թշնամին, թողնում են Արեւմուտքի հողը հայրենի եւ աճապարում դեպի Արեւելք, մի՞թե՞ դավաճանություն չէ: Եվ ասես ի պատասխան այդ տարակուսանքների, հեռագրել է Խնուս, Կարո Սասունուն, որտեղ զինվորներն արդեն հանդգնել էին դեմքով դեպի Արեւելք դառնալ, երբ Արեւմուտքից էր գալիս թշնամին. «Դավաճանը նա է, ով թեկուզ մի քայլ կնահանջի իր պոստից»: Այստեղ, Խնուսում, Կարո Սասունին, Սմբատը, Անդրանիկի ֆիդայական օրերի հին, անդավաճան ընկերներն էին, որ հնամենի իրենց զինվորների հետ եկել կանգնել էին վերջին հողակտորը պաշտպանելու համար: Եվ այստեղից էլ, ահա, Անդրանիկին լուրեր են հասնում, որ բորբոջվում, ճայթում է նահանջի տրամադրությունը: Եթե զինվոր չկա, հեռագրում ասում է Անդրանիկը, պահանջեք, իսկ եթե սպաներն են պակաս, դասակների ու վաշտերի հրամանատարներ նշանակեցեք հին, փորձված խմբապետերին: Մի խզեք, ուժեղացրեք կապը իրար հետ տարբեր պոստերում կանգնած հրամանատարներդ: Եվ հուսալի վերջաբանը. «Հուսով եմ, որ Տարոնի, Սասունի զավակները պատվով կկատարեն իրենց խնդիրը»: Հին ֆիդային էր վերստին արթնացել գեներալի կրծքի տակ եւ ֆիդայական հին անուններն ու ոճը. «Հեռագիրս կարդացեք Աբրոյին, Փիլոսին, Կարապետին, Մանուկին, համահավաք զորամասի բոլոր մասերում»¹:

Ուրիշ անգամ Խնուսի ճակատում կովոր հայկական երկրորդ զնդի հրամանատար Սամարցեւին հղած հեռագրում նա ասես հաղթանակի պտուղները արդեն վայելած զորավարը լինի, որը պարտավորեցնում է մահու եւ կենաց գնով պահել ձեռք բերածը. «Ազատագրված հայ ժողովրդի անունից Ձեզ կոչ եմ անում մինչեւ թարմ ուժերի գալը հաստատ կանգնել դիրքերում եւ կրծքով պաշտպանել մեր բազմաչարչար հայրենիքը»²: Սա այն ժամին էր, երբ դեռ հույսը հարցակա-

նի տակ չէր դրվել:

1 Առաջին հատված, 121, գ. 1, գ. 40, բ. 27: 2 Ա. Մ., գ. 41, բ. 35:

զնում. գործերը ճակատից նահանջում են դեպի քաղաք: Դեպքերի մասնակիցը կարճ ժամանակ անց մամուլում նկարագրել է ընթացքը: Անդրանիկը անհապաղ զինվորների փոքրիկ մի խմբով շտապում է նահանջողներին օգնության: Բայց այլևս ուշ է լինում. թուրքերին մինչև քաղաք մտնելը մնում էր ընդամենը յոթ կիլոմետր: Անհար էր երթը կանգնեցնել¹: Նույն օրը Անդրանիկը Էրզրումի բերդի պարետ զնդապետ Սորելին ուրիշ գրություն է հղել. գրություն, որից բոլորից շուտ «Սեպուհը» հին ընկերը, կճանաչեր հեղինակին. «Խնդրում եմ այսօր եւեթ հայտնել գործերին, որ իմ կարգադրությամբ թիկունքում դրված են զնդապետներ այն վախկոտներին զնդակահարելու համար, որոնք դուրս կգան Էրզրումից»²:

1918-ի փետրվարի 27-ն է. ցերեկվա ժամը 1-ը: Խնուս՝ զնդապետ Սամարցեիս հղած հեռագիրը միաժամանակ հասցեագրել է իր ֆիդայական հին ընկերներ Աբրոյին եւ Փիլոսին: Սամարցեից գործիմաց զնդապետ էր, որ քիչ առիթներ չէր ունեցել, հաղթանակի պատուհները վայելելու: Աբրոյի եւ Փիլոսի համար է՛րբ էր եղել իսկական հաղթանակ, նրանք կոհիմանային եւ Սամարցեից մեկնել էր մնա:

«Այսօր, փետրվարի 27-ի առավոտյան, թողեցինք Էրզրումը: Ես ներկայումս Հասան Կալայում եմ: Աշխատում ենք դիմանալ այստեղ մինչև ձեզ հետ միանալը: Պետք է կահանջել առանց խուճապի, կարգով: Մթերք վերցրեք: Հայտնեցեք նաեւ Ախլաթի զորամասին: Ոչնչացրեք պահեստները: Գետերալ Անդրանիկ»³:

Քաջ հայ զինվոր էր ու սպա նաեւ Թորգոմը, որ Անդրանիկի Էրզրում մտնելու պահին այնտեղի զինվորական պարետն էր: Նա էր, որ Անդրանիկի Էրզրում գալուց առաջ ոգի էր ներշնչում քաղաքի հայ բնակչությանը եւ ազատության հույսով տոգորում: Բերդերին էր հետեւում, զինապահեստների պարունակությանը, պահակներ կարգում, հայ երիտասարդներին էլ համախմբում եւ նրանց այքը բեռնում քաղաքում թուրքասեր տարրերի աշխուժացման վրա: Պատմությունը առաջինը շարադրողը գրի է առել. «...Բոլոր էնթրիկներուն դիմաց մինչև Անդրանիկի հասնելը միակ մարդ մը կար, որ գերմարդկային ճիգերով կը կոպեր: Ատիկա քաջ հայ մը՝ զնդապետ Թորգոմն էր»:

Թորգոմը ֆրանսիական ռազմական կրթություն ուներ, բուլղարական բանակի կազմում ինքնակամ եւ քաջաբար մասնակցել էր Բալկանյան պատերազմին: Բայց երբ 1-ին աշխարհամարտի ժամանակ Բուլղարիան՝ որպես թուրքական տերության դաշնակից երկրներից մեկը, զենք է բարձրացնում Ռուսաստանի դեմ, նա զայրույթով ետ է ուղարկում իր կուրծքը զարդարող բուլղարական

1 «Կարոյ ակումբ», «Աշխատանք», Ե., 07. 04. 1918թ.: 2 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 41, ք. 51: 3 Ն. Ա., ք. 66:

2 Քաղաքները: Նա դա անում է Սոսկվայի հիվանդանոցից, ուր բուժում էր ռուսաց բանակի կազմում Գերմանիայի դեմ մղված կռվում ստացած իր վերքը¹: Հեղափոխությունից հետո, զնդապետի ուսադիրներով նա եկել էր Թիֆլիս եւ ուղարկվել Էրզրում, նախապես որպես քաղաքի պարետ: Անդրանիկի Էրզրում գալուց առաջ, օգտվելով դեռեւս հարմար վիճակից, Թորգոմը ռուսական բանակի գրաված արեւմտահայ տարածքները, առանց որեւէ մեկի հետ համաձայնեցնելու, մի պահ հռչակել էր որպես անկախ Հայաստան:

Դա եղել էր հետեւյալ կերպ:

Ռուսական գործը արդեն 1917-ի կեսերից էր Կովկասյան ռազմաճակատի տարբեր մասերից, այդ թվում նաեւ Էրզրումի ճակատից, բռնել նահանջի ճանապարհը: Էրզրումի բերդամրոցները սկսում են դատարկվել: Բերդերի 400-ից ավելի հրանոթների մոտ մնում են իրենց պարտքը գիտակցող սպաները, այն էլ ոչ բոլորը, եւ շատ քիչ թվով ոմբաձիգ զինվորներ: Քաղաքը անտերության չմատնելու համար միջոցի է դիմում հայ բնակչությունը, ստեղծելով Հայկական զինվորական միություն անունը կրող վարչական մարմին: Ահա այս ընթացքում է, որ զնդապետ Թորգոմը նշանակվում է Էրզրումի եւ դրա ամրացված շրջանի բերդապետ, որը հենց պարետն էր: Այդ պոստում նա իր առաջին խնդիրներից մեկն է համարում քաղաքում ինքնապաշտպանական զորամիավորումների ստեղծումը: Դրանց թվում էր 1917-ի դեկտեմբերին Էրզրումի գաղթականական հայկական գունդը, որը դաթաձավ Ա գունդ²:

Այնուամենայնիվ քաղաքում շարունակում էր իրեն զգացնել տալ անիշխանությունը: Ե՛վ թալանը չէր բացառված, ե՛ւ սպանությունները: Ռազմաճակատի հրամանատար Օդեշելիձեն այդ ամենի դիմաց խստորեն պատժում էր հայ բնակչությանը՝ առանց պատճառների մեջ խորանալու եւ մեղավորներին բացահայտելու: Պատրվակ բռնելով առանձին անախորժությունները, նա հայությանն սպառնում էր, թե ինքը կարող է «մահմեդական ազգությանը զենք բաժանել, որպեսզի նրանք հնարավորություն ունենան պաշտպանել իրենց կյանքը...»: Դեպքերի ժամանակակիցն ու մասնակիցը վկայում է, որ ռազմաճակատի հրամանատարի նման մտադրությունը ողջունել են տեղական ուրիշ հրամանատարներ, եւս: Նրանց դեմ ըմբոստացել է զնդապետ Թորգոմը, միանգամայն անարդարացի գտնելով «մի քանի անհատների հանցանքները մի ժողովրդի վրա բարդելը»: Պարզելով, որ Օդեշելիձեն եւ նրա կամակատարները գործնական քայլերի են դիմում, Թորգոմը հունվարի 25-ին գորատես է նշանակում, քաղաքում «իր զինվորական ուժը բնակչությանը ցույց տալու նպատակով»: Հենց այդ ժամին էլ նա քաղաքում հռչակում է հայության անկախու-


1 «Պահակ», Քոստան, 11. 03. 1919թ.: 2 ԿՊՊԱ, ֆ. 2168, ց. 2, գ. 31, ք. 30:

թյունը, որպես Էրզրումյան ինքնանկախ հանրապետության մարմնավորում: Այս արարողությունը նշանավորվում է թնդանոթային 21 համազարկով¹:

Օդեշեյիձեն, ճիշտ է, ծնունդով վրացի էր, բայց վրացին մեղջուխի, նա ուսաստանյան բանակի գեներալ էր: Իսկ Ռուսաստանի համար, որը ոչ շատ առաջ ցարական էր, ապա՝ բուրժուականը, մեկ է՝ հայի կողմից հայկական հողերի անկախության հռչակումը անակնկալ էր: Իսկ վերջին, Խորհրդային Ռուսաստանի ղեկավարությունն էլ այս բոլորից հեռու էր ու անտեղյակ: Այնպես որ Օդեշեյիձեն գործում էր ինչպես որ ընդունված էր տվյալ պաշտոնում իրեն նշանակողների օրոք: Թորգոմի ազգապահպան քայլերը իր դեմ հանել էին շատ հակառակորդների, որոնց առաջին շարքում էր նրան գործից ազատող հրամանատար Օդեշեյիձեն²: Վերջինս զայրանալու ուրիշ «հիմքեր» էլ ուներ: Լուրեր էին գնում, թե Օդեշեյիձեն Վեհիբ փաշայի հետ ինչ-ինչ հողի վրա մտերմություն է ունեցել եւ նրա հետ միջեւ իսկ հեռախոսային կապ է պահպանում՝, նրան հարող ռազմական ուժերի եւ առհասարակ ճակատի դրության մասին տեղեկություններ տալով: Եվ այս բոլորի մասին անվախ Թորգոմը հանդգնել է ասել Օդեշեյիձեի երեսին³:

Դրանից շատ ժամանակ չի անցել մինչեւ 1918-ի ապրիլի 16-ը, երբ վերը մեջբերված փաստաթղթում շտաբս-կապիտան Տվերդոխուրովը գրում է, թե Թորգոմին հեռացնելու մասին Օդեշեյիձեի «կարգադրությունը բավականաչափ պարզեց, որ ուս կառավարությունը, ինչ գնով էլ լիներ, ցանկանում էր խանգարել հայկական անկախ պետություն հիմնելուն»:

Օդեշեյիձեի գործերը ակամայից հիշեցնում են 1914-1916 թվականներին կամավորական ջոկատների հետ առնչված ռուսական բանակի հրամանատարներին, Զեռնոզուբով, Տրուխին, Լիկուլաե, Օբրազցով, Աբացիե... Ո՞րն էր նրանցից Օդեշեյիձեն, որի՞ն էր նման, որի՞ց տարբեր, ո՞ւմ էր իր օրինակով հաստատում, ո՞ւմ էր մերժում... Գուցե փաստերը օգնեն կողմնորոշվելու: Ահա դրանցից մեկը: Թուրքական բանակը դեռ հարձակման չէր անցել: Բայց ոչ ոքից գաղտնի չէր, որ ուր որ է սկսվելու է հարձակումը: Անդրանիկը, Ջավրիեը, Ջինկեիչը, բերդամրոցների հրամանատար գեղապետ Սորելը, գեղապետ Դուրխանովը, հնարավոր է նաեւ՝ հրետանային գումարտակի հրամանատար շտաբս-կապիտան Ջանփուլադյանը, գեղապետ Թորգոմը հավաքվել էին խորհրդակցելու, որտեղ Ջինկեիչը շտապում է հրապարակել հենց նոր Օդեշեյիձեի հղած թարմ հեռա-



ԷՐԶՐՈՒՄ

գիրը. «Օսմանյան գլխավոր հրամանատար Վեհիբ փաշայից ես մի ռազմիկհեռագիր ստացա, որով նա զորքին Էրզրումը գրավելու հրաման է տվել: Փչացրեք ամրությունների թնդանոթները եւ ետ դարձեք զորքի հետ: Օդեշեյիձե»:

Հնարավոր է, որ Վեհիբ փաշան ուղղակի հեռագրած լինի Օդեշեյիձեին: Հնարավոր է: Նույն ամսի 25-ի թվով հայտնի է նույն Վեհիբ փաշայի հեռագիրը, հասցեագրված այս անգամ ուղղակի Էրզրում «Անդրանիկ փաշային եւ Կարնո մեծերին»: Հիմնականում նույնն էլ այնտեղ է եւ հնարավոր է, որ միեւնույն տեքստը երկու հասցեով ուղարկված լինի: Համենայն դեպս Օդեշեյիձեին վերուղարկածը մի երկու բառով գլխավոր միտքն է, իսկ Անդրանիկին հասցեագրվածը՝ ամբողջական.

«Օսմանյան բանակի հաղթական ուժերը շարժման մեջ են դրված գրավելու հայրենիքի հողերը: Ռուսները Բրեստ-Լիտովսկի դաշնագրով մեր հողերը թողել են մեզ՝ Բաթումը, Կարսը, Օլթին, Արդահանը եւ Արդվինը: Ուստի ես ձեզ առաջարկում եմ անմիջապես հեռանալ մեր սահմաններից, եթե ոչ, խստիվ կպատժվեք օրենքի համաձայն: Արդեն մեր զինվորները Բաթումից ցամաք են դուրս եկել եւ քայլում են դեպի Կարս»:

Օդեշեյիձեի պատասխանը տեսանք՝ թողնել ամեն ինչ եւ բռնել նահանջի ճամփան: Օդեշեյիձեն ցավ չուներ: Հողերը հայկական էին: Նրանցով պետք էր հագուրդ տալ անկշտում Վեհիբի ախորժակին, որպեսզի մյուսներին նա գլխացավանք չպատճառեր: Օդեշեյիձեն, որ ռազմաճակատի հրամանատար էր, կարելի է կարծել, թե շտապել է անմիջապես հեռագիր տալ Անդրանիկին եւ հայտնել, թե որքան օգնական զորքեր է ուղարկում եւ պահանջել, որ բոլոր ուժերով պատնեշ կանգնեցվի թշնամու առջեւ: Չստանալով իր հրամանատար-

¹ Ըստ Էրզրումի եւ Դեբեդյուլի ամրոցների ժամանակավոր հրամանատար շտաբս-կապիտան Տվերդոխուրովի օրագրության, տե՛ս Ջեմալ փաշա, Եզվ., էջ 64: ² «Անդրանիկ», Մուրատ եւ Դուրս Նուբար, Ա մաս, 1920թ., էջ 99-101: ³ «Անդրանիկի կեակը», պատերազմները եւ յուզերը», Գ., 1932, էջ 262-263:

րից ոչ մի նման քաջալերանք. Անդրանիկը կանչել է իր գրավոր խոսքի օգնական Վահան Թորոպենցին եւ թելադրել Նրան իր պատասխանը գոռոզ Վեհիբին. Բրեստ-Լիտովսկը ձեզ Կարսը եւ Բաթումը հանձնելու փաստաթուղթ է տվել. մինչդեռ մեր ձեռքին զենքը, ռազմամթերքն ու բոլոր միջոցներն են, որ հարկավոր են մեր հայրենիքը վազմող Կարսը, Կարինը, Վանը, Բիթլիսն ու մյուս այն չորս նահանգները պաշտպանելու համար, որոնք շարունակում են հեծել բռնակալության լծի տակ: Անդրանիկի մարտաշունչ խոսքը շատ վայել է Թորոպենցի պատկերավորությանը. «...մենք զեն ի ձեռին հոս եկած ենք, զենքն է, որ պիտի վճռե թե այս հայրենիքը մե՞րն է, թե՞ ձերը: Ես քեզի պես բաշաներ շատ տեսած եմ, քեզի հետ ալ կը չափվինք: Հայաստանի երկրապահ զորամասի, հրամանատար ժեներալ-մայոր Անդրանիկ»¹:

Դառնանք Նորից Թորոպին:

Պարետի պոստը հանձնելուց հետո Թորոպը նշանակվել է գնդի հրամանատար: Բայց այստեղ էլ չի ստացվել: Համենայն դեպս, հիմա էլ Անդրանիկն է Նրան այդ պաշտոնից ազատել: Հարկադրված ենք մտածել, որ ըստ երեւույթին Օղեշեյիձեն գոհ չի մնացել: Անդրանիկը Թորոպի նկատմամբ հարազատի հոգապարությանմբ է բացատրություն գրել հրամանատարին. «Ազատել եմ գնդի հրամանատարի պաշտոնից, թողնելով Նրան իմ տրամադրության տակ, մտադիր լինելով որպես փորձված մարտական սպայի, օգտագործել փոքր մարտական խնդիրների համար... Ըստ որում Թորոպը պատրաստ է թեկուզ շարքային լինելու էլ»: ²: Մնում է հարցնել՝ այս «թեկուզ շարքային» լինելուն չառարկողը Թորոպ՞ն է, թե՞ հենց ինքը Անդրանիկը, երեկվա ֆիդային, որ զեներալ է այսօր: Անդրանիկը վերը մեջբերվածը գրել է Էրզրում գալուց անմիջապես հետո: Ազատել էր Թորոպին պարետի պաշտոնից եւ ինքն ստանձնել Էրզրումի ամրացված շրջանի պարետի ու միաժամանակ ռազմական տրիբունալի նախագահի պաշտոնները: Սա 1918-ի փետրվարի 17-ի երեկոյան ժամը 8-ին³:

Էրզրում գալուց հետո Անդրանիկի առաջին գործերից մեկն էլ այն է եղել, որ գնացել է սահման, Զյոփրիջոյ, ուր իրեն ենթակա զորամասեր էին կանգնած՝ հարվածն իրենց վրա առաջինը վերցնելու պարտականությամբ: Եվ տեսել է, որ այստեղ էլ ձիերն են պակաս, եւ հրամանատարները, ձի չլինելու պատճառով, տեղից չեն շարժվում: Հենց զինվորների մոտից հեռագիր է հղել շրջանի իր լիազորին՝ «Անմիջապես հավաքել շրջանի մեջ եղած» հիմնարկությունների ու զինվորական միությունների՝ ձիերը, հետն էլ «ապահովել ֆուրաժի

¹ «...օրագրությունը», էջ 88-89: ² «Անդրանիկ, Մուրատ եւ Պողոս Լույսար», Կ. պոլս, 1920թ.: ³ Լ. տ., ք. 124:

խնդիրը» եւ տրամադրել բանակին. «Բոլոր հակառակորդները մեր հրամանին կենթարկվեն զինվորական- դաշտային դատարանին անմիջապես»¹: Սա փետրվարի 17-ին: Մինչեւ վերջին ժամը հաշված օրեր էին մնացել, որ, այս քաջքույր մեջ, գործնական տեսակետից, հաշված ժամեր էին դառնում: Եկել է, տեսել է, որ զորքերը քայքայվում են ու նվազում, որ զենքերը, լեփ-լեցուն պահեստների առկայության դեպքում, զինվորի ձեռքին չեն: Եվ սկսվել է հեռագրապահանջների տարափը:

Փետրվարի 18-ին հեռագիրն հայտնում է, եկել են չորս հարյուր զինվոր, որոնց պետք է շտապ տեղաբաշխել, Նրանց հրամանատար սպա նշանակել²: Որտեղի՞ց սպա գտնել: Հիշում է, թե ով է մնացել թիկունքում, ում կարելի է հրավիրել: Եվ շտաբի պետ Ջինկեւիչին հանձնարարում է հեռագրել Երեւան՝ իր հին ընկեր գնդապետ Բաղդասարովին.

«Գնե՛րալ Անդրանիկը Ձեզանից չափազանց դժգոհ է: Եկեք ռազմաճակատ, դուք միայն այստեղ կարող եք արդյունավետ աշխատել»:

Որքան էլ ծանր ու օրհասական վիճակում, զեներալի մարտավարական փաստաթղթերում չէր բացակայում հոգատարության վերապահումը: Տեղերի իր հրամանատարներին հղած կարգապահական հեռագրում նա պահանջում էր՝ «խաղաղ բնակչության նկատմամբ բռնություն գործադրելու դեպքում անցկացրեք քննություն եւ արդյունքների մասին հաղորդեք ինձ, մեղավորները մահապատժի կենթարկվեն, ինչպես որ արվում է Էրզրումի շրջանում»³:

Նրա թշնամին անզեն հակառակորդը չէր: Առավել եւս, երբ անզենը կին էր ու ջահել աղջնակ:

Ջինկուրը թիկունքով դեպի հնամենի հայրենիքն էր դարձել, ինքն էլ չիմանալով ուր է աճապարում եւ ինչու: Հույսի վերջին շողը նրա մեջ սկսում էր մարել դեռ այն ժամանակից, երբ երկրապահ դիվիզիայի հրամանատարի ընտրության բանավեճի բուռն ճառերն էին ձգձգվում, եւ մինչեւ այն պահը, երբ Անդրանիկը ոտք կոներ վտանգված ու պաշարվող Էրզրումյան հողը: Եղավ մի պահ, երբ վիշտն ու զայրույթը համբերության փոխարինած, զեներալը սուրը պատյանից դուրս քաշեց եւ իրեն շրջապատած արեւմտահայ զինվորներին տարավ թշնամուն ընդառաջ: Մի քանի տասնյակ թուրքեր զոհվեցին, շարունակում է օրագրողը, իսկ Նրանք հարյուրներ էին ու հազարներ եւ ոչ միայն հրացան էին բերում, այլեւ գնդացիք եւ թնդանոթ:

¹ 17-ը փետրվարի 1918թ.: ՀՀ ԴԿՊԱ, ֆ. 121, ք. 1, գ. 40, ք. 37:

² Լ. տ., ք. 146: ³ Լ. տ., ք. 152:

Այնչէ հայոց հրետանին Էրզրումի բերդերում մի քանի արկեր
շարտելուց հետո պապանձվել էր քար լուռությամբ:

Չգիտենք, չենք էլ իմանալու, չափտի գրենք ու հավիտյանս հավի-
տենից մոռացության պիտի տանք հրետանաձիգ զինվորների ու
սպաների անունները: Արեւմտահայ զինվորներն անգամ, հուսալքված
ու հոգնաբեկ, հրաժարվում էին կռուցի, ով գիտի նաեւ ինչ բարոյա-
կան ու նյութական շարժառիթներ այստեղ դեր խաղացին: Պա-
տերազմ էր, այլ ոչ եղբայրության ճառագիտադ: Լսված բա՛ն է, որ հայ
զինվորը լքեր հայրենի հողը: Ինչո՞ւ էր նա այս աստիճան հուսալք-
ված: Այդ օրերի մասին մի պատասխան էլ հուշերի իր տեսրերում տվել
է Լազարբեկովը, փախչում էր ռուս զինվորը, իսկ երբ նա փախչում
էր կամ նահանջում, մեկ է, նրա հետ հույս կապողի ոտքերը
թուլանում էին, այս է ասել Լազարբեկովը, բայց այսպես, «այն
տրամադրությունը, որով ռուսական զորքերը թողնում էին ռազմաճա-
կատը, ակամայից վարակում էր նաեւ մեր ազգային զորքերին»¹:
Փետրվարի 27-ի վաղ արշալույսին նահանջը Էրզրումից արդեն
զանգվածային էր եւ քաղաքի ու գավառի լքումը՝ ակնհայտ: Ընթաց-
քում, վիճակից դուրս գալու իր ճիգերի մեջ, Անդրանիկը զորավա-
րական միտք է հղանում, քաղաքը պաշարման մեջ պահել էւ գուցե
այդ ձեւով հարկադրել, որ զորքը սթափվի եւ հարկադրված մարտա-
կան դիրքի մեջ մտնի, իսկ հուսալքված ու անտարբեր բնակչությունն
էլ ստիպված լինի օգնական կանգնել զորքին: Հաշվել է, անվազն
վեց ամսվա պաշարներ կան՝ թե՛ զենքի ու զինամթերքի, թե՛ պարե-
նի²: Բայց մինչեւ միտքը գործողության մեջ դրվեր, արագորեն
բուլոհին հուսալքումն էր պարունակել եւ նահանջի տանջալի գաղափարն
էր համակում: Խոր անկումային տրամադրության մեջ Անդրանիկը
հրավիրված զինվորական արտակարգ խորհրդակցությունում ունկընդ-
րում է ներկայացածների խոսքին, որը մեծամասամբ քաղաքը դա-
տարկելու էւ նահանջի ճամփան բռնելու օգտին էր: Փետրվարի 27-ի
վաղ առավոտից քաղաքը դատարկվում էր, նահանջողներով ու
նրանց բեռներով լցվում էն նահանջի ճամփան բռնած գնացքները:
Ժամը 9-ին քաղաքի տերը թուրքերն էին³:

Անդրանիկին մնում էր հաշտվել իրավիճակի հետ եւ փութալ, որ
վիրավորները անուշադրության չմատնվեն, որ ժողովուրդը խուճապի
զոհ չդառնա...

Եվ ձյուն էր ու սառնամանիք, եւ շուրջ 160 հազար գաղթող
բազմություն՝ նորածնից մինչեւ զառամյալ ծերունին:

1 ՀՀ ԴԿԸ ք. 45, գ. 1, գ. 14, բ. 52: 2 Լ. Թուրունեան, Կարոյ անկումին ողբերգու-
թիւնը (տե՛ս «Յուզամատան մեծ եղեռնի», էջ 825): Նաե՛ւ Ա. Չելեպեան, «Ձորավար Անդրանիկ...»,
Դ. 1986, էջ 426-427: 3 Ս. Կրացեան, Հայաստանի Հանրապետութիւն, Դ. 1958, էջ 92-93:

Նայն փետրվարի 27-ի օրը, Թիֆլիսում Կովկասյան բանակի
շտաբում երկրամասի բանակային հրամանատարությունը ջնկում էր
Թուրքիայի հետ պատերազմը շարունակելու հնարավորության հար-
ցը, ինչպե՛ս վարվել՝ հաշտվել՝ թուրքական հրամանատարության հետ
եւ մաքրել Բաթումը, Արդահանն ու Կարսը, թե՛ աջակցել վերջ
հողերը Խորհրդային Ռուսաստանի կողմից Թուրքիային հանձնելուն
դեմ ելած Անդրկովկասյան կոմիսարիատի, որպես երկրամասի իշխա-
նության մարմնի, որոշմանը եւ հարմար գտնել շարունակել պատե-
րազմը: Այդ ժամանակ արդեն գլխավոր հրամանատար գեներալ
մայոր Լեբեդինսկին իր ներածական խոսքում վերջինի կողմ է ար-
տահայտվում, հանուն հաշտության, բայց առանց բռնագավթումների:
Նկարագրելով Կովկասյան ճակատի ուժերը, շտաբի պետ Շատիլովը
Էրզրումի ուղղությամբ զորքերի դասավորությունը որակում է «ավելի
նպաստավոր», գտնելով, որ Էրզրումի, ինչպես նաեւ Վանի եւ Խնուսի
ուղղություններում պետական սահմանն ապահովված է: Ավելի
վտանգավոր է Բաթումի, Արդահանի եւ Կարսի վիճակը: Անտեղյակ
էի՞ն, թե՛ կամքն էր այդպես թելադրում: Նոյ ժողովանիան, Անդրկով-
կասյան սեյմի ռազմական պաշտպանության կոմիտեի քարտուղարը,
իրատես է գտնվել...«Վրացիները պետք է գնան (ռազմաճակատ) եւ
կզկան, -ասել է նա,- թաթարները՝ հնարավոր է, որ մեր հետեւից
չգան: Հայերն արդեն գնում են»:

Երբ գլխավոր հրամանատարը ցանկանում է իմանալ, թե երկր-
մասի նորաստեղծ ազգային զորագնդերն ինչ են արել հարձակվողի
ներխուժումը կասեցնելու համար, ստեղծվող ադրբեջանական կորպու-
սի հրամանատար Շիխինսկին ասում է, թե իրենք առայժմ ոչ մի
զորամաս չեն ստեղծել (թե՛ս արդեն երեք ամիս է սկսվել էր
կազմավորումը): Մինչդեռ Լազարբեկովը գեկուցում է, որ հայերը
կազմավորել են ութ հրաձգային գունդ, ութ լեռնային եւ դաշտային
մարտկոց, զորքի տարբեր տեսակի մի քանի գնդեր, մեկ սակրավոր
գումարտակ, երկու հեծյալ գունդ, Անդրանիկի համահավաք առան-
ձին զորամասը, ինչպես նաեւ կամավորական ջոկատներ Երզնկա-
յում, Խնուսում եւ ավելի հեռու՝ Ախլաթում ու Վանում: Ստացվում է՝
ամեն մեկն իր հոգսերին ու ցավին համապատասխան: Առհասարակ,
երեւում է, Էրզրումի կողմում կատարվող դեպքերի մասին անտեղյա-
կություն է: Ծիշտ է, Լեբեդինսկին ասում է, որ Էրզրումի, Բաթումի
եւ Կարսի դրությունը սուր է, բայց որ հատկապես Էրզրումում կոիվ
է գնում, անտեղյակություն է: Շտաբի պետն ասում է, որ Էրզրումի
վրա առաջանում են թուրքական բանակի կանոնավոր զորամասերը:
Լեբեդինսկին, պատասխանելով այն հարցին, թե պետք է արդյոք

* Այսինքն՝ արդեթեանկները:



ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Էվակուացնել Էրզրումը, բացատրում է, թե արդեն դա մասնակիորեն թույլատրված է եւ այդ կապակցությամբ երկաթուղային աշխատողների աշխատավարձն էլ բարձրացված: Շտաբի պետը համոզմունք է հայտնում, որ իրենք ոչ մի կերպ չեն կարող պահել Էրզրումը¹: Այսինքն, Էրզրումը թողնված է բախտի ըմահաճույքին: Թուրքիան փաստորեն սկսել էր հարձակումը, գրավելով առաջ եր Զարծվում, իսկ այստեղ դեռ ենթադրություններ էին արվում: Թուրքիան զորքեր էր բերում Կ. պոլսից, որոնք վարժեցնում էին գերմանական սպաները:

Հաջորդ օրը բանակային հրամանատարությունն Անդրկովկասյան կոմիսարիատին հայտնելով Էրզրումի մասին, գրում էր, թե դրությունը «արտակարգ ծանր է», որ «թշնամու ուժերը զգալիորեն գերակշռ են եւ նրանից պաշտպանվելու ոչ մի հույս չկա»²: Սա դարձյալ ցույց է տալիս, թե իրոք ինչպիսի դժվարին գործի էր կամովին ընդառաջ գնացել Անդրանիկը, իրեն մղելով այնտեղ, որի փրկության նշույլ անգամ չէին տեսնում ռազմական, գործի գլուխ կանգնած բարձրաստիճան գիտակները:

Էրզրում մտնելուց հետո, զորքերի հետ շփվելու միջոցին, անուշադիր մի դիպվածով ոտքից վիրավորվել էր Անդրանիկը: Բայց ցավին անտարբեր էր մնացել եւ Զարուհակել էր գնալ առաջին գիծ, մտնել խրամատները, ինքն էլ չիմանալով՝ նահանջի համար զինվոր-

1 ՀՀ ԳԿՄ, ֆ. 45, ք. 1, գ. 14, ք. 1-4: 2 ԿՊՊՄ, ֆ. 2100, ք. 1, գ. 1127, ք. 49-50:

ներին իր զայրույթն արտահայտելու, թե դիմանալու եւ առաջ գնալու նպատակով ոգեւորելու համար: Որովհետեւ գլխավոր վիրավորը ոչ թե ոտքը, այլ սիրտն էր, սիրտը, որին երբեք իր կյանքում նա այդպես չէր կեղեքել եւ ինքը երբեք այդ աստիճան զայրալից ու անելանելի վիճակում չէր եղել: Առաքելուց վանքի ծուղակը փա՛ռք էր երզրումյան այս ճարահատության համեմատ. «Այսքան տարի է թուրքերի դեմ կը կռվիմ, այս անգամ միայն ան տեսավ իմ կոնակս»¹, -ասել է նա սրտի խոր դառնությամբ:

Կռվող զինվորների հետ է եղել դժվարին պահերին: Զիուց իջել է, սուրը ձեռքն առել, որ մի զինվորի ուժը քառապատիկ դարձնի եւ գերբնական ուժով փրկի իր հայրենակիցներին մահվան նախճիրից:

Հանդուգն, ինքնամոռաց խիզախություն էր սա՛ նախապես սեփական անձի մահվան վճիռը կայացնելուց հետո: Հայդուկը նրա մեջ դիտավորյալ գլուխ էր բարձրացրել, ով գիտե, գեներալական ուսադիրների դեմ բողոքելու, թե՛ գեներալ դարձածին հանուն հրամանատարական պատշաճության չթողնելու հանկարծ խրամատ մտնել եվ հարկադրել, որ հեռադիտակը աչքերին հեռվից դիտի զինվորների մահամերձ կոհիվը: Մեջ բերենք Անդրանիկի զայրույթին քանիցս արժանացած եւ նրա դեմ իր խորվըր բարեկրթության ուժով զսպած հայ գրողի, քաղաքագետի ու դիվանագետի խոսքը.

«Էրզրումն ընկավ, չէր կարող դիմանալ, մեղքը Անդրանիկինը չէ: ...Անդրանիկ փորձեց պահ մը իր ներքին կրակով վառել փոքրաթիվ, հոգեպես թուլացած, անկազմակերպ հայ բանակը Էրզրումի տակ, փորձեց հրաձգ կատարել, մեկ խոյանքով ոտքի հանել նույնիսկ մեռելները եւ փշրել թշնամու կարողությունը...»²:

Վաղօրոք էլ Անդրանիկի ականջին էին հասնում, որ դեռ կան մարդիկ, որոնք տարակուսում են, «մարդիկ, որոնք զանազան հրկարքներով» փորձում են խույս տալ «դեպի հայրենիքն ունեցած իրենց պարտականությունից»: Այս բաները նա հուշակել է 1918-ի փետրվարի 2-ին հրապարակած իր կոչում, հայրենիքը երբեք իր զավակների այնպիսի «ճգնաժամային կարիքը» չի ունեցել: Եվ երբեք «փոքրիկ թերացումներն» անգամ այնպես ճակատագրական չեն եղել, ինչպես տվյալ պահին: «Հայրենիքը վտանգի մեջ է, ամեն հայ պարտավոր է գնալ դիմագրավելու այդ վտանգին», արհեստավոր, պարտավոր է գնալ դիմագրավելու այդ վտանգին», արհեստավոր, ուսուցիչ, թե բժիշկ՝ ոչ ոք արտոնյալ չէ: Հակառակ կերպով վարվող ամեն ոք «պիտի հայտարարվի իր հայրենիքի հանդեպ դավաճան»³:

Հաջորդ օրը, փետրվարի 3-ին, Անդրանիկն ստորագրել է «Կոչ հայ երիտասարդներին» փաստաթղթի տակ, ժողովուրդը գործի է ձեռ

1 Տե՛ս «Անդրանիկ, Սուրատ եւ Գողոս Նուբար», էջ 103: 2 Ավ. Ահարոնյան, Անդրանիկ: Տե՛ս «Հայրենիք», 1927թ.: 3 Դահլիճակն էն կոչի թողուկատիպ օրինակներ:

կանչում, մտեք հայ գործերի շարքերը, դարձեք հրետանավորներ, որոնց կարիքը այնպես զգացվում է...¹

Ավելի հեշտ չէր Լազարբեկովի վիճակը, որի ղեկավարած հայկական կորպուսի վրա էր գլխավոր հրամանատարությունը դրել Կարսի եւ Բաթումի մարզերից դեպի արեւելք ընկած հողերի պաշտպանությունը, որով երկու անգամ կրճատվում էին վրացական կորպուսին պաշտպանության հանձնված տեղամասի սահմանները²: Գործողությունների այդ շղթայում ընդհանուր հրամանատարության ուժերը պակաս գտնվեցին, եղածն էլ հավուր պատշաճի չտրամադրվեցին Էրզրումի պաշտպանությանն ու պահպանմանը, թեւ Լազարբեկովը այն համոզմունքին էր, որ կոնկրետ պահին պետք էր բոլոր ուժերը գործադրել, որպեսզի Էրզրումը չհանձնվեր: Էրզրումը նա բնութագրել է որպես «Փոքր Ասիայի բալանի»³:

Անհագուրդ մի ցանկություն ուներ թուրքիայի ռազմական նախարար Էնվեր փաշան՝ ձեռք գցել այդ բալանին եւ ամուր պահել, դրանով նաեւ դեպի Կասպիական զնալու եւ Բաքվից էլ այն կողմ՝ Թուրանի դարպասների դռները բացելու համար: Եվ արդեն հունվարին նա գիտեր, որ օսմանյան թուրքերի աշխարհում անմրցակից հերոս Անդրանիկն է Էրզրումի զորապահպան նշանակված: Եվ նույն ամսի 17-ին Էնվերը հրաման է արձակել Կովկասյան ռազմաճակատի իր հրամանատարներին՝ փակել բոլոր ճանապարհները Անդրանիկի առջեւ եւ զենքի ընդունակ բոլոր մահմեդականներին ոտքի հանելով՝ հասնել մինչեւ երանավետ Բաքու⁴:

Էնվերը կանոնավոր բանակ ուներ եւ ամբողջ մի պետություն՝ թիկունքում: Նույն այդ թիկունքում ուրիշ բանակներ էլ կային, որոնք ուզած ժամին կարող էին օգնության հասնել: Իհարկե, նա կոնխորտար եւ կսպանար: Գործին մոտ կանգնած ազգի որոշ առաջնորդները, որ ամեն ինչ լավ գիտեին, ասես ներքին բավականություն էին զգում, որ «Անդրանիկի աստղը Էրզրումում մարտեց», իսկ իրենց Անդրանիկից մեծ ու հաջողակ զորավար կարծողները, որ նախապես չէին թաքցրել նրան դիվիզիայի հրամանատար նշանակելու նկատմամբ իրենց տարակուսանքը, իրենց մարզարե էին կարծում, մենք առաջո՞ւց էլ գիտեինք: Անդրանիկն ասել է. «Պատասխանելով հակառակորդներուս այն խոսքին, թե չկրցա կասեցնել թրջական արշավանքը Կարինի առջեւ, ըսեմ, որ Կարին մտնելես մինչեւ ելնելս տււած է միայն վեց օր: Այս ճակատին առջեւ, Վասպուրականեն մինչեւ Երզնկա եւ Բաբերդ, կատարված չարիքին պատճառները պետք է փնտռել թիֆլիսի աղջկանց գիմնագիտի մեջ կազմված

¹ Այսպես: Օրինակները տես ՀՀ ԳՂԱ-ի Անդրանիկի ֆուլիում: ² ՀՀ ԳՂԱ, ք. 45, ց. 1, գ. 14, ք. 58-59: ³ Ն. տ., ք. 31: ⁴ «Արեւ», 22. 10. 1966թ.:

քորբուսի (զորաբանակ) եւ Ազգային խորհրդի մոտ: Այս քորբուսին կազմության համար ծախսվեցավ տասը միլիոն ռուբլի»¹:

Ուզում է ասել, թե բոլոր ուշադրությունը հայկական կորպուսի վրա էր գամված եւ բոլոր միջոցներն այնտեղ էին ուղղվում: Երկրպահի դիվիզիայից շատերը ձեռքերը լվացել էին: Անդրանիկի անունն ու հեղինակությունը նրանց հանգիստ տվեց, նա՛ պետք է զինվոր կանչեր, Հովհաննես Թումանյանը՝ իր որդիներին ու դուստրերին զորավարի տրամադրության տակ դներ եւ հանգանակության կոչ աներ, որ զորամաս ստեղծվեր եւ հանդերձավորվեր: «Արդյոք... դաշներ, որ զորամաս ստեղծվեր եւ հանդերձավորվեր: Հարցը դարերի պատմություն ուներ: Կատասխան ընդդիմախոսներին»²: Հարցը դարերի պատմություն ուներ:

Միաժամանակ թուրքերը մտան Էրզրում, հայերը, որ դրանից առաջ էին նահանջի ճամպուրակները կապել, թողեցին քաղաքը: Անդրանիկը գաղթականների հսկայական զանգվածին պատվար կանգնած իր զորքին բերեց դեպի Արեւելք, որտեղ նրանք ցրվեցին, ով ինչպես կուզեւար, ինչպես կարող էր ու ինչպես պատահեր:

Ռազմաճակատից Անդրանիկը Ալեքսանդրապոլ եկավ: Դարձյալ հոգնած էր, դարձյալ նյարդայնացած, բայց առավել, քան 1916-ին ռազմի դաշտից ետ գալիս: Այն ժամանակ նա եկավ հաղթողի փառքով, իսկ որ տրամադրությունը ընկած էր, ոչ ոք չէր կարծում, թե դրանում ինքն էր մեղավոր, կամ իր զինվորներն ու յուրայիններից որեւէ մեկը: Ռուսաց հրամանատարությունը պարզապես անվայելուչ էր գտնվել եւ իր խոստումներին անհավատարիմ: Հիմա հրամանատարն ինքն էր, զինվորները իրենն էին՝ հայոց ազգի զավակներ, նույնն էին նաեւ մյուս հրամանատարները: Բոլորն էլ յուրայիններ, այդ թվում՝ նաեւ քաղաքի բնակչության զգալի մասը: Ամոքիչ ոչ փաստեր կային եւ ոչ էլ խոսքեր էին գտնվում: Ավելին, խոսքերը, որոնք հարցականով նույնիսկ բոլորովին անկողմնակալ մարդիկ ուղղում էին իրեն, տարակուսանք էին պարունակում, եւ դրանք ինքն ամեն անգամ ընդունում էր որպես հանդիմանություն, որին անսովոր էր թշնամուն երբեք մեջք ցույց չտված, անպարտ զորավարը:

Վերադարձի առաջին օրերին պառկած էր Ալեքսանդրապոլի առաջնորդարանում: Ոտքի վրա չէր կարողանում մնալ, մարդկանց շատ էլ չէր ուզում տեսնել, հարցերը լսել, պատասխաններն էլ, որ ուներ տալու, ոչինչ լավ բան չէին բացահայտելու: Ցավերի տակ մենակության մեջ նամակ է գրել Թումանյանին: Թումանյանն ինքն էլ

¹ «Տոր, Անդրանիկ կիսուր» (Խավելված... փրք) էջ 231: ² Ն. տ.:

կամեցել է տեսնել Անդրանիկին: Անձամբ չկարողանալով գալ, որդուն է ուղարկել. Համիկին: Նրա վերադարձից հետո Անդրանիկին այցի են եկել Ազգային բյուրոյի նախագահ Ավետիս Ահարոնյանը եւ Արեւմտահայ խորհրդի ժամանակավոր նախագահ Վահան Փափազյանը: Եկել են ու գնացել Սարիղամիշ: Խնդրել են, որ մինչեւ իրենց վերադարձը մնա Ալեքսպոլում: Առանց հանձնարարության չէր լինի, պետք էր գործի մեջ քաշել: Գրել է այս մասին Թումանյանին Անդրանիկը Համիկի գնալուց հետո եւ ավելացրել. «Ողջս ցավում է: Ոսկորին խրված է խշտիկ մը: Հույս ունիմ, որ քանի օրից լավանա: ...Ստադիր եմ Ղարաքիլես գալ»¹: Թեւ **Ղարաքիլես** գնալը չի ստացվել եւ, ինչպես կտեսնենք, ինքն է բանաստեղծին այցի գնացել, այն էլ նրա պապենական օջախում:

Իսկ առայժմ, որքան էլ չցանկանալով իր հետ անբաժան կապերով կապված, չցրված զինվորներին անորոշության մեջ, առանց հրամանատարի թողնել, արտահայտվում է դիվիզիայի հրամանատարի պաշտոնից հրաժարվելու ցանկությամբ: Դեռ Ալեքսանդրապոլ չհասած, Սարիղամիշից հակիրճ հեռագիր էր հղել զանազան հասցեներով՝ Կովկասյան զորքերի ընդհանուր հրամանատար Լեբեդիևսկուն, դաշնակից տերությունների ներկայացուցիչներին, Հայոց ազգային խորհրդին, Հայաստանի ապահովության խորհրդին.

«Շրջապատված ըլլալով դավաճաններէ, կը հրաժարիմ Հայաստանի երկրապահ զորամասի հրամանատարութենէն»²:

Մարտի 17-ին կորպուսի հրամանատար Նազարբեկյանը մի գործություն է հղում երկու հասցեով՝ Ալեքսանդրապոլում գտնվող Անդրանիկին եւ համապատասխանաբար՝ զնդապետ Բեժանբեկովին, առաջինին ազատում է, երկրորդին նշանակում այդ պաշտոնին:³

Բայց ո՞վ էր Անդրանիկին անգործ թողնողը: Անհապաղ նամակով նրան է դիմում Հայաստանի ապահովության խորհրդի ժամանակավոր նախագահ Պարոյր Լեւոնյանը, ազգի վիճակը ծանր է, Անդրանիկին գործի մեջ տեսնելու ցանկությունը՝ մեծ: Անդրանիկից թույլտվություն է խնդրվում Նազարբեկովի առջեւ հարց հարուցելու, որպեսզի պատշաճ պաշտոն տրվի զորավարին⁴:

Նազարբեկովի վերջ նշված ազատման տեղեկացումից չորս օր անց, մարտի 21-ին, Հայաստանի ապահովության խորհուրդն ու՝ նրա ժամանակավոր նախագահը երկրորդ նամակն են հղում Անդրանիկին, խնդրելով՝ «շուտափույթ ձեռնարկեք մի զորամասի կազմությանը Ձեր հրամանատարության ներքո մարզված եւ անձնվեր ուժեր եւ փութաք ճակատի պաշտպանության»: Խորհուրդը այդ գործին Անդրանիկի անփոխարինելիության համար նրա անձն է վկայակոչում.

1 ԳԱԹ, ֆ. Հ. Թումանյան, գ. 507: 2 «...որպիսիք», էջ 95-96: 3 ՀՀ ՊԿՄ, ֆ. 370, ց. 1, գ. 2: 4 Լ. տ., ք. 3: Նաեւ՝ «Պահակ», Բ., 21, 03, 1919թ.:

նրա առիթնող ու ոգեշնչող էությունը. «Ավելորդ է ավելացնել, որ խորհուրդը վստահ է, որ Ձեր հմայքն ու փորձառությունը իրարու ջով պիտի բերե գեթ հազար հոգի, որոնք ընդունակ լինեն անձնագոհության Ձեզ հետ եւ մեր արյունոտ դատին համար»:

Եվ ժամն էր վերջինը, եւ միջոցը: Գրությունն էլ անսքող է. ոչ այնքան պաշտոնի հրավեր է, որքան անձնագոհության կոչ զորավարին ու նրա զինվորներին՝ միատեղ: Ռուսերն ու զնդացիները չէր, որ գործի էին դրվելու եւ ոչ էլ թնդանոթներն էին մարտի ելքը որոշելու, այլ մահու եւ կենաց կովի պատրաստակամությունը, որը պետք է բազմապատկեր եկող զինվորների թիվը «զուգընթաց (անդրանիկյան) զորամասի սխրագործությանց»¹:

Լա՛վ է գտնվել Անդրանիկը, թող հարցականի տակ մնա թե նա որքան հմուտ եւ կարող զորավար է, թող այս մասին չասվի ու չգրվի, բայց որ նա անանձնական է, ոչ եսակենտրոն, այլ հայրենիքի հոգսին ձուլված անմարմին մի էակ, դա եւս անառարկելի է: Այդ խոստովանությունն է գրվում եւ ուղարկվում նրան, չգիտես՝ որպես արհամարհանք, թե որպես մեծարանք: Եթե ոչ ոք չլինի, վերջին ժամին Անդրանիկը կա ու կա: Թող այդպես լինի, թեւ իրոք նաեւ այդպես է:

Այս առթիվ է ասված. «Անդրանիկի տեղ Նապոլեոն Բոնապարտն անգամ լիներ չպիտի կարողանար փրկչի դեր խաղալ...»²: Հերոսին ծնողը միայն ժամանակը չէ: Չկա հատուկ հաղթողների ժամանակ եւ հատուկ պարտվողների ժամանակ: Բայց միշտ էլ եղել են ու կլինեն հաղթանակի եւ պարտության հանգամանքներ: Գուցե թե դրա համար էր Անդրանիկը Էրզրումյան պարտության համար մատնացույց անում Թիֆլիսի օրհորդաց գիմնազիան, ուր կազմավորվում էր հայկական կորպուսը, եւ Ազգային խորհուրդը, ուր հրաշունչ ճառեր էին անդադար ու անվերջ...³

Իսկ ի՞նչ է պատմում Սեպուհը:

Փետրվարի 17-ին, երբ ինքն իր զնդով մոտակայքի Իլիշա գյուղում էր, հենց որ իմացել է, որ Անդրանիկը Էրզրում է եկել, բացականչել է՝ «Լեոն երկնեց եւ ծնավ մուկն չնչին»: Ինչո՞ւ: Որովհետեւ ասել են նաեւ, որ հազիվ մի քանի հարյուր կամավոր է բերել հետը: Հազարներ ու բյուր հազարներ չի բերել: Պատրաստի դրված էր եւ շուտափույթ չի հավաքել ու բերել:

Սեպուհը հիվանդ է եղել: Բժշկի խորհրդով փոխադրվել է Էրզրում, որտեղ նրան այցի է գնացել Անդրանիկը: Սա խոստովանում է Սեպուհը: Նա էլ ասել է, որ Իլիշայի դիրքերը հաջող չեն, իսկ Անդրանիկը հայտնել է, որ ինքը վճռել է վաղը ելք գնալ այնտեղ:

1 ՀՀ ՊԿՄ, ֆ. 370, ց. 1, ք. 6: 2 Միք. Վարսեղյան, Սուրբառ, էջ 314:

Եվ գնացել է իրոջ. Մուրադի հետ: Այստեղ Սեպուհը շտապով պատմում է. թե ինչպես առաջին իսկ հանդիպման պահին զինվորները զայրացել են: Որովհետեւ Անդրանիկը «արծաթեւ է տաճկահայ— ոռուսահայ խնդիրը», իսկ դիմացը կանգնած են եղել զարաբադցի զինվորներ, որոնք դա ընդունել են անվստահություն կամ անարգանք իրենց նկատմամբ: Մուրադը մի կերպ վեճը հարթել է: Բեժանբեկովին ճակատի այս հատվածում հրամանատար է նշանակել եւ վերադարձել Էրզրում: Սեպուհն իմացել է, որ Անդրանիկի գալստյան յոթերորդ օրը թուրքերը գրավել են Իլիջան: Հիվանդը, 40 աստիճան ջերմությամբ, սա ինքն է գրում, չի համբերել, դուրս է եկել, հեծել ձին եւ ասպատակել ուղիղ դեպի քաղաքի մատույցները, որտեղից թշնամին գրոհով առաջանում էր: Տեսել է Անդրանիկին, որ խելահեղ տարերքի մեջ փախչող իր զինվորներին սաստում է եւ ետ ուղարկում՝ «հանուն հայրենիքի»: Սեպուհը, իր ասելով, մոտեցել, հանդիմանել է զորավարին, թե դա ձեւ չէ, սխալ է, իբրեւ թե նկատելով նաեւ, որ թշնամին սպասել է, որ վերադարձվող զինվորները կուտակվեն եւ նոր միայն կրակ է բացել նրանց դեմ: Այնպես է պատմում, որ մարդ ուզում է ասել, թե ափսոս, որ Անդրանիկը չի լսել Սեպուհին, եւ հազար ափսոս, որ Սեպուհը չէ հրամանատարը: Եվ տեսեք, թե էլի ինչ, հեռվում Մուրադն էլ է սրանից տուժել: Իր 60 քաջ զինվորներով նա «շղթա բռնած առաջանում էր: Թշնամին տեղի կտար եւ կը քաշվեր դեպի ետ», բայց շատ ափսոս, «տեսնելով մեր զորաց կեդրոնին կոտորածը, ինքն ալ ստիպված կըլլա նահանջել»: Այ քեզ բա՛ն: Փաստորեն ամբողջ նահանջի մեղավորը Անդրանիկն էր: Այո՛, հաստատում է Սեպուհը, ուզմի մյուս հատվածում գնդապետ Թորգոմը չկարողացավ օգտվել իր հաջողությունից, «որովհետեւ Ջօր, Անդրանիկ այնքան ողբալիորեն կեդրոնը կը վարեր եւ կը փճացներ»¹: Այ քեզ զորավա՛ր:

Երեւում է ոտքի վրա հիվանդի արած եզրակացությունները իրեն չեն բավարարել: Աճապարել, գնացել է անկողին մտել եւ նորից խորհել, որ չսխալվի: Եվ, չէ՛, գտել է, որ չի սխալվել, «Երկար մտածել է յետոյ, եկայ այն եզրակացութեան, թե այս արեւմտի պատասխանատուն Ջօր, Անդրանիկն է»: Դե, էլ ինչ ասենք: Բարեխիղճ Սեպուհը մեկ տեսել ու իր կարծածին չի հավատացել, ետ է քաշվել, խորհել ու ծանրութեթեւ է արել, հո՛՛ հենց այնպես, առանց մտածելու, հապճեպ չի եզրակացրել, որ սերունդները չհավատան: Շատ ափսոս, որ Անդրանիկը չլսեց Սեպուհին ու զուր տեղը եկավ Էրզրում: Նրա ի՛նչ խելքի բանն էր այս կոիվը: Սեպուհը լինել, լինեին Վահանն ու զուցե թե էլի ուրիշները, Էրզրումը վաղուց քարդուփշուր էր արել

¹ Սեպուհ... հ. Բ. Դ., 1929թ., էջ 61:

թուրքերի հարձակվող զորքերի ժանիքները: Միայն թե Անդրանիկը չլիներ... Սա էլ է կարծիք եւ մինչեւ օրս ապրող երկհազարամյա փրկստփայություն:

Մի ընդդիմախոս էլ կա, ավելի հաստատուն ու հետեւողական, իր խոսքում հաշվենկատ, զուսպ եւ ծանրախոհ: Նա սուկ որպես հուշագիր ու դեպքերի ժամանակակից չէ հանդես գալիս, այլ նաեւ բավական ազդեցիկ քաղաքական գործիչ է, որն իր իսկ մասնակցությամբ եղած պատմության հատորներ է գրել: Սիմոն Վրացյանն է դա: 1917-ի վերջն ու 1918-ի սկիզբը նա համարում է «հիվանդագին մի շրջան» Անդրկովկասի ժողովուրդների կյանքում: Եվ գտնում է, որ ընդհանուր այդ շփոթի մեջ գործերն ավելի լավ են եղել արեւմտահայերի զորամասերում, «որոնց կազմակերպումը գտնվում էր Ապահովության խորհրդի ձեռքում», թեւ ամբողջ հրամանատարությունը պատկանել է Անդրանիկին, այդ փաստը որակելով որպես «ճակատագրական սխալ»: Եվ անմիջապես վերհիշում է հայդուկին, որքան հաջող էր նա ու «անգնահատելի» որպես հայդուկ, նույնքան «անարժեք» է որպես զորավար, որը զուրկ էր դրա համար «պահանջվող մասնագիտական կրթությունից»: Նորից նույն երգը, երգ, որի մեղեդին այս անգամ արդեն վաղօրոջ հայտնի էր, եւ եթե ետին թվով դա որպես մեղադրանք պետք է ասվեր ու դրանում մեկն էլ համոզված էր, պետք էր նախապես, այսպես ասած, այդ սխալը թույլ չտալ: Երբ Դիլմանում էր, նույն անուսումնական Անդրանիկն էր, երբ նա իր ջոկատին առաջնորդում էր դեպի Վան, Բիթլիս ու Մուշ, դարձյալ նույն թերուսն էր, եւ ոչ ոք էլ նրան բարձրագույն զինվորական կրթության ատեստատ չէր տվել: Հաղթելիս դիպլոմի մասին բոլորը մոռանում էին, պարտվելիս կամ համանման մի այլ իրավիճակում բոլորը միայն ու միայն դիպլոմի պակասն ու բացակայությունն էին մտնացուցց անում: Եվ դա այն դեպքում, երբ նրա հետ մարտի դաշտում գտնվող շտաբի պետ գնդապետ Ջինկելիչը կրթված էր, գնդապետներից Բեժանբեկովն ու Թորգոմը առանց կրթության չէին հասել զինվորական այդ աստիճանին եւ այսպես՝ դիվիզիայի հրամկազմի ձևող մասը: Պարտվողին փրկություն չկա, հաղթողին՝ դատ ու դատաստան:

Շարունակենք լսել Սիմոն Վրացյանին, «Նա չկարողացավ ըմբռնել ժամանակի ոգին ու տրամադրությունները: անկարող եղավ համախըմբել իր շուրջը կենդանի, գործուն եւ հայրենիքի բարօրությանը նվիրված մարդկանց: Նա իրեն շրջապատեց ունայնություններով, առավ մի գործ, որին պատրաստ չէր մասնագիտորեն եւ անկունման անխուսափելի եղավ հակառակ իր անձնական խիզախության»¹:

¹ Ս. Վրացյան, Անկախ եւ Միացեալ Հայաստան, Բ., 1920թ., էջ 11-13:

Շատ ափսոս, քաջ էր, խիզախ էր եւ մի դիպումն էր պակասում: Գուցե այն ունեցել — կորցրել էր Դիմանից, Բիթլիսից ու Մուշից հետո: Շա՛տ ափսոս: Այս դեռ ոչինչ, կասկածի տակ է դրվում մինչեւ իսկ նրա զինվորների նվիրվածությունը հայրենիքի բարօրությանն ու իրենց զորավարին: Եվ դա այն դեպքում, երբ նրանք, ձիշտ է, եկել էին հայրենի օջախի փրկության համար կոմիտեի, բայց եկել էին Անդրանիկի՝ հետ ու նրա՝ ղեկավարությամբ կոմիտեի: Այն պահից, երբ ձեռավորվել է Էրզրումյան դիվիզիան, Անդրանիկը թե՛ ժողովրդի մեջ եւ թե՛ գրավոր փաստաթղթերում անվանվել է նաեւ «Տաճկահայերի ընդհանուր ռազմական հրամանատար»: Եթե ոմանց համար դա հաճելի էր, մյուսների համար՝ անախորժ, դա ուրիշ հարց է: Հակոբ Տարոնացի արեւմտահայ զինվորը իր հայրենակիցներից հրաձիգ զինվորների մի հարյուրյակ է կազմած եղել եւ զնդացրային մի մարտկոց: Կոմիսար Արզումանյանը եւ զորապետ Նազարբեկյանը որոշել են նրանց ուղարկել Բեկ—Փիրումովի հրամանատարության տակ, «...իսկ մեր տղաները, — Անդրանիկին գրում է Հակոբը 1918—ի ապրիլին, — չեն ուզում ենթարկվել, մինչեւ որ չլինի անձամբ Անդրանիկի պատասխանն ու նրա ապագա գործունեության ծրագիրը... Մենք ոչինչ չենք ուզում: Այսպես է իրողությունը: Քանի կաս դու, կանք եւ մենք: Եթե չլինես դու, չենք լինի նաեւ մենք: Սպասում ենք քո կարգադրություններին»:

Ինչ—ինչ, Սիմոն Վրացյանը հենց սա լավ գիտեր: Իսկ որ կորպուսի հրամանատարությունը եւ Ազգային խորհուրդը, որից հետո չէր կանգնած նույն ինքը՝ Սիմոն Վրացյանը, Էրզրումի ճակատին մատերի արանքով էին նայել, հնարավորին չափ ուժեր չէին կուտակել, ամեն ինչ թողնելով Անդրանիկի անվանն ու հռչակին, այդ ոչինչ: Այդուհանդերձ մեղքը մեկից չառնենք մյուսին տանք: Ուժերի հարաբերակցության հարց էր: Երբ չկար այլեւ ուսաց բանակը եվ հայոց ուժերն էլ նոր—նոր էին խմորվում, հարձակվողի համար Էրզրումը զավթելն անհամեմատ դյուրին էր, քան պաշտպանվողի համար այն պահելը:

Նազարբեկովը պատմում է թուրքերի հարձակումից հետո նա անհապաղ հայկական հրաձգային զնդերից առաջինն ու չորրորդը ուղարկել է Էրզրում: Երկուսն էլ տեղ են հասել առանց հրամանատարի: Առաջինի հրամանատարը հիվանդ է եղել, իսկ չորրորդինը, որը մեզ ծանոթ Արտեմ Հովսեփյանցն է եղել, չի ներկայացել՝ կոմիսար Դրոյի հետ գծոված լինելու պատճառով: Սանրուքներ՝ մեծ հարցեր լուծելիս:

(Շարունակությունը երրորդ պրակում)

1 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 36, թ. 4: 2 Ն.տ., ֆ. 45, ց. 1, գ. 14, թ. 54: